





5.15

Ա. ՆԱԲՍՈՒԵԱՆ

*Հարգելի Քանոնիկոս*

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

A  $\frac{\pi}{28797}$



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆՍԱՆՑԻ

1891





*Աստուածատու*

*Աստուածատու*

### Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ց



Առաջարկելով ընթերցողներին «Պատրիկեանի նամակները», հարկաւոր ենք համարում ասել մի քանի խօսք նոցա առիթով և նոցա մասին:

«Պատրիկեանի նամակները» առարկան կազմում է մեր ութսունական թուականների երեսասարգութեան ներկալացուցիչների մի մասը:

Հալ ինտելիգենցիան, թէև դեռ ոչ մի խոշոր հաւաքական գործունէութիւն չէ ունեցել մեր կեանքում, բայց նա աշխատում է ուժ գտնաւ և ոչ միայն սկսում է հասարակական կարծիքի վերաւ ազդել, այլ կամաց-կամաց ձգտում է լինել այդ կարծիքի խակական որոշողը և կազմակերպողը: Այդ ինտելիգենցիան ներկայումս դեռ համեմատաբար անփորձ է և չէ կազմակերպուած հաստատուն կերպով: Նա լաճախ ընդհանուր ցանկութիւններով, իր ձերով, ձգտումներով է միայն արտադրուել և չէ հաստատել որոշ չարաբերութիւններ դէպի կեանքը և նորա հասարակական երևութները:

Վիպապրութիւնը, որ ինքը նոր է մեզանում, մեծ փորձեր չէ արել դուրս բերելու մեր ինտելիգենտի պատկերը, ցոյց տալու նորա խօճերի, նորա վշտերի և հոգսերի աշխարհը: Մինչդեռ կեանքը լաւ-վատ առաջ է գնում, տալով ժամանակակիցներին խոզերներ, որոնց վճռահատութիւնը ստիպում է մարդկանց վիճել, մրցել կռուել, որոշ զիրքեր բռնել, միմեանց ուժերը չափել:



կուսակցութիւններ կազմել Նիթէ կեանքի մէջ վերջնականապէս չեն ձևակերպուել որոշ հասարակական տիպեր, բայց և այնպէս երևում են արդէն նոցա ստուերագծերը և զդպցում է նոցա կազմակերպուելու գործողութիւնը: Ախպարովի համար կիսուել է և կիսում է բաւականաչափ նիւթ ուսումնասիրելու և պատկերացնելու:

Գրքովկիս հեղինակը, որ վաղուց գրադուած է մեր երիտասարդութեան կեանքով և շարունակում է իւր զիտողութիւնները հասարակական գործերի շրջանում, «Պատրիկեանի նամակներով» փորձ է անում դնել ընթերցողների առաջ իւր տալուօրութիւնների առաջին շարքը, չոյս ունենալով, որ դորանով նա նպատուած է երիտասարդութեան պատկերը և կազմը որոշելու:

Մեր ժամանակակից երիտասարդութեան գործունէութեան փոքրութիւնը, կարճութիւնը և պատահական բնաւորութիւնը, տիպերի նոր կազմակերպուելը, գործի նորութիւնը և գրականական զգուշութիւնը թելադրեցին հեղինակին՝ բաւականանալ առ այժմ անձնաւորութիւնների գծեր որոշելով՝ առանց ներկաւացնելու տեղական շարարերութիւնները և ընդհարումները կեանքի զանազան խաւերում: Աչպիսով չառաջացաւ այս նամակների ձևը, որը թոյլ է տուել հեղինակին՝ համեմատաբար աւելի ազատ լինել գրականական-գեղարուեստական պահանջների նկատմամբ: Նամակների մէջ վիպականը խառն է դիւլօգների, հրապարակախօսականի, նկարագրականի հետ և այլն:

Նամակներից իւրաքանչիւրը՝ առանձին վերցրած՝ քիչ հասկացողութիւն է տալիս երիտասարդութեան պատկերի մասին. բայց նոցա ժողովածուն կարող է նկատուել իբրև մի ալբոմ, որի մէջ դուրս է բերուած գործողների մի ամբողջ խումբ: — Ազդակը գեռ չը կան, ի հարկէ, շատ

տիպեր, նա մանաւանդ մեր վերջին տարիներէ շրջանից, երբ երևան եկան մի քանի հասարցրակայն և կարևոր հասարակական երևութներ և գործողների տիպեր:

Այս նամակների մեծ մասը տպագրուած է եղել «Մուրճ» ամսագրի համարներում և չափանի է մեր հասարակութեան: Հեղինակը աւիթներ է ունեցել խօսել նոցա մասին ընթերցողների հետ և նույնպէս տաացել է նամակներ զանազան տեղերից: Ընթերցողների հապացրք «Պատրիկեանի նամակների» ընաւորութեան վերաջ մի քանի կէտերում զանազանւում է հեղինակի հապացրքից: Մի քանի պահանջներ աչն տեսակի են, որ նոցա բաւակա-նութիւն տալու համար հարկաւոր են չօղուածներ՝ զարգարուած թուանչաններով և փաստերով:

Մի ուշադիր ընթերցող հետեւալ կերպով է ձեա-կերպում նամակների նորա վերաջ արած տպաւորութիւնը: «Այս նոցա միջոցով ստուգում էի իմ անձնաւորութիւնը և շրջապատողներիս և վերանորոգելով վիշոգութեանս մէջ զանազան հասարակական խնդիրներ, համակարգութեան էի նոցա բերում»:— Հեղինակը ուրախ է, ի հարկէ, որ նամակները ծնում են սղ տեսակ հետեանքներ, բալց նորա անմիջական նպատակը, ինչպէս պարզ է վերև տա-ծից, եղել է՝ ներկայացնել հասարակութեան մէջ զանուող մտաւոր ոլթերի մի մասի պատկերը ոչ զիդակտիկական գիտումներով, այլ նոցա կերպարանքը որոչելու մտա-դրութեամբ:

Այան ընթերցողներ, որոնք հակուած են այս նամակ-ների մէջ լուսարանում հաղեցակէտները և դէպի կեանքի երևութները նկատուած վերարերմունքները ընդունել, իբրև ամբողջապէս հեղինակինը և զուրս բերուած տիպերի մէջ տեսնել ակնարկներ չափանի անձերի մասին, սակաչն զս սխալ է: Նիւթը վերցուած է, արդարև կեանքից, իրա-

կանութիւնից, բայց հասարակութեան մէջ գտնուող ան-  
ձերը չեն արտանկարուել, այլ նոքա մատակարարել են  
տպաւորութիւնների մի պաշար, որ թող է տուել վերա-  
տողձել նոցա, իբրև բնաւորոջ տիպեր:

Մի քանի բնթերցողների կողմից ցանկութիւն է չափ-  
նուել, որ նամակների մէջ գրուած կնճռոտ խնդիրները՝ լու-  
ծուձ, պատասխան և վճիռներ ունենային նոյն նամակների  
մէջ, որ ներսնները եւք գտնէին աչն գրութիւնից, որի մէջ  
նոքա գտնուձ են, որ առաջարկուած լինէին ծրագիր-  
ներ: Հեղինակը չէր կարող ամնն կէտերուձ բաւարարու-  
թիւն տալ, որովհետև ինքը, իրական կեանքը, չաձախ չէ  
տալիս որոջ և բաւարար պատասխաններ:

«Ջրագացը» չէ մտնուձ «Պատրիկեանի նամակ-  
ների շարքի մէջ: Նա ինքնուրոյն է և աւելի նին գրուածք  
է: Նա նամակներին կցուել է աչն պատճառով, որ նորա  
առարկան և բովանդակութիւնը մօտ են նամակների» մէջ  
եղածներին:

Հեղինակը շարունակուձ է իւր դիտողութիւնները  
երիտասարդութեան կեանքի և գործունէութեան շրջա-  
նուձ և ուրախ է բնթերցողներից լսելու նոցա կարծիք-  
ները դուրս բերուած երեւթների և անձնաւորութիւն-  
ների մասին:

Ա. ՆԱԿԱԼԵԱՆ:

Համալսարան, Ա.

ՍՏՏԻԳՎԱՄ Է 1981 Ք.

*[Faint handwritten signature]*

*[Faint handwritten signature]*

3  
8

**ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ**

*[Handwritten signature]*

*[Handwritten signature]*



I	Նամակ. Յտարոտի այցելու . . . . .	10
II	» Երիտասարդ Հաթամեանը . . . . .	26
III	» Սերգօջեանը . . . . .	44
IV	» Յրիորդ Նուարդ . . . . .	61
V	» Մտաւախը և կեանքի սիւները . . . . .	75
VI	» Իմ ուղեկիցները . . . . .	92
VII	» Խաղիբեանը . . . . .	115
VIII	» Ազազայ աղան . . . . .	133
IX	» Փակուածը . . . . .	146
X	» Ուխտաւորներ . . . . .	164
XI	» Արանեանի մօտ . . . . .	178
XII	» Աւսուցիչ Նարօտեանը . . . . .	198

Ըստ  
Պատրիկեանի նամակները  
1950

Նորերս մեռաւ մեր աչքի ընկնող երիտասարդ-  
ներից մէկը՝ Պատրիկեանը, որից նորան ծանօթ երի-  
տասարդութիւնը սպասում էր մեծ հասարակական  
գործունէութիւն: Գուցէ ժամանակով չաջողուի գրե-  
լու Պատրիկեանի կենսագրութիւնը: Պատրիկեանի  
մասին ամենատեղեական տեղեկութիւնները կարելի է  
ստանալ նորա սգաւոր ըրոջից, որի հետ Պատրիկեանը  
ունեցել է անդադար և ամենամանրամասն նամակա-  
գրութիւն:

Պատրիկեանի քոյրը չանձնեց ինձ իւր եղ-  
բօր այն նամակները, որոնց մէջ նիւթեր կան մեր  
հասարակական կեանքին վերաբերեալ: Մեծ նամակ-  
ների թիւը քսանից աւելի է: Ներկայումս նոցա միայն  
մի մասը լոյս ընծայւելու չարմար է: Աս փոխեցի նա-  
մակների մէջ մարդիկների և տեղերի անունները: Մի  
քանի նոյնաբովանդակ նամակներ միացրի՝ ընդհանուր  
պատկեր ներկայացնելու համար ընթերցողին: Բացի  
այդ՝ նամակների համար՝ համեմատ նոցա բովանդա-  
կութեան՝ չորսնեցի վերնագիրներ:

## ՕՏԱՐՈՏԻ ԱՅՅԵՆՈՒԻ

Սերելե քոյր

Դու գուցէ զարմանաս միմեանց վերայ ինձանից երկու նամակ ստանալուդ համար: Առաջին նամակս գրեցի երեկ—վերադարձիս երրորդ օրը. մէկն էլ գրում եմ այսօր: Նամակը արդէն ուղարկած էի, երբ մի նոր ծանօթութիւն արի մի օտարոտի հիւրի հետ, որի մասին կամենում եմ մի քանի բան պատմել:

Ենչպէս գրել եմ քեզ, ես իջած եմ հիւրանոցում: Երեկ ամբողջ օրը քաղաքում շրջագայում էի և բաւականին չոգնեցի: Տուն դառնալուց և ճաշելուց չեա՝ թեք էի ընկած բազկաթոռի վերայ և կիսամոռացութեան մէջ մտածում էի նոր գործունէութեանս սկզբնառութեան վերայ:

Յանկարծ դուռը թխկեցրին:

—Մտէ՛ք, ներս եկէ՛ք, ասացի ես:

Աննեակը մտաւ միջահասակ մի պատանի:

—Դո՞ւք էք պարոն Պատրիկեանը, հարցրեց նա՝ ինձ դառնալով:

—Ես եմ, այո՛:

— Ես ձեզ հետ խօսելիք ունեմ մի ժամուայ:

Գուք ուրիշ ոչ ոքի չէք սպասում այսօր:

— Ո՛չ ոքի:

— Ուրեմն՝ թող տուէք մի երկու ժամ ձեզ հետ խօսակցելու ինձ համար շատ կարևոր մի խնդրի վերայ:

— Խնդրեմ նստեցէք և յարոնեցէք ձեր ցանկացածը:

Պատանին զցեց վերարկուն աթոռի վերայ, եկաւ նստեց զէ՛մ ու զէ՛մս և մի բոպէ լուս նայում էր յատակին: Ես նայեցի նորա զունաստ երեսին, վայր իջեցրած ունքերին, նորա միմեանց սեղմած շրթունքներին և սկսեցի սպասել:

— Գուք ինձ՝ ի հարկէ՛ չէք ճանաչում, սկսեց պատանին. բայց չէք էլ հարցնում ո՞վ և ինչ լինելու: Այգ շատ լու էք անում, որովհետև ինչ հարկաւորութիւն կայ անունս գիտենալու:

— Իսկ դուք իմ անունը գիտէք:

— Այ՛ո. բայց դուք ինձ հարկաւոր էք, իսկ ես ձեզ հարկաւոր չեմ: Միթէ՛ ձեզ համար միևնոյնը չէ, եթէ՛ ես Միքայէլեան, Սերօբեան, Մանուկեան, Տիգրանեան, կամ մի ուրիշը լինէի: Քոզ ձեզ համար ես լինեմ Մանուկեան:

— Ես պատրաստ եմ լսելու ձեր ասելիքը. ինչ բանի է նա վերաբերում:

— Այս բոպէին կը յարոնեմ. միայն ոչ ոք ինձ չի խանդարիլ: Գիտէք՝ ես չէի կամենալ, որ ասելիքս ընդհատուի: Գուք հրամայեցէք ծառային, որ ոչ ոքի ներս չը թողնի:

Ես պատուիրեցի ծառային, որ ոչ գբի չ'ընդունի: Ստարուտի հիւրս գլխով նշան արաւ շնորհակալութեան տեղ: Եւ յետոյ սկսեց այսպէս.

— Ես երեք տարի է, որ գիմնադիօնական կուրսս վերջացրած եմ և այս երեք տարուայ մէջ շատ բաների վերայ մտածած եմ—գուցէ լաւ և ուղիղ չեմ մտածած՝ այդ մի ուրիշ խնդիր է—բայց մտառանջուած եմ, շատ ցաւած: Ես կամենում եմ այժմ կեանքիս եղանակը փոխել: Բայց նախապէս ձեզ մի խնդիր տամ. ինչ էք կարծում, ինչո՞ւ ես բարձր ուսումնարան չը գնացի ուսումս շարունակելու:

— Ընմարիտն ասած՝ չը գիտեմ. գուցէ աւարտումի վկայական չունէք, գուցէ ձեր միջոցները չեն ներում:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ. այդպէս բաներ չեն. վկայական էլ ունեմ, միջոց էլ մի կերպ կը գտնէի: Բայց ես ինձ մի խնդիր առաջարկեցի՝ թէ ինչի է պէտք բարձր ուսումը: Ես ձեզ մի դէպք կը պատմեմ իմ կեանքից. գուցէ նա հեշտ կերպով պարզի ասելիքս: Երբ որ գեռ ուսանող էի գիմնադիօնում՝ ես շատ բարձր դաղափար ունէի համալսարանական ուսանողութեան վերայ: Ինձ շրջապատողները երեխաներ էին, գուցէ ես ինքս էլ նոցանից մէկը: Ֆիմնադիօնական կեանքը ինքը մի ատիճանաւորի կեանք է, ուր ամեն բան ձեւած է, սարքած, կարգած, կանոնի տակ դրած: Մենք լսում էինք ուրիշներից և կարդում էինք գրքերում, որ համալսարանն է ազատ մտածողութեան և ազատ զար-

զացումի տեղը, որ նա մտքի լաբորատորիա է, որ նա համոզմունքներին հաստատ կերպարան տուող մի վարժոց է և այլն և այլն: Աս և երկու միւս ընկերներս յաճախ խօսում էինք այդ առարկայի վերայ: Մենք խորհում էինք մեր սիրելի մտածութիւնների կոչքը այդ բովի մէջ զցել նորան զտելու համար: Ի՞նչ էք կարծում, լաւ բույժներ չե՞ն կեանքի մէջ այդ բույժները:

— Այո, լաւ բույժներ են, պատասխանեցի ես:

— Գուցէ չիշողութեան համար, բայց ոչ ապագայ տանջանքներին ենթարկւելու համար:

— Ի՞նչն զուք, ինչպէս երևում է, առնում էք իրերի միայն մի...

— Ինչպիսիք եմ ինձ մի՛ք հերքիլ այժմ, որովհետեւ պատմութիւնս կը խանդարուի, ես պէտք է նախ ասելիքս վերջացնեմ: Այդ ձեր խօսքերն էլ արդէն ինձ պէտք է փոքր ինչ այժմ զբաղեն: Աս եկել եմ ձեզ մօտ այն նպատակով, որ ձեր կարծիքը, ձեր հերքումը, ձեր հաւանութիւնը ստանամ. ես ինքս չետոյ պէտք է խնդրեմ, որ ինձ դատէք, բայց այժմ թող տուէք շարունակեմ: Ինձ համար այդ բույժները թունաւոր են: Գուցէ բոլորովին ուրիշ կերպ ընթանար իմ կեանքը— եթէ այդ բույժներն էլ փոքր ինչ ուրիշ կերպ անցած լինէին... Աս թողի իմ պատմութիւնը. դո՛ւք էք մ. զաւոր. դուք շատակցիք իմ դէմ խօսելու. ձեր հերթը չետոյ է:

Պատանին խօսում էր շատակցով. բայց հատ-հատ

արտասանելով բառերը, կարծես ամեն մի բառի վերայ շեշտում էր նա խօսում էր այնպէս, որ կարծես կենդանի մարդիկներին հետ երբէք չէ խօսացել, այլ զրքերի հետ միայն:

Ասելս այն էր թէ, շարունակեց նա, ամենափառփառն մտածմունքներինցս մէկն էլ եղել է ուսանողական կեանքը բարձրագոյն դպրոցում: Եւ ընկերները հաստատ մնացին իրանց որոշումին՝ ձևական կողմից — այսինքն զնացին բարձր ուսումի, իսկ ես մնացի: Անչոք մնացի: Զարմանալի է մարդու կեանքը, որչափ նա հեշտ կարող է խաղալիկ դասնալ հանգամանքներին: Այնպէս չէ: Մնալուս պատճառը համալսարանի ուսանողներն էին, որոնք ընդհակառակն ամեն կերպ ինձ զրգում էին, որ ես հաստատ պահեմ բարձր ուսում ստանալու մտքս: Բայց այնու ամենայնիւ նոցա մի ուրիշ խօսակցութիւնը ինձ բոլորովին փոխեց: Այս մանրամասնութիւնները զուցէ ձեզ ձանձրացնեն. բայց թող տուէք պատմեմ, ինչպէս յարմար է թուում ինձ:

— Խնդրում եմ շարունակեցէք, պատմեցէք, ինչպէս կ'ամենում էք:

— Գիմնագիտական ուսումը վերջացնելուն միայն մի շարաթ ժամանակ էր մնացել. վերջին հարցաքննութեան պատրաստութիւններով էինք զբաղւած: Զր զխոսեմ ինչ մի հարցաքննութիւն տուած էինք և ուրախ էինք, որ վերջին ասարկալի համար մի ամբողջ շարաթ ժամանակ ունենք: Երեկոյեան դէմ

մտնում է ինձ մօտ ընկերներիցս մէկը և ասում է. «զնանք Յամիկեանի մօտ. նորա մօտ երկու Պետերբուրգի ուսանող հիւր են: Ես հարցրի թէ՛, որտեղից է Յամիկեանը նոցա հետ ծանօթ և իմացայ, որ հայրենակիցներն են. իսկ յայտնի է, որ որչափ էլ մարդիկ զանազան լինեն միմեանցից՝ երբեմն մի բան կապում է հայրենակիցներին: Այս փիլիսոփայութիւնը ես կամաւ առաջ եմ բերում այն պատճառով, որ այն ժամանակ նոյն իսկ այդ կերպ ես պատասխանեցի ընկերիս և այն բուպէին իրաւունք էլ ունէի: Յամիկեանը երբէք զբաղւած չէր ոչ մի թէ՛ գիտնական և թէ՛ հասարակական խնդրով, կամ զոնէ նոցանով հետաքրքրւած չէր: Ուստի անկարելի մի բան էր թւում. Յամիկեան և համալսարանական ուսանող: Ես, ի հարկէ, համաձայնուեցի ուրախութեամբ և զնացինք Յամիկեանի մօտ: Երկայն կը տեւի — եթէ ես պատմեմ մանրամասնաբար այնտեղ եղած խօսակցութիւնները, ուստի ամիսփեմ կարճ կերպով: — Ես ծանօթացայ ուսանողների հետ և մի կէս ժամից չեոոյ սաստիկ վիճում էի: Խօսում էի միայն մէկի հետ: Միւսը մեր Յամիկեանի օրում մի բան էր: Այդ վերջին ուսանողը այդ երեկոյ ինձ չէր զբաղեցնում, բոց չեոոյ շատ անգամ նորան չիշել եմ: Եւ նա սաստիկ հարուած տուաւ այն բարձր զաղափարին, որ ես կազմել էի բարձր ուսում առնողի վերայ: Այդ երեկոյ, կարծես, նորան ամենեին նկատում էլ չէի. նա էլ չէր մասնակցում վէճին, այլ Յամիկեանի հետ միասին


մտաբերում էր չը զխտեմ ինչ մի գետի եզերք, որտեղ շատ անգամ գրօսանքի են դուրս գալիս նոցա հայրենակիցները: Ես վիճում էի առաջին ուսանողի հետ. դուք պէտք է որ նորան ճանաչէք, կամ զոնէ լսած լինէք նորա մասին—Մակսարեան ազգանունով:

—Այո, լսած եմ. մի անգամ տեսած էլ եմ նորան, բայց ծանօթ չեմ:

—Մակսարեանը ուսումը վերջացրել էր Իմ շատ վառվառն և եռանդալից հայեացքին նա նայում էր ծերի յոզնած երեսով և պատասխանների մէջ էլ միևնոյն յոզնածութիւնն էր արտայայտում: —Ա՛հ, մէք էլ ենք այդպէս մտածել... է՛հ, հեշտ է ասելը... ի հարկէ կարելի է մի բան անել, բայց ներքին խոչընդոտներ... Մեր է պատուանդանը... և այլն, և այլն: Զը նայելով իմ սաստիկ վառուած լինելուն՝ այնու ամենայնիւ զգացի, ինչպէս սաստիկ մեռելութեան մի շունչ փչեց Մակսարեանից: Բայց ես չէի կարող գտել ինձ և սկսեցի մինչև անգամ ակնարկել, որ զարմանալի է երիտասարդ մարդկանց մէջ տեսնել այնպիսի պառաւ արամադրութիւն: Մակսարեանը սկսեց փոքր ինչ իրան պաշտպանել և մինչև անգամ զարձաւ իւր ընկերին, որ նոյնպէս խօսակցութեան մէջ մտաւ: Մեր սկսեցինք ուղիղ զիպչել սկզբունքներին: Մակսարեանը ձեռական կողմից ինձ հերքեց և ես փոքր ինչ ընկճուեցի. բայց չը համոզուեցի և նորա հետ չը համաձայնուեցի, իսկ մի քանի կողմնակի կերպով ցրուած նախադասութիւնները ինձ

մինչև անգամ շուարեցրին. գործրինակ՝ Մակսարեանը  
 դառնալով իւր ընկերին՝ ասում էր. «Բաւական չար-  
 չարուել ենք և ջախջախուել մեր ուսանողական  
 կեանքում. մեր բոլոր ոչմերը քամուեցին, իսկ սպրե-  
 լու ժամանակ չը մնաց. ինչո՞վ ենք մեղաւոր, որ  
 մշտական տանջանքի դատապարտուենք. այնտեղ պա-  
 ճանջներ, այստեղ պաճանջներ. մարդու զլուխ արօք-  
 ւում է. — և ո՞վ է պատրաստ մեզ օգնելու, մեզ պաշտ-  
 պանելու մեր գործի մէջ: — Խօսակցութիւնները շատ  
 երկարացան. ես խօսում էի սաստիկ զրգռուած և  
 կարծես թէ ջղալին կերպով հիւանդացած. այնպէս  
 որ Մակսարեանը աշխատում էր ինձ հանգստացնել և  
 ինձ հետ համաձայնուել, բայց ես նկատեցի, որ միակ  
 չիմար դեր կատարողը ես եմ այդ հասարակութեան  
 մէջ: Յանկարծ վերջ դրի խօսակցութեանս. բայց մի  
 երկու րոպէից յետո՞յ՝ չը կարողացայ լացս պաճել և  
 դուրս վազեցի սենեակից և ուղեորուեցի գէպի խուլ  
 փողոցները և քիչ մնաց, որ դուրս գալի քաղաքի  
 շրջանից: Բայց աչքի առնելով ուշ լինելը՝ շտապեցի  
 տուն դառնալ: Արդէն բաւական հանգստացել էի և  
 աշխատում էի առ ժամանակ չը մտածել եղածի վե-  
 րայ: Տուն դարձած՝ տեսայ ընկերիս իմ սենեակում  
 նստած: Նա դարմացել էր իմ բացակայութեան վե-  
 րայ. բայց վճռել էր սպասել և պատմեց, որ իմ  
 գնալուց յետոյ խօսակցութիւնը բողբոլին դադարել  
 է. նա հաղորդեց, որ Մակսարեանը ասել է, որ ինձ  
 հետ իրր թէ վիճել անկարելի է, որովհետև շատ մօտ

728797. 75.136  
 46188



եմ առնում սրտիս ամեն բան և շատ վրդովւում: Այդ բոլոր պատմածները ես լսում էի հանդարտ, առանց իմ կողմից նկատողութիւն անելու, որովհետեւ մտադիր չէի խօսելու: Ընկերս յետոյ կցեց, որ Մակ-սարեանը մի ժամանակ եռանդով հետաքրքրւում է եղել զանազան տեսակ խնդիրներով, որ նա բաւակա-նին կարողացած էլ է և այլն: Այդ բոլորը ինձ համար մի հնազիտական լուրի նշանակութիւն ունէր: Աս լուռ էի մնում:— Ընկերիս գնալուց յետոյ ես ինձ զսպել չը կարողացայ. կրկին զարթեցին իմ մէջ պա-տահածի մանրամասնութիւնները: Մի երեկոյում ինչ-քան փոփոխութիւն իմ սպասածի, իմ կարծածի մէջ: Այդ երեկոն ինձ համար երեք տարի դարձաւ: Այժմ ես կարողանում եմ փոքր ի շատէ հանդարտ պատմել, բայց այն ժամանակ ես խորովւում էի: Մի հարուածը այն էր, որ տեսոյ ուսանող՝ Մամիկեանին ընկեր, նորանից ամենեւին չը բարձրացած. բայց դա դեռ շատ մեծ հարուած չէր, որովհետեւ բացառութիւններ ամեն տեղ լինում են և Մամիկեանը մեր մէջ մի՞թէ միեւնոյն բացառութիւնը չէր: Միւս հարուածը այն էր, որ ուսանողը արդէն ուսանողութեան ժամանակ կորցրել էր իւր եռանդը և մատաղ ոյժը և հողեպէս ծերացել: Երբորդը այն էր, որ նա այնքան հեռացել էր ժողովրդից, որ ձեւակերպում էր իւր գաղափար-ները կամ իւր ներքին իղձը մի օտարոտի սծով, օտա-րոտի բացազանութիւններով: Աս զխսենում եմ, որ այստեղ արդէն ինձ չը հասկանաք դուք:— Ինձ չիչեց-

նում է, թէ որչափ ուրեմն այդ ուսանողը հեռացել է մեր հասարակութիւնից, որ իւր սրտին սիրելի մտքերը չի կարող չալանել իւր շրջապատողներին: Ես մտածում էի՝ եթէ դա է հետեւանքը—այդ յոգնածութիւնը, վաղ պառաւութիւնը, —ուրեմն ինչու է պէտք ուսանողութիւնը: Ես ինքս ասում էի ինձ. կը գնամ, ուսում կ'առնեմ, բայց ոչեւ կը սպասեմ և կը դառնամ հայրենիք. ում և ինչի կը լինեմ ես պէտք: Յանկարծ միտքս եկաւ, որ մեր քաղաքում հինգ իրաւագէտներ կային, երեք բժիշկ, երկու արհեստագէտներ. դոքա բոլորն էլ բարձր ուսում են ստացած. դոցանից միայն մէկը — բժիշկ Սաղարեանը — կենդանի մարդ է՝ հասարակական խնդիրներ քրքրող և բնոհանուր շահերի ջատագով: Աւրեմն, ուրեմն, կրկնեցի ես մի քանի անգամ և այն էլ բարձր ձայնով և անվճիռ թողած ինձ տանջող խնդիրը՝ աշխատեցի քննալ: Ես անվճիռ թողի ուսանողութեան մասին խնդիրը. ես ասում էի՝ թէ այնտեղ կան երեւի և լաւ բացառութիւններ: Տեսնում էք, որտեղ ես հասայ. ես դեռ մի քանի ժամ առաջ կարծում էի, թէ վատ ուսանողութիւնն է բացառութիւն: Այդ խնդիրը ես չը վճռեցի. այլ մի ուրիշ խնդիր արդէն բոլորովին հաստատ վճռեցի — այն, որ ես բարձր ուսում ստանալու չը պէտք է գնամ: Այդ երեկոյ վճռեցի. և ահա երեք տարի է հաւատարիմ եմ վճռիս և յոյս ունեմ միշտ հաւատարիմ մնալու: Գուցէ այս մտքերի հետ դուք համաձայն չէք. բայց

ես չաղտնում եմ իմ կեանքի մի կտորը, ինչպէս նա  
եղել է և կալ: Ձեզ համար դա մի պատմութիւն է,  
իսկ ինձ համար՝ իրադործուած ողբերգութիւն: Ես  
մտադիր չեմ պատմելու շատ ուրիշ մանր դէպքեր,  
թէ ինչպէս, զորօրինակ, նոյն իսկ Մակսարեանը աշ-  
խատում էր ինձ չետոյ համոզել, որ գնամ բարձր  
ստումնարան և այլ այդ տեսակ անցքեր: Ընկերներս  
գնացին Մօսկվա և Պետերբուրգ, ես այստեղ մնացի:  
Նամակներ ստանում էի նոցանից և մինչև այժմ  
էլ ստանում եմ, թէև ուշ-ուշ: Հարցնում եմ ձեզ  
այժմ. ինչ զանազանութիւն կայ նոցա և իմ մէջ:

— Ի՞նչ տեսակէտից, հարցրի ես:

— Ի՞նչ տեսակէտից կամենում էք, փորձեցէք  
զանազան տեսակէտներից:

— Առաջինը, ասացի ես, նոքա ստանում են  
իրանց ընտրած մասնագիտութեան համեմատ մի հա-  
մակարգուած ուսում, երկրորդ...

— Մոյասեցէք, պատասխանեմ առաջին կէտին:  
Ես խնդրեցի ընկերներիցս մէկին, որ ուսումնասիրում  
է իրաւարանութիւն, ու զարկի ինձ բոլոր դասախո-  
սութիւնները, չետոյ ինքս՝ քրքրելով զանազան գրքեր՝  
կազմեցի մի մեծ ցուցակ այնպիսի գրքերի, որոնք  
վերաբերում էին իմ ցանկացած գիտութիւններին և  
սկսեցի շատ խիստ կարգաւորութիւնով կարդալ, քննե-  
լով միևնոյն ժամանակ աղբիւրները: Ընկերներին նա-  
մակներիցը ես տեղեկանում էի, որ նոքա շատ էլ  
կանոնաւոր չեն ջանախում դասախօսներին, որ նոցա

բաժներն էլ կրում են պատահականի բնաւորութիւն: Իրաւագէտ ընկերս մինչև անգամ՝ երբ անցեալ տարի տուն էր դարձած և ինձ պատահեց — երկայն խօսակցութեան միջոցին չաչտնեց, որ նորա համալսարանական ընկերների մէջ գուցէ ոչ ով աչնպէս մանրամասն չը դիտէ առարկաները, ինչպէս ես: Այս երեք տարուայ մէջ, ես անցել եմ բոլոր իրաւագիտական առարկաները, որչափ կարելի է մանրամասն: Բացի դա, բոլոր ազատ ժամանակս նուիրել եմ ընդհանուր ընթերցանութեան և ես հաստատ գիտեմ, որ համալսարան գնացած ընկերներս այնքան չեն կարգացել, որչափ ես:

Եսկն ասած՝ ինձ շատ զարմացրեց այդ տեսակ տոկունութիւնը. ես դեռ կամենում էի ինքս փոքր ինչ մտածել պատանու վերայ. բայց նա սպասում էր իմ երկրորդ հարցին:

— Երկրորդը, ասացի ես, ուսանողական շրջանի ազատ երխտասարդական կենցաղավարութեան ազդեցութիւնը ուրիշ է, քան ձեր սենեկային ուսանողութիւնը:

— Երկրորդ տեսակէտը կարող էր, ի հարկէ, նշանակութիւն ունենալ — եթէ խօսքը իմ ընկերների վերայ չը լինէր: Ես նոցա ազատ երխտասարդական կեանքի ոչ մի բարերար ազդեցութիւնը չեմ տեսած: Նորա միայն աւելի համարձակ են դարձել և աչն, ինչ որ գիմնագիտում նոքա չաչտնում էին երեխայաբար, բայց իրանք էլ ամաչելով իրանց անկատարելու-

Թիւնից, այժմ նորա չայտնում են միւնոյնը աւելի ազատ, շեշտելով և իբրև մի պատգամ արտասանելով: Բայց ես, որ նոցա ճանաչում եմ վաղուց և զիտեմ նոցա բնաւորութիւնները, միայն զարմանում եմ և բարկանում: Իսկ սենեկային ուսանողութեան վերաբերմամբ ես ինքս էլ ցաւում եմ և ձեզ դիմելու պատճառը մասամբ այդ է: Բայց համեմատութեան կողմից կ'ասեմ. մի՞թէ, համալսարանական ուսանողը, եթէ անձնատուր է իւր մասնագիտութեան, նոյնպէս սենեկային չէ: Աս կարգացել եմ զոնէ գերմանական ուսանողների կեանքից այդ տեսակ նկարագրութիւններ:

— Խնդրեմ, առանց ինձ հարց առաջարկելու, շարունակէք ձեր ասելիքը, պատասխանեցի ես նորան. ինձ հարցեր տալը գործը դժուարացնում է, որովհետեւ ես իմ կործիքը ունեմ ուսանողութեան վերայ— թեր և դէմ:

— Այո՛, ճշմարիտ է ձեր ասածը. բայց իմ հարցեր տալը այն նպատակն ունէր, որ ձեզ ցոյց տայի թէ ես շատ բաների վերայ մտածած եմ և խորհած: Երեք տարուայ շարչարանքս չեն կորցրել, ի հարկէ, իմ եռանդը, բայց նորան տուել են մի ցաւոս, մի սրտամաշ կերպարանք. ես միշտ անբաւական, միշտ դատաքննող—կարծես կեանքի մարդ լինելուց հեռացել եմ: Պէտք է ասեմ, որ այստեղ արդէն սկսում է անորոշութիւն. ես հաստատ ձեզ ոչինչ չեմ կարող ասել. — մինչև այժմ՝ անցեալ իրողութիւն էի պատ-

մում, այժմ սկսում է իմ ներկան և բոլորը խառնի-  
խուռն դրութեան մէջ է ընկնում: Այժմ հասել է ժա-  
մանակը, որ ես պէտք է կեանքիս կղանակը փոխեմ,  
որ պէտք է աշխատեմ աւելի ու աւելի գործունէու-  
թեան մօտիկանամ: Եւ այս բանում դուք ինձ պէտք  
է օգնէք: Ես կարդացել եմ ձեր մի քանի նամակները  
(ձեր և ի՞նչպէս՝ այդ միլենոյնն է), ձեր նամակների  
միջից երկու նախադասութիւն ինձ վերայ ազդել են  
և այդ պատճառով ես մտադիր եմ խնդրել ձեզ եր-  
կայն խօսելու:

— Ի՞նչ նախադասութիւններ են:

— Գուցէ մինչև անգամ դուք մոռացած էք,  
որովհետև տարի ու կէս առաջ գրեած բաներ են  
նորա: Ես միայն կարճ մտքերը կարող եմ ասել: Մէկն  
այն է թէ՛ մեր մէջ անգործադիր ոյժեր շատ կան  
զանազան որականութեան, պէտք է և կարելի է մեծ  
գործ գտնել նոցա համար. միւս նախադասութիւնը  
այն է թէ՛ պէտք է օգտուել ժողովրդական կեանքի  
այն արտայայտութիւններից, որտեղ վառ է ստեղծա-  
գործական ոյժը և խողում է կենդանութեան երակը:  
Գուք չիշո՞ւմ էք դոցա:

— Ես հաւատում եմ, որ այդ տեսակ բան կա-  
րող էի գրել. սակայն, իմ կարծիքով, թէև այդ եր-  
կու նախադասութիւնները մեծ ամփոփ ունեն՝ այնու-  
ամենայնիւ կարօտ են լրացնող կէտերի, որոնց պէտք  
է աչքի առաջ ունենալ:

— Այժմ ես խնդրում եմ, ասաց պատանին, որ-

չափ կարելի է հանգամանօրէն չաչոնեցէք ինձ ձեր հայեացքները:

Նս սկսեցի մանրամասն քննել մեր հասարակական կեանքի դրութիւնը: Գրաւուեցի առարկայով և մեծ զգացմունքով խօսեցի: Պատանին սկսեց կամաց-կամաց զլուխը բարձրացնել և ինձ վերայ նայել. չետոյ բոլորովին անձնատուր եղած մի տեսակ անգործութեան՝ թուլացրեց իւր կիտած ունքերը և մեղմ մտածութիւնով լսում էր ինձ: Նս չեմ պատմում կրկին իմ ասածները. դա աւելորդ է, դու զիտես արդէն իմ գաղափարները:

Նրկայն խօսակցութիւնից չետոյ, եկանք այն եզրակացութեան, որ նա մի քանի ամիս էլ կամ մի տարի պարապուի ուսումնասիրելով գործնական կեանքի պայմանները և պահանջները, աշխատի այցելել շատ զիւղեր և քաղաքներ:

Մեձնից հեռանալիս, պատանին ջերմ, բայց կտրուկ սեղմեց ձեռքս և հեռացաւ: Հետաքրքրական այցելու չէր... ինձ համար տակաջն շատ բան հասկանալի է:

Նամակս շերկարացնելու համար, ես դուրս գցեցի մեր վերջին խօսակցութիւնները: Դու ի հարկէ, անբաւական կը մնաս նամակս կրճատելուց: Բայց մտածիր, սիրելի քոյր, մի բոպէ.— մի՞թէ պատմածս չէ ամենազլխաւորը, մի՞թէ օտարոտի այցելուիս խոստովանութիւնը չէ ամենատակաւորը: Դսկ այն, ինչ որ ասուեց, խօսուեց չետոյ,— լսել ես դու շատ անգամ

մեր վէճերում: Եթէ քեզ սպակասորդ բան է թւում  
մնացած՝ նորա սրտմածի մէջ—այդ նորա մեղքն է:  
Այսքանովս բաւականացիր. նամակս էլ տեսնում ես, որ  
բաւականին մեծ է դուրս գալիս:

Մանուկեանը ինձ ասաց, որ նա դեռ մի քանի օր  
քննելու է մանրամասն իմ ասածները, սակայն աւե-  
լացրեց, որ եթէ ինձ հետ տեսակցելու լինի—չի  
վճռուիլ մի տարուց առաջ:

Ի՛նչ ես կարծում: Յ'դրու թիւն:

Ք. Ս. Պ.

*Աստուծոյ խնայեալս*

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱԹԱՄԵԱՆԸ**

Սերեւե քոյ՛ն

Գու ցանկանում ես, որ նկարագրութիւններիս մէջ բաց չը թողնեմ իմ խօսակցութիւնները: Այդ քո ցանկութիւնը ես կը կատարեմ ո՛չ լիապէս Քաջ կ'աշխատեմ առաջ բերել այն կէտերում, ուր խօսակցութիւններս պարզում են այստեղի հասարակական կեանքի մի որ և է երևոյթ:

Անցեալ օրը մի փոքր երեկոյթում ծանօթացայ Հաթամեան անունով մի երիտասարդի հետ, որի մասին արժէ քեզ տեղեկութիւն տալ: Հաթամեանի մէջ աւելի սուր և որոշակի կերպով նկատեցի արտաշայտուած այն գծերը, որոնք մի խումբ երիտասարդների մէջ խառնուած են երևում ուրիշ առանձնաչատկութիւնների հետ: Ես կը նկարագրեմ քեզ այն երեկոն, որտեղ դէպք ունեցայ Հաթամեանի հետ ծանօթանալու:

Պէտք է ասեմ քեզ, որ այստեղ գրականական երեկոներ առհասարակ չեն չաջողում: Զանազան ժամանակներ եղած են փորձեր, որոնք մնացել են իրանց հետեանքներով ասպարդիւն: Ուստի այժմ, երբեմնա-

պէս միտչն, կազմուած են նեղ շրջանի համար մանր մունր ընտանեկան երեկոներ, ուր խօսուած են առօրեայ հասարակական խնդիրների վերայ կամ կարդացուած են յօդուածներ: Մի այդ տեսակ երեկոյ սարքուած էր Մնացականեանց անունով պարոնի տանը: Ես թէև նոր էի միայն ծանօթացած Մնացականեանցի հետ, նա այնու ամենայնիւ հրաւիրեց ինձ անպատճառ զարգելու իւր հրաւերը: Առ հասարակ Մնացականեանցը շատ սիրուած է նոր ծանօթներ և հիւրեր, այն էլ զանազան շրջանների և հայեացքների պատկանող:

Երեկոն, իբրև ընտանեկան, կարելի էր համարել բազմամարդ: Փողովուած էին մինչև քսան անձ: Կային վեց հոգի կանանց սեռից. մէկը ատկին Մնացականեանցը, միւսները օրիորդներ՝ ըստ մեծի մասին նոր աւարտած իրանց ուսումը զիմնադիտուած և ծխական դպրոցներում. աղամարդիքը—զանազան պարապմունք ունեցող և պարապմունք պտուող երիտասարդներ:

Մնացականեանցը ներկայացրեց ինձ բոլորին և բացատրեց ինձ երեկոյի ծրագիրը:

—Ահա մեր չարգելի բարեկամ Ալախեանը այս երեկոյ կը կարդայ մի յօդուած, որի մասին ցանկալի է իմանալ ներկայ եղողների կարծիքը: Այժմ ազատ ժամանակ ունենանք՝ ուրիշ խնդիրների վերայ ևս կը խօսենք:

Մանր մունր խօսակցութիւններից չետօյ, որոնք կենդրոնացած էին օրիորդների շուրջը, Մնացականեանցը հրաւիրեց սկսելու ընթերցումը:

Ալաֆեանը իւր յօդուածը խորագրել էր այսպէս. «Մի ազգի ստաշաղիմութեան պայմանները:» Յօդուածը գրել էր կոկ և բաւականին զեզեցիկ ոճով:

Յօդուածի գլխատ որ իմաստը սա էր: Աւրաքանչիւր ժողովուրդ հետեանք է այն ազգեցութիւնների, որոնցով նա շրջապատուած է: Արչափ զանազան են այս կամ այն ժողովրդի վերայ եղած ազգեցութիւնների համագումարները, այնչափ և զանազան են այդ ժողովրդների պատկերները: Ալաֆեանը շեշտում էր, որ պէտք է ժողովրդի կեանքը և նոցա բնածիր շարժումը գիտակցական շինել և ստաշարկում էր հայրենադիտութեան շատ մեծ տեղ տալ թէ՛ գպրոցի և թէ՛ գրականութեան մէջ:

Ընթերցումը վերջանալուց յետոյ, լսուեցին զանազան կողմերից նկատողութիւններ, որոնց ընդհանուր իմաստը համակրական էր և ի նպատակ յօդուածում չաչանած մտքերի:

Փոքր ինչ ուշ խօսք խնդրեց մի երիտասարդ, որի մասին է գլխաւոր գրելիքս այս անգամ;— Հաթամեան ազգանունով: Սա սկսեց խօսել շատ խիստ, շեշտելով իւր ասածների վերայ և մարտնչողի զիրք ասանելով: Երիտասարդներից մի երկուսը շատ ծուռ էին նայում Հաթամեանի վերայ. մնացածները անտարբեր էին պահում իրանց, իսկ մի քանիսը ակներև համամիտութեան նշաններ էին ցոյց տալիս:

Հաթամեանը ասաց մերձաւորապէս, որչափ չիշում եմ, հետեւեալը. —

— Հեղինակը իւր չօղուածը խորագրել է. «Մի ազգի առաջադիմութեան պայմանները»: Աս նախ հարց կը տալի՜ կարելի է միթէ մի այդպիսի մեծ խնդրի, ինչպէս ազգի առաջադիմութեան պայմանների խնդիրն է, ձեռք զարկել առանց հիմնաւոր ծանօթութիւն ունենալու այն բանի հետ, թէ ի՞նչ է առաջադիմութիւնը: Աս պնդում եմ, որ հեղինակը չը գիտէ թէ՛ ի՞նչ է առաջադիմութիւնը եթէ՛ նա այդ իմանար, չէր գրիլ և չէր կարգալ մեր առաջ իւր չօղուածը: Նա ուզում է այնքան կանոն ստեղծել, որչափ ժողովուրդ կայ աշխարհումս: Մի ուսումնական վաղուց ասել է, որ բոլոր ժողովուրդների զարգացումի տարրերը միևնոյնն են: Աս կ'աւելացնեմ այդ կործիրին, որ եթէ մարդկութեան առաջադիմութիւնը մէկ է, ուրեմն և լուսաւորուած ազգերի զարգացումները պէտք է զեկավար լինեն չը լուսաւորուածների համար: Կսկ հեղինակը ի՞նչ է առաջարկում: Նա առաջարկում է գիտակցական շինել ազգի բնածիր շարժումը: Ասեցէք, «բնածիր շարժումը»: — Թող ինձ բացատրեն՝ ինչ է նշանակում— ժողովրդի բնածիր շարժում: Անթաղում եմ, որ դա նշանակում է թէ ազգը ունի մի չափանի հակում զարգանալու: Աւ ուրեմն՝ հակումը պէտք է միայն թեւաւորել: Թողէք այդ չիմար միտքը՝ թէ գուք պէտք է նոր Ամերիկա գտնէք և այն էլ ձեր հայրենի նախապաշարմունքների մէջ: Միանանք բոլոր աշխարհի առաջադիմների հետ և կուտենք հնի և փաստի դէմ: Արչափ դուք ուզէք

հնի և փասածի մէջ լաւ բաներ գտնել — այնչափ պէտք է ընկղմուէք անլուծելի հանելուկների մէջ: Ինչ բնական հակում էք պտուում մեր կեանքի մէջ: Գիտենք այդ բաւականաչափ: Միմեանց կողոպտել, հարստահարել, միայն փորի վերայ մտածել, հայրերի նման անպիտան որդիներ պատրաստել — ահա մեր կեանքի բնածիր հակումը: Վերջին տարիները սրտեղից տարածուեց այս ժանտախաղ — երեւակայել թէ մաշած շորերի մէջ գաղափար կայ, նոցա մէջ ջերմացնող ոչ ի կայ: Յետադիմութիւնը ակներև է: Մեր հեղինակը, որ նպատակ է դրել խօսել առաջադիմութեան պալմանների մասին — հիմնում է բոլորը եղածի վերայ. իսկ ևս եղածի մէջ չեմ ընդունում տարբեր, որոնցից կարողանար բղխել որ և է առաջադիմութիւն: Պնդում եմ, պէտք է նորից կազմակերպել կեանքը աւելի արդար հիմունքների վերայ: Եղածից ստանալիք չունենք, այլ եղածին տալիք ունենք:

Հաթամեանը իւր ասելիքը վերջացնելուց չետոյ էլ՝ մրմնաց այսպիսի մի քանի կծու խօսքեր — թէ իւր երկրի մէջ գտել է պարոնը իւր դրախտը, իւր որջից դուրս էլ աւելի լաւ բնակարան չի գտնում խեղճը և այլն:

Հաթամեանը տպաւորութիւն գործեց, և նորա լսելուց չետոյ բոլորե քեան մի բողէ լսեցին: Ապա յօդուածի հեղինակը սկսեց իրան պաշտպանել. միւսներն էլ մասամբ նորան օգնեցին և, կարելի է ասել, վերջ ի վերջոյ արդարացրին հեղինակի մտքի լայն օդտակա-

բութիւնք, ապացուցեցին, որ Ալաիեանի և Հաթամեանի ասածների մէջ այնքան մեծ տարբերութիւն չկայ: Բայց ընդհանուր ուրախ տրամադրութիւնը չը վերականգնեց, նամանաւանդ, որ Հաթամեանը աւելացրեց, թէ նորա ասածը բոլորովին տարբեր է յօգուածում չաչտնած մտքից և զարմանում է, որ խօսակիցները նպատակ են գրել ոչ այնքան հասկանալու զանազան մտքերի արտայայտութիւնը, որչափ հաշտեցնելու վիճարանողներին:

Տանաէրը ջանկարծ դարձաւ ինձ, որ ես էլ չաչտնեմ կարծիքս: Ես ամենին միտք չունէի այդ երեկոյ խօսելու: Աէ՛ծի վերայ նայում էի աւելի զխոռոչի, քան թէ մասնակցողի աչքով: Ես լաւ տեսնում էի այն զանազանութիւնը, որ կար երկուսի մտածմունքի եղանակի մէջ և ցանկանում էի իմանալ թէ ո՞րչափ որոշուած է այս կամ այն տեսակէտը և արդեօք այդ զանազանութիւնը պատահական է թէ զխտակցական, պատմական:

Դու գիտես, սիրելի քոյր, որ ես համարում եմ Ալաիեանի առաջարկութեան գործնական մասը շատ կարեւոր մի ազգի զխտակցական և կանոնաւոր զարգացումի համար: Ես նորան համարում եմ անպետածգելի գործերից մէկը, որով պէտք է սկսել իսկոյն զբաղուել: Ես համաձայն չեմ այն կարծիքի հետ թէ կեանքից ստանալիք շունենք: Սխալ է. շատ ստանալիքներ օւնենք: Իսկ ուրիշ խնդիր է, թէ զխոսութիւն մեզ պէտք է թէ ոչ. ի հարկէ պէտք է, անհրաժեշտ է, պարտաւորեցուցիչ կերպով հարկաւոր է:

Ահա այս իմ միտքը ես չաչտնեցի ժողովին, որ լսեց լսելեան: Համաձայնուեցին իրանց մտքում ժողովականները թէ ոչ՝ չը գիտեմ. միայն այնուհետև չօղուածի մասին վիճարանութիւնը դադարեց: Տանտիկինը չաչտարարեց, որ այդ երեկոյի զուտ գրական մասը նա համարում է վերջացած. այժմ առաջարկում է հանդատանալ, գրադուել զրօյցներով, կատակներով, ինչպէս շարմար կը գտնի հասարակութիւնը:

Նրկու օրիորդ և մի պարոն մօտեցան դաշնամուրին և սկսեցին երաժշտական աշխարհից խօսել: Ես ևս հարեաններիցս մէկի հետ մասնաւոր խօսակցութիւններով զբաղուեցի: Աննկատելի կերպով իմ շուրջը ժողովուեց մի հինգ մարդ, որոնց մէջն էր և Հաթամեանը: Վերջինս դարձրեց խօսքը իմ չաչտնած մտքերի վերայ և շեշտեց, որ ես իբր թէ միամտաբար թե եմ տալիս այն երիտասարդներին, որոնք խմորուած են իրանց շրջապատող փեթակի մթնոլորտով և այդ փեթակից դուրս ոչինչ չեն տեսնում:

Ես հարց ու փորձ արի այժմեան երիտասարդութիւնը սողորոզ գաղափարների մասին: Երիտասարդներից մէկը փորձ էր անում մի երկու երեք նոր երևոյթների մասին խօսելու, բայց Հաթամեանը խօսքը կտրեց.

— Ի՞նչ երիտասարդութիւն, ինչ գաղափարներ ի՞նչ էք կորցրել, ո՞ր էք պտուում: Աչտեղ չը կայ երիտասարդութիւն ասած բանը, չը կայ հասարակա-

կան կեանք, չը կայ քննադատութիւն, չը կայ մամուլ։  
Եղածները միայն ամօթաբեր են։

— Քայց և այնպէս մի բան պէտք է լինի. առանց  
այդ չէ կարող լինել։

— Այլինչ չը կայ. թող ցոյց տան ինձ մեր կեանք-  
քում մի մտիթարական կէտ, որ խկապէս հաստատ  
զարգացումի նշան համարուել կարողանար։

— Ես այդ չեմ պահանջում, ես պտուռւմ եմ  
մտքի այն նոր ձևաւորութիւնները, որոնցով փոքր  
ի շատ է հարստացել է մեր հասարակական մտածո-  
ղութիւնը։

— Ախոս են այդ բառերը, պատասխանեց Հա-  
թամեանը, որովհետև նոցա նշանակութիւնը այտուեղ  
ազաւաղուած է։

— Պարոն Հաթամեան, դուք երևի ինձ չէք հասկա-  
նում. ես այն չեմ ասում՝ թէ որչափ մեծ գնահա-  
տութեան արժանի բաներ են կատարուած մեր կեանք-  
քի մէջ. շատ կարելի է, որ այդ տեսակ մի բան  
չը կայ ամենեւին. բայց մեր հասարակութիւնը, որ  
նոր է սկսում զարգանալ, անշուշտ մի որ և է առանձ-  
նայատկութիւն ցոյց է տալիս իւր զարգացումի ըն-  
թացքի մէջ. ինձ հետաքրքրում է այդ տեղական  
առանձնայատկութիւնը, նորա հասարակական նշանա-  
կութիւնը։

— Այդ առանձնայատկութիւնը այն է, պատաս-  
խանեց Հաթամեանը, որ առաջինը՝ մերայինները  
սկսել են պատգամօրէն համոզել, որ մեր կեանքը

ինքն ըստ ինքեան և՛ նիւթ է և՛ գաղափար. երկրորդ՝ հասել են այն ծիծաղելի համոզմունքին, թէ ընդհանուր մարդկային շարժումի մէջ մենք էլ արդէն տեղ ենք բռնում:

— Բայց այդ եղածներից դուքս դուք չէք տեսնում հաստատ գործունէութեան մշակների, որոնք առաջ տանում լինէին առաջադիմութեան գործը:

— Կան մանր մունր. ևս սրտեղից այժմ մէկ մէկ թուեմ. ևս խօսում եմ ընդհանրապէս:

— Իսկ այժմ խօսեցէք մասնաւորապէս:

— Ինձ չէ գրաւում մասնաւորապէսը, որովհետեւ նա մարդուն շատ փոքրացնում է, մանրակրկիտ է շինում: Ա՛յ, մի այդ տեսակ պարոն կայ մեզանում. նա ամեն օր կոտորակների հաշուով է զբաղուած:

— Ի՞նչպէս թէ կոտորակների:

— Հաշուում է թէ որ գիւղում ինչքան առաջադիմութիւն եղաւ, ինչքան ձախորդութիւն պատահեց:

— Մի՞ թէ նորան վատ գործիչ էք համարում:

— Շատ բու և լուսաւորուած մարդ է, բայց նորա հետ խօսելը ձանձրալի է:

— Ո՞վ է այդ պարոնը, այս ժողովումն է:

— Ո՛չ, նա այսպիսի ժողովները համարում է շռայլութիւն, որ կարելի է թող տալ միայն երբեմն, ըստ պատահման: Նա այդեգործութիւնով է սկսել զբաղուել, ունի կանոնաւոր խնամած վագեր և բաւ պաղատու ծառեր: Ինձ մի տանն անգամ պատմել է

այդ բոլորի մասին, բայց ևս շուտ ևս մտանում  
մանրամասնութիւնները: Ահա այդ պարոնը ամեն  
անգամ, որ գալիս է քողաք մեզ մօտ, զարմանալի  
բաներ է պատմում իւր հարեան գիւղացիների կեան-  
քից: Զարմանալի ևս ասում, որովհետեւ նա զարմա-  
նում է գիւղում եղածների վերայ. իսկ մենք զարմա-  
նում ենք նորա զարմացքի վերայ:

Ես ենթադրեցի, որ Հաթամեանը երևի ակնար-  
կում է իմ ընկերակից և քո լաւ ծանօթ Սանարէ-  
զեանի մասին, որ՝ ինչպէս քեզ յայտնի է՝ ահա եր-  
կու տարի է այս տեղերքն է և որի այդեզործու-  
թեան և զանազան տարաորութիւնների մասին զա-  
զափար ունեւ կազմած նորա նամակներից: Բայց ևս  
ցանկանում էի գիտենալ Հաթամեանի կարծիքը և  
շարունակեցի խօսակցութիւնս:

— Զորօրինակ՝ ի՞նչ է նա պատմում:

— Հազար տեսակ բաներ. զորօրինակ՝ նորա հա-  
րեան գիւղացիները շատ մեծ կասկածով են նայում  
եղել նորա խորհուրդների վերայ և իրանք փորձում  
են եղել մնասելու իրանց անկոչ բարերարին և չետոյ  
երբ, մի քանի դէպքից չետոյ, համոզւում են, որ սա  
անկեղծ է և իսկայէս բարեցակամ, սկսում են վերա-  
բերուել ամենալաւ կերպով: Պէտք է տեսնէիք, թէ  
ինչ ոգևորութիւնով էր խօսում պարոնը իւր հաս-  
տատած բարեկամութեան մասին. նա կարծես այդ  
բանին աւելի նշանակութիւն էր տալիս, քան զուցէ  
գեթմանացիները իրանց պատերազմական չաղթու-

թեանը: Մի անգամ նա եկաւ և դարձեալ աւետեց  
մի նոր չաղթութիւն. նա կարողացել էր համոզել  
գիւղացիներին՝ մի ժայռ քանդել և ջուր բերել մին-  
չև այգիները: Այդ չաղթութեան մասին նա խօսում  
էր ամբողջ օրեր. հաշուում էր մի ատ մի թէ՛ որչափ  
հարստութիւն պէտք է աւելանայ գիւղում, որչափ  
նոր հողեր կարելի է մշակել, և այլն:

— Գարձեալ հարցնում եմ, մի՞թէ դուք այդ բո-  
որը վատ կամ ծիծաղելի էք համարում:

— Են՞ու էք այսպիսի հարց զնում. դուք ինձ  
այն ասացէք թէ ծիծաղելի չէ, երբ դուք տեսնում  
էք մի մարդու, որ մի շինութեան մասին աւելի աղ-  
մուկ է հանում, քան ամբողջ քաղաքի բարեկեցու-  
թեան մասին: Նա շատ է իրան սահմանափակում  
աննշան մի շրջանի մէջ: Երբ նա դալիս է մեր շրջան  
ները, միշտ տխրում է. միշտ կրկնում է թէ՛ պէտք  
է գիւղ վազի—եթէ չէ՛ կը հիւանդանայ:

— Արդեօք դուք Աանարեգեանի մասին չէք խօ-  
սում, հարցրի ես:

— Այո՛, դուք ուրեմն նորան ճանաչում էք:

— Այո՛, նա իմ ուսանողական ընկերս է:

— Ծիշդ է, ծիշդ է. նա ձեր մասին պատմել է:  
Ասացէք ինքներդ. մի՞թէ կարելի է այդքան փոքրա-  
նալ, այդքան կղզիանալ, այդքան սահմանափակուել:

— Ես համաձայն չեմ, փոքր ինչ տաքացած պա-  
տասխանեցի ես: Գուք աւելի էք կղզիացած քան նա-  
որովհետև դուք մուտք չունէք դեռ ժողովրդի մէջ:

Նա ձեզնից աւելի մեծ շքան ունի իւր գործունէութեան համար: Ենչով է նա փոքրացել, նորանով որ համարում է առ աչժամ ընդհանուր խօսակցութիւնների իմաստը սպառուած և փորձ է անում նոր ասպարէզ բանալու: Սահմանափակած է, որովհետև նա ծառայում է ընդհանուր գաղափարի, և մինչդեռ որիչները միայն շարունակում են հին ծամոնը ծամել, նա աշխատում է գաղափարը իրականութեան վերածել ժողովրդի մեծամասնութեան մէջ:

— Բայց ի՞նչ կ'ստէք այն բանին, որ ձեր պարոն Սանարէզեանը զիւղացուն շատ քիչ նոր գաղափարներ է տալիս և կարծես նորան մի տեսակ շողոքորթում է:

— Նա չի կարող շողոքորթել:

— Այնքան քնքոյշ վարուել զիւղացու նախապաշարմունքների հետ՝ շողոքորթել է՞ ի՞նչ է:

— Ես ձեզ ասում եմ, որ Սանարէզեանը շողոքորթել չը գիտէ:

— Ահա մարդը զիւղում ասրում է մօտ երկու տարի և զիւղում համարեա թշնամի չունի: Այնտեղ մի վաշխառու կայ, մի շատ մէջք, ինչպէս ինքը Սանարէզեանը ասում է: Այդ վաշխառուն հարստահարում է զիւղացիներին: Սանարէզեանը պատմեց մեզ դէպք, ուր վաշխառուն կորզում է եղել մի զիւղացու մի տարուայ այգեպտուղը և չաջողութիւն է ունեցել Սանարէզեանի միջամտութեան շնորհիւ: Ես մտադիր էի Սանարէզեանի պատմածը տպել լրագրի

մէջ և խաչատուակել այդ հաստ մէջքին. բայց Սանա-  
բէզեանը բիշ մնաց հետս կուռի, այնպէս խիստ պա-  
հանջեց, որ ուին: Նր գրեմ: Աօացէք, խնդրեմ, այդ  
ի՛նչ է:

— Ի՞նչ էք կարծում, երևի վախկոտութիւն է:

— Եթէ վախկոտութիւն չէ, դորա նման մի բան  
է: Եթէ ես լինեի, գոնէ այդ տեսակ վարմունքը կը  
համարէի կամ կեղծաւորութիւն կամ վախկոտութիւն  
կամ թողութիւն: Պէտք է բողոքել ազատ, համար-  
ձակ, առանց կոպէկների հաշիւների մէջ մոնելու,  
առանց գիշումներ անելու:

— Բայց պ. Հաթամեան, մի՞թէ դուք չէք  
զգում, որ խնդրին սխալ ուղղութիւն և զոջն էք  
տալիս:

— Ի՞նչպէս սխալ:

— Ա՛յ ինչպէս: Ի հարկէ ամեն ազնիւ մարդ  
պէտք է բողոքի վատի, փնասակարի դէմ. ես աւելի  
էլ կասեմ՝ պէտք է մարտնչի: Սանաբէզեանին ես  
ճանաչում եմ իբրև ամենաազնիւ անձնաւորութիւն-  
ներից մէկը: Հարցնում եմ ձեզ. մի՞թէ դուք ուզում  
էք ստել, որ նա չէ օգնում գիւղացուն և չէ փնա-  
սում ձեր չիշած վաշխառուին:

— Ո՛չ, չեմ պնտում:

— Ա՛յժմ ես աւելին կասեմ. ես ևս ծանօթ եմ  
Սանաբէզեանի զործունէութեան հետ: Այս չիշում  
եմ նորա նամակներից, որ վաշխառուի դիրքը քանի  
գնում է՝ դառնում է խախուտ, իսկ գիւղացիները

արդէն սկսել են հաւատալ Սանարէզեանին: Այսօր չէ, էգուց, մէկ էլ կը տեսնէք՝ Սանարէզեանը, հիմնուած գիւղական մեծամասնութեան վերայ, կը կործանի վաշխառուին:

— Այն ժամանակ Սանարէզեանի համար կ'աւելանայ նորա մեծ յաղթութիւններէից մէկը. և նա դարձեալ կ'աւետի մեզ իւր բոլոր ոգևորութիւնով:

— Ես զարմանում, եմ սլ. Հաթամեան, ձեր այդպէս թեթե վերաբերուելուն դէպի հասարակական գործունէութիւնը:

— Ընդհակառակը, ես եմ համարում Սանարէզեանի և գուցէ ձեր վարմունքը թեթե: Գուք էք այդքան մեծ զիջումներով, այդքան ծամուելով մտենում կեանքին: Պէտք է լինէք առաջադէմ ձեր կեանքի իւրաքանչիւր բույէին: Ես նայում եմ կեանքին համարձակ, ամեն տեղ ազատ յայտնելով իմ զգացումները. վատին ասում եմ վատ, հարտահարողի երեսին թքում եմ, վաշխառուին աստակ եմ տալիս:

— Ես չեմ հաւատում, որ այդ ձեզ միշտ յաջողի: Բայց զլխաւորը այդ չէ: Գուք ասացէք ինձ. ի՞նչ դրական բան էք դուր առաջարկում ժողովրդին ձե՛ն նոր բան էք մտցնում ժողովրդի մէջ:

— Այդ գիտութիւնը կը տայ, ասաց հանդիսաւոր կերպով Հաթամեանը. գիտութիւնը պէտք է տարածել ժողովրդի մէջ. նա իւր անելիքը կանխ Քոզ ժողովուրդը իմանայ, որ շոգին ոյժ է, մի այնպիսի ոյժ, որ փոխարինում է ձիու, քամու, մարդու ոյժը:

Թող նա տեսնի մեքենաներ գործողութեան մէջ՝ և նա կ'ունենայ իւր դրական օգուտը:

—Մի՛ թէ Սանաբէգեանի գործունէութիւնը դիտութիւն մտցնել չէ. նա առաջինը՝ զիտութիւն է մտցնում, երկրորդը՝ ծանօթանում է գործնական կեանքի սրահմաններէ հեռ:

—Իսկ ես կարծում եմ, որ նա խախտում ճանապարհի վերայ է: Կիցուք զիտութիւն է ուզում մտցնել. այդ կարող է՝ եթէ չաջողեցնի մի քանի տարի մնալ գիւղում: Բայց որչափ մեասներ կը տանայ: Աննկատելի կերպով կ'ընկնի կեանքի աղբեցութեան տակ: Գոնէ մի քանի տասնեակ տարիներ տեսնում ենք, որ մեր երիտասարդները, երբ մանում են կեանքի մէջ — շատ են գործնական դառնում: Մեր գործնական կեանքից պէտք է շատ զգուշ լինել: Կիտութիւնը տարածեցէք դպրոցի, արհեստանոցների, մամուլի միջոցով: Բայց մի՛ ստիպէք ինձ կատարելու կրթութեամբ մարդու զգացումներին դէմ խաղեր:

—Մենք միմեանց չենք հասկանալ: Գուք այնպէս էք խօսում, իբր թէ Սանաբէգեանները ընդունակ են անազնիւ գործունէութեան:

—Բայց գոնէ այն զիտեմ, որ նոքա կարողանում են ապրել անպիտան մթնոլորտի մէջ:

—Գուցէ ցուելով, տանջուելով, իրանց զոհելով գազափարի համար:

—Չեղ ասացի, որ Սանաբէգեանը տխրում է քաղաքում և գիւղ է վազում:

— Միթէ չէք հասկանում, թէ ինչու է տխրում այստեղ և ինչու վազում զլուր: Որովհետև զիւզում գործելով գաղափար է իրագործում, աւաջապիմութեան ճանապարհ է հարթում: Իսկ այստեղ գործողներ առանց այն էլ շատ է տեսնում և իւր համար ասպարէզի վերայ նոր գործ առ այժմ չի էլ նկատում: Որչափ և ծանր լինէր զիւզում ասրելը ընդհանուր կենցաղափարական տեսակետից, նա, այնուամենայնիւ, աւելի քաղցր է համարում այնտեղի անշուք կեանքը՝ քաղաքի շքեղ կեանքից:

— Դուք երևի կարծում էք թէ այստեղի գործերը քիչ են:

— Ձեւ կարծում. շատ շատ են.

Մնացականեանցը վաղուց է, որ մօտեցել էր մեր խմբին և նոյնպէս լսում էր մեր վէճը: Նա կամենում էր, որ մեր խօսակցութիւնը համառօտուէր: Ձեր իմանում, թէ ինչ տեղում միջամտէր, վէճը ընդհատէր: Վերջապէս յուսահատ կերպով խօսեց.

— Ներեցէք, ձեր վէճը կարծեմ վերջանալու վերայ է, զոնէ ես նկատում եմ, որ դուք սկսում էք կրկնութիւնների գիմել: Գնանք միւսների մօտ: Դաշնամուրի մօտ չարգելի օրիորդը բարեհաճում է երգել մեզ համար: Անկնդիր լինենք:

Մենք տեղներիցս շարժուեցինք և պատրաստուեցինք ունկնդիր լինելու:

Օրիորդը նուազ ձայնով երգեց մի եւրոպական կարճ քնարերգ, որ հաւանութիւն գտաւ: Ասացինք,

խօսեցինք, զուարճացանք և կէս զիշերին մօտ  
ցրուեցինք:

Այս երկու օրը ես շատ անգամ եմ կանգ առել  
Հաթամեանի անձնաւորութեան վերայ: Մի ծանօթի  
հետ մինչև անգամ խօսեցի նորա մասին: Հաթամեանը  
այստեղ բաւական չաչտնի անձն է երիտասարդների  
շրջանում: Նորան զնահատում են՝ իբրև համարձակ  
խօսացողի, իբրև առաջադէմ մարդու. բայց չեն հա-  
մարում նորան տոկուն, անխոնջ, անվհաս մշակ: Իմ  
ծանօթը ասում էր որ Հաթամեանը հարկաւոր է  
զալիս չաչտնի դէպքերում, երբ պէտք է զգացում  
մի որոշ ծրագրով արագ գործելու և եռանդ զար-  
թեցնելու համախոհների մէջ:

Իսկն ասած, Հաթամեանը քեզ համար շատ էլ  
նորութիւն չէ. նա նման է իմ ուսանողութեան ընկեր  
Բարդամեանին: Միայն Բարդամեանը ծոյլերի թագա-  
ւորն էր, իսկ Հաթամեանը, ասում են, եռանդուն է  
առհասարակ: Բարդամեանը կրակոտ և սուր խօսակ-  
ցութիւնով ծածկում էր իւր ծուլութիւնը: Հաթա-  
մեանն էլ կրակ և մախաթներ ունի, բայց ծոյլ չէ:

Հաթամեանը ուսումը աւարտել է այստեղի մի  
միջնակարգ դպրոցում, որի անունը չէ ուզում լսել  
և որի սաներին նա համարում է խղճալի արարածներ:

Գու կը հարցնես՝ ի՞նչ է անում Հաթամեանը:  
Այդ հարցը ես էլի տուի ծանօթիս և ստացայ հե-  
տեւեալ պատասխանը.—

Նա ո՛չ մի հաստատութեան մէջ պաշտօն չէ ու-

զում ունենալ և շունիս Մի երկու տեղ փորձել է պաշտօն ունենալու, բայց շուտով ստիպուած է եղել թողնել, որովհետև նկատուած է եղել զանազան անարգարութիւններ, որոնց դէմ խիստ բողոքում է եղել: Այժմ նա մասնաւոր դորձեր ունի, որոնք բաւականաչափ ազանովում են նորան. ունի մասնաւոր դասեր, կատարում է թղթակցի պաշտօն մի հարուստի մօտ, տանն էլ պահում է մի քանի զիշերօթիկներ: Արագիրներում նա չաճախ չօղւածներ է գրում «Փայլակ» ծածկանունով: Յիշում ես Փայլակի չօղւածները. մի քանիսը շատ սուր և կոկ են, բայց, ինչպէս նկատած կը լինես, բաւական միօրինակ բովանդակութիւնով:

Յ' գրութիւն:

Քո Ա. Պ.

*Աստուծոյ խնայեալս*

III

Ս Ե Ր Գ Օ Յ Ե Ա Ն Ը

Սերելի քոյր

Այս նամակը գրում եմ խառն ազգեցութեան տակ: Եւ ծիծաղ և տխուր մտածմունք — փոփոխակի ինձ վերայ ազդում են, երբ մտաբերում եմ այս օրուայ ինձ հետ պատահածները:

Յիշում ես վաճառական Մեսրոպեանին, որին մայրաքաղաքում մենք պատահաբար օգնութիւն հասցրինք՝ ոստիկանութեան մօտ նորա մասին միջնորդելով: Այդ պարոնը ամեն անգամ, երբ հետս պատահում էր, հարցնում էր՝ երբ եմ նորա ընտանիքը այցելելու: Ես խոստանում էի, բայց միշտ չետաձգում էի: Այսօր առաւօտը նա եկաւ իմ բնակարանը և ինձնից հաստատ խօսք առաւ, որ անպատճառ նորա մօտ եմ ճաշելու: Խոստացայ և նշանակած ժամին գնացի:

Ես որ մտայ տուն, Մեսրոպեանը վազեց ինձ շնորհունելու. ծանօթացրեց երկու ուրիշ պարոնների հետ, որոնք նոյնպէս հրաւիրուած էին ճաշի, և հեռացաւ խնդրելով, որ ներենք նորա մի քանի բոպէի բացակայութիւնը:

Այդ պարոններից մէկը հեռադրատան ծառայող էր, շատ լուռ մի մարդ, որ ամբողջ շորս հինգ ժամուայ միջոցին, ինչ հիւր էի, հազիւ մի քանի խօսք ասաց. միւսը Սերգօյեանն անունով մի պարոն — ընդհակառակն մի մարդ, որ անընդհատ խօսում էր:

Ես որ մտայ հիւրասենեակ՝ Սերգօյեանը ձեռքին թերթում էր Թիֆլիսում տպուած ոտանաւորների մի փոքր ժողովածու: Տանտիրոջ գնալուց չեաց Սերգօյեանը իւր պարտքը համարեց ինձ զբաղեցնելու:

— Պարոն Պատրիկեան, դուք ոտանաւորներ կարդում էք:

— Ինչու չէ՞ երբեմն, պատասխանեցի ես:

— Այս փայրկեանին ես կարդում էի օբիկու գրե-նագերները: Դուք ծանօթ էք:

— Այո՛, ծանօթ եմ:

— Լա ոտանաւոր է, Գառնատին հաւասար:

Ես զարմացայ այդ համեմատութեան վերայ. բայց ենթադրեցի, թէ մի որ և է առանձին զուգա-դիպութիւն ազդել էր պարոնի վերայ, ուստի թոյլ-թոյլ աւելացրի.

— Համեմատելը դժուար է:

— Այո՛, համեմատելը անչարմար է, պատասխա-նեց Սերգօյեանը, որովհետև նոքա զանազան ժամա-նակներ են գործել:

Ես չիտթուեցի, լսելով այդ տեսակ դատազու-թիւն. ուստի ցանկանալով պարզել խօսակցութիւնը՝ ասացի՝

— Գրենապերների զէպի Նապօլէօնն ունեցած համակրութիւնը երևում...

— Ինչպէս չէ, ինչպէս չէ, շտապով խօսքս կտրեց Սերգօյեանը: Այո՛, այո՛, դա մի գժրաղղ զէպք էր, որ Ֆրանսիան չազթուեց 1870 թուականին և Նապօլէօնը գերի ընկաւ:

— Ես առաջին Նապօլէօնի մասին եմ խօսում, շուտաւժ ասացի ևս:

— Այո՛, նա երևելի հանճար էր: Հրաշալի են նորա խօսքերը, որ ասաց եզրպտական բուրգերին թէ...

— Սղասեցէք, պարոն Սերգօյեան, մենք շեղում ենք մեր նախկին խօսակցութիւնից: Դուք «երկու գրենապերներից» սկսեցիք:

— Այո՛, այո՛, համաձայն եմ, զեղեցիկ ոտանաւոր է. կարծեմ Նալբանդեանցն է նորան թարգմանել. նա լաւ թարգմանիչ է. սխ, նորա այն տողերը թէ՛

«Գիշերները ես քուն չ'եղայ,

Արտասուքով լուացի»:

Ես լուեցի: Գժուար էր այդ տեսակ խօսակցութիւն շարունակելը: Բայց պ. Սերգօյեանը շարունակում էր.

— Ես հաւանում եմ և՛ Բալիլիի գրուածքները. նա ողևորում է: Ե՛նա իթ բէգը՝ մինչև անգամ աննման է: Ե՛հ. բայց հայերը չը գնահատեցին: Իսկ խեղճ Հասրաթեանը մինչև անգամ մեռաւ աղքատ...

— Ո՞վ, հարցրեց լուռ պարոնը:

— Հասրաթեանը. նա մի հայ ուսուցիչ էր: Եւ միայն դոքա չեն: Եթէ երկայն դատենք՝ մեր գրականութիւնը զուրկ է ուժերից. բայց էլի կան, էլի ունենք, փառք Աստուծու: Իլխաւորը ուսումնարանն է. բայց ինչ արած, որ ժողովուրդը փող չի տալիս: Էլի լրագիրներն են վերջ ի վերջոյ մեզ մխիթարում ու ոգևորում: Ի՞նչ պէտք է անես: Զէ, մեզանում ժողովուրդը շատ է ագէտ. մեզք է: Յիշոցներից ախր ինչ կրթութիւն կարող է չստանանալ:

Այսպէս գուցէ երկայն շարունակուէր, եթէ տան տէրը ներս չը մանէր և չը փոխէր խօսակցութիւնը:

— Պարոն Պատրիկեան, ես ցանկանում էի, որ դուք ծանօթանայիք իմ այս երկու հիւրերի հետ. սոքա լաւ տղերք են. պարոն Մեհրաբեանը հանդարտ աղայ է, բայց սիրտը տաք է. եթէ հարկաւոր լինի՝ ունեցած չ'ունեցածը կը զոհի: Ինչ վերաբերում է պ. Սերգոյեանին, սա լաւ քարոզիչ է, ոգևորուող ու ոգևորող աղայ է. բայց իրան շատ է չարչարում, իսկ մեր ագէտ ժողովուրդն էլ նորան չէ գնահատում:

— Ժողովրդի տգիտութիւնը, շտապեց միջամտելու Սերգոյեանը, աչսօր կայ՝ էզուց չի լինիլ. մի՛ յուսահատուէք, պ. Մեսրոպեան: Պէտք է գործել: Աւրիշ ազգեր ինչպէս են առաջ գնացել: Այնպէս չէ, պ. Պատրիկեան:

— Այո՛, պէտք է լուրջ գործել:

— Ի հարկէ լուրջ: Գործին չը պէտք է թեթեւ վերաբերուել:

— Բայց ձեր միտքը շարունակեցէք:

— Գիտութիւն է հարկաւոր տարածել ազգի մէջ, որովհետեւ եթէ մի ազգ...

Տան տէրը զմայլումով ընդհատեց Աերգօյեանին.

— Այո՛, պ. Պատրիկեան, սա այսպէս է. միշտ ոգևորուած կը խօսի: Փառաւորում եմ սրան տեսնելով: Բայց ասացէք տեսնեմ, դուք ինչո՞ւ էիք այսքան խորշում մեր տանից:

— Ի՞նչ էք ասում, պ. Մեսրոպեան:

— Ես ձեզ միշտ խնդրում էի, ամեն հանդիպելուս: Ես անչափ ուրախ եմ զգում այսօր, որ դուք շնորհ բերիք: Ես չեմ մոռանալ ձեր և ձեր քրոջ արած ինձ օգնութիւնը օտար երկրում:

— Դատարկ բան էր, հարկաւոր էր միայն կարգին բացատրել. աւելացրի ես:

— Սակայն ես ինքս այդ չը կարողացայ անել, իսկ դուք և ձեր քոյրը երաշխաւոր եղաք:

— Այո՛, օգնութիւնը և եղբայրասիրութիւնը, դարձեալ միջամտեց Աերգօյեանը, ամեն ազնիւ մարդու պարտականութիւնն է: Ձեր քրոջ արածը զովելի է. մինչև կինը չը մասնակցի մեր հասարակական գործունէութեան — ո՛չ մի էական շտապադիմութիւն չէ կարող լինել:

Դուք բացուեց և մտան աիկին և օրիորդ Մեսրոպեանները, որոնց հետ ծանօթանալուց և փոքր

ինչ խօսակցելուց չետոյ՝ հրաւիրուեցինք սեղանա-  
տուն: Տիկինը կովկասեան զգեստով է, օրիորդը եւրո-  
պական տարազով. երկուսն էլ բարի զէմքով են, բայց  
օրիորդը մի կիսահեղինական քմծիծաղ ունի, որ շատ  
սազում է նորա պայծառ նայուածքին:

—Օրիորդ նուարդ, զիմեց նրան Սերգօյեանը,  
չուք վերջացրիք զիրքը:

—Ոչ, դեռ չեմ վերջացրել: Բայց շուտով կը  
վերջացնեմ:

—Ես եմ պատճառը, չուսահատ ձայնով ասաց  
օրիկինը, որ նուարդը չի վերջացրել: Նստում է ամ-  
բողջ ժամերով ու աչքերը ցաւացնում: Ես ասում  
եմ, ինչքան ուսումնարանում տանջուել է, սովորել  
է՝ բաւական է: Այդքան կարդալուց ի՞նչ պէտք է  
չուրս գալ: Միտքը միշտ մոլորուած է լինում, կար-  
ծես թէ մեր տանը չի ապրում:

—Զուր տեղը, տիկին, զուր, կրակուեց Սեր-  
գօյեանը, կարդալը հարկաւոր է. կրթուած մարդը  
եթէ չը կարդայ՝ մեր հասարակութեան մէջ կը խե-  
լագարուի:

—Ես վախենում եմ, ամաչելով ասաց տիկինը,  
որ կարդալով աւելի շուտ մոլորուի ու խելագարուի:

—Ի՞նչ ես ասում, այ կին, միջամտեց ասն  
տէրը: Աւանց ուսումի մարդս ի՞նչ մարդ է: Տեսնում  
ես, որ մենք քեզ հետ միասին շատ բանից չեա ենք  
ընկել, բան չենք հասկանում:

—Այո, մի թէ այդ ուսումին վերջ չը պէտք է

լինի: Աւսումնարանը մի թէ բաւական չէ, չուսահաս ձայնով շարունակեց տիկինը:

—Մշ, հանդիսաւոր կերպով շեշտեց Աերգօջեանը: Բաւական չէ, մարդ պէտք է բոլոր իւր կեանքը կարգաց, վարժուի, առաջ գնաց: Մեր սուրբ թարգմանիչները մեծ հասակ են ունեցել, երբ գնացել են ուսումի և չեա են դարձել հայրենիք 40—50 տարեկան: Առանց այդ թարգմանիչների սյ գիտէ մեր լեզուն անհետացած լինէր: Իսկ լեզուն ժողովրդի սննդող կրթարանն է: Մշ, տիկին, դուք պէտք է օրիորդին այդ կողմից չը նեղէք:

—Ես չեմ նեղում, այլ խղճում եմ: Մի կ'ուզի իւր օրդու փնասը: Ես շատ շնորհակալ եմ, որ դուք օգնում էր գրքեր բերելում և տանելում. բայց որ ամբողջ օրեր դորանով մարդ դբաղուի — անտանելի է:

—Բայց ազգագոյում կը տեսնէք, որ լաւ կը լինի ժօրժ-Չանդը ջանկարժ սկսեց գրականութիւնով պարապել: Իմ ասածը կը հաստատեն և պարօնները:

Աերգօջեանը բոլոր խօսակցութեան ժամանակ այնպէս էր խօսում, որ կարծես թէ մենք նորա հետ համաձայն ենք: Բայց նկատելով, որ մենք շատ ենք լուս, դարձաւ մեր օգնութեան:

—Եթէ ուսումն շատ լինէր՝ ես հիմա մի քիչ աւելի լաւ պաշտօնում կը լինէի, սրտի խորքից ասաց Մեհրաբեանը:

Ես լսեցի, որովհետեւ Աերգօջեանի հետ փէճի մտնելու ցանկութիւն չ'ունէի: Բայց տեսայ, որ բո-

լորը սպասում են ինձնից մի խօսք լսելու: Իսկ օրիորդը, որ կարծես ամենեւին չէր հետաքրքրուում այդ վէճով—չանկարծ իմ կողմը նայեց և այդպիսով ուղեց ասել, թէ ինչու չեմ ուզում խօսել: Ես էլ նայեցի նորա երեսին և ինձ հետաքրքրող հարց սուր նորան:

— Ինչ էք կարդում այժմ, օրիորդ,

— Մարամ Բօլարին:

— Հաւանում էք:

— Այնքան էլ ոչ:

— Պարոն Պատրիկեան, միջամտեց Աերզօյեանը, օրիորդը ոչ մի գիրք չի հաւանում: Այդ նորա սովորութիւնն է:

— Իսկ դուք հաւանում էք, դարձայ իրան՝ Աերզօյեանին:

— Ես, այսինքն, ինչպէս ասեմ, ես հարեանցի թերթեցի—չտապեցի օրիորդին տալու. ես չետոյ կարդալու եմ:

— Այդ էլ պ. Աերզօյեանի սովորութիւնն է, ծիծաղով ասաց օրիորդը. նա ամեն գիրք կարդալու է չետոյ. իսկ երբ—այդ միայն Ատուած գիտէ: Նա միայն սիրում է լրագիրներ կարդալ:

— Օրիորդը ինձ մեղադրում է, որպէս զի ես իրան չը մեղադրեմ: Օրիորդը չէ կարդում մեր լրագիրները, ասելով թէ, ամենեւին հետաքրքրական չեն. նա սիրում է միայն օտարազգի գրականութիւն: Մինչև անգամ չի հաւանում իւր զեղեցիկ նուարդ անունը: Մինչդեռ նուարդ անունի հետ կապուած

են մեր պատմական առաքինի հերոսներից մէկի անունը  
և նորա օրինակելի վարմունքը նամիրամի հետ: Սասարազ-  
գերը շատ են մեծացնում նամիրամին և նորա ասածները,  
բայց մեր Արան նորան մերժեց: Աս շատ եմ հաւանում և  
Յուզիդ անունը. թէև հաջկական է, բայց զեղեցիկ է:

— Եւզիթ կամ Յուզիդ՝ միենայն է, էէ. հարց-  
րեց Մեհրաբեանը:

— Այո՛, միենայնն է:

— Ձեր կենացը, դարձաւ դէպի ինձ տան տէրը  
և բաժակը խփեց բաժակիս: Բարև էք կելել. միշտ  
մեր տան սիրելի հիւրն էք. միշտ կէք, այդպէս խո-  
սեցէք, վիճեցէք, ծիծաղեցէք: Միշտ մեծ հաճու-  
թիւն եմ զգում, երբ տեսնում եմ, որ մարդիկ զա-  
լիս են, նստում, խօսում, կոււում, հաշուում, բա-  
ժանում, էլի միանում: Մէջ տեղում ոչ փող կայ  
բաժանելու, ոչ տուն կայ շինելու, ոչ փողբաթ կայ  
վերցնելու. բայց մարդիկ աւելի են վաւում, կրակ-  
ւում և էլի վերջ ի վերջոյ մեր ազգը առաջ են տանում:

— Այդ ճշմարիտ է, վերջ ի վերջոյ այդպիսով  
ազգը առաջանում է, վերայ բերաւ Աերգօցեանը:

— Ձեր կենացը, ձեր կենացը, ձեր կենացը:

Կամաց կամաց բոլորի կենացն էլ խմեցինք:

Սրիտրդի կենացը խմելու ժամանակ Աերգօցեանը  
երգեց, և բաւականին չաջող: Աեղանակիցները շնոր-  
հաւորեցին Աերգօցեանին նորա չաջող երգի համար:  
Աերգօցեանը ողևորուած շնորհակալութիւն արու-  
նաց զառնալով օրիորդին սասաց.

—Որիորդ նուսրդ, ես էլ կը խնդրեմ, որ ձաշից յետոյ մեզ համար մի բան ածէք դաշնամուրի վերայ:

—Օրիորդը շատ կ'ուրախացնի մեզ, եթէ բարեհաճի, աւելացրի ես:

—Ես, պ. Պատրիկեան, սչնքան լաւ չեմ վարժուած, որ ուրիշների լսելու համար ածեմ: Ես ինքս ինձ համար եմ նուագում:

—Մի հաւատաք օրիորդին, պ. Պատրիկեան, նա զեղեցիկ է ածում: Անցեալ օրը ես պատիւ ունեցայ լսելու մի եղանակ, որ Աէլստի շարադրածն է. կարծեմ չեմ սխալուում, օրիորդ:

—Այսինքն Ախտի:

—Այո, Ախտի: Օրիորդը նախ սկսեց մեղմ և զբաւեց բոլոր ուշադրութիւնս. իսկ յետոյ, երբ նա խփեց զամման—հասաւ կատարելագործութեան: Ես հաւանեցի այդ պարտի տուրը:

Օրիորդը ջանկարծ կտրեց Սերգոյեանի խօսակցութիւնը և հարցրեց ինձ:

—Դուք երաժշտութիւն սիրում էք:

—Այո:

—Եւ ինքներդ մի որ և է գործիքով նուագում էք:

—Ոչ:

—Կամ գուցէ երգում էք:

—Դժբաղգարար ոչ:

—Եթէ երաժշտութիւն սիրում էք՝ ուրեմն ին-

չ'ու չը սովորեցիք մի որ և է գործիքով ձեզ գրադեց-  
նել ձեր միայնութեան ժամանակ:

— Պատճառներ շատ կան. ես փոքր ժամանակս չէի  
գնահատում այդ բանը. իսկ յետոյ ժամանակ չ'ունէի:

— Երաժշտութիւնը շատ կարեւոր մի առարկայ  
է, վերայ բերաւ Սերգօյեանը. նա պէտք է մտնի մեր  
գպրոցները, իբրև հիմնական դասաւարկաներից մէկը:  
Եջմիածնի այդ գործունէութիւնը շատ չարգելի է  
Մի փիլիսոփայ ասում է թէ՛ երաժշտութիւնը միաց-  
նում է մարդիկներին:

— Ինչպէս թէ միացնում է, հարցրեց Մեհրա-  
բեանը:

— Դիցուք, օրիորդը նուագում է, իսկ մենք  
բոլորս լսում ենք և, ազդուելով նորա նուագածից,  
մի տրամադրութեան մէջ ենք ընկնում:

— Այո՛, ձիշդ է, բայց չը գիտէք արդեօք այդ  
նվ է ասել, հետաքրքրուեց Մեհրաբեանը:

— ձիշդ չեմ չիշում. բայց անպատճառ կանտը  
պէտք է ասած լինի:

— Դորա գիրքը հայերէն կոչ:

— Պօլսեցիները դորա մասին մի քանի անգամ  
դրեցին: Սգիւստ կանտը և Նիթրէն ազգեցին նո-  
րայրի վերայ և նա մի լաւ գեղեցիկ բտուարան չորի-  
նեց, որի հաւասարը չը կայ:

Հացկերոյթը վերջացաւ: Օրիորդը մեզ առաջ-  
նորդեց դէպի գահլիծը: Երբ նստեցինք, նա դարձաւ  
ինձ և ցածր ձայնով հարցրեց.

— Պարոն Պատրիկեան, խնդրեմ ասացէ՛ք, դուք հաւանում է՞ք Ծլօրերի վէպը:

— Այո՛:

— Բայց ինչո՞ւ դուք այնպէս ծուռ էիք նայում սեղանի շուրջը կատարուած խօսակցութեան:

— Ե՛տուար է պատասխանելը: Ինչ վերաբերում է Ծլօրերի վէպի նման գրուածքներին, պէտք է ասեմ, որ խնդիրը այն չէ, թէ նորա որչափ լաւ են. այլ թէ ինչ կերպ են կարդացւում և ինչ է սպասւում կարդացածից:

— Ուրեմն, դուք ինձ երեխայ է՞ք համարում:

Ամենեին ո՛չ: Ես ձեզ, օրիորդ, դեռ չեմ ճանաչում. ուստի ոչինչ չեմ կարող ասել ձեր վերաբերմամբ:

— Եւ չը ճանաչէ՞ք աւելի լաւ կը լինի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ անօգուտ է, որովհետեւ դուք այսօր, որ եկաք՝ դա մի տեսակ պատահուէք էր, չեմ կարծում թէ միւս անգամ ևս մեր տուն շնորհ բերէք: Մինչդեռ ձանաչելը պէտք է կրկին տեսութեան յուսով լինի:

— Այո՛, դժբաղդարար ևս ժամանակաւոր չիւրեմ այս քաղաքում՝ մի երեք շաբաթուայ: Բայց ինչո՞ւ մարդիկ պէտք է այդքան երկայն-բարակ հաշուեն: Այսօր այս դէպքով, էգուց մի ուրիշ դէպքով կարող են մարդիկ միմեանց պատահել:

— Բայց ինձ հասարակութիւն է հարկաւոր. իսկ

ես նորանից զրկուած եմ, ասաց կարմրելով օրիորդը: Ինձ շրջապատողները խղճ սլի մարդիկ են: Ես ապրում եմ չիբուխի միայն զրքերով: Պարոն Աերգօյեանը մի անմեղ սոխակ է, որ երգում է իւր համար և ինքը հրճուում իւր երգով:

— Ի՞նչպէս թէ երգում է իւր համար, զարմացած հարցրեց Աերգօյեանը:

— Լաւ, ասացէք, խնդրեմ, այսօր ո՞ւմ համար էիք այնքան քարոզում:

— Մարդ պէտք է իւր զգացածը յայտնի, իւր մտածմունքները հաղորդի, շուարած պատասխանեց Աերգօյեանը:

— Ար ասում եմ իւր համար է երգում:

— Իսկ ուրիշ ի՞նչ կերպ կարելի է խօսել:

— Դա դժուար է երկայն բացատրել: Նիցուք ձեր շորը յանկարծ պատռուեց. դուք ի՞նչ կ'անէք:

— Կարելի կը տամ, կարկատել կը տամ, ինքս կը կարեմ:

— Սուտ էք ասում. դուք ողբերուած ճառ կը խօսէք այն բանի մասին, թէ շորը շատ կարևոր բան է, թէ առանց շորի ապրել անկարելի է, թէ շորի այս կամ այն յատկութիւնը — քաղաքակրթութեան այս կամ այն աստիճանի հասած լինելն է և ով զիտ է այլ ևս ի՞նչ տեսակ դատողութիւններ կ'անէք կարկատելու մասին:

— Օրիորդ Նուանդ, այսօր դուք բոլորովին ուրիշ տեսակ էք խօսում, ես ձեզնից չեմ լսել այս տեսակ խօսքեր:

— Այս ասածները ձեզ համար չէին, այլ պարոն Պատրիկեանի համար, որ ուզում է ինձ ճանաչել: Դուք, պարոն Աերզօյեան, ինձ ճանաչելու կարևորութիւն չ'ունէք, առանց այն էլ ձեր պահանջի չափ ճանաչում էք:

— Ձեմ հասկանում, օրիորդ, շիտթուած կակազեց Աերզօյեանը, ճշմարիտ, ևս չեմ հասկանում, դուք ինձ վիրաւորում էք, թէ անմեղ էք խօսում:

— Ի՞նչ վիրաւորելու պէտք ունեմ: Աս ձեզնից անչափ շնորհակալ եմ, որ դուք գալիս էք մեր տուն, ինձ զբաղեցնում էք և, բացի այդ, ինձ համար միջնորդ էք լինում գիրք ստանալու գործում:

— Աւրեմն թողնենք այդ հանդօցներով լի խօսակցութիւնը և զբաղուենք աւելի ուրախ բաներով: Օրիորդ, խնդրում ենք, որ մեզ համար նուազէք:

Աերզօյեանի խնդիրքին միացան և մեր խնդիրքները: Օրիորդը համաձայնեց, բայց նախ մի նկատողութիւն արաւ Աերզօյեանին:

— Սա առաջին անգամն է, որ դուք, կարծեմ, խօսակցութիւնից փախչում էք: Դուք ասում էք՝ հանդօցներով լիքը: Ապա քանդեցէք այդ հանդօցները: Իսկ ևս միշտ պէտք էի զգում զբաղուելու շատ և շատ ուրիշ հանդօցների քանդելու խնդրով: Բայց ինձ վիճակուած է լուել ճշարիտ է, լաւ կ'անեմ ձեր խորհրդին հետևեմ և նուազեմ:

— Աէյասի, այսինքն՝ Ախտի շարադրութիւնը խնդրեմ, աղաղակեց Աերզօյեանը:

Յրիորդը իսկապէս հրաշալի էր նուագում, մեծ տաղանդով, մեծ զգաց իւնքով, մեծ հասկացողութիւնով: Ես հիացած էի. ուստի սրտաբուրդի ասացի.

—Շատ և շատ շնորհակալ եմ, օրիորդ. դուք իսկապէս վարպետ էք և ինքնուրոյն՝ երաժշտութեան մէջ: Ձեզ գովել անգամ աւելորդ է. դուք այնչափ գիտակցաբար էք ածում, որ դուք ինքներդ գիտէք ձեր գնահատութիւնը:

—Արեմն ես չէի սխալուել, որքանորում վեր թռաւ Սերգօյեանը: Յրիորդի տաղանդը անվիճելի է: Այսօր նա մի առանձին ուժով ածեց: Կանտի ասածը այժմ ճշմարիտ է թէ ոչ, պարոն Մեհրաբեան:

—Ճշմարիտ է, ճշմարիտ է. ես առաջ էլ չէի հերքում:

Յրիորդի խաղի ժամանակ մեզ մատուցին սուրճ և տան տէրն ու տանտիկինը եկան նոյնպէս դահլիճ: Տիկնոջ շատ դիւր եկաւ խաղի մասին յայտնած իմ գովասանքը: Աւստի Մեհրաբեանի խօսքից չետոյ տիկինը ուրախ ուրախ ասաց,

—Ահա, պ. Պատրիկեան, ես այդ էի ասում, որ նուարդս փոքր ինչ կարգալը թողնի և դաշնամուրով աւելի զրազուի: Առաջ շատ էր սիրում երաժշտութիւնը. այժմ ինչ որ մտածմունքների մէջ է ընկել ու մի գլուխ կարդում է:

Յրիորդը մի անգամ ևս նուագեց, չետոյ հիւրերը ցրուեցին: Տան տէրերը մի տասն անգամ ձեռք

սեղմեցին, որ չը մոռանամ իրանց տունը: Սրիօրդն էլ աւելացրեց:

—Ֆլօրերի վէպի մասին վէճը չը վերջացաւ:

—Կաշխատեմ մի անգամ եւս ձեզ այցելել մինչև գնալս—ասացի ու դուրս եկայ:

Փողոցում Աերգօյեանը ինձ հարցրեց.

—Խնդրեմ ասէ՛ք, ձեր մասնագիտութիւնը...

—Արհեստագիտութիւն, ակնինկ. իսկ ձերը:

—Ես առաջ ուսուցիչ էի, իսկ այս տարուանից գրագրի պաշտօն եմ ընդունել:—Ներեցէ՛ք, ես կարծում էի, թէ դուք դատարանում ծառայող Պատրիկեանն էք, իսկ դուրս է գալիս, որ դուք արհեստագէտ էք:

—Ի՛նչ ներողութիւն խնդրելու բան կայ այստեղ:

—Արշափ ե իցէ, զանազանութիւն կայ: Եւ գիտէ՛ք, մեզաւորը պարօն Մեսրոպեանն է, որ մեզ կարգին չը ծանօթացրեց:

—Ես ձեր ասածը չեմ հասկանում, պարօն Աերգօյեան:

—Ձէ, ով գիտէ, կարելի է ես աննկատելի կերպով ձեզ վիրաւորել եմ իմ խօսակցութիւնով:

—Լաւ, երեւկայեցէ՛ք, որ ես դատարանում ծառայող Պատրիկեանն եմ, մի՞թէ ինձ իբրև այն մարդուն՝ կարող էիք վիրաւորել:

Ներեցէ՛ք, խնդրեմ, ես շատ չարգում եմ կրթութեամբ մարդկանց եւ աշխատում եմ նոցանից շատ բան ուսանել:

— Յ'տեսու թիւն. ես այս կողմն եմ գնում:

— Յ'տեսու թիւն:

Ահա այս տեսակ են այս օրուայ խօսակց  
թիւնները և դէպքերը: Խելքդ մի բան կտրու  
այս բոլորից:

Յ'գրու թիւն

Ք. Ա. Պ.

---

ՕՐԻՈՐԴ ՆՈՒԱՐԴ

Սէրեւե քոյր

Յիշում ես օրիորդ Նուարդ Մեսրոպեանին, որի մասին գրել էի անցեալ նամակներից մէկում: Այդ օրիորդից նորերս մի նամակ ստացայ, որի հետ կարեւոր եմ համարում քեզ ծանօթացնել: Այդ նամակը, ի հարկէ, մի անսպասելի բան էր ինձ համար: Ես շատ ուրախ եմ, որ օրիորդը այդքան համարձակութիւն ունեցաւ զրեց այդ հետաքրքրական խոստովանութիւնը, որը ինձ միջոց տուաւ օրիորդին աւելի մօտիկ ճանաչելու: Ահա նամակի բովանդակութիւնը.

«Յարգելի պարոն Պատրիկեանն.

Դուք կը զարմանաք՝ կարդալով ստորագրութիւնս: Մի օրիորդ նամակ գրի մի համարեա թէ անծանօթ երիտասարդի, որի հետ տեսնուել է հացկերոյթի ժամանակ և որից հազիւ թէ մի երկու խօսք է լսել — ստարտի պէտք է թուի: Բայց չոչս ունեմ, որ իմ Ձեր վերաբերութեամբ ստացած հաւատս սխալ չէ, և Դուք կը նայէք նամակիս վերայ ո՛չ ըստ ձեականին, այլ ըստ ներքին իմաստի:

Մեր տան հացկերոյթի ժամանակ ոչ Գուք կարող էիք ինձ ճանաչել, ոչ ես՝ Ձեզ: Բայց և այնպէս, ես նկատուի էի Ձեր այն վերին աստիճանի ներողամտութիւնը, որ պահպանում էիք զէպի Ձեզ շրջապատողները, նամանուանոյ զէպի Սերգոյեանը: Գուք զուցէ զարմանում էիք, կամ այժմ զարմանում էք, որ ես ինձ այնքան անտարբեր էի պահում զէպի ինձ շրջապատողները. բայց չէք զարմանալ, եթէ ինչլաւ ճանաչէք... ես սովորած եմ արդէն իմ գրութեանը:

Գուք, իբրև հիւր, աւելի քան քաղաքավարի էիք և շափազանց լուռ: Ես հաւատացած եմ, որ ուրիշ զէպքում Գուք աւելի բան ասած կը լինէիք և ինձ չէիք ստիպիլ այս նամակը գրելու: Ես չուզում եմ, որ Գուք հաստատ կը մնայք Ձեր խոստումին և մեզ կրկին կ'այցելէք: Սակայն ես մտածում եմ.— եթէ այդ օրն էլ պատահարաբար խանդարեն մեզ խօսելու, այն ժամանակ ինչ շահած կը լինեմ ես Ձեզ այցելութիւնից: — Աչինչ, Մինչև անգամ եթէ խանդարողներ էլ չըլինեն— զուցէ խօսակցութիւնը իւր զլխաւոր ինձ հետաքրքրող կէտից շեղուի և ես մնամ անբաւական:

Ուստի, խնդրում եմ, եկէք մեզ մօտ, բարի հիւր եղէք. բայց նախապէս իմացէք իմ մի քանի զգացումները:

Գուք, կարծեմ, ինձ անպատրաստ համարեցիք լուրջ կերպով վերաբերուելու Յլօբերի վէպի ներքին

խմաստինս Ես Ձեզ չեմ մեղազրում: Ձեր տեղը ես լինեի, մի և նոյնը կ'ենթադրէի. ես մինչև անգամ աւելի խիստ կը խօսէի, ուղղակի կը յայտնէի իմ բողոքը, որ անպատրաստ մարդիկ այդ տեսակ վէպեր են կարդում: Իմ կրթութեան մէջ, սակայն, Ձեզ անչայտ մի կէտ կայ, որ ինձ ներում է աւելի լուրջ խնդիրներ դնել և քննելը: Այդ կէտը դարձեալ անչայտ պէտք է թողնեմ Ձեզ համար, որովհետև նորան ուրիշին հազորդելու համար կարևոր են արտակարգ պայմաններ:

Իմ մայրը դէմ է այն բանին, որ ես չափից դուրս կարդում եմ: Գիտէք, ես ինքս էլ դէմ եմ չափազանց կարդալուն, և ուրախ կը լինեի, եթէ ես ստիպուած չը լինէի այդքան կարդալու: Անթերցանութեան մէջ կայ մի յայտնի աստիճան, որ կրթուած մարդու պահանջն է. բայց ես աւելի եմ կարդում և արդէն աւելին ունի նոյն բնաւորութիւնը, ինչ որ թղթախաղը — անմասնագէտ թուղթ խաղացողի համար, որ ժամանակ անցկացնել կամ մոռացութիւն է որոնում:

Ես ուրախութիւնով կը կատարէի մօրս խնդիրքը և չէի կարդալ. բայց ինչ պէտք է անէի այն ժամանակ: Դաշնամուր ածէի: Առաջինը՝ միշտ զաշնամուրով զբաղուել չի կարելի, երկրորդ՝ զաշնամուրը մարդուն չոգնեցնում է, իսկ նորա զլիսին, նորա ուղեղին բաւականութիւն չի տալիս: Աս իսկապէս մի ամբողջ շաբաթ թողի գիրք կարդալը, բայց անգործութիւնից

ստիպուած՝ սկսեցի ճաշից չետոյ քնել և առաւօտն  
ներբ ուշ զարթնել:

Գուք չը կարծէք թէ ես տան անտեսութիւնով  
չեմ գրադուում: Բայց այդ տան անտեսութիւնը ինձ  
նից խլում է միայն մօտ 3 ժամ... և պէտք է մի  
բան խոստովանեմ, որ մեր տան անտեսութիւնը ինձ  
չի էլ հետաքրքրում: Մեր ընտանիքը մի արհեստա-  
ւորի, մի գիւղացու, մի օրուայ աշխատանքով ազ-  
րողի ընտանիք չէ, որ նորա անտեսութիւնը ինքն  
ըստ ինքեան իւր մէջ հետաքրքրական բան պարու-  
նակի: Մեր տարեկան հաշուեկշիւը փոքր ինչ այս կողմ,  
փոքր ինչ այն կողմը — հոգսի և մտածմունքների առար-  
կայ չէ կարող լինել, և փասք Ասածու՝ չէ էլ լինում:

Ուրեմն ի՞նչ անեմ:

Եթէ ես թողնեմ ընթերցանութիւնս և անձ-  
նասուր լինեմ իմ սիրած գործերին — ես լաւ գիտեմ,  
որ ինձ դէմ կը գինեմ ոչ միայն մօրս, այլ և հօրս և  
շատ ազգականներիս, և ինձ մի արհեստական գրու-  
թեան մէջ կը գնեմ:

Ես փորձեցի ձրի գասեր տալ մի տարրական  
գպրոցում. բայց այդ պարապմունքը չը զահացրեց  
ինձ և վիրաւորեց մօրս և ևս շուտով հրաժարուեցի:  
Գպրոցը առանց այն էլ վարժուհի բռնելու կարողու-  
թիւն ունէր. այնպէս որ իմ պարապելը մինչև ան-  
գամ մնասել էր մի ազքատ վարժուհու, որին առա-  
ջուց խոստացուած է եղել իմ կատարած պաշտօնը:

Ես առաջարկեցի ծնողներիս, որ կարողութիւն

տան ինձ բանալու մի փոքրիկ մանկական գրադարան,  
որից ձրի օգտուէին ուսումնարանի աշակերտները,  
իսկ ես ղեկավարէի նոցա ընթերցանութիւնը՝ համե-  
մատ նոցա աստիճանաբար զարգացումին: Մնողներս  
այս անգամ շատ որոշակի բացասեցին, առանց մին-  
չև անգամ հետս վիճելու, խորհրդակցելու:

Ես մտադրութիւն ունէի մի փոքրիկ ընկերու-  
թիւն կազմելու, որի անդամները կանոնաւոր կերպով  
չբժէին մեր քաղաքի աղքատ ընտանիքները և ըստ  
կարողութեան օգնէին նոցա: Նոյնպէս մտադիր էի  
սովորելու մի քանի մանր-մունր արհեստներ: Այդ բո-  
լորի մասին երբ ակնարկում էի ծնողներիս, ասում  
էին. «էլի տուտուցութիւնդ բանեց»:

Գուք կ'ասէք. ինչո՞ւ էի ես այդքան լսում  
ծնողներիս, ինչո՞ւ աւելի համարձակ չէի վարւում:

Մի գիտէ, գուցէ այդտեղ ես ևս մեղաւոր եմ,  
գուցէ ես բաւականաչափ համարձակ չեմ: Բայց ես  
էլ ունեմ պատճառներս:

Ես այդ բոլոր ենթադրութիւններիս մասին հա-  
ղորդում էի իմ ընկերուհիներիս և մի քանի ծանօթ  
երիտասարդներին: Երևակայեցէք, որ սոցա կողմից ես  
աւելի վիրաւորիչ ստանութիւն էի տեսնում, քան  
իմ ծնողների կողմից: Մնողներս ասում էին, թէ այդ  
լաւ բաներ ես ցանկանում, բայց աղջկան չի սաղիլ  
այդպէս գործերով զբաղուել, թէ դա մեր բանը չէ  
և այլն: Ես իմ ծանօթները ուսերն էին թափ տա-  
լիս, հանաքի էին զցում կամ մինչև անգամ ծաղ-

բում էին: Ինչ վերաբերում է այնպիսի պարոնների, ինչպէս ձեր տեսած Մեհրաբեանը և Աերգոյեանն են, ես դոցա մինչև անգամ չէի չաչանում իմ իղձերը, համարելով դոցա բոլորովին անպատրաստ լուրջ գործերի համար:

Ինչ անեմ, ինչպէս անցկացնեմ իմ ժամանակը. ինչպէս ես ինձ թմբացնեմ, ինձ խաբեմ, որպէս զի չը գգամ ապրելու:

Աս չտեսես չեմ, ես չուսահատուած չեմ. ես կեանքը զնահատում եմ, ես չոչտեր ունեմ... պէտք է ժամանակաւորապէս մի կերպ ինձ պահեմ — մինչև աւելի լաւ բոլկների գալը:

Աս վճռեցի հպատակուել ինձ շրջապատողների հաճոյքին — տանը մնալ անգործ... բայց նուիրեցի ինձ ընթերցանութեան: Ատրդում եմ ամեն բան, ամեն տեսակ գրքեր: Մի անգամ կարդացի մի քննադատի չօղուած, որտեղ չաչանուած էր այն միտքը, թէ գիտութիւնը կարող է մարդուն թարմ պահել, պահպանել չուսահատութիւնից: Աս փորձեցի զանազան գիտութիւններից գրքեր վերցնել և լուրջ պարտակել. բայց այդ գիտութիւններից ոչ մէկը, բացի պատմութիւնից, չը կարողացայ մարսել: Յետոյ երբ պատմական գրքեր էլ մի քանիսը թերթեցի — այդտեղ էլ հիասթափուեցի: Այժմ առժամանակ դերադասում եմ վէպերը:

Պատահարար Դուք ինձ հետ ծանօթացաք այն ժամանակ, երբ ես կարդում էի Մայամ Բօվարին:

Այժմ իմ ձեռքին է Մարկ Տուէնի սրամիտ պատկեր-  
ների և բանասիրականների ժողովածուն: Ազուց կը լինի  
մի ուրիշ գիրք:

Այժմ կարծեմ մասամբ համոզուեցիք, որ Պուք  
սխալում էիք ինձ անպատրաստ դանելով—հէնց  
թէկուզ վէպերի համար: Պէտք է ասեմ, որ ինչ վէպ  
հաւանում եմ, նորա վերայ աւելի երկաջն եմ կանգ  
առնում: Մաղամ Բովարին ինձ հետաքրքրեց այն  
կողմից, որ ես ասեայ թէ ինչպէս մի մարդ, որ բա-  
ւարարութիւն չի գտնում իւր ներքին իղձերին—կա-  
րող է բոլորովին շեղուել իւր ձգտումների ուղիղ ճա-  
նապարհից և բոլորովին կորուստի մասնուել: Ղիցուք  
Յլօբերի հերոսուհին շատ էր միամիտ, շատ էր սխալ  
կրթուած: Բայց խնդիրը միայն այդ կրթութիւնը  
չէ, այլ և առհասարակ կրթութեան ու կեանքի մը  
կղաժ տարածայնութիւնը:

Պարոյ էք Պուք ինձ խորհուրդ տալ թէ ես ինչ  
անեմ: Ասացէք— ես շնորհակալ կը լինեմ: Ակէք,  
նստե՛ք, խօսե՛ք:

Պամենում էք՝ հանդիպե՛ք թատրանում: Աս  
այնտեղ եմ լինելու էզուց ծնողներիս հետ: Ակէք  
թատրոն. միջարարներին բաւական ժամանակ կ'ու-  
նենանք ասել-լսելու:

Վճռելով այս նամակը Ձեզ գրելու՝ ես ջանձն  
եմ աւելի ինձ վերայ օտարտոյ աղջիկ լինելու անունը,  
ուստի թող մի օտարտու թիւն էլ աւելցնեմ մինչև այժմ  
գրածներիս: Աթէ, այդ բանը իբրև վարմունք չը հա-

ւանէք, մեղադրեցէք մեր հասարակական կեանքը և ոչ ինձ:

Իմ ծնողները Ձեր մասին բարձր կարծիք ունեն, բայց Ձեզ վերայ չեն նայում իբրև փեսացու ի վերայ: Ես էլ չեմ նայում այդ տեսակէտից: Աւստի Գուք կարող էք մեղանից չը վախենալ: Մեր քաղաքում երիտասարդի մի այնպիսի ընտանիք այցելելը, ուր շափահաս աղջիկներ կան, հասկացում է ամուսնանալու, ամուսնացնելու տեսակէտից: Եւ որովհետև այդ տեսակէտը չարաբերութիւններ ի խնդրում շատ մեծ դեր է խաղում, ուստի մեր երիտասարդների (թէ այր և թէ կին) շրջանում լայն շփում չը կայ, հասարակական ժողովներ չը կան: Մտողներս իրանց հաշիւներն ունեն իմ վերաբերմամբ... Կհրաւական է, այսքան հեռու չը գնանք: Արեմն՝ ես Ձեզ կը սպասեմ:

Ձեզ չարգող նուարդ Աեսրուպեանս:

Ի հարկէ առանց այլ և այլութեան ես գնացի թատրոն: Օրիորդին տեսայ նստած օթեակներից մեկում իւր ծնողների հետ: Նա դիտակով այս ու այն կողմ էր նայում, — շատ արագ նորան խաղացնելով իւր ձեռքում: Յետոյ չանկարծ թողեց դիտակը և բաւականացած իւր նայելուց՝ չեա ընկաւ աթոռի վերայ և կարծես անձնատուր եղաւ մտածմունքների:

Առաջին միջարարին շտապեցի Աեսրուպեանների օթեակը: Օրիորդը ցանկութիւն չայանեց դուրս գալ օթեակից փոքր ինչ հետս չըջելու: Ես չայանեցի բոլոր պատրաստականութիւնս: Օրիորդի ծնողները ուրախ էին, որ ես ինձ վերայ առի օրիորդին զբաղեցնելու:

գործը: Տիկինը մնաց օթեակում, պարոն Մեսրոպեանը  
զնաց ծխելու: Օրիորդի հետ մենք սկսեցինք չեա ու  
առաջ քայլել:

—Նորհակալ եմ, օրիորդ, որ դուք իմ վերայ  
հաւատ ունեցաք և ինձ նամակ գրեցիք, մի նամակ,  
որ ինձ անշափ հեռաքրքրեց:

—Աս դեռ էլի ասելիք ունեմ. իմ նամակը բա-  
ցատրում է, ոչ բոլոր իմ կեանքը: Աս ցանկանում եմ,  
որ դուք անկեղծօրէն յայտնէք ձեր կարծիքը իմ  
դուրթեան և իմ անելիքի մասին: Բայց ես լա-  
զիտեմ, որ ուրիշի կեանքի դատաւճիտ կարգայլը լուրջ  
մարդու համար հեշտ չէ. ուստի՝ իսկոյն չեմ պահանջ-  
ում ձեր վերջնական խօսքը, այլ դուք ինձ ցոյց  
տուէք ուրիշ դատողութեան, ուրիշ տեսակէտի հե-  
տեանքներ, քան իմ չայտնածներն են:

—Օրիորդ, ես ձեր զգացմունքների հետ բոլոր-  
ովին համաձայն եմ. բայց կարծում եմ, որ այդ  
ինչդիրը վճռելը աւելի ձեզնից է կախուած, քան որ  
և է ուրիշ անձից: Ձեր պահանջները, ձեր ցանկու-  
թիւնները մութը չեն. դուք ծարաւ էք իսկական  
գործունէութեան, մի այնպիսի պարտումների, որի  
մէջ լինէր հասարակաց օգուտ: Սակայն ձեր դիրքը  
վնասում է ձեր ցանկութիւնների իրագործելուն:  
Խնդրեմ ասացէք, դուք մտադիր չէք ձեռք վերցնելու  
ձեր դիրքից:

—Նիցուք թէ ես կարող լինեի իսկոյն ձեռք  
վերցնել: Սակայն դուք խորհուրդ կը տաք:

— Եթէ իմ մասին լինէր խօսքը, ես ձեռք կը վերցնէի, բայց ձեր վերաբերմամբ ինքներդ պէտք է վճռէք:

— Կժրազդարար, ես վճռել չեմ կարող. ինձ պէտք է այժմ հրամայել, որ ես ձեռք վերցնեմ: Աս կապուած եմ ամբողջ իմ անցեալով իմ ծնողների հետ այն կազմով, որ դուք տեսաք: Աս վճռելու համար պէտք է շատ կուռեմ հետս, շատ մտառանջուեմ և գաղար չ'ուենենամ: Խսկ դուք անկեղծօրէն մտածած և ձեր ձեռքը ձեր սրտի վերայ դրած՝ կարող էք ինձ պատուիրել թէ «գնան» — հաւատալով որ ես էլ իսկոյն այդ պատուէրից յետոյ կը գնամ:

— Աս չեմ կարող պատուիրել:

— Այդպէս էլ ես չեմ կարող վճռել: Աս ինքս ինձ վերայ չեմ ընդունիլ այդ տեսակ գործի նախաձեռնութիւնը:

Չանգը խփեցին: Կնացինք դահլիճ: Միւս միջարարին դարձեալ պատահեցինք: Թրխորդը անհող հարցրեց ինձ.

— Հաւանում էք պիեսը:

— Միջակ է. բայց պէտք է խոստովանուեմ, որ ուշադիր չէի: Աս, ճիշդն ասած, ձեր խօսակցութիւնների ազդեցութեան տակ էի:

— Կիտէք ինչ, պ. Պատրիկեան. ես ձեզնից շնորհակալ եմ ձեր խօսքերի համար: Դուք մեղաւոր չէք. եթէ չէք կարող վճռել իմ վիճակը: Դուք պարզ ասացիք, թէ դուք ինչպէս կը վարուէիք, եթէ իմ

տեղը լինէիք, դա ինձ համար բաւական է: Այժմ ես գիտեմ, որ ես պէտք է սպասեմ, մինչև որ կամ աւելի համարձակ դառնամ, կամ հանգամանքները իրանք իրանք փոխեն, կամ ինքս ընտելանամ իմ վիճակին և այլ ևս պահանջ չը զգամ ուրիշ կեանքի:

— Յրիորդ, պէտք է խոստովանարար չաչտնեմ իմ սոգաւորութիւնը ձեր մասին: Ես ձեզ բաւականաչափ դարձեալ չը ձանաչեցի: Մնում են ձեր սրտում գաղտնիքներ, որոնց դուք պահպանում էք ձեր սրբտում: Եթէ այդ գաղտնիքները կամ աւելի լաւասած՝ այդ չուսասեղերը չը լինէին, դուք չէիք կարող այդքան հանգիստ լինել, այդքան զուարթ:

— Ճիշդ է, «բարեկամ», ներեցէք համարձակութեանս այդ խօսքի համար. բայց ես այդ խօսքը ասում եմ, իբրև ընկերի, եթէ կ'ընդունէք: Ես ունեմ գաղտնիք. և այն պատճառով, որ նա գաղտնիք է, չեմ կարող ձեզ չաչտնել: Բայց ես կը ցանկանայի, որ ինձ համար բարեկամ մնայիք և ապագայում, աւելի չարմար հանգամանքներում, ինձ օգնէիք:

— Ամենայն պատրաստականութիւնով:

— Որ այդպէս է, խօսենք ներկայի մասին և զբաղուենք ներկայով: Ախ, պարոն Պատրիկեան. ես կեանք եմ ուզում, կեանք: Անբաւական եմ իմ անցկացրած օրերից: Եկէք մեր տուն. ես ձեզ համար լաւ-վաս ինչ գիտեմ կը նուազեմ, ժամանակ կ'անցկացնենք, կը խօսենք այտեղի մարդկերանց կեանքից.

ևս ձեզ ցոյց կը տամ իմ նկարած մի կենդանագիրը.  
ով գիտէ ինչեր պատմեմ...

— Վաշխտտեմ անպատճառ դալու:

— Ներեցէք, իբրև համեմատութիւն չ'ընդու-  
նէք. բայց համաձայնուեցէք, որ կարելի է սովորել  
այն տեսակ անձինքներին, ինչպէս Սերգօյեանն է: Ես  
նախանձում եմ, տեսնելով նորա աղաւնէական միա-  
մտութիւնը, նորա ոգևորուած և համոզուած պա-  
տարկաբանութիւնը... զոնէ զո՛ն է իրանից: Տուէք  
ինձ մի երկու երջանիկ օր. ևս չետոյ դարձեալ կը  
տանեմ Սերգօյեանին: Ուրեմն ևս ձեզ կը սպասեմ: —

Քաարոնից դարձայ տուն մի ծանր տպաւորու-  
թեան տակ: Սրիորդի հետ ունեցած խօսակցութիւնը  
վերանորոգում էր իմ չիշողութեան մէջ և ինձ  
մտատանջում:

Երկու օրից չետոյ ևս կրկին այցելեցի: Տէր Աս-  
տուած. ինչ ուրախ և զուարթ էր նա: Արչմփ պարզ  
և մի և նոյն ժամանակ նորբ վարուեցողութիւն  
ունէր:

— Ահա տեսնում էք, ասաց նա, ոսկեզօծ վան-  
դակում տանջուող մի թռչուն եմ ևս: Վանդակս  
կազմում է այն շրջանը, որտեղ ևս պոտում եմ: Ինք  
նկատեցիք, ի հարկէ, որ ծնողներս ուրախ են. որ ես  
ուսում եմ առել, բայց եթէ քննէք, կը տեսնէք, որ  
նոցա պէտք չէ ինքը ուսումը իւր հետեանքներով.  
Նոքա զնահատում են այն մի տեսակ փայլը, որ ուսումը  
տալիս է մարդուն: Նոքա զարդարել են իրանց սենեակ-

ները, ինչո՞ւ չը զարդարէին և իրանց աղջկան, տալով նորան բացի զգետտից և՛ ուսումնական փայլ: Ե՛հ. — բայց թողնեմ զանգատներս: Պարոն Պատրիկեան, պատմեցէք ինձ թէ ինչ տեսակ չոյս ունի ձեր երիտասարդների շրջանը իւր ապագայ անելիքի վերաբերմամբ: Դուք մեզնից աւելի բազումոր կը լինէք:

Սկսեցինք օրիորդի հետ երկայն խօսակցութիւն զանազան նախազիծների, մտադրութիւնների մասին: Այդ խօսակցութիւններից երևաց, որ օրիորդը ծանօթ է մի քանի բանիմաց երիտասարդների հետ, որոնք այժմ բացակայ են այս քաղաքից: Աամաց-կամաց պարզուեց և զաղտնիքներից մէկը, երբ օրիորդը ցոյց տուաւ իւր ձեռքով նկարած մի երիտասարդի կենդանագիր: Այն միջոցին, երբ ես զննում էի պատկերը, օրիորդը սեղմած շրթունքներով և լուրջ նայում էր իմ երեսի արտայայտութեան:

—Սա զիտէք ով է, ասաց նա ինձ. սա—իմ ուսուցիչն է, իմ մասնաւոր ուսուցիչը. նա, որ ինձ վարդապետում էր դպրոցից դուրս: Դուք նորան չէք ճանաչում: Նա մայրաքաղաք չէ գնացել կատարելագործուելու, այլ... Թողնենք, զաղտնիք մնայ առայժմ:

Օրիորդը ցոյց տալով անկատար թարգմանութիւնների մի քանի փորձեր՝ ասաց.

—Ես այժմ աշխատում եմ այս բանում կատարելագործուելու, որովհետեւ այս գործը թոյլատրում է իմ վանդակում: Բայց դեռ վարժ չեմ բաւականաչափ:

Խօսենք թարգմանական գրականութեան մասին.  
Նա ցոյց տուաւ իւր ընտրած գրքերի ցուցակը, որ  
մեծ էր և միջակ էր կազմուած.

—Ահա այդ տեսակ է մեր կեանքը, հառաչեց  
օրիորդը. սենեկային գործունէութիւն, նուրբ կեր-  
պանների և զեղեցիկ կահ կարասիքների մէջ թուլա-  
տրուելի գործունէութիւն:

— Բայց, օրիորդ, կան մեզանում տիկիներէրից և  
օրիորդներէրից և՛ վարժուհիներ, և՛ մանկաբարձուհի-  
ներ, և՛ դաստիարակչուհիներ:

—Այո՛ կան և ծանօթ եմ շատերի հետ. բայց  
ինձ ինչ օգուտ. ես գործնական բեղմնաւոր գործունէու-  
թեան ծարաւ եմ զգում. ինձ գործելու միջոց տուէք:

Սիրելի բոջր. այս նամակը, հաւատացած եմ,  
քեզ շատ կը հետաքրքրի: Եթէ դու տեսնէիր, թէ որ-  
չափ շնորհալի և անարհեստական ու անկեղծ է խօ-  
սում օրիորդը — կը զարմանայիր: Քուցէ դեռ էլի գրեմ  
մի քանի տող նորա մասին:

Յ'գրութիւն:

Գ. Ս. Պ.



## ՄՏԱՎԱԽԸ ԵՒ ԿԵԱՆՔԻ ՍԻՒՆԵՐԸ

Ս Ի Ը Ե Լ Է Ք Ո՛Ղ Ե

Այլ երջին երեք օրը ես բացակայ էի այստեղից: Մի ծանօթ արհեստագէտի հետ գնացի այցելելու մի կանոնաւոր մշակուող պղնձահանք: Այդ այցելութեան առիթով պատրաստուի եմ տպելու մի չօդուած, որ կ'ուղարկեմ քեզ անչապաղ: Այժմ պատմեմ քեզ մի քանի ծանապարհորդական միջնագէտութիւնք:

Երկաթուղու գնացքը դուրս է գալիս այստեղից դիշերը: Աւղեկցիս հետ մտանք վագօնը և մի կերպ տեղաւորուեցինք: Աւղեկիցս չօղնած էր և վճռեց խկոյն ննջել: Պառկելը և քնելը մէկ եղաւ:

Ես պատուհանից դիտում էի լուսնով լուսաւորուած այն շրջակայքը, որով ընթանում էր գնացքը: Ես չուսահատուում էի՝ տեսնելով խորշակած անապատի մեռելութիւնը և մտաբերում էի մեր ընդհանուր աղքատութիւնը և ճնշող անշարժութիւնը: Յետոյ աչքերս չօղնեցին և ես ընկայ ուրիշ մտածմունքներով մէջ: Իմ երևակայութեան առաջ ներկայացաւ միեւնոյն տափարակը կերպարանափոխուած, կենդանացած, լիքը անդաստաններով, այգիներով, գաստակերտներով —

կարատած ջրանցքներով, խճուղիներով — առհասարակ  
ձև էր թեև եկու թեան մէջ... սայլեր լի երկրագործա-  
կան և հանքային արդիւնքներով... երկաթուղու կա-  
շարանները բռնուած անվերջ հակերով և այլն:

Յանկարծ իմ մտածմունքներից ինձ սթափեցրեց  
մի բացականչութիւն, որ լսուեց հարեան ուղևոր-  
ների կողմից:

— Քանզուելու ենք, բոլորովին քանդուելու, եթէ  
աղտախնների բերանը փակող չը լինին Պէ, ահա զու-  
միշտ, Վեորգեան, հրճոււմ ես այսպիսի զրւածքնե-  
րով: Մարտիր այս անհեթեթութիւնները:

— Հը՛, էլի ինչ է պատահել, Սահակեան. ինչ  
նոր հրէշներ են աչքիդ երեացել, լսուեց մի ուրիշ  
ձայն:

— Հրէշներից էլ վատ են:

Բարձրացաւ տեղիցս, նայեցի դէպի հարեաններս  
և տեսայ երկու երիտասարդ միմեանց դէմ նստած:  
Նա, որի անունը Սահակեան էր, ունէր այդ բոսկին  
բարկացած դէմք, խիստ նայուածք, ձեռքին բռնած  
էր մի լրացրի համար և վառ մոմ: Միւսը, որի  
անունը Վեորգեան էր, համեմատաբար հանգիստ տրա-  
մադրութեան մէջ էր. նորա երեսին խաղում էր մի  
դառն ժպտ:

— Սա ինչ անմիտ թղթակցութիւն է նրեանից  
գրուած, շարունակեց Սահակեանը:

— Կարդացել եմ:

— Կարդացել ես և հաւանում ես:

—Քղթակցութիւն է էլին Ննչ եւ մեծ նշանակութիւն տալիս:

—Նու աչգպէս թեթեւ եւ խօսում. դու մէկ տես թէ այս տնդութ թղթակիցը ինչ է գրում:

Եւ Սահակեանը կարդաց հետեւալը (որը եւ արտագրում եմ իմ մօտ կղած լրագրից և որը դու ևս գուցէ կարդացած ես, բայց առանձնապէս ուշադրութեան չես առել):

«Մեր քաղաքից բաւականին հեռու մի ուխտատեղ կայ, ուր ամենայն տարի խոնուում է մեր նահանգի ժողովրդի մեծ բազմութիւն:

«Զարմանալի է թէ ո՞ր աստիճան մենք զեռ վետամնաց ենք: Ամբողջ մի գաւառի մեծութեան տեղ շարժում է, գործ ու հոգս մտնանում թէ ինչ է մի ուխտատեղ է զնում: Եթէ հաշուենք թէ որչափ գործ է տանը թողնում, որչափ երեխաներ են տանը մնում կիսախնամ, որչափ ձախորդութիւններ են պատահում և վերջապէս որչափ ծախք է պահանջում այդ ժամանակաւոր ապարդիւն չունչ,—պարզ կը նկատենք, որ մեր պապական այդ տեսակ լիմարութիւնները կրկնելով մենք կորցնում ենք շատ բան...»

«Նորերս օտարազգի ուսումնականները կատարեցին մի անգամ ևս չաջող վերելք գէպի Մեծ-Մասիսի գլուխը և այդպիսով ապացուցեցին, որ Մասիսի գլուխը բարձրանալը ամենևին անհնարին չէ, ինչպէս հաւատացնում էին մեզ մեր հնապաշտ փրացուները: Այո, եւրոպական ուսումնականները ոչ միայն ոտքի

տակ կը տան մեր սրբացած Մասիսի կատարը, այլ և մեր բոլոր՝ դարերով կիտուած՝ նախապաշարմունքները, եթէ մենք ինքներս չենք շտապիլ օր առաջ թօթա-  
փելու մեզնից հնութեան մրուրը, որ ծանր լաստե-  
րով նստած է մեր վերայ և որը մենք մեր սեպհա-  
կան քաղաքակրթական առանձնապատկու թիւններից  
մէկն ենք համարում:

— Հը՛, ի՛նչ կ'ասես, այսպէս բան կարելի՞ է գրել:

— Փոքր ինչ ասելի է աղ ածել:

— Ինչպէս թէ՛, սիրքը ինչո՛ւ: Այ՛ մարդ, այսպէս  
գրողին ես իմ շէմքից չէի թողնիլ ոտք դնի:

— Ե՛հ, դու է՛լ: Հիմա ի՛նչ մի ձախորդութիւն  
է պատահել: Իսկի չ'արժէ այդպիսի բաների մասին  
խօսել: Ի՛նչ մարդ է, խելքին զօր է տուել ու այդ-  
պէս է գրել:

— Բայց ի՛նչ է գրել, Գէորգեանն, ա՛յն ասա:

— Քո ասելը ի՛նչ է, շը լինի՞ Մասիսի գլուխը  
բարձրանալը դու էլ ես անկարելի համարում:

— Բանն այն չէ՛ բարձրանալ կարելի է թէ՛ չի  
կարելի—այլ... առհասարակ այդ տեսակ թղթակցու-  
թիւններ գրելը չանցանք է: Ի՛նչ հարկաւորութիւն  
կայ այդպէս շեշտելու՝ հէնց դիցուք՝ Մասիսի գլուխը  
բարձրանալու վերայ: Այդ ի՛նչ հանդիսաւոր կերպով  
չաչոնելու լուր է: Այդ տեսակ անցքեր կարելի է և  
լուծութիւնով անցնել: Օհ, օհ, օհ, ի՛նչ մի երևելի  
հաճոյք է, որ առիթ եղաւ մեր հնին քացի տալու:

— Եւ ինչո՞ւ շը տանք մի լաւ քացի, երբ մէզ

յաջողում է մի քաջագործութիւն անելու . ինչո՞ւ չ'ուրախանանք, երբ մեր միտքը, որ անցեալում կաշկանդուած էր, այժմ բացում է, նոր ծաւալներ է նուաճում:

— Բայց դա որչա՞մի ուրախալի է մեր տանացի տեսակէտից:

— Միանգամայն ուրախալի է:

— Հ'մ. և ի՞նչ յարմար դէպք է գտել՝ ուխտատեղի մասին խօսելիս տնտեսական և առողջապահական խորհրդածութիւններ մէջ բերելու . կեցցէ:

— Ասացի՛ մի քիչ խելքին զօր է տուել:

— Զօր է տուել:

Խօսակիցները լռեցին մի քանի բույէ, չետօղ Սահակեանը ճրագը հանգցրեց, լրագիրը մի կողմ շարտեց և կտորած ձայնով շարունակեց.

— Նղբայր: այսպէս բան չի լինիլ . ամեն բան քանդում էք, ամեն բան յեղաշրջում էք: Սորա վերջը ո՞ւր է: Մեր Խորենացու պատմութեան առաջին մասը, բոլոր հաջկազանց հարստութիւնը, հրատարակել էք սուսպելական, սուտ, հնարովի Մեր անցեալի շքեղ երեսները նսեմացրել էք այնպիսի մանրմունք կնճիւններով, որ անցեալը դարձել է միայն կապտութեան և բւնաւորութեան հանդէս:

— Եւ շո՞տ լաւ ենք անում: Առանց այդ տեսակ քննադատութեան չենք կարող ստաջ գնալ:

Ի՞նչ ևս դատարկ գուրս տալիս, Քէորգեան, քանդում ենք, բոլորովին քանդում:

— Կէ, բաւական է, է: Այդքան էլ վախկոտութիւն ամեն մի սասուերի տեսքից: Այլ զիտէ՛ դու դէմ ես մինչև անդամ ուսում առնելուն:

— Մի տեսակ ուսումին դէմ եմ, այն: Աս դէմ եմ այն նոր ուսումին, որ յուզմունքներ է ձգել մեր երիտասարդների գլխներում: Կրթութիւնը պէտք է լինի մեծ հսկողութեան տակ, նա մանաւանդ մեր կանանցը: Սոցա կրթութիւնը — եթէ տարրականից վեր է — վնասակար է: Կանանց բարձրագոյն կրթութիւնը մեր ժողովրդի դարաւոր ամուր կեանքը կը կազմալուծի: Անտանիքը պէտք է երկու գլուխ չ'ունենայ իւր նախագիծները չորինելիս: Միայն մի մարդ կարող է կազմել ընտանեկան նախագիծը:

— Տո՛, Աահակեան, ինչե՛ր ես խօսում: Ո՞ր դարումն ենք ապրում: Աւ դու քեզ զեռ ժամանակակից մարդ ես համարում: Միթէ այդ է քո վերջին տարուայ զգաստանալը, որի մասին այնքան կրկնում էիր երեկ:

— Եղբայր, չողնեցի՛ լսելով շուրջս այն բոլոր անհեթեթութիւնները: Աս տեսնում եմ, որ քանի սկսում եմ մտածել ձեզ նման՝ կորչում է իմ անդորութիւնը. իսկ երբ միանում եմ ինձ ճնող-մեծացնողների հետ — զգում եմ մի խորին հաշտութիւն կեանքի հետ, զգում եմ մի հայրենի ներշնչմունք իմ մէջ, մի ջերմացնող ուժ իմ առօրեայ կեանքի մէջ:

— Այն մեր գլխին, հազար վայ: Մեր ժամանակուայ երիտասարդը այդ տեսակ մտքեր չայտնի — չեմ

հասկանում: Ես չեմ կարողանում լմբռնել քո գլխում  
կատարուող գործողութիւնը: Եւ դուք ձեզ՝ շղատա-  
տացածնեքի՛ն անուն էք տալիս և կամենում էք ձեր  
սեպհական կուսակցութիւնը և խումբը կազմել: Ի՛նչ  
երեսով:

—Պէտքեան, դուք սխալում էք բոլորեքեանդ  
և շարաշար սխալում էք: Պէտք է կեանքի հետ  
գնաք, երբէք առաջ չը վազելով: Դուք ստիպում էք  
արագ շարժուել, արագ փոխուել, չուզուել: Եւ չուզ-  
մունքի մէջ մի քաղցրութիւն էլ էք զգում: Բայց  
այդ բոլորը մեր ժողովրդի համար վնաս է: Նա պէտք  
է դանդաղ շարժուի:

—Պէ որ այդպէս է, Սահակեան, իջիր վազօնից  
և գնն ոտքով, կամ ձիով, կամ սայլով: Ել ի՛նչ ես  
նստել այս արագավազ կառքի մէջ, եթէ դու դան-  
դաղաշարժութեան քարոզիչ ես:

Մի երկու տեղից լսուեցին թեթեւ ծիծաղի  
ձայներ: Այդտեղ նկատեցին խօսակիցները, որ ան-  
սպասելի կերպով նորա ուրիշների ուշադրութեան  
առարկայ են դարձել: Բայց Սահակեանը, որ մտադիր  
չէր շուտով լսելու և զայրացած էր Պէտքեանի խօ-  
սակցութեան ծաղրական ոճից, բացականչեց:

—Ամեն բան ծաղրի էք զցել, ես ի՛նչ ասեմ:  
Դուք՝ ծաղրողներդ՝ մի ժամանակ կը տեսնէք ձեզ  
անդունդը գլորուած:

—Տո՛, դէ ինչպէս չը ծիծաղեմ: Այո, լուրջ եմ  
խօսում: Ասո՛ ինձ կարճ և կորուկ. դու, որ չուսա-

հատուել ես մեր արածներից, ի՞նչ մի ելք ես գտնում մեր ժողովրդին զարգացնելու համար:

— Այդ ելքերը վաղուց են հնարուած. հէնց թէ կուզ՝ տասն պատգամը:

— Ի՞նչ:

— Մովսէսի տուած տասն պատգամը:

— Տօ ծիծաղում ես, Սահակեան:

— Աաւ մտածիր և կը տեսնես, որ տասն պատգամի մէջ պարունակուած են մարդկային կենցաղավարութեան հիմնական կանոնները՝ մի՛ սպանիլ, մի՛ խաբիլ, անբարոյական մի՛ լինիլ և այլն. սոքա հիմունքներ չե՛ն:

— Ա՛յ տղայ, դու չես մոռացել քո վանական փոքրաւոր եղած ժամանակ սերտածներդ: Բն, քո այս հինգ տարուայ դպրոցում մնալդ ջուր կտրեց, զնայ: Ընկերներիդ խօսակցութիւնները, քո մի ժանակուայ զրքեր կարգալու եռանդը— մի թէ այդտեղ պէտք է հասցնէին:

— Իմ բոլոր ուսումից չետոյ, որի մէջ ոչինչ բարոյական մի կէտ չը տեսայ, ես նկատում եմ, որ իմ վանական վարդապետը զոնէ գիտէր բարոյական մի հիմք տալ ինձ: Աս հանաք չեմ անում տասն պատգամի մասին: Շատ եմ համեմատել և նորանից լաւբան չեմ գտնում:

— Իսկ եթէ, զտնէիր— կ'ընդունէիր:

— Ի՞նչ, ոչ. տասը պատգամները փորձանքի միջով անց են կացել ամբողջ դարեր՝ մնալով ամուր:

Իսկ ես իմ հնարագիտութիւնով կարող եմ սխալուել:

—Տարօրինակ մի նմուշ ես: Ա՛յ մտածողութեան եղանակ: Աթէ մի տեղ քո մտքերը արտաբայտես հրապարակապէս—չատերին կը զարմացնես:

—Ես այց ո՛չ ժողովրդի ԾԾ տոկոսը: Եւ գորա մէջ է իմ ոչժք և հանդատութիւնը: Փնօք Աստուծոյ, մեր մտքերը ահա մի քանի տարի է, որ սկսուել են չաչտնուել այս և այն կողմերից:

—Այսինքն:

—Շատից քիչն էլ դու լսիր: Աւանդականութիւնը պահպանելով ես իմ և ժողովրդի մէջ պահպանում եմ արտաքին կապը—մեզ միացնող կամուրջը. իսկ ոգևորուելով տասն պատգամի իմաստով, որ և մեր ժողովրդի հայեացքի հիմքն է—ես ինձ կապում եմ ժողովրդի հետ ներքին կերպով:

—Եւ այդպէս մենք կարող ենք առաջադիմել:

—Ինչու չէ, չափաւորութիւն և բարեխառնութիւն—գոքա մեր ժողովրդի բնական խելքի արդիւնքներն են և պէտք է մենք էլ վարակուենք այդ շատկութիւններով: Նախ դեռ հպատակուենք ճիսակատարութիւններին առանց այլեւայլութեան:

—Իսկ յետո՞յ:

—Յետոյ ամեն բան կը գնայ իւր ճանապարհով: Երբ դուք արամադրուէք աւանդութիւնները չարգելու, միւս ձեր գործելիքը ինքն ըստ ինքեան կ'որոշուի:

—Երևակայեցէք, որ ես կասկածում եմ:

—Զէք փորձել: Ես ասում եմ, որ արամադրու-

թիւնը և զգացմունքը նշանակութիւն ունեն կեանքի մէջ:

— Աւրեմն անգործութիւն:

— Եղբայր, ինչ գործ էք դուք ուզում՝ գործ, գործ, զցել էք. ինքներդ էլ չէք իմանում թէ ինչ էք ասում: Կրթեցէք ժողովրդին, դարձրէք նորան բարոյական, աշխատասէր, հաստատ իւր կրօնին և պատկերից աւանդուած սուրբ սովորութիւններին: Ահա՛ գործ, մեծ, անվերջանալի գործ:

Քնացքը մտանում էր մի կաշարանի: Խօսակցութիւնը դադարեց: Ես զգում էի ծարաւ: Վազեցի կաշարան մի որ և է ըմպելիք ձարելու, բայց դժբաղդարար ոչինչ չը գտայ: Զանգակն էլ շուտով տուին և շտապեցրին կտաք նստելը: Անբաւական կերպով ես եկայ տեղս և վճռեցի հետեւելու ուղեկցիս օրինակին— աչխնըն փոքր ինչ հանգստանալու, մի երկու արշաւ քնելու: Բայց ծարաւութեանս սաստկութիւնը սկսեց ինձ նեղել և քունս փախցրեց: Երկաթուղու սպասաւորներից մէկը յայտնեց, որ հետեւեալ կաշարանում կարող եմ գտնել ցանկազածս: Ես վճռեցի մի արշաւ էլ արթուն մնալու:

Մի փոքր ժամանակից չետոյ Սահակեանը սկսեց տալ Վէորգեանին ինչ որ բացատրութիւններ. բայց խօսում էր համեմատաբար ցածր ձայնով, որը խլանում էր գնացքի աղմուկից: Աւուււմ էին կցկաուր խօսքեր, մի քանի գրական մարդկանց անուններ: Վէորգեանը ժամանակ ժամանակ նետում էր սուր և

Ճաղրական նկատողութիւններ, որոնցով նա զայրացրեց Սահականին և ստիպեց խօսելու աւելի բարձր ձայնով: Սահականը ապացուցանում էր, որ քառաձայն երգեցողութիւնը մեր եկեղեցիներում կը բացի ներմուծումների համար դուռ և կը վնասի:

Յետոյ Սահականը սկսեց պատմել իւր գլխին եկած մի անցք, որ Վէորգեանի ծիծաղն էր շարժում: Պատմածի համառօտակի բովանդակութիւնը հետևեալն էր.

— Մի անգամ նստած պարսպում էի ընթերցանութիւնով. չանկարծ ինձ մօտենում է ընկերներիցս մէկը, տալիս է ինձ մի զիրք և ասում է, որ աշխատեմ շուտով կարգալ և առաւօտը իրան դարձնեմ: Ասում եմ զիրքը ձեռքս և սկսում եմ թերթել. մի երեսի վերայ տեսնում եմ խօսում է ընտանիքի մասին և խօսում է շատ տարօրինակ: Վրբի հեղինակը համեմատում է մի քանի վայրենի և քաղաքակիրթ ազգերի ընտանիքների կազմակերպութիւնը և վերջ ի վերջոյ այն միտքն է յայտնում, թէ այժմ ընտանիքի դերը կատարուած է և նա պէտք է իւր իրաւունքները չանձնէ հասարակութեան: Բարկացայ և զիրքը դէն ձգեցի: Փոքր ինչ ման եկայ սենեակումս և դարձեալ վեր առի ձեռքս զիրքը և սկսեցի թերթել. կանգ առայ մի ուրիշ երեսի վերայ, ուր խօսում էր ժառանգութեան մասին. հեղինակը ապացուցանում էր իւր խնդրով, որ ժառանգութեան գաղափարը անբարոյական է և առարկում էր ժառան-

գութիւնը չատկացնել հասարակութեան: Գարձեալ բարկացայ և զիրքը փակեցի: Սկսեցի ծխել, սպասելով որ զլուխս փոքր ինչ հանդարտ կերպով ինձ հաշիւ տայ կարգացածիս մասին: Բայց զիրքը ինձ հետաքրքրել էր. հեղինակի գրելու ոճը, որ նմանում էր քարոզի՝ գրաւում էր մարդու: Անբաւական կերպով բացարի զիրքը, թերթեցի և սկսեցի կարդալ ծառաների և տէրերի չարաբերութիւնների մասին: Մի երես չէի կարգացած, որ տեսայ զլուխս պտուտ է գալիտ թերթեցի մի քանի ուրիշ երեսներ — մէկը միտից սարսափելի: Այլեր սոի զիրքը, դրեցի սնդուկիս մէջ և բանալիքով փակեցի, որ այլ ևս չը դուրս գայ այնտեղից ինձ անհանգստացնելու: Ամբողջ գիշերը չը կարողացայ քնել: Առաւօտը վեր կացայ, շտապով հանեցի զիրքը և վազեցի ընկերիս մօտ: Գիրքը շարտեցի երեսին և ասում եմ. այն սնդութ, էլ ինձ պատժելու կերպ չէիր գտել. այս ինչ զիրք էիր տուել զու իմ ձեռքը, գիշերը ինձնից քունս փախցրեց, այժմ էլ՝ երբ բերում էի քեզ մօտ՝ ձեռքս կարծես այրում էր, զգալով զրքի բովանդակութիւնը:

— Հն, հն, հն, այն ծիծաղ: Աս լսել էի քեզ հետ պատահած այդ դէպքը, բայց ոչ այդ կերպով: Եւ գիտես այս զիրքը զրոզը ով է — մի նախկին հոգևորական, որը գրաւուել է ծայրայեղ վարդապետութիւններով: Նա քրիստոնէական գաղափարները աշխատել է իրր թէ գործնական կեանքի վերածել: Անհամ մի զիրք է գրել, որովհետև խառնել է հին և նոր

բաներ, լայն և նեղ հայեացքներ, կրօնական պահանջներ. բայց ծիծաղելին այն է, որ դու վախեցել ես մի այդ տեսակ գրքից և չես կարողացել չաղթել նորան:

—Մէջ չաղթեցի և այնուհետև սկսեցի հաւատս կորցնել դէպի գրքերը, նա մանաւանդ այնպիսիները, որոնց հեղինակները իրանց խելքից են դուրս տալիս, ուզում են նոր վարդապետութիւն քարոզել: Այդ ժամանակից սկսեցի մտաբերել իմ մանկական առաջին ուսուցչիս և տեսայ, որ նորա աւանդածը աւելի հաստատուն բան է, քան բոլոր նոր քարոզիչներինը:

—Այ ճշմարիտ դատողութիւն ես տալիս, մէջ մտաւ մի ուրիշ ուղեոր, որ նստած էր փոքր ինչ հեռու նստարանի վերայ. ես լսեցի բոլոր ասածդ, պարոն, պէտք է խոստովանուե՛մ—չատ ուղիղ ես խօսում: Ի՞մ տղիս օգտիցը ես չեմ կարողանում զաւանջ, մէկ քեզպէսի ձեռքը կարողանայի զցել՝ շուտ կը դրստուէր:

Սահակեանը ուրախացաւ այդ քաջալերութիւնից և տաք-տաք շարունակեց.

—Տեսնում ես, Գէորգեան, սա միայն մէկը չէ, սորա բերանով խօսում են բոլոր ծնողները: Մեր երիտասարդները չեն հասկանում մեր հայրերին և սերունդները թշնամացել են:

—Միթէ՞ դու լուրջ կերպով ես խօսում, Սահակեան: Մէկ մտածիր, յետոյ խօսիր: Ի՛նչ ես

ասում: Ի՞նչ հաշտութեան, ի՞նչ թշնամութեան մասին ես խօսում:

Մի քանի ուղևորներ խառնուեցին խօսակցութեան մէջ և կառքի մէջ բարձրացաւ մի տաք վիճաբանութիւն <sup>1)</sup>: Վէորգեանի կուսակիցների թիւը շատացաւ: Մինչև անգամ մի հասակաւոր մարդ սկսեց պաշտպանել նորան և ջրել Սահակեանի հայեացքները: Սրինակ բերաւ հին ժամանակի տղիտութիւնը և այժմեան լուսաւորութիւնը, շեշտեց, որ հինը իւր ոչ ժերով չի կարողացել մի բան կատարել, մինչդեռ նորը ամեն օր չառաջադիմութիւններ է անում:

Ես սկզբում կարծում էի, թէ միայնակն եմ, որ ունկնդիր եմ երկու երիտասարդների խօսակցութեան: Յետոյ, երբ շատ մարդ միջամտեցին — ես համոզուեցի, որ բոլորն էլ սաստիկ հետաքրքրում են եղել խօսակցութեան նիւթով:

Մի քանի ժամանակից չետոյ խօսք բացուեց պարբերական թերթում ընդունուած այն սովորութեան մասին, որ քննում են կեանքի վատ երևոյթները և ծայրացեղ կերպով հարուածում: Սահակեանը այնքան երկար խօսեց այս ախտի դէմ, որ իւր համակրողներին էլ ձանձրոյթ պատճառեց: Վլխաւոր նորա միտքը այն էր թէ պատարակելով մեզ, առաջինը՝ մենք միջոց ենք

---

<sup>1)</sup> Պատրիկեանի նամակից բաց եմ թողնում մի քանի տողեր, որոնք վերաբերում են գործող անձերի և չաչանի դէպքերի:

տալիս օտարազգիներին առհասարակ վատ գաղափար  
կազմելու մեր մասին և յետոյ յարմար դէպքում մեզ  
յետ դարձնելու մեր ասածները, երկրորդ՝ վիրաւորում  
ենք ընթերցողի զգացմունքը և ոչինչ կրթողական  
անունդ չենք տալիս նորան:

Խօսակիցներից մէկը, պաշտպանելով Քէորգեա-  
նին, նկատեց, որ Սահակեանի իդէալները նա տես-  
նում է իրագործուած Քիւրքիայում և Պարսկաստա-  
նում:

Սահակեանը կատաղեց:

— Այո՛, մենք էլ շատ առաջ չենք գնացել: Ես  
ի՛նչ ասեմ այն մեր խելագարներին, որոնք, բաւական չէ՛-  
ինչ գրում են այստեղի մեր կեանքի վատ երևոյթ-  
ների մասին, դեռ ասում են ու գրում Քիւրքիայի և  
Պարսկաստանի ժողովրդի կեանքի մասին: Նկարա-  
գրում են նորա առօրեայ կեանքը վատ գոյներով:

— Ար թագցնէք այնտեղի պակասութիւնները—  
կարծում էք շատ էլ կը թագցուի:

— Բայց պէտք է թագցնել, բղաւեց Սահակեանը:

— Ինքնախաբէութիւն է, չիմարութիւն է,  
միամտութիւն է, կրկնեցին մի քանի մարդիկ:

Սահակեանի կուսակիցները սկսեցին ինչ որ բա-  
ցատրութիւններ տալ: Բայց Քէորգեանը, որ լուռ  
կերպով ունկնդիր էր աղմկալի վիճաբանութեանը,  
կարճ կերպով պատասխանեց.

— Այժմ մենք մեծացել ենք, մենք երեխաներ  
չենք. մեզ խաբելով, մեզ օրօրելով— ոչ մի յառաջա-

դիմութիւն չենք կարող անել: Աեանքը, պէտք է քննել անխնայ, բայց միանոյն ժամանակ պէտք է աշխատել, որ ամենայն մի շարժում կեանքի մէջ կատարուի զիտակցարար, կշռուած: Մտավախութիւնով առաջ զնալ չենք կարող:

Խօսակցութիւնները թուլացան: Մօտեցանք նոր կայարանի, ուր շտապեցի իջնելու, որ կարողանամ ծարուս չաղեցնել:

Նստելով նորից կառք, նկատեցի, որ ամենքը չարմարեցրել են՝ ով որչափ կարող է՝ պառկելու և քնելու:

Ես էլ պառկեցի և պատուիրեցի երկաթուղու սպասաւորին զարթեցնել մեզ՝ իջնելու տեղում: Բայց մի քանի րոպէ գլխիցս չէր հեռանում Սահականի անձնաւորութիւնը: Սահականի պէս դատող մտածողները շատ էլ հազուադիւր չեն այստեղի երիտասարդների մէջ. բայց ես մինչև այդ օրը դէպք չէի ունեցել լսելու այդքան երկայն խոստովանութիւններ:

Դեռ մի շարաթ առաջ պատահեցի մի երկու երիտասարդների, որոնք ծաղրում էին մեր կեանքը նոր պահանջները և իրանք զբաղուած են զանազան կարկատանների մասին տաք-տաք վիճաբանութիւններով:

Մտաբերում ես հին սերնդի ներկայացուցիչ մեր ծեր քահանայ Տէր-Յովհաննէսին: Ի՞նչ պատուական ծերուկ էր և որչափ կատարեւոյ էր նորա աշխարհա-

չեացքը, որը թէև հնացած էր, բայց համահարգուած էր և ներդաշնակ բոլոր հին կեանքի պահանջներին հետ:

Քաղ անդամ կը պատմեմ քեզ իմ ուղեկցի մասին: Նա հետաքրքրական և չարդելի անձնա որս թիւն է:

Աղջուկներ... Քո Ա. Պ.

Ի Ս ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ

Ս Ե Ր Ե Լ Ե Բ՝ 1 Ե

Այդուց է ցանկանում էի այցելել Գետաբէկի պղնձահանքը: Նորա մասին շատ էի լսել և կարգացել: Ուստի՝ արհեստագէտ Մուշեղեանի առաջարկութիւնը — զնալ պղնձահանքը և նորա շրջակայքը տեսնելու — ես ընդունեցի մի առանձին ուրախութիւնով:

Նրկաթուղու կառքում ես հետաքրքրեցի խօսակցութիւններով և զորանով խլեցի իմ հանգստանալու ժամերը: Եւ թէև չեսոյ ես հետեւեցի Մուշեղեանի օրինակին, սակայն իմ հանգստանալը շատ շը տեւեց: Նուսով մեզ զարթեցրին, Վաչարան հասանք դարձեալ զիշերը, բայց արշալոյսը արդէն սկսում էր և առաւօտը մօտ էր:

Իջանք թէ չէ՝ սկսեցինք ուղևորելու միջոցների մասին հարց ու փորձ անել: Մեզ հետ միասին իջաւ կառքից և մի պարոն, որ տեսնելով մեզ՝ մօտիկացաւ, ծանօթացաւ և ոչ միայն դիւրացրեց մեզ համար բոլոր մանր մունր հոգսերը, այլ և ինքը միացաւ մեզ: Դա բժիշկ Բարսեղեանն էր, որ գործեր

ուներ նոյնպէս պղնձահանքի մօտերքը և որին շատ լաւ ծանօթ էր բոլոր շրջակայքը:

Նա բացատրեց, որ կարող ենք ուղեորւել և սալլով, և ձի հեծած: Նա խորհուրդ տւեց վերջին տեսակ ճանապարհորդութիւնը և խնդրեց, որ մենք թող տանք նորան, որ նա նախագծի մեր գնալու ուղին: Նա այնպէս կարգադրեց, որ մենք մեր ամբողջ ճանապարհորդութեան միջոցին կարողացանք տեսնել զիւղեր, և հաց, և թուրք, և զուխօրօրի, և գերմանացիների և այնուհետև նորից նստեցինք երկաթուղու կողքը:

Եւ այդպէս էլ արինք:

Մեր առաջնորդ-ուղեցոյց բժիշկը պատմում էր անդադար, պատմում էր աշխուժով, գրաւիչ ձևով: Բժիշկ Բարսեղեանը ոչ միայն նկարագրում էր շրջակայքը, այլ և աշխատում էր զանազան կարծիքներ յայտնել զանազան երևոյթների մասին: Մուշեղեանը, որ ուշադիր լսում էր նորա պատմածները, չէր ընդունում շատ կէտերում նորա յայտնած կարծիքները, բայց հարեանցի նկատողութիւններ էր միայն անում և չէր մանում մեծ վիճարանութեան մէջ:

Ահա բարձրանում ենք տափարակից և մանում ենք լեռների և ձորերի աշխարհը: Մեր թողած տափարակը սփռւում է մեր աչքերի առաջ. իսկ նորանից չետոյ հօրիզոնը պարսպւում է ուրիշ՝ աւելի մեծ՝ լեռնակոյտով: Ահոնային օդը թարմացնում է

մեզ: Հրաշա՛լի օդ: Մեր խօսակցութիւնները ընդ-  
հասուում են. մենք լուռ խորասուզւում ենք զանա-  
զան մտածութիւնների մէջ:

Բայց չօղնածութիւնը իրանը անում է: Չընա-  
լելով մեր մի երկու անգամ հանգստանալուն... մենք  
սխեցինք զգալ մեր ճանապարհորդութեան ծանրու-  
թիւնը, և անչափ ուրախացանք, երբ հեռուից տե-  
սանք պղնձահանքի շինութիւնները, որոնք այնքան  
զանազանում են մեր գաւառների սովորական շի-  
նութիւններից:

Կ՛մ առանձին չօղուածիցդու կը տեղեկանաս այս-  
տեղի պղնձահանքի մասին: Բայց մի բան, որ չեմ  
կարող այստեղ չը չիշել, այդ այն տպաւորութիւնն է,  
որ անում են մարդու վերայ ամբողջ պղնձահանքը և  
նորա կառավարիչները: Կանոնաւոր գործը, մասնա-  
գիտական զարգացումը, լաւ կշռած և սահմանած  
կազմակերպութիւնը — ինձ վերայ մի ուրախ և մի և  
նոյն ժամանակ ճնշող ազդեցութիւն ունեցան: Այդ  
մտածուած և հաստատ գործի, այդ հաշուած և կա-  
նոնաւոր գործածուող խելքի առաջ՝ ես մոռացայ այն  
սարսափելի աւազակներին, որոնց մասին պատմում  
էր ճանապարհին բժիշկը: Այդ վայրենի քաջագոր-  
ծութիւնները դարձան իմ աչքում աննպատակ երե-  
խայական խաղեր՝ զուրկ ներքին ոյժից, զուրկ ապա-  
զայից:

Պղնձահանքի կառավարիչը հարեւանցի կերպով  
մեզ ծանօթացնում էր պղինձ ստանալու երեք եղա-

նակների հետ. բացատրում էր իրանց արած փորձերի շարժաւիթները և հետեւանքները. համեմատում էր իրանց անտառի փայտը և Բագուի նաւթը, իբրև վառելիքի նիւթեր, հաշոււմ էր իրանց շինած կարճ երկաթուղու սուած դիւրութիւնը...: Մենք զգում էինք, որ հնադարեան սարահարթը եկած այդ նոր հիւրերը՝ բոլորովին ուրիշ գործ են գործում, որ մարդկային խելքը այդտեղ նուածոււմների ետեւից է ընկած և որ նորան օգնական է հանդիսանում այն գիտութիւնը, որը չէ վախենում մեր լեռների աւազակներից և դեերից:

Պղնձահանքից ուղղուեցինք դուխորոնների դիւղը, ուր մի փոքր հանգստանալուց չետոյ շարունակեցինք մեր ճանապարհը:

Հողը նոր էր զարթնում իւր ձմեռուայ քնից. այս ու այն խորշերում երևում էին մատաղ կանաչի առաջին բողբոջները: Յղը զով էր և ամբացնող:

Ահա հետուից երևաց 2... հայ դիւղը: Բժիշկը խորհուրդ տուեց այդտեղ կարդին հանգստանալու: Մենք համաձայնուեցինք:

Գիւղում իջանք բժշկի ցոյց սուած տանը: Մեզ ընդունեցին՝ պատրաստակաճութիւն չայտնելով, բայց այնքան տակն ու վերայ եղան, որ ևս ինձ դժուար դրութեան մէջ զգացի:

Բաւական մեծ սննեակում մեզ համար մաքուր գորգեր փռեցին, բարձեր դրին բոլորիս համար և հրաւիրեցին հանգստանալու: Յետոյ և թէչ բերին:

Բժիշկը իբրև ծանօթ հարց ու փորձեր արաւ տանտէրից զիւղի և մի քանի ծանօթ զիւղացիների մասին: Մի քանի ժամանակից յետոյ եկան երեք զիւղացիներ բժշկին տեսնելու. նա հրաւիրեց նոցա նստելու: Գիւղացիները մեզ ողջունելուց յետոյ՝ նստտեսցին:

— Ինչպէ՞ս զիւղը անցկացրեց այս ձևով, հարցրեց բժիշկը:

— Փասք Աստուծու, միջակ. խոտի կողմից մեծ պակասութիւն ունէինք, բայց մի կերպ ձևով լուսացրինք:

— Իսկ հացներդ, ուրեմն, լաւ է՞ր:

— Լաւ էր. բայց առաջուանը չէ:

— Գիտե՞ք, ի՞նչ. դարձաւ դէպի մեզ բժիշկը, զիւղացիները այսպէս են, բերանները չի զօրում, որ ասեն թէ լաւ էր, չէ. պէտք է վերջումը էլի մի բան կցեն, մի գանգառ աւելացնեն:

— Դէհ, ինչպէ՞ս անենք, պարօններս, հողը քանի գնում է մարդահաշիւ փոքրանում է, հասկն էլ տարի տարուայ վերայ թոյլ է բռնում. ապա չի՞ պակասում, ապա մեր մէջքը չի՞ թուլացնում:

— Աւսումնարանը ինչպէ՞ս է:

— Կայ էլի: Վարժապետին իմաց ենք տուել դայ ձեր տեսութեանը: Լաւ մարդ է, բայց շատ է իրասածի:

— Ի՞նչպէս:

Այդ միջոցին զիւղացիներից մէկը բօթեց խօսողին և սա խօսքը փոխեց:

— Երեխայքը նորան սիրում են, մեզ էլ այդ է  
Հարկաւոր. ինքն էլ խելքը զլիւին մարդ է:

— Ռոճիկը աւելացրի՞ք:

— Աէ, որտեղից աւելացնէինք, դժուար տարիներ  
են: Ասում էք թէ մենք հազանգատաւոր ենք,  
ի՞նչ անենք՝ ոչմներս չի պատում: Աւսումնարանի  
հիմնկուաց ծախսած փողն էլ հեշտ չի կիւուում: Եւ-  
տով էլի պէտք է հողաբարձունների ժողով անենք:

Բժիշկը՝ չանկարծ իբր թէ սթափուած՝ դարձաւ  
մեզ և ասաց.

— Այո՛, բարեկամներ, ես մուացաց ձեզներկա-  
յացնել կարգին. այս մեր զիւղացին գոյրոյի հողա-  
բարձուն է. սա բացի մածը բռնելը և ուրիշ բան էլ  
չատ գիտէ: Լաւ չէ՞. հողագործ և հողաբարձու:

Ես հետաքրքիր եղաց իմանալու թէ գիւղից  
ինչպէ՞ս են ուսումնարանի համար փող ժողովում,  
ի՞նչ կարգով:

— Մի կերպ անում ենք էլի: Մի հարկէ աղքատ-  
ներից, շքաւորներից փող չենք պահանջում. նոցա  
երեխայքը ձրի են ուսում առնում: Պօսակցութիւն-  
ներ շատ եղան իւր ժամանակին. բայց հիմա հան-  
դարտութիւն է: Մի հարկէ մի քանիսներին շատ է  
զօռ հասնում. ինչ արած, բայց էլ է, ժողովուրդ է:  
Ասուած բաններս չաջող տանի, հունձներս առատ  
լինի, մենք երկնքի թռչունին էլ կուտ կը տանք:

— Այո՛, անտեսական ապահովութիւնը — հիմքն  
է ամեն մի յարատեւ շառաջադիմութեան, ասաց խորը

զգացած Մուշեղեանը: ժողովուրդը այդ լաւ է հասկանում: Տուէ՛ք նորան հող, կարողութիւն և նա կ'իրագործի ամեն տեսակ երազներ:

— Այդ՝ խնդրի միայն մի մասն է: Եւ այժմ մեր ժողովրդի համար այդ է: գլխաւորը, նկատեց բժիշկը:

— Միշտ գլխաւորն է լինելու: Մեր դպրոցներն էլ պէտք է ձգտեն աշակերտին զրահաւորելու այնպիսի գիտութիւններով, որոնք օգնում են ժողովրդի նիւթական հարստութեան:

— Դուք, պարոն Մուշեղեան, խառնում էք մի քանի բան միասին: Դուք խօսք բաց արիք տնտեսական ապահովութեան մասին, իսկ այժմ շօշափում էք ուսում տալու ուղղութեան խնդիրը: Դոքա տարբեր առարկաներ են: Ես առաջինին չը տուի առ այժմ մեծ նշանակութիւն, երկրորդը ընդունում եմ. իսկ այդ բոլորը դեռ թողած՝ ասում եմ, որ մեզ հարկաւոր է այժմ առհասարակ բարոյական, գաղափարական առաջադիմութիւն:

— Դոքա բառեր են, պարզ խօսեցէք, աւելի աշխարհաբառ, ժպտալով ասաց Մուշեղեանը:

— Այժմ մեր կեանքը ներկայացնում է ինքը մի նիւթ, որը ո՛չ աղքատ է և ոչ փտած. այլ միայն զուրկ է հողուց, զուրկ է խելացի նպատակների ծառայելուց:

Գիւղացիները տեսնելով, որ խօսակցութիւնը բոլորովին փոխուեց, մէկ մէկ դուրս եկան՝ զուցէ կարծելով, որ մենք կ'ամենում ենք մենակ մնալու:

Ինչ հետաքրքրում էր Մուշեղեանի և բժշկի մջ բացուած վէձը: Ուստի՝ ցանկանալով խօսակցութիւնները աւելի կանոնաւոր դարձնելու, ևս սասցի.

— Պարոններ, խնդիրը լաւ խնդիր է և ինչպէս ևս կարծում եմ, մենք բոլորս էլ պէտք է որ շատ հետու չը լինենք միմեանցից խնդրի ներքին իմաստի վերաբերմամբ. այժմ նորան ձեւակերպելու, նորան չայտնի զոյն տալու, նորան բնատրոշելու մէջն է լինելու տարբերութիւնը:

— Ինչ անեմ, դանդատուեց Մուշեղեանը, ևս պարզ աշխարհաբառ եմ խօսում. իսկ մեր պարոն բժիշկը զբարառ: Ես ասում եմ թէ ժողովուրդը պէտք է ուտի, խմի, երեխաներ մեծացնի, երեխաներին զործնական՝ հաց բերող ուսում տայ, նորան ապահովի ազնիւ աշխատանքով, որպէս զի ժողովուրդը չը մտածի ծուռ և անազնիւ միջոցների մասին, որպէս զի խելացի հիմք կազմի կանոնաւոր զարգացումի համար, իսկ...

— Իսկ ես, տաքացած վերայ բերեց բժիշկը, ասում եմ, որ այդ բոլորին հասնելու և ուրիշ հասարակական նպատակներ իրագործելու համար կարևոր է նախապատրաստական զործունէութիւն:

— Այսինքն:

— Քաղաքիարական շարժում, բարոյական սուրբ ոգևորութիւն, վեհի, համազգայինի, համամարդկայինի պաշտում: Ինչն է մեզ երեքիս միմեանց հետ կապում՝ եթէ ո՛չ այն մի լուսաւորութիւնը,

այն մի գաղափարը, որին չարգող և ծառայողներն ենք:

— Խօսենք իրականից, սկսեց աւելի լուրջ կերպով Մուշեղեանը, այս դիւղի վերաբերմամբ ինչ կարող էք ասել: Ինչպէ՞ս անենք, որ սա առաջադիմի: Անենք այն, ինչ որ ես եմ առաջարկում՝ իսկապէս գործնական, իրագործելի բաներ, թէ նորան թօլկենք, շշմեցնենք ձեր եղանակով:

— Եւ այդ, և այն. բայց դուք չէք ցանկանում ըմբռնել իմ տեսակէտը: Նրբ որ սկսում է մի ազդի մէջ գաղափարական շարժում, նա ինքը ուժեղ կերպով օգնում է իւր առաջադիմութեան և նա պահանջում է այն, ինչ որ դուք այժմ նորան պատուատում էք, նորան կպցնում էք: Այդ գաղափարական շարժումը ինքը դեր ունի կատարելու:

— Եթէ, պարոն բժիշկ, խնդիրը այդպէս ընդհանրացնում էք, այն ժամանակ ես կ'ասեմ, որ համամարդկային գաղափարական շարժումները հետեւանք են եղել անտեսական հանդամանքներին:

— Մասամբ միայն: Ընչդ է անտեսական կեանքը խառն է եղել շատ գաղափարական շարժումներում. բայց դա չափազանցրած ընդհանրացնում է և լավե նայն դէպս մեր երկրում կան առանձնապատկութիւններ...

— Դուք եթէ մանրամասն քննէք, խօսքը կըլտրեց Մուշեղեանը, կը տեսնէք, որ մեծ շարժումներում—անտեսական խնդիրը առաջին տեղն է բռնել: Մինչև անգամ ստրկութիւն օճացնողները, զորո-

նակ Ամերիկայում, ղեկավարում էին անտեսական հաշիւներով և ոչ թէ գաղափարական ոգևորութիւնով:

— Այդ կարծիքը ևս դիտեմ, հանդարտ նկատեց բժիշկը. բայց այդ կարծիքը հարկաւոր է ո՛չ այժմ, այս խօսակցութիւնների ժամանակ, այլ երբ մենք քննում կը լինենք ժողովրդի անտեսական զարգացումի խնդիրը: Ես խօսում եմ ժողովրդի ընդհանուր զարգացումի մասին:

— Պարոն բժիշկ, դուք՝ փոխանակ վիճելու ըստ իմաստի՝ դիմում էք կողմնակի միջոցների, փոքր ինչ վիրաւորուած նկատեց Մուշեղեանը:

— Ներեցէ՛ք, ամենևին կողմնակի միջոց չէ. ևս ցանկացայ դորանով աւելի կտրական շեշտել իմ և ձեր հայեացքների տարբերութիւնը: Այո. ևս կը վիճեմ: Դուք ի՛նչ խնդիրներ էք ինձ առաջարկում:

— Քացատրեցէ՛ք, ինչու էր փրանսիական ազգը շարժում անցեալ դարերի վերջերը, ինչո՞ւ էր ստրկութիւնը վերանում այս դարում. ասացէ՛ք, ինչ տեսակ է շարժուողի անտեսական վիճակը. և եթէ չը փոխուէր անտեսական վիճակը, սկսուած շարժումը կը վերջանա՞ր կամ վերջանում է: Քրիստոնէութիւնը, որ այնպէս շուտով տարածուեց, չէր մտցնում արդեօք անտեսական նոր հայեացքներ: Ժողովրդական շարժումը առանց անտեսական հիմունքի—մի մեծ հիւանդութեան արտայայտութիւն է:

Բժիշկը հանգիստ լսում էր Մուշեղեանի ասած-

ները. նա կարծես զեռ սպասում էր շարունակութեան: Մուշեղեանին պատասխանելով նա ասաց.

— Վաղափարները այն պատճառով ուժեղ և հաստատ էին, որ նորա վճռում էին և անտեսական խնդիրներ. բայց ո՛չ թէ նորա իրանք միայն ծնունդ էին, միայն հետեանք էին անտեսական հանգամանքներին: Եթէ Եւրոպայում երբորդ գասակարգը այժմ իշխող է և նորան տանում են, այդ բացատրում է ո՛չ միայն նորա անտեսական ուժով, այլ և այն բանով, որ այդ երբորդ գասակարգը զաղափարներ չէ բացատրում, այլ իւր գրոշակներին վերայ զաղափարներ է նշանակել: Քուցէ զաղափարներից օգուտ քաղողները չաճախ ձարպիկներն են լինում: Վէ՛, միշտ լինում են հասարակական փոփոխութիւններից օգուտ ողներ: Վուք օրինակ էք բերում քրիստոնէութիւնը: Բայց միթէ՞ հէնց զա չէր այն ուժեղ զաղափարը, որ ընկճեց համահաւասար բոլոր գասակարգերը. և ռամկին, և նախարարին, և Տրդատին, որ հրաժարուեց նոյն խակ իւր գահից: Վաղափարը չէ՞ր, որ մղեց հինգերորդ դարի փափկասուն կանանց արհամարհելու կեանքի վայելչութիւնները, այսինքն՝ ուրիշ լեզուով՝ անտեսական հանգամանքները: Վաղափարը չէ՞, որ ստիպում է մեր նորաբոյս երիտասարդներին՝ մտաւոր աշխատանքի հետ կապուած ծանրութիւնները գերադասել ուրիշ աւելի շահաւէտ գործերին:

— Այդ ի հարկէ: Այդ ոչ ով չէ էլ բացատրում:

— Բաւական չէ սպարոններ, նորան չը բացատել մենք պէտք է նորան այժմ աւելի, քան երբ և իցէ, աչքի առաջ ունենանք: Քաղափարը, ուժեղ, համատարած գաղափարը՝ նա մի չը գրուած դաշնագիր է, որ միլիոնաւոր ժողովուրդ ուղղուած է մի ընդհանուր մեծ գործի:

— Բայց իմ դրած հարցերին չը պատասխանեցիք, նկատեց Մուշեղեանը:

— Արովհետեւ ես այժմ նորան երկրորդական եմ համարում և բոլորովին առանձին խնդիր:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, միթէ՞ դուք չը լսեցիք զիւղացուց, որ նա ասում է մենք ուսումնարան չենք կարողանում սահել, որովհետեւ հողը պակասում է, ուժասպառ է դառնում:

— Ես կը պատասխանեմ ձեզ մի հարց տալով: Խնդրեմ ասացէք, ինչո՞ւ հարեան թուրք զիւղերը, որ աւելի բազմահող են, դպրոց չ'ունեն. ինչո՞ւ զուխօքօրները երեկ մեզ աշխատում էին համոզել, որ իրանց դաւանածից դուրս կը թուրքիւնը վաստակար է և այդ պատճառով դպրոց բանալու խնդրին շատ են դիմադրել: Միթէ բազմահողութիւնը, միթէ՞ տնտեսական լաւ վիճակը՝ բացի կանոնաւոր անումից՝ մինչև այժմ մի որ և է բան է տւել մեզ նոր-Քաջազդի գաւառում, Շիրակում, Աբարանում և միթէ՞ այժմ, որ զիւղացիները սկսել են զնահատել ուսումը, նորքա աւելի հարստացել են, ո՛չ, ո՛չ, ո՛չ, նորքա մինչև անգամ աղքատացել են և մի քանի տեղե-

բում այնքան, որ իսկապէս առաջադիմութեան համար վտանգուած են:

— Ինչո՞ւ են վտանգուած, երևի այն պատճառով, որ չեն կարող ուսումնարան պահել, որ տնտեսապէս անկարող են:

— Այո՛, պարոն Մուշեղեան, հազար անգամ այո՛. բայց ես ասում եմ թէ այդ զիւղերում ուսումի, գաղափարի խնդիրը քնած է, և պնդում եմ, որ նորա, այսինքն այդ գաղափարի, ծնողը՝ տնտեսական վիճակը չէ. սա նորան նպաստող, նորան իրագործող միջոցն է և մասամբ էլ նորա հետեանքը:

— Տնտեսական խնդիրը ամենամեծ, ամենապահանջ խնդիրն է մեր ժողովրդի համար և ձեր ասածները չանգում են վերջ ի վերջոյ այդ կէտի վերայ: Բոլոր աշխարհների հողսը այդ է, շատ պատերազմների և դիւանագիտական ընդհարումների հիմքը կամ աստաւը—տնտեսական է: Սա անհերքելի է. իսկ ձեր ասածները—միայն զեղեցիկ խօսքեր են, իրագործելու համար անըմբռնելի:

Ես ևս միջամտեցի և վէճը սկսեց շատ աղմկալի դառնալ: Վէճի ժամանակ մի երկու անգամ տանտերի գլուխը երևաց դրան միջից. բայց խօսակցութեանը խանգարող չեղաւ:

— Պարոն Մուշեղեան, ասացի ես, դու քկատարեալ իրաւունք ունէք պնդել ձեր ասածների վերայ, բայց բժշկի ասածների մէջ կան իսկապէս էական կէտեր, որ պէտք է լրջօրէն քննել: Ես նամանաւանդ զնահա-

տում եմ այդ ասածները, որովհետև նա ինքը մեր կեանքը շատ լաւ ճանաչում է, մեր ժողովրդի հետ շատ է շփուել:

— Արեմն, պարոն Պատրիկեան, ես այստեղ երկու հակառակորդ եմ ունեցել. ես կարծում էի, որ դուք իմ տեսակէտը ըմբռնել էք: Միթէ՞ դուք չը գիտէք, որ ինքը ուսումը, մեր դարի լուսաւորութիւնը ինքը՝ ունի իւր սեպհական որոշ ազդեցութիւնը, որի մասին եթէ շատ էլ չը խօսենք, այնուամենայնիւ նա իւր անելիքը կ'անի: Ես լաւ գիտեմ, որ ուսումը կը տայ այն բոլորը, ինչի մասին այնքան ոգևորուած խօսում էր բժիշկը, ես այժմ ասում եմ՝ ժողովրդին ապահովացրէ՛ք, ժողովրդի մէջքը պնդացրէք: Ինչպէս դատողութիւններ ուզում էք յայտնեցէք զանազան խնդիրների մասին, բայց նախ և առաջ ժողովրդին հաց տուէք, հաց: Թող՝ մի հինգ տարի, տասը տարի, նա ուշ զարգանայ, բայց նա կուշտ լինի, իւր ձեռքի աշխատանքով բաւական, խղճմտանքը չը վտանգուած: Սա իմ հայեացքի առաջին կէտն էր. այժմ մի երկու խօսք էլ երկրորդ կէտի վերաբերմամբ: Ես ասացի ժողովրդի համար հարկաւոր են նորան նիւթապէս հարստացնելուն նպատող դպրոցներ: Այո, հէնց այդպէս պէտք է սկսենք գործը, որ նախ և առաջ աչքից թողած չը լինենք երբէք ժողովրդի նիւթական բարեկեցութիւնը և յետոյ՝ հանգիստ կերպով անձնատուր լինենք զանազան դատողութիւններէ:

— Ես ձեզ ասացի, նկատեց բժիշկը, որ հարևան գիւղերը շատ հողեր ունեն, բայց և այնպէս նորա աւելի տղէտ են, աւելի խաւար և մինչև անդամ աւելի աղքատ:

— Բայց զո՞նէ սոցա աղքատութիւնը և խեղճութիւնը — հողի պակասութիւնիցը չէ. եթէ նորա էգուց սիսն աւելի ժրածան լինել, — իսկոյն կը հարբստանան, կը գոնեն գործելու, աշխատելու միջոց:

— Սպասեցէք, պարոն Մուշեղեան, ես ձեզ մի երկու օրինակ բերեմ, որ իմ միտքը աւելի ևս պարզ լինի ձեզ համար: Նորերս ես փող էի ժողովում սովեալների համար. ես տեսնում էի, որ մի քանի մարդիկ աւատաձեռն են, միւսները ժլատ. սկսեցի համեմատել այդ նուիրատուներին և տեսայ, որ այսինչ քաղաքի կամ գաւառի հայերը աւելի աւատաձեռն են, քան մի ուրիշ տեղիներ: Հայ թատրոն չաճախողների, լրագիր ստացողների, աղքատների, օգնողների, զանազան նուէր տուողների դասաւորելուց՝ ես հետաքրքրական եզրակացութիւնների հասայ. ես շատ լաւ նկատեցի և համոզուեցի, որ այդ չատկութիւնները կապուած չեն անմիջապէս հարստութեան հետ. այլ ուրիշ ազդեցութիւնների հետեւանք են և ըստ մեծի մասին զազափարական խմորից մակարուած: Սրինալների թիւը կարող եմ շարունակել:

— Այդքանն էլ բաւական է. հասկանում եմ ձեր միտքը: Աւատաձեռնութիւնը դեռ շատ ուրիշ պատճառներ ունի և զանազան գոյներով է երևում, որով-

հետեւ առատ ձեռքը տալիս է և լաւ բանին և վատ բանին առատ կերպով. իսկ ժլատը— միշտ ժլատ է:

— Այդ է, որ չէ՛ է: Տեսնում էք մէկը պատրաստ է ձեզ հիւրասիրել ճաշով, խնջոյքներով, կառքով ման ածելով. բայց իսկոյն փախչում է ձեզնից, եթէ նորան առաջարկում էք մի տասն քսան կոպէկանոց դիրք գնել:

— Աերջապէս, ձեր միտքը այն է թէ հարուստ լինելը դեռ չէ նշանակում և խելօք, ազգասէր, մարդասէր լինել: Այո՛, ևս էլ ձեզ հետ համաձայն եմ: Ես կարծում եմ, որ այդ դասակարգում նա մանաւանդ շատ յաճախ են պտտահում խկական խոզեր, կոպիտ և անզուժ արարածներ: Աւ՛ւ, միթէ՞ մենք ամենքս դոցա դէմ չենք, միթէ՞ գրականութիւնը, դպրոցը, հասարակութեան զարգացած մասը դոցա սիրում է, դոցա պաշտում է: Միթէ՞ մեր ժողովուրդը, որի զարգացումի խնդիրը քննում ենք, նա կը տանի այդպէսներին:

— Այո, կը տանի, եթէ ժողովրդին մենք ասենք՝ թէ նորա համար ամենազլխաւորը նորա անտեսական ապահովութիւնն է:

— Ա՛յ, սիրելիս, ընդհանուր ժողովրդական բարեկեցութիւնը ուրիշ բան է, մի առանձին մարդու հարստութիւնը ուրիշ: Այնտեղ՝ ժողովրդի հարստութեան խնդրով՝ ազատութեան, ընդհանրութեան գաղափար է շարժւում. այստեղ՝ ստրկութեան, կապալաշտութեան:

— Ե՛հ, բաւական է, յողնած ասաց բժիշկը: Ապրեցէ՛ք մի երկու տարի էլ մեր հասարակութեան մէջ և չետոյ նորից մի օր կը վիճնեք: Տան տէրերը մեզ սպասում են:

Բժիշկը դուրս եկաւ և վերադարձաւ տանտէրի և զիւղական ուսուցչի հետ: Տանտէրը խնդրեց, որ թոյլ տանք սեղանը զցելու: Մենք ի հարկէ դեմ չէինք:

Ուսուցիչը մի լուռ մարդ էր. կամ զօնէ մեզ հետ զրոյցի ժամանակ շատ լուռ էր իրան պահուած: Նա գանդատում էր իւր զիւղական կեանքից, զիւղացիներէր:

— Շատ են զիւղացիները եսական, ասում էր նա, շատ են նեղ և սահմանափակ, շարունակում են նահապետական սովորութիւններով մնալ անշարժութեան մէջ. ոչինչ նոր բան չեն ուզում ընդունել:

— Ի՞նչ էք դուք նոցա առաջարկել նոր, ոչ նահապետական, որ նոքա չեն ընդունել՝ չուզած հարցրեց բժիշկը:

— Ահա հասարակ եմ ասում, պատասխանեց ուսուցիչը:

— Ե՛հ, զիւղացիներ են, խաւար են, միջամտեց տանտէրը. կամաց-կամաց առաջ կը գնան. ջանկարծ չի լինում:

Բժիշկին կանչեցին. նա դուրս եկաւ և մի տան բոպէից չետոյ վերադարձաւ. մեր ծանօթ զիւղացիներին հետ: Նստեցինք սեղանի մօտ ու թ հոգիւ Հացկե-

բովթի ժամանակ բժիշկը, որ փոքր ինչ ձանձրացել էր նախորդ վեճից, նորից գուարթացաւ, աշխուժով սկսեց խօսել, կատակներ անել: Գիւղացիները նորան շատ սիրում են և չարդում. իսկ մեզ վերայ խորթ էին նայում՝ իրբև օտարների վերայ: Բժշկի և գիւղացիների մէջ նկատուող այդ փոխադարձ սէրը ինձ վերայ մեծ ապաստու թիւն արաւ: Երևի այդ տեսակ էր ազդել և Մուշեղեանի վերայ, որովհետև սա ոգևորուած՝ առաջարկեց լժշկի կենացը խմել:

Գիւղացիները բաւական ձեւապահ մարդիկ են. նոքա շատ խիստ նայում են, որ իրանց հասկացած բողաքաւարական կանոններից զուրս չը գան: Տանտէրը, որ աւելի շփուած էր զանազան շրջաններում, իրան աւելի ազատ էր պահում:

Թողինք զիւզը և ճանապարհ ընկանք դէպ երկսթուղին: Ահա ծածկուեց լեռան ետև զիւզը և մենք սկսում ենք իջնել զառիվայրով: Հետո ից երևում է տափարակը: Ահա մի քանի ժամանակից չևոտը և գերմանական զաղթականների զիւզը:

— Տեսէ՛ք, բացականչեց բժիշկը, քանի անգամ առել եմ մեր գիւղացիներին, որ դոցանից օրինակ վերցնեն և տները շինեն կարգին, հողից վերև: Գիտէ՞ք ինչ, պարոն Մուշեղեան, այդ տեսակ չամառու թիւնը անտեսական պատճառից չէ, ազբառութիւնից չէ, այլ սովորութիւնից, ասանդութիւնից:

Արշափե և աղքատ լինի գերմանացին՝ նա իւր տունը  
կը շինի իւր կերպ—հողից վերև, կանոնաւոր և լու-  
սաւոր:

— Պարսն բժիշկ, ժպտաց Մուշեղեանը, բաց  
դա կարծեմ և զաղափարական պատճառներից էլ չէ:  
Ես աներ փոխելու, աներ շինելու զօրքը թողնում  
եմ կեանքին, դողրոցին, վերջապէս վարչութեան, որ  
կարող է նայել, նպատակը չարմար և կանոնաւոր  
աներ կառուցանելու:

Արդէս դի վէճը չը շարունակուի, խօսակիցները  
լսեցին: Արքանի ժամանակից չետոջ ևս խօսք բաց-  
արի ժողովրդական առողջապահութեան մասին:  
Եժիշկը շատ հետաքրքրական փաստեր պատմեց իւր  
գիտողութիւններից, չետոջ նա օրինակներ բերաւ թէ  
ինչպէս դիւզացիները մի քանի գէպքերում խան-  
դարում են իրանց առողջութիւնը՝ մինչդեռ կարող  
կը լինէին հեշտութիւնով զննաների առաջն առնել:  
Եւսց չանկարծ մտաբերելով իւր վէճը՝ նա աւելցրեց.

— Եւ գիտէք՝ այդ մնասների առաջն կարելի է  
առնել առանց անտեսական փոփոխութիւնների:

— Աղքատ ժողովուրդը, խօսքը կտրեց Մուշե-  
ղեանը, աւելի շատ կ'ենթարկուի հիւանդութիւնների,  
աւելի շուտ կը խանդարի իւր առողջութիւնը:

— Իսկ եթէ աղքատ չէ:

— Պարող է ապահովել և մի բժշկի, եթէ սա-  
բաղդի բերնունքով դանկանայ դիւղում մնալ և պա-  
րտել իւր մասնագիտութիւնով:

ձանապարհին անցուդարձ անողների թիւը շատ քիչ էր: Մեր ուշը գրաւեց փառահեղ միբուքով մի թուրք կրօնաւոր, որ գնում էր ձի հեծած երկու կրօնակիցների առաջնորդութիւնով: Կրօնաւորը իրան շատ հպարտ էր պահած և մեր մօտով անցնելիս մի թեթև ողջունեց: Մուշեղեանը իւր ձին քշեց, մօտիկացաւ բժշկին և ժպտալով ասաց.

— Ի՞նչ կասէք, պարօն բժիշկ, այս կրօնաւորի գաղափարներին. սա էլ կարող է մեծ շարժումներ սկսել, եթէ ուզենայ օրն էդուց. բայց ի՞նչ տեսակ շարժումներ:

— Այ ուրախալի շարժումներ: Սակայն դուք իմ հիմնական մտքը չէք հերքում, այլ աւելի ևս ամբացնում էք: Քաղափարը այստեղ մեծ շարժումներ կ'արդիւնաբերի. բայց ինքը գաղափարը անհամակրելի է, ուստի և նորանից սպասելիք հետեւանքները — ոչ ցանկալի: Աս ասում եմ վարուենք գիտակցաբար. տարածենք և ժողովրդականացնենք այն գաղափարները, որոնք մաքուր են և որոնց արդիւնքը անկասկած բարեբար է չառաջադիմութեան համար:

— Դուք միայն զարթեցրէք դպրոցի միջոցով ժողովրդին և նա ինքը շարժումի առաջին խիքաշլիերից կը գտնի գաղափարներ, կը գնի կեանքի հիմունքում սկզբունքներ:

— Քորա մասին, պարօն Մուշեղեան, պէտք է մենք աշխատենք ինքներս, իբրև այդ ժողովրդից աւելի շուտ զարթնածներս:

— Զափազանց զիւթեղը, զրգոեղը—կը տայ ժողովրդի զարգացումին—արհեստականութիւնն և կը ստեղծի ազազայում կեղծ չարարերութիւններ:

Գերմանական զիւղում մենք փոքր ինչ կանգ առինք: Խանութպանին սրտտիրեցինք, որ թէչ սրտորատտի. իսկ ինքներս բժշկի առաջնորդութեամբ գնացինք գերմանացիներէ մտաւ Նասերը սոցանից ճանօթ էին բժշկի հետ և ուրախ էին նորա զայլուստինս:

Մտանք մի գերմանացու տան, ուր բժիշկը պէտք է մի հիւանդ տեսնէր: Տունը շինուած էր կանանաւոր, բայց ոչ գեղեցիկ. սենեակը մութն էր և տխուր տպասորութիւն էր ազդում մարդու վերայ:

Մուշեղեանի հետ ևս մնացի սենեակում, իսկ բժիշկը անցաւ տան միւս մասը հիւանդին տեսնելու:

— Տեսնում էք, այս գերմանացիներին, ասաց ինձ Մուշեղեանը, որչա՛փ հաստատարիմ են մնացել իրանց ժառանգածին. սորա տեղափոխել են այստեղ գերմանական զիւղը նորա բնասորոչ չատկանիչներով:

— Զը դիտե՞ք արդեօք ճիշդ է լսածս՝ թէ սոքա ասանձին բարերար ազդեցութիւն չեն ունեցած մեր տեղական զիւղացիներէ վերայ, հարցրի ես:

— Գուցէ, Ազգերի միմեանց մէջ մեծ շփում չը կայ այս երկրում, ամեն մէկը իւր ժառանգածին, իրան աւանդածին է հետեւում:

Ներս մտաւ գերմանական տան ազամարդերից մէկը, սղջունեց և կանգնեց:

— Կնչպէ՞ս էք անցկացնում ձեր օրերը, զո՞հ է՞ք, հետաքրքիր եղաց ես խմանալու :

— Այժմ, փառք Աստուծոյ, զո՞հ ենք. բայց առաջները, նոր զաղթած ժամանակներս՝ շատ նեղութիւն, չարչարանք էինք կրում հարեաններից :

— Կնչ տեսակ նեղութիւնների մասին էք խօսում :

— Ամեն տեսակ Գողանում էին մեր տաւարը, մեր թռչունները, կերցնում էին մեր արտերը : Մենք չէինք խմանում թէ ինչ անենք : Պանդասուսում էինք : Այ թէ ե մի պաշտպան էին լինում, բայց չետայ տեսնէք, որ մեր գանդասները անվերջ են, իսկ մեր հարեանները իրանց ուղեցածը անում են անպատիւ : Մենք մտնեցինք կարծացնել գանդասները և ուրիշ կերպ վարուել մեր այդ պատուելի հարեանների հետ :

— Այսինքն :

— Վճռեցինք, որ մենք լնբներս մեր հաշիւները, մեր գաստատանը տեսնենք :

— Կնչպէ՞ս :

— Սկսեցինք նոցա ամենախիստ կերպով հարածել — աւելի ծայրահեղ օրէնքով, չքան թէ ւախն ընդ անկանս : Մէկ երկու, երեք... չէ, տեսան, որ մենք կատակ չենք անում, երբէք չենք զիջում, ո՞չ մի թեթեւ չանցանք չենք ներում, չեա կանգնեցին, թողին մեզ հանդիսա և հեռացան :

— Այ այժմ դուք նոցանից չէ՞ք փխտում :

— Այ այլ ևս : Այժմ հանդիսա են և ստիկանութիւնը և գաստարանը :

Բժիշկը գործը վերջացրել էր, մեզ կանչեց դնալու մի գերմանացու տուն, որի պատաները ծնուել են զեռ Կերմանիայում և չիշում են իրանց հայրենիքը:

Պատառ տատին տեսանք իրանց դասն առաջը կանգնած թոռնիկի հետ:

Բժիշկը մօտեցաւ, ողջունեց և խօսացրեց նորան: Պատառը շատ պարզասիրտ կին էր: Պատմեց իրանց աղբատ կեանքը, որ ունեցել են Աովկաս դալուց լեռոյ առաջին տարիները. պատմեց, որ այժմ ուղղուել են և սկսում են հարստութիւն լեռ գցել:

Կերմանական գիւղից շտապեցինք երկաթուղու կայարանը: Այդտեղ հասանք գնացքը անցնելուց շատ վաղ: Մանր մունր խօսակցութիւններով ժամանակ անցկացրինք մինչև գնացքի դալը: Բժիշկը քիչ մնաց, որ զարձեալ սկսի մեծ խօսակցութիւն հալի, թուրքի, գերմանացու, ուս աղանդաւորների առանձնապատկութիւնների և նոցա կենցաղակերտի մասին. բայց չը շարունակեց: Բանն այն է, որ ո՛չ բժիշկն է բացատում Մուշեղեանի սկսածը և ո՛չ սա բժշկինը. այլ մի չայտնի բողեի ներսումամբ վիճում են, աւելի շեշտելով ժողովրդի զարգացումի այս կամ այն կողմը:

Երեք օրուայ մէջ ի՛նչքան բան տեսայ, ի՛նչքան տպաւորութիւններ ստացայ: Նամակս գրելուց քանի անգամ կանգ եմ առել և խորատուգուել զանազան խնդիրների մէջ. իսկ բնութիւնը, թարմացնող օ՛ղբ...

## VII

### Խ Ա Ձ Ի Ր Ե Ա Ն Ը

Երկաթուղու կաշարանում մնացինք մի քանի րոպէ թէյ խմելու և չետոյ քաղաք ճանապարհ ընկնելու: Այդ ժամանակ բժիշկ Վարսեղեանը իմ ուշքը դարձրեց մի բարձրահասակ պարոնի վերայ, որ մօտենում էր զանազան խումբ մարդիկներին և ինչ որ քչփչում էր նոցա ախանջին:

— Բնութիւնը սխալուել է այս պարոնին բարձրահասակ ստեղծելով, ասաց ինձ բժիշկը:

— Ինչո՞ւ էք այդպէս ասում:

— Սորան սաղ չի զալիս բարձր հասակը, սորան սաղ կը գար միջին կամ մինչև անգամ կարճ հասակը:

— Ձեմ հասկանում:

— Սորա մասնագիտութիւնն է այդ պահանջում. երկայն հասակը այստեղ անչարմար է:

— Իսկ ինչ է դորա մասնագիտութիւնը, զարմացած հարցրի ես:

— Դորա մասնագիտութիւնը — դժուար է բացատրել. — հէնց այն է, ինչ որ այժմ անում է պարոնը, այսինքն՝ բոլորին մօտենալ, բոլորի ախանջնե-

րին բռնալ, մի քանի խորհուրդներ տալ նոցա, մի քանի խօսք նոցանից զուրս քաշել միւսին հաղորդելու համար: Նա երևի մեզ էլ կը մօտենայ:

— Նս դորան տեսել եմ մի քանի անգամ, աւելացրի ես:

— Ի հարկէ, տեսած կը լինէք. նա ամեն տեղ լինում է:

— Գորա ազգանունը ինչ է, հետաքրքրուեցի ես:

— Խազիրեան:

— Ահ, սա է Խազիրեանը, որի անունը երբեմն ապէս լսում եմ:

— Այո, սա ինքն է:

— Ինչո՞վ է զբաղուած Խազիրեանը, ցանկացայ ես իմանայ:

— Տեսնում էք ինքներդ, թիթեռի դեր կատարելով, ծաղկից ծաղիկ թռչկոտելով:

— Չէ, ես այդ զբաղմունքի մասին չեմ խօսում. այլ իւր պաշտօնի, իւր ապրուստամիջոցի մասին:

— Դա անցայտ է. նա երբեմն պաշտօն է ստանձնում, երբեմն անպաշտօն մնում. բայց միշտ անհող է և ուրախ և փողի պակասութիւն էլ չի զգում առանձին կերպով:

Խազիրեանը շուտ պաղտոյներէր չէ: Նա իսկակապէս զարմանալի արագութեամբ անցնում էր մէկից միւսին, բոլորի հետ խօսակցում էր և միևնույն ժամանակ աչքը պտտեցնում, որպէս զի ոչ մի ծանօթի բաց չը թողնի: Մի քանի պտոցաներից զետոյ՛ դար-

ձու դէպի սեղանը և նկատեց բժշկին: Գլխարկը փոքր ինչ յեա մղեց ձակատից և միրուքը շփելով՝ մօտեցաւ մեզ:

— Պարօն բժիշկ, բարև ձեզ, ողջունեց նա:

— Բարև, բարև:

— Այդ ինչ է, զուք ճանապարհորդական շորերով էք: Այդ որտեղ էիք գնացել. չը լինի՞ նաւթի շահրուանները տեսնելու:

— Ա՛յ, գնացել էի պղնձահանք:

— Մենանկ:

Այդ հարցը տալուց՝ Խազիրեանը նայեց դէպի մեր կողմը. կարծես ուզում էր ասել բժշկին թէ՛ սոքա ովքեր են, ծանօթացրու: Բժիշկը հասկացաւ այդ և նորան բուարարութիւն տուաւ:

— Ա՛յ, ընկերների հետ, ահա խնդրեմ ծանօթանաք, պարօն Խազիրեան, պարօն Մուշեղեան, պարօն Պատրիկեան:

— Մենք՝ կարծեմ՝ ծանօթ ենք պարօն Մուշեղեանի հետ, ունքերը հարցական ձևով շարժելով հարցրեց Խազիրեանը:

— Փոքր ինչ, սառն պատասխանեց Մուշեղեանը և խորասուզուեց իւր բաժակը դիտելու գրաղմունքի մէջ:

— Դուք նոր էք մեր քաղաքում, կարծեմ, պարօն Պատրիկեան, բարի լինի ձեր գալուստը: Երիտասարդներ շատանում են, շատ ուրախալի է: Դուք այստեղ ազգականներ չունէք:

— Այ, ես ոչ մի ազգականութիւն չունեմ այս  
տեղերքում, պատասխանեցի ես.

— Պարոն բժիշկ, ամօթ չը լինի հարցնելը, ինչ  
գործ ունէիք պղնձահանքի կողմերում:

— Ես փոքր գործ ունէի, պարոններն էլ գնացել  
էին ման գալու, պղնձահանքը տեսներու:

Խաղիբեանը օթոսը մօտեցրեց բժշկին և նստեց:  
Ետ նայեցի նորա երեսին: Խաղիբեանը գեղեցիկ դէմք  
ունի, կարծ սե միրուք. սակայն աչքերը շատ են  
խոր ընկած և ունքերը այնքան սաստիկ և սոււր  
շարժում են, որ երեսի արտաչաչում թիւնը փոփոխ-  
ում է շուտ շուտ, Ձեռքերը պահում է միշտ բե-  
րանի և միրուքի մօտերքը և նոցա միջոցով լրաց-  
նում է այն շարժումները, որ նորան պակաս են  
թուացել ունքերը և աչքերը շարժելուց: Բժշկին  
մօտենալով՝ նա իբրև կէս գաղտնիք շաշտեց:

— Ելսօր Յօսիփեանը եկաւ իւր ներահարսի հետ Բա-  
ղուից: Նորան հանդիպելու եկել էին բարեկամները և գի-  
տէր այստեղ էր նորա առաջուայ սիրածը, որ հեռուից  
դիտում էր... Հա, լսել էք Ք.սոսումեանի կառւի մասին:

— Ի՞նչ կառւի:

— Երեկ փոզոցում սպտակ տուաւ Ամիրեանին,  
որովհետև լրագրին սա տուել էր տպելու մի լուր, որի  
մէջ թէև Քառումեանի անունը չէ չիշուում, սակայն  
նորա մասին կաչ մի ակնարկ՝ խաչտառակելու մտքով.  
Ներողութիւն, պարոն Պատրիկեան, դուք ինչու չէք  
մտնում մեր հասարակութեան շրջանը:

— Ես նորեկ եմ և շատ չեմ մտալու:

— Յա՛մենայն դէպս, դուք այստեղ կը գտնէք մի բանի հետաքրքրական մարդիկ. խնդրեմ ներէք, ձեր մասնագիտութիւնը:

— Արհեստագիտութիւն:

— Այս մասնագիտութիւն էք ընտրել, բայց ձեզ կը ձանձրացնի, ձեր բոլոր ժամանակը կը խլի: Պաշտօն ունէք արդէն ստացած:

— Համարեա, խոստացել են, սպասում եմ վերջնական պատասխանի:

— Զգուշ եղէ՛ք այստեղացիներից: Նորա չեն գնահատիլ ձեր աշխատանքը, ձեզ կը զրպարտեն. դուք նայեցէ՛ք ձեզ վերայ, իբրև մի գերու վերայ թշնամու բանակում: Ահա կարող է ասածներս վկայել պարոն բժիշկը, նա շատ է այստեղ կացել. նորան հարցրէ՛ք: Բայց մեր պարոն բժիշկը մի շատ ներողամիտ բնութիւն ունի. նա ով գիտէ իսկի չէ էլ նկատել այդ բանը:

— Ահումը յաճախում էք կանոնաւոր կերպով, հարցրեց բժիշկը՝ փոխանակ պատասխանի:

— Յրամէջ. աւելի չարժէ: Ահ, խնդրեմ ներէք պարոններ, ցանկալի կարեց Խաղիբեանը իւր խօսակցութիւնը և վազեց մի պարոնի հանդիպելու:

Խաղիբեանը անմեաս մարդու տպաւորութիւն գործեց: Նորա հայեացքը մեղմ էր և բարի. իսկ նորա խօսակցութիւնը շար գիտաւորութիւնների

հետոն անգամ չէր կրում: Ես մտաբերեցի բժշկի առաջուպ նկատողութիւնը նորա բարձր հասակի մասին և հարցրի բժշկից:

— Խնդրեմ ասացէք, ինչո՞ւ էք համարում զորս հասակը անչարմար:

— Որովհետեւ շատ է աչքի ընկնում:

— Այո, բայց նա այնպէս մարդ չէ երևում, որ ցանկանում լինէր ինքն իրան թագցնել, որ նորա աչքի ընկնելը փաստում լինէր նորա որ և է դիտաւորութիւններին:

— Ի հարկէ ոչ. բայց նա այնքան հարկաւոր, հետաքրքրական, պէտքական անձնաւորութիւն չէ, որ նա արժանի լինէր այդքան տեսանելի լինելու: Իսկ եթէ կարճահասակ լինէր, ինքն իրան կը կորչէր ամբոխի մէջ և աչք չէր ծակիլ:

Ի՞նչը վերջացրել էինք: Քաղաքում զանազան զործերի պէտք է գնայինք, ուստի բաժանուեցինք, պաշտանաւորուելով ինչպէս տեսնուել միմյանց հետ: Գուրս եկանք կաշարանից. բայց հրասպարակում միայն մի կառք կար, որով Մուշեղեանը գնաց քաղաք, որովհետեւ նա աւելի էր շտապում:

Բժիշկը և ես նստեցինք ձիաքարշի կառքը: Խաղիբեանը արդէն այնտեղ նստած էր: Նա շատ ուրախացաւ մեզ տեսնելով, կարծես մի տարի տեսած չը լինէր:

— Գիտէք, բժիշկ, ո՞ւմ տեսայ այս բույէին:

— Ո՞ւմ:

— Սափարեանին:

— Ո՞ր Սափարեանին:

— Պետրոս Սափարեանին, այն որ զօրբա նախագիծներ էր առաջարկում մեր ուսումնարանների համար: Այժմ ամենեին չէ էլ հետաքրքրուած ոչ մի ուսումնարանով: Ասում է ապրել է հարկաւոր, կեանք տեսնել է հարկաւոր:

— Սափարեանը սրտեղ էր:

— Երեանի կողմբում: Խեղճը չարչարուել է: Ահա փոքր ինչ առաջ այս էի ասում ձեզ, պարոն Պատրիկեան: Գժուար է այս երկրում գործելը. ձեր հոգին կը հաննն և վերջ ի վերջոյ էլի ձեզ կը մեղադրեն:

Խաղիբեանը լսեց և նկատեցի կնրպով ախրեց: Բայց փոքր ինչ լուսթիւնից ցետոյ՝ զլլտարկը վեր առաւ, մտգերը շփեց և դառնալով ինձ՝ ասաց:

— Գուք ինչով էք մտադիր զբաղուել:

— Իմ արհեստովը:

— Գործարանում կատաւարի՞չ:

— Այո:

Խաղիբեանը այնպէս շեշտակի հարցեր էր առաջարկում, որ գժուար էր նորան չը պատասխանել: Եւ նա այնպէս էր տանում բոլոր իւր խօսակցութիւնը, որ կարճես բնական էր դառնում նորա հարցեր տալը: Բայց ես մտքուամն զրի միւսնոյն հարցը նորան առաջարկել:

— Պարոն Խաղիբեան, գուք այստեղ էք լինում միշտ, այս քաղաքում:

—Այո միշտ, բազմապիսիքս թէ դժբաղդարար  
միշտ այստեղ:

—Գուք ինչո՞վ էք պարտապում:

—Ինչո՞վ:

—Այո:

—Սափարեանի խնդիրը վճռելով, ասաց նա  
բանի ծիծաղելով:

—Միթէ դուք ևս նախազիծներ էք կազմել:

—Աս շարունակում եմ կազմել և որ որի վերայ  
ասելի եմ ողորդում: Աս կարծում եմ, որ Սափարեանների  
դէպքը խկասպէս կարող է դրդել անվերջ  
նախազիծներ կազմել:

—Այ մի որ և է եզրակացութեան եկել էք:

—Այո, և կարող եմ երկու խօսքով ասել. — ոչինչ  
այնումը չը դցել, միշտ երեակալել իրան քսան աս-  
րեկան երխտասարդ և շրջել երխտասարդների շը-  
ջանում:

Բմիշկը ջանկարծ լարեց իւր ուշադրութիւնը,  
կարծես նա սթափուեց մի նոր գիւտից. ձեռքը  
դրա Խաղիրեանի ուսին և կամացուկ ասաց:

—Խաղիրեան, դու այժմ որոնում ես մի բան,  
թէ արդէն հրատափուել ես:

—Իմ վերաբերմամբ, պատասխանեց վճռական  
կերպով Խաղիրեանը, հրատափուել եմ. բայց ա-  
հասարակ ասած՝ ոչ:

—Ինչպէ՞ս:

—Աս ինձ վերաբերմամբ հեռուում եմ ասածին՝

անձրեի ժամանակ թող կս էլ թրջուեմ, ցաւ չէ...  
բայց մի բան կայ, որ հաստատմ կմ բա-  
կեանքիս Աս անկուշտ կմ, կս անշատակ կմ Աթէ  
խմել ստորած լինէի, կբ խմէի, եթէ թուղթ խա-  
ղալու սիրահար լինէի՝ կբ խաղալի անղաղարս Դսկն  
ասած կս կ, խմելու կ, թուղթ խաղալու անձանօթ  
չեմ, բայց կս ամեն կերպ աշխատում կմ ինձ հեռու  
պահել...

— Աւ շատ բաւ էք անում, բարեկամ

— Մ՛հ, բժիշկ, ինչպէս ասացի, կս անկուշտ կմ  
կս աստատից մինչև երեկոյ գրաղուած կմ, կարդում  
կմ մեր բոլոր հրատարակութիւնները, գրքեր կմ ա-  
նում գրադարանից, հազար տեսակ լուրեր, տեղեկու-  
թիւններ կմ իմանում. բայց երբէք չեմ կշտանում

— Միթէ այդ բոլորը դուք կամաւ էք անում,  
հարցրեց բժիշկը

— Ա՛յ, դա ինքն իրան է կատարում. Քայց  
միևնոջն է, մտածեմ չը մտածեմ, ասաջուց նա-  
խադ կմ այդ բոլորը, թէ հեռու կմ իմ հակա մներին —  
կս մէջ տեղ մնում կմ խաղալիք

— Խնդրեմ ասացէք, երբ կ իցէ մտածել էք  
ուրիշի կարծիքների, հասարակական կարծիքի մասին,  
հետաքրքրուեց բժիշկը

— Խնչպէս, զարմացած հարցրեց Խաղիբեանը

— Մտածել էք այն բանի մասին թէ ինչ կար-  
ծիք կարող է ունենալ ձեզ վերայ հասարակութիւնը

— Շատ չեմ մտածել. երբեմն միայն այդ բանը

միտքս է գալիս Թավենացն զԷպո՝ ես իմ՝ վարուեցա-  
զս թեան վերաբերմամբ, իմ որ անցկացնելու վերա-  
բերմամբ երբէք չեմ մտածում որ իշխի կարծիքի մա-  
սինս Վաչց ես չեմ հասկանում, պարսն բժիշկն ինչն  
էք գաք ինձ այդ հարցը սալիս, այդպէս հարցից թ  
որ իշխը կարող էր և վիրաւ որու եր

—Այ մի վաստ զիտաւ որու թիւն չունէի, որս  
սասխանեց բժիշկը, բայց ոգում էի ինձ համար  
պարզել այդ սասրկացի վերաբերմամբ ձեր հաշեացքը  
և բանած զիրգը:

Մագիբեանը զգակը վեր առաւ, գարձեալ մագերբ  
չփեց և չեառ զգակը նորից ճամկելով, բասկանին  
լուրջ պատասխանեց:

—Մեզանում հասարակեան կարծիք չկայ, այ  
նորս փոխարէնը կամ բամբասանիք է, կամ քննա-  
նութիւն: Մոց ինչքան ոգում են խառն իմ մասին,  
ես գիտեմ, որ էգուց աշտորուայ սասածի վերայ չեն  
կանգնելու, աշտորուայ լուր էգուց վաստ են գտակու  
և բնդհակասակը, էլ ինչ հոգարու բան ունեմ: Նիցս  
սակն որ ներկայ եմ այդ բամբասանիքներին և ինք  
էլ մասնակցում եմ... Նաք կարծում էք թէ մէկի մա-  
սին, որ վաստ բաներ պատակցին, կամ խառնցին, նա-  
րս հեռ տղ որ և իցի շարաբերութիւնները կարում  
է. սակնեին, երբէք: Նսկ մի քանիսը մինչեւ անգամ  
բնդհակասակը, գնում են այդ խառնակցութիւնից չե-  
առ ճանաթմանում, կամ եղած ճանաթմութիւնը նա-  
րպում: Ննչ վերաբերում է ինձ, ես չը գիտեմ թէ

իմ գէժ ով ինչ պէտք է ունենայ: Աս' ճշմարիտ է՝  
բարձրաձայն ամեն բան խոսում եմ, բայց միմէ աւել-  
ի լաւ չէ սրբոյ լինել, քան խորամանկ:

Այդ բազմին Վաղիրեանը տեսաւ իւր մի ծանո-  
թին, որին ձեռքով արտաւ, նա էլ ինչ որ շարժում  
ներով պատասխանեցաւ Վաղիրեանը մի կիսատ մեռա-  
բարեաւ: ասաց մեզ և շտապով վաչք իջաւ:

Ոճիչկը կարճեա չէր ցանկանում Վաղիրեանի  
այգպէս չանկործ անհետանալը, ու սափ փոքր ինչ ափ-  
սասարով ասաց:

— Տա, այդ մարդուց չէի սպասում այն տեսակ  
գատազու թխններ, խոսում է այնպէս, որ կարճեա  
հասարակական լուրջ հոգսերով է զբաղուած:

— Եստ և շփում մ բիշների հետ, ու սափ ժա-  
մանակի ինչոյնները նորա միջոցով էլ արտաստալում են:

— Վայց ստեստ, որ չը վերջացրեց, ես ուզում  
էի տեսնել, թէ նորա գատազու թեան թեկը կարող  
էր շարունակուել, թէ հենց շտապ կարուելու էր,  
որովհետեւ դա իւր կեանքումը բացի խոսք տանել  
բերելուց, բացի տեղեկա թխններ մատակարարելուց,  
ուրիշ ոչ մի գործ չի արել ինքր:

— Նա, չամենայն պէտք, ինչպէս երեւում է,  
անագնիւ գրգռմեքի տեղ չէ, բարի սիրտ ունի:

— Մնչ անեա, թեթեւ է, թեթեւ: Այժ չի կազ-  
մել և չէ էլ կազմելու երբեք: Այս բազմին տեսաւ  
իւր ծանոթին, իջաւ և հիմի զբաղուած է երեխ  
նորան պատմելով, ինչ որ կոչարանում տեսել է կամ

մեզնից խմացել է: Վերջ ի վերջոյ խեղճ մարդ է:

Փոքր ինչ խօսակցութիւնից շատոյ, բժշկից էլ բաժանուեցի. բայց խոստացանք մեր պատահական կերպով կողմած ծանօթութիւնը շարունակել:

Հետեւեալ երեկոյեան ժամադիր էի եղած ծանօթներիս հետ պատահելու մի հիւրանոցում: Եւ զործերս շուտ վերջացրի և փոքր ինչ վաղ եկա՞մ զարեջրատուն: Նստեցի սպասելու միւսներին: Մէկ էլ տեսնեմ Խազիրեանը ժպտալով սկսեց սենեակի հակառակ ծայրից դէպի ինձ քայլել:

— Յո՛ւ, բարեաւ, պարոն Պատրիկեան:

— Բարեաւ:

— Շատ ուրախ եմ ձեզ կրկին տեսնելով: Ափսոս դուք երկայն ժամանակով չէք մեզ մօտ, այլ հիւրի հաշումն էք:

— Բայց միթէ այստեղ աւելի լաւ կը լինէր ինձ համար, հարցրի ես:

— Ո՞վ է ասում: Եւ ոչ մի տեղ էլ չեմ գտում: Այդքանը լաւ զիտեմ, որ մեր այս երկրում ոչ մի տեղ լաւ չէ. ուրիշ երկիրներում չը զիտեմ:

— Խնդրեմ բազմեցէ՛ք, հրաւիրեցի ես Խազիրեանին նստելու:

Նա արդէն ինքը պատրաստում էր նստելու. ուստի շտապեց օգտուել իմ հրաւերից: Նորա անձնաւորութիւնը, իբրև մեր կեանքի արտայայտութիւններից մէկը, սկսել էր ինձ զբաղեցնել, եւ ուրախ էի այդ հանդիպումին:

— Խնդրեմ ասացէք, պարօն Խաղիրեան, դուք ինքներդ ինչպէս զործունէութիւն կընտրէիք այժմ ձեզ համար, եթէ ընտրութեան մէջ բոլորովին ազատ լինէիք:

— Ես ինձ առանձին կապուած և կաշկանդուած չեմ համարում ամենեւին: Իսկ զործունէութեան ձևի մասին ոչինչ չեմ կարող ասել. որովհետև այս բոլորին էլ ես իմ կարծիքով անզոր չեմ, մի դեր կատարում եմ:

— Ինչու՞մն է կաշանում ձեր զործունէութիւնը, հետաքրքրուեցի ես:

— Այդ տեսակ կտրուկ հարցին դժուար է պատասխանելը: Ապրում եմ հասարակութեան մէջ և մասնակցում եմ նորա բոլոր կեանքին: Արտեղ մի ժողով կայ. ես այնտեղ եմ, որտեղ մի ընտրութիւն, մի ստորագրութիւն, մի ուղերձ, մի բողոք, մի հասարակական տօնախմբութիւն կան, ես միշտ ներկայ եմ. և ինչ որ ինձ բաժին է ընկնում, կատարում եմ ուրախութեամբ:

— Իսկ պաշտօնների վերաբերմամբ ընտրութիւն չէք անում:

— Այսինքն, ապրուստամիջոց պաշտօնների մասին էք ասում:

Այո:

— Այնքան է, որ նա իմ սիրած զործերը չը խանգարի. ուրիշ պահանջ չունեմ:

— Բայց գուցէ, շարունակում էի հարց ու փորձս

կարողանալիք այնպէս պաշտօն ստանալ, որ նոյն իսկ  
այդ պաշտօնի մէջ գտնելիք գաղափար:

— Ձէ, այդ ինձ համար չի ասուած: Իմ ճաշակի  
գործ չէ կարող գտնուել:

— Իսկ եթէ այդ ընկերութիւններից մէկն ու  
մէկը ձեզ առաջարկէր մի պաշտօն, որ վարձատրոււմ  
լինէր...

— Ա՛րնդունէի. բայց բոլոր ժամանակս նորան  
նուիրել չէի կարող: Ես լայն մարդ եմ: Ես չեմ կա-  
րող ինձ սահմանափակել նեղ շրջանում: Ինձ հարկա-  
ւոր է, որ ես շատ մարդկանցիկ եւ հաստատութիւն-  
ների հետ շփուեմ, որպէս զի հանգիստ քնեմ գիշերը:

Խաղիբեանը խօսում էր՝ մեծ լրջութիւն տալով  
իւր ասածներին: Ես չիշեցի բժշկի աննպաստ կար-  
ծիքը սորա թեթեւութեան մասին եւ քննողաբար  
նայելով Խաղիբեանին ասացի.

— Այո, բայց շատ լայն գործի ետեւից ընկնողը,  
չաճախ ոչ մի բան՝ առանձին վեր առած՝ չի կարո-  
ղանում լաւ կատարել:

— Ա՛խ, այդ խօսքը շատ անգամ եմ լսել. ես  
ձեզ ասացի, որ ես համոզուած եմ, որ դեր եմ կա-  
տարում իմ տեսակ. բայց եթէ դեր անգամ կատա-  
րում չը լինէի, ես ինձ չեմ կարող փոխել:

— Ինչպէս դեր:

— Ես ինձ վերայ փորձում եմ հաստարակութեան  
անդամ լինելու բոլոր հաճոյքը եւ զգուանքը: Ես  
պարզախօս եմ եւ շատ անգամ կատարում եմ այն-

պիսի մի գործ, որ ուրիշը, ինձնից աւելի պատրաստուածը, չէ անում: Նորերս մի ընկերութեան ընդհանուր ժողովում շատերը անբաւական էին գործողների մի քանի կարգադրութիւններից. բայց լուծ էին: Ես համարձակ կերպով յուզեցի խնդիրը և բոլորի բերանը բաց արի: Դա էլ մի փոքր գործ է. թէ ոչ:

— Այն գործ է:

— Ի հարկէ. ես վատամարդ եմ դառնում. և շատերը ինձ վերայ են գցում անհաճոյ դէպքի մեղը. բայց ես չեմ ցաւում: Ինձ հետ ոչ ոք քինապահ չէ. այդ է միտիթարութիւնս... դուցէ այն պատճառով, որ կախուած չեմ պաշտօնով ոչ ոքից. եթէ չէ՝ հազար տեսակ ինտրիգներ կը լարէին դէմս: Այդ ես տեսնում եմ ամեն օր ուրիշների վերաբերմամբ: Չէ, պարոն Պատրիկեան, լաւ հասարակութիւն չէ մեր ժամանակակից հասարակութիւնը: Դուք զգոյշ կացէք և զէնքը երբէք ձեր ձեռքից մի՛ք թողնիլ:

Բժիշկը չանկարծ երեւաց և մեր խօսակցութիւնը դադարեց:

— Օհօ, պարոն Խազիրեան, դուք ևս այստեղ էք. մեզ վիճակուած է երեքիս միասին միմեանց հանդիպելու, ասաց բժիշկը, ջերմ սեղմելով նորա ձեռքը:

— Դժբազդարար ո՛չ, պարոն բժիշկ, ես ժամադիր եմ մի կէս ժամից յետոյ ծանօթիս հանդիպելու մի այգում:

— Գիտէք ինչ, պ. Խազիրեան, շարունակեց

բժիշկը, դուք այն օրը ինձ հետաքրքրեցիք ձխաբարչի վերայ ձեր խօսակցութիւնով:

— Այ մի նորութիւն չէի հաղորդում ձեզ, ամեն օրուայ խօսքեր էին, զարմացած խօսեց Սաղիրեանը:

— Այո, բայց ես ձեզնից չէի լսել՝ այն անսակ ձևակերպուած:

Սաղիրեանը փոքր ինչ կիտեց ունքերը և դառնալով ինձ ասաց.

— Պարոն Պատրիկեան, բժիշկը լաւ մարդ է, և ես նորանից չեմ նեղանում. բայց առհասարակ զարմանալի մարդիկ շատ կան աշխարհումս: Սա առաջին մարդը չէ, որ զարմանում է իմ այս կամ այն խօսակցութեան վերայ: Երբ թէ ես չանկարծ ապացոյց եմ առել, որ անյոյս ապուշներիցը չեմ, կամ ցնդաներից: Ահա մեր հասարակութեան լաւ մասը...

— Ներեցէք, պարոն Սաղիրեան, խօսքը կարեց բժիշկը, ես չէի ցանկանում ձեզ վիրաւորել, ևս խկապէս հետաքրքրուեցի այն օրուայ ձեր խօսակցութիւնով. նա ինձ համար պարզեց մի քանի բան...

— Շատ լաւ, ձեր տաածը լինի, ևս ձեզ հետ կռուել չեմ ուզում, պարոն բժիշկ. բայց ես պարզախօս եմ և զգացածս ու նկատածս չէի կարող լռել: Պատարկենք բաժակները միմիանց կենաց. ցանկանք պարոն Պատրիկեանին քաջութիւն և համբերութիւն:

Բժիշկը ջերմ կերպով խօսեց իւր բաժակը Սաղիրեանի և իմ բաժակներին և միանգամից դատարկեց դարեջուրը: Յետոյ սկսեց պատմել մի քանի նա-

բութիւններս Խազիրեանը շուտով վեր կացաւ զնախուս :

— Գիտէք, պարոն Պատրիկեան, զիմեց ինձ Խազիրեանը, այս քաղաքում սովորութիւն չկայ, որ բժիշկները զան ձեզ հետ նստեն մի այսպիսի տեղում ու ձեզ հետ ասեն, լսեն և խմեն : Նորա տանը տխուր տրտում կը մնան և բարեկամների հետ չեն նստիլ . որովհետեւ վախենում են, որ բամբասեն թէ անգործ են մնացել, նոցա հրաւիրող չկայ : Իսկ մեր բժիշկը բացառութիւններիցն է . սորան կարող էք հաւատալ . բայց միայն շատախօս է . սա բոլորի կարծիքն է :

Խազիրեանը զնաց : Մենք բժշկի հետ մի ժամ էլ նստեցինք և հետաքրքիր խօսակցութիւն ունեցանք այստեղի հասարակական կեանքի մասին :

Աս պատմեցի նորան Խազիրեանի հետ ունեցած իմ խօսակցութիւնը :

— Այո, ճիշդ է, Խազիրեանը դեր կատարում է, բայց նա չաճախ գործին զնասում է . որովհետեւ նորա ձեռքով չարուցած խնդիրները չաջողութիւն չեն ունենում հասարակութեան մէջ : Շատ անգամ բաւական է լինում, որ մի խնդիր զնողը լինի Խազիրեանի նմանը, որ նորա գործադրութիւնը չետաձգուի :

— Յառնայն դէպս, նկատեցի ես, դուք, ձեր նմաններն էք մեղաւոր, որ չէք գործում և չէք փոխարինում այն դերը որ իւր վերայ է առել Խազիրեանը : Եթէ գործում լինէք դուք, այն ժամանակ Խազիրեանը ընդհանուրի հետ գործելիս, միայն լա-

գեր կը կատարէր: Նա: չը նայելով իւր համարձակ լինելուն, զնահատում է աւելի պատրաստուածներին:

—Յո՛ւ, ո՛հ, կան մի երկուսը, որոնք շատ ստոր են Սագիրեանից, չունեն նորա անշահասիրութիւնը և ազնւութիւնը, իսկ տեսէք, որչափ սաստիկ ջանդուդն են և անհավատ:

Տուն դառնալով և աչժժ մերանորոգելով նամակումս Սագիրեանի պատկերը, ևս կազմեցի նորա մասին, իբրև մի անձնաւորութեան, ընդհանրապէս նպաստաւոր կարծիք:

Նս գաւում և՛մ, որ նորա նման ազնիւ անշահասէր և անձնուէր հոգի ունեցողները ապարդիւն են կորչում շնորհիւ իրանց քիչ պատրաստականութեան և հասարակութեան անողոր ձեւապահանջ լինելուն:

Քո Ս. Պ.

## VIII

### ԱՊԱԳԱՅ ԱՂԱՆ

Սէրեւէ քոյր.

Ակնատեանի մասին ես հարցնումի Նու լսելով խնացել ես, որ նա էլ մասնակից է այստեղի գործերում և զարմանում ես, որ ոչ մի ակնարկ չեմ արել նորա մասին, իմ նամակներում:

Ակնատեանի մասին չիրաւի չաճախ լսել եմ. բայց որովհետև կարգին ծանօթութիւն չեմ ունեցած հետը, ուստի մինչև այժմ լսել եմ նորա մասին և քեզ ոչինչ չեմ գրել:

Ակնատեանը այս ատայ, Ակնատեանը այն ատայ, Ակնատեանը սորան համակրում է, Ակնատեանը նորան հակակրում է... Ակնատեանը հերքեց այս կամ այն կարծիքը, Ակնատեանը քոջ մարդ է, Ակնատեանը լաւ գլխի տէր է...—Այս տեսակ բառեր շատ անգամ լսել եմ:

—Ո՛վ է Ակնատեանը, հարցրի մի անգամ այդպէս խօսողներին մէկին:

—Մի՛ թէ Ակնատեանին չէք ճանաչում, պատասխանեց խօսակիցս, խորհուրդ եմ տալիս հետը ծանօթանաք. լուրջ մարդ է և բանխնաց:

Բանն աչն է, որ Ակնատեանին վերագրած խօսքերը միշտ նոյնասեռակ չէին լինում, որ ես կարողանայի գաղափար կազմել նորա անձնաորութեան և նորա հաճոգմունքների մասին: Եւ զարմանալի էր ինձ թւում, որ իմ բարեկամ ընկերները երբէք նորա մասին չէին խօսում և անունը չէին չիշում: Աերջապէս մի օր հարցրի լաւ ծանօթներիս շրջանում, թէ ո՞վ է Ակնատեանը:

— Ակնատեանը. ի՞նչ է պատահել, գործ ունէք հետը, կամ ծանօթացել էք:

— Ո՛չ. այլ միայն շատ անգամ լսում եմ նորա մասին:

— Ակնատեանը — ինչպէս առեմ — մեր հասարակական թիւրիմացութիւններից մէկն է: Ակնատեանը սահմանափակ մարդ է. բաց հասարակութեան մի քանի շրջաններում հեղինակութիւն է ձեռք բերել:

— Ինչո՞վ:

— Ճարպիկութիւնով կամ ուղիղն սասած՝ գուցէ իւր բնաորութեան մի ուրիշ տեսակ կազմով: Համբերութիւն ունեցիր լսելու: Զորօրինակ, նորերս մի տեղ, մի փոքր ընտանեկան խնջոյքում, որտեղ ես ևս հրատիրուած էի, մէկը խօսք բացեց բարեկամութեան և թշնամութեան մասին, և պատմեց մի քանի հետաքրքրական դէպքեր իւր կեանքից... Շատերը խօսուեցին խօսակցութեան մէջ: Ակնատեանը լուռ էր: Աերջում նա էլ միջամտեց և երկաթեաց ամուր ձայնով բացականչեց.

— Բարեկամութիւնը մե՛ծ բան է, բարեկամութիւնը պէտք է հաստատ պահել:

— Այա է, բայց որ քանդում են, նկատեց մէկը:

— Պէտք է հաստատ պահել, պէտք է նորա փշից բռնել և բաց չը թողնել:

— Բայց որ չի լինում. աշխարհք է, բոլորն էլ մէկ չեն:

— Պէտք է հաստատ պահել, ասաց երրորդ անգամ Անատեանը և լսեցրեց բոլորին:

Մի ուրիշ ծանօթս պատմեց, որ մի անգամ Անատեանին նա հանդիպել է ձիաքարչի կառքում, ուր երկու մարդ ինչ որ կոպէկի հաշուի վերայ տաք-տաք վիճաբանում են եղել և բոլորին ձանձրացնում իրանց անհամ խօսակցութիւնով. և ոչ ոք սիրտ չէ անում եղել նոցա դադարեցնելու: Միայն Անատեանը ծուռ-ծուռ նայում է եղել վիճողների կողմը և վերջապէս զազանային բարկութիւնով ազազակում է:

— Բաւական է, որչափ ձանձրացրիք. իջէք կառքից և որտեղ կամենում էք՝ այնտեղ կուռեցէք:

Առ ուղղները նայում են Անատեանի շարացած աչքերին ու դէմքին և լուում են:

Երրորդ ծանօթս պատմեց, որ նա դէպք է ունեցել նորան տեսնելու մի թատրոնական մասնաժողովում, ուր հաւաքուել են եղել մի քանի երիտասարդներ պիես ընտրելու: Շատ խօսակցութիւններից չկտոյ՝

կանց են առնում մի պիեսի վերայ Համաձայն չի լինում միայն Ակնատեանը:

— Վաստ պիես է, չիմար, աննպատակ, ասում է Ակնատեանը ու շամառում: Արչափ խօսում են, վիճում—Ակնատեանը սպացոյցներ չէ բերում, այլ միայն կրկնում է՝ թէ չիմար պիես է: Արիշները աշխատում են գուշակելու Ակնատեանի աննպատակարժիքի պատճառը. բայց նա ինքը ամենեւին չէ էլ մտածում պատճառարանութիւնների վերայ, այլ մի բերան իւր ասածն է ասում:

Ահա այս տեսակ են Ակնատեանի քաջագործութիւնները: Այ՛ մի բան ինքը չէ անում, և ուրիշների արածներից էլ շատ բան չի հաւանում, կամ եթէ հաւանում է, այն էլ նայած հանդամանքին ձարպիկ կերպով շողորթթել զիտէ հասարակութեան մէջ նշանակութիւն ունեցող անձնաորութիւններին և աննկատելի կերպով նոցա հայեացքների արտացոլողը լինել: Չորս ամիս առաջ դա մի փոքր շրջանում՝ ուր ժողովուած են լինում մի երկու ճշանաւորներ, որոնցից մի քանի սպասելիքներ է ունենում Ակնատեանը՝ սկսում է պաշտպանել նոցա սիրած մի հողաբարձուի, բայց այնպիսի խորամանկութիւն գործ դնելով, իբր թէ այդ պարոնները այն հողաբարձուի վերայ սկսել են ծուռ նայել, իսկ նա՝ Ակնատեանը պարտք է համարում նորան պաշտպանել:

Եւ Ակնատեանը հասնում է իւր նպատակին: Նա այժմ այդ նշանաւորներից մէկի բարեկամի մօտ նշա-

նակուած է բոլոր նորա գործերի կառավարիչ, և  
ասում են՝ բուսկոնին օգտակար մարդ է, որովհետե  
մի տեսակ հնազանդութիւն է մտցրել ծառայողների  
մէջ:

Այնատեանը այնպէս է հասկացրել իւր շրջա-  
պատողներին, թէ նա շատ տանջուել է և անբուն  
գիշերներ է անցկացրել, մտածելով մեր հասարակա-  
կան գործերի մասին: Նա, ի հարկէ, գիտէ իւր հա-  
մար երկրպագուներ գտնելու եղանակները: Նա չաճախ  
այն տեղերքն է պատում, ուր ուժեղ հակառակորդ-  
ների չի կարող հանդիպել. մի տեղ, երկու տեղ հե-  
զինակութիւն ստանալով, նա սկսել է չանդդնել և  
աւելի հեռուները նայելու. աղահուժիւնը բացուել  
է, նա ուզում է առհասարակ մեծ դեր խաղալ, և  
մինչև այժմ չաջողեցրել է:

Նա այստեղ մի տեսակ հայրենասիրութեան մենա-  
փաճառի դեր է ուզում խաղալ: Մէկի կարծիքը՝ հերքե-  
լու համար՝ գործ է ածում այս նախադասութիւնը.

— Մեր ժողովրդի համար դա վնասակար է:

Եւ շատ տեղերում տպաւորութիւն է գործում:  
Այդ զէնքով նա հալածել է տալիս իւր քսիրած  
անձնաւորութիւններին:

Այժմ նա բերան է արել մի քանի նստապատու-  
թիւններ այս տեսակի՝ թէ պէտք է խոհեմ գործել  
պէտք է շրջանկատ լինել, շտապել պէտք է շատ  
բան կաշ ասելու, բայց տեղը չէ, կամ ժամանակը  
չէ. պէտք է ակնարկներ հասկանալ. փորձերից պէտք

է օգուտ քաղել, կամ փորձերը մեզ ցոյց են տուել և այլն:

Մի քանի շրջաններում աւարածուած է այն կարծիքը, թէ Ակնատեանը հաստատամիտ մարդ է, շատ լուրջ և ազդեցիկ խօսող: Յիրաւի, նորա գէմքի նայուածքը, խօսելու ձևը, նորա անդրդուելիութիւնը վէճի ժամանակը նորոտ կիսաարհամարհական ոճով քննադատելը՝ մարդու վերայ առաջին անգամը այն տպաւորութիւնն են գործում, որ մարդ ասում է, թէ Ակնատեանը սխալ թէ ուղիղ, բայց կշռած ու մտածած է խօսում:

Առաջին անգամը այդ տեսակ տպաւորութիւն կ'անէր Ակնատեանը և ինձ վերայ. բայց... պատմեմ եղելութիւնը:

Ես զնացել էի այստեղի օրիորդական դպրոցի աշակերտուհիների հարցաքննութեան ներկայ լինելու: Աշակերտուհիները պահում էին իրանց համեստ և պարկեշտ. պատասխանում էին ընդհանրապէս խելօք: Ներկայ եղողների վերայ հարցաքննութիւնը շատ քաղցր տպաւորութիւն էր գործում: Երկու ժամ քննելուց յետոյ նշանակեցին մի քառորդ ժամ միջոց հանգստանալու համար: Ակնատեանը ուրախ ժպիտով յետ ընկաւ աթուռի վերայ և պատգամախօսի ոճով ծանր ծանր արտասանեց.

— Ահա այս պէտք է լինի մեր աղջիկներէ կըրթութիւնը և սորանով էլ պէտք է նա վերջանայ: Տեսնո՞ւմ էք այդ պարկեշտութիւնը, այդ ամօթխա-

ճաթիւնը:—Դա է մեր կանանց լաւ չատկանիչը և դա պէտք է մնայ միշտ իրրեւ սլատական ժառանգութիւն: Կանանց բարձր ուսումը բոլորովին հակառակ հետեւանքներ է արտադրում և նա պէտք է բոլորովին հալածուի մեզնից:

—Բայց վերջին ժամանակներս շատերը ձգտում ունեն բարձր ուսումի գնալու, նկատեց մէկը:

—Եւ շատ վատ են անում: Մեր ժողովուրդը սիրողները պէտք է զինուեն այդ շարիքի, այդ նորածեղութեան դէմ: Բարձր ուսումը վնասակար է զանազան տեսակէտներից. նա, առաջինը, ինչպէս ասացի, զրկում է պարկեշտութիւնից մեր աղջիկներին, երկրորդ, նա փոխում է կնոջ դերը—անարարութիւնից—տան շրջանից նորան հանելով և հրապարակ դուրս բերելով իրրեւ տղամարդի, երրորդ... էլ ո՞ր մէկն ասեմ:

Հարցաքննողները ակնածութիւնով լսում էին Անատեանի խօսքերը և մեղմ շարժում էին իրանց գլուխները իրրեւ համաձայնութեան նշան: Միայն մէկը, որի բարեկամուհին (ինչպէս լետոյ իմացայ) նոյնպէս ցանկանում է գնալ բարձր ուսումի, համարձակուեց նկատելու.

—Պ. Անատեան, ես կարծում եմ, որ լաւ բացառութիւններ էլ կարող են լինել. լաւ տան կըրթուած աղջիկը—միշտ էլ լաւ կը մնայ:

—Երբէք, պ. Արսէն, երբէք. բարձր ուսումը կինարմատի համար կորստաբեր է: Մենք հին և փորձուած ազգ ենք, և եթէ մինչև այժմ հաստատ մնա-

ցել ենք—այդ մեր ամուր ընտանիքի շնորհիւ է,  
շնորհիւ մեր կանանց նախկին զրուծեան:

—Ես կարծում եմ...

—Ո՛հ, ո՛հ. դուք մի՛ ընդդիմախօսէք. ես գիտեմ  
ձեր ասելիքը:

—Որովհետեւ...

—Ես գիտեմ ինչ եմ ասում. դա է մեր փրկու-  
թիւնը... այո՛, այո՛ մեր փրկութիւնը. մեր ժողո-  
վուրդը պէտք ունի ձուլող գաղափարներին. գոնէ կինը  
իւր ապստամբութիւններով խառնակութիւններին  
պատճառ չը պէտք է դառնայ:

—Բայց մի՞թէ...

—Է՛հ, պարոն Արսէն, ես ձեզ շատ ծանր մարդ  
էի ճանաչում:

—Ես ոչինչ չեմ ասում. ես լաւ գիտեմ, որ  
ձեր ասածները երկայն խորհած են: Բայց ի՞նչ անենք,  
ի՞նչպէս կանգնեցնենք հոսանքը:

—Որ հատուտ ուղենանք—կը կանգնեցնենք:

—Ես հեռու էի նստած Ակնատեանից և նորա  
հետ ծանօթանալու պատիւը չ'ունեցայ: Ես նստած  
էի երեք բարեկամ մարդկանց շրջանում և զարման-  
քով լսում էի Ակնատեանի դատողութիւնները:

Բայց միևնոյն երեկոյեան ես չ'ունեցած պատիւը  
պատահարար ստացայ, այսինքն՝ ծանօթացայ Ակնա-  
տեանի հետ: Բարեկամներս պայմանաւորուեցին երե-  
կոյեան հիւր լինելու տիկին Սարեկեանի տանը: Նշա-  
նակել էինք ժամը 8-ին այնտեղ լինելու. բայց ես

հազիւ կարողացաւ ինին մօտերքը տեղ հասնել: Մտայ ներս, տեսայ որ մեծ բազմութիւն է ժողովուել թէ կանանց և թէ տղամարդկանց: Տիկնոջ հետ ծանօթ էի, տղամարդկանցից շատերի հետ նոյնպէս: Տիկինը ծանօթացրեց ինձ մի քանի կանանց և վերջումը պ. Անատեանի հետ, որ նոյնպէս անապասելի կերպով հիւր է եղել այդ երեկոյ:

Տիկին Սարեկեանը ինքը բաւականին կրթուած և խելացի կին է: Նա Պետերբուրգ և Վերմանիա լսել է դասեր մանկավարժութիւնից և ուրիշ գիտութիւններից և այստեղ ցանկանում է զործել: Ակսել է առ այժմ օրիորդական դպրոցների կազմակերպութիւնով հետաքրքրուելուց:

Ճիշդն ասած, ես երբ ներս մտայ, մի առանձին տրամադրութիւն զգացի հասարակութեան մէջ, իբր թէ բոլորը ինձ էին սպասում. չեսոյ իմացայ, որ տիկինը կամաւ է ինձ ծանօթացրել պ. Անատեանի հետ ամենից ուշ:

Ծանօթացնելով պ. Անատեանի հետ, տիկինը ասաց ինձ խորհրդաւոր ձայնով.

— Պ. Պատրիկեան, զիտէք ո՞վ է միւսիւյ Անատեանը. դա վաղեմի ազատամիտ ուսանողն է, որ Մովսէսի բացակայութեան ժամանակ սկսել է հորթի արձանը աստուածացնել:

— Ի՞նչ էք ուզում զորանով ասել, խօսքը կտրեց շփոթուած կերպով Անատեանը:

— Այն, որ դուք մեզ թշնամի էք:

— Ե՛ս ձեզ թշնամի:

— Այ՛ո, դուք: Միթէ՞ դուք, ս. Ակնատեանն, թէ ինձ և թէ իմ ընկերուհի Սուլօյեանին չէք ատում իրրև ազգամլասս անձերի:

— Ո՛վ է, ձեզ ասել, տիկին, այդ տեսակ բաներ, ընդհակառակն՝ ես ձեզ չարգում եմ և շատ չարգում: Եւ ուրիշ ինչ զգացմունք ինձ կարող էր բերել ձեր տունը, եթէ ոչ դէպի ձեզ ունեցած չարզանքը:

— Բայց դուք մեզ, տիկիններիս, համարում էք անպարկեշտ, անհամեստ, ով դիտէ՞ մինչև անգամ անամօթ և աներես:

— Ի՛նչ են նշանակում այս խօսքերը, ս. Պատրիկեանն, դարձաւ ինձ Ակնատեանը, երևի դուք մի բան գիտէք, որ տիկինը մինչև այժմ լռում էր և միայն այժմ է սկսել իւր անխնայ և անարդար չարձակումները ինձ վերայ:

— Ա՛յ, ընդհակառակն՝ ես եմ սպասում բացատրութիւնների, պատասխանեցի ես:

— Ես բոլորը չետոյ կը բացատրեմ ձեզ ս. Ակնատեանն, բայց դուք նախ անկեղծ չաչանեցէ՛ք ձեր կարծիքը իմ և իմ ընկերուհի Սուլօյեանի մասին. արդե՞օք դուք մեզ մնասակար էք համարում մեր ժողովրդի համար:

— Ի՞նչպէս թէ ձեզ երկուսիդ միայն: Ես ինչ ասանձին հսշխներ ունեմ ձեզ հետ. այստեղ թիւրիմացութիւններ կան:

-- Ես ասացի՛ բացատրութիւնը չետոյ:

— Որ այդպէս է՝ լսեցէք, ես չարգում եմ բոլոր սրտից թէ ձեզ և թէ օրիորդ Սուլօյեանին: Գուք շատ օգնեցիք մեր օրիորդական զպրոցին թէ լա վարժուհիներ դռնելով և թէ ձեռագործը կատարելագործելով և կենսական շինելով. իսկ Սուլօյեանը օգնում է մեզ իբրև անձնուէր վարժուհի և իւր աշխատակից վարժուհիների վերայ շատ բարերար ազդեցութիւն ունի:

— Բաւական է, ս. Աննատեան, բաւական է: Ես ինքնազոյութեան դէմ եմ. բայց ձեզնից պահանջում էի այդ խոստովանութիւնը, որպէս զի չաչտնեմ ձեզ հետեւալը: Գուք, երևի, չը գիտէք, որ այս պարոն երիտասարդները այսօր ներկայ են եղել օրիորդական զպրոցում հարցաքննութեան և լսել են ձեր չարձակումները կանանց բարձր կրթութեան վերայ: Ես սպասում էի, որ վկաները ժողովուեն, որ ձեզ հետ հաշիւս չեառոյ տեսնեմ: Ես և օրիորդ Սուլօյեանը պատիւ ունենք բարձր ուսում առած լինելու: Եղէք անկեղծ և, առանց փոփոխելու ձեր խօսքերը, այժմ ասացէք— հերքել էք դուք կանանց բարձր ուսումը:

— Յիրաւի, ես դէմ խօսեցի, բայց չը հերքեցի:

— Պարզ խօսեցէք:

— Ես անգթութիւն եմ համարում կանանցից այնքան երկայն տարիներ խլելը և նոցա առողջութեան վնասելը:

— Աւրեմի խղճում էք մեզ՝ կանանցս:

— Տիկին, դուք բոլորը ձեզ վերայ էք ընդու-

նում, մինչդեռ դուք պէտք է լաւ ճանաչէիք ինձ, դուք լաւ գիտէք, որ ես ձեզ շատ չարգում եմ և ձեր գործունէութիւնը զնահատում եմ աւելի քան ով և իցէ:

— Կուցէ, բալց ես պէտք է յայտնեմ կտրական, որ ով դէմ է բարձր ուսումին, նա և իմ դէմն է. իսկ ինձ բացառութիւն ընդունելը ես համարում եմ շողորրթութիւն: Այն, դա ձեր սովորութիւնն է,— դալ մեր շրջանները՝ մեզանով, մեր խօսակցութիւններով, մեր ընկերութիւնով ապրել, իսկ չեսոյ՝ մեզ չիշոց տալ: Նթէ մենք վատ ենք, անպարկեշտ ենք, այն ժամանակ մեզ հետ ծանօթութիւններդ կտրեցէք և ձեր պարկեշտների շրջանում անցկացրէք ձեր ժամանակը, այնտեղ վիճեցէք, դատեցէք և իմաստացէք:

— Տիկին...

— Աեղծել, միշտ կեղծել, միշտ խղճի հետ սակարկութեան մտնել— դա է խորհրդաւոր անսխալականների վարմունքը և գործը:

— Տիկին, դուք վիրաւորում էք:

— Այն, վիրաւորում եմ. արդէն դուք ինձ վիրաւորել էք անպարկեշտ ածականով, ես էլ ձեզ վիրաւորում եմ անագնիւ և կեղծ անունով:

— Բալց տիկին...

Ներկայ եղողները միջամտեցին և խօսակցութիւնը դադարեցրին: Անատեանը վերկացաւ տուն գնալու:

— Յաւու՛մ եմ, տիկին, որ այսօր ձեզ վատ տրամադրութեան մէջ եմ տեսնու՛մ: Յ'տեսութիւնս

— Իսկ ես ցաւու՛մ եմ, պարո՞ն, որ դուք տրամադրութեան և տեղին ու գէտլքին էք նայու՛մ ձեր համոզմունքները փոխելու:

— Տիկին, դուք ինձ հետ կատակ մի՛ արէք:

— Ես ձեզ հետ կատակ չեմ անու՛մ. ես ձեզ խաչտառակու՛մ եմ:

Ակնատեսանի դնալուց յետոյ հասարակութիւնը աւելի կենդանութիւն և աշխտո՛ժ ստացաւ, սկսեցին ընտանեքար խօսել:

— Ի՞նչ հիանալի բան եղաւ. դիմակը հանեցինք: Այժմ թո՛ղ աւելի զգոյշ ծպտուի, իւր գործերի ծաշրերը թագցնի աւելի ճարպիկ կերպով և խարի միամիտներին:

Յ'գրութիւնս

Ք. Ս. Պ.

## Փ Ա Կ Ո Ւ Ա Թ Ը

Խաղիրեանը, որի մասին գրել եմ անցեալ նա-  
մաներիցս մէկում, երբեմնապէս մտնում է ինձ մօտ  
մի որ և է առիթից օգուտ քաղելով: Ըստ երևու-  
թիւն նորա համար ես մի տեսակ նորութիւն եմ և  
նա պահանջ է զգում հետս տեսակցուելու: Նա մի  
քանի խոստովանութիւններ և նոր բացատրութիւն-  
ներ տուաւ իւր անձնաորութեան և կեանքի մասին.  
բայց այնպէս մի նոր շարունակութիւններ չարաւ, որ  
հարկ զգալի քեզ գրելու, իբրև լրացուցիչ նիւթ  
նորա անձնաորութիւնը բմբռնելու համար:

Նա հասկացաւ, որ ես առհասարակ հետաքրքր-  
ւում եմ մեր ինտելլեգենցիայի կազմով և նորա վի-  
ճակով և սկսեց ինձ զանազան տեղեկութիւններ հա-  
ղորդել այտուեղի գործողների մասին: Նորա պատմաճ-  
ները ախտոս շատ են մակերևոյթական, իսկ բնառ-  
որշումները՝ արտաքին, զուրկ խորութիւնից:

Իսկ երեկ նորա խելքին փշոււմ է՝ հետոն առնել  
մի պարոնի և զայլ ինձ մօտ: Ահա այդ դէպքին և  
պարոնին եմ նուիրում այս նամակը.

—Պարոն Պատրիկեան, խնդրեմ ներէք, որ ձեր

ժամանակը խլում եմ, ասաց նա ներս մտնելով: Աս  
մենակ չեմ, այլ գաւթում սպասում է մի սլարոն,  
որ ցանկութիւն ունի ձեզ հետ ծանօթանալու: Աս  
կամաւ բերի նորան ձեզ մօտ: Հետաքրքրական մի  
նմուշ է: Նորան ես համարում եմ փակուած, զմասա՞ծ  
մի զլուխ. բայց լաւ կը լինի ինքներդ նորան ուսում-  
նասիրէք: Քոչ կը տո՞ք ներս հրամայելու:

Աս ի հարկէ չը մերժեցի: Բայց ցանկացայ ունե-  
նայ մի քանի տեղեկութիւններ.

— Ի՞նչ մարդ է հարցրի ես:

— Բոլորովին ձեզ անծանօթ. նա ծառայում է  
մի հաշուեսենեակում. իսկ ազատ ժամերը շարադ-  
րում է: Նա յաւակնութիւն ունի հեղինակ կոչուելու:  
Ես վեր առի և քաշ տուի այստեղ, յոյս ունենալով  
որ դուք ինձնից դժգոհ չէք լինիլ. Քաղիրեանը վա-  
զեց անծանօթին կանչելու:

Մտաւ միջակ հասակով, կոպիտ կազմուածքով  
մի երիտասարդ՝ քսանվեց, քսանեօթ տարեկան, հազ-  
նուած բաւականին վայելուչ և մաքուր, անվստահ  
շարժուածքներով և հալեացքով:

— Պատիւ ունեմ ներկայանալ, Աղաջանեան.  
ներեցէք, ես ձեզ անհանգիստ եմ...

— Աւրախ եմ, խնդրեմ նստէք:

Չը գիտէինք թէ ինչից սկսենք խօսակցութիւն:  
Քաղիրեանը հարկաւ որ համարեց մեզ օղնելու:

— Պարոն Աղաջանեանը, սկսեց նա, նուիրում է  
իւր ազատ ժամերը գրականութեան և բաւական

առաջ է գնացել իւր ջանասիրութեան մէջ: Նա ուզում է նոցա ապել, նորա մտախն խօսել: Աս և նա փոքր ինչ միմեանց չենք բռնում. բայց ամեն մարդ իւր գլխի տէրն է:

— Այտինքն, մէջ մտաւ Աղաջանեանը, աշխատում եմ, որչափ ոչոս պատում է, գործել: Սա էլ իմ լուծման է, որ բերում եմ ըստ կարողութեանս:

— Ի՞նչ տեսակ զրականութիւն է ձեզ հետաքրքրում, հարցրի ես, ի՞նչ ճիւղի մէջ էք զուգ գտնում բաւականութիւն:

— Ես վարժուել եմ ամեն տեսակի մէջ էլ: Ունեմ մի քանի տասնեակ յօդուածներ, մի երեք պատմական բօման, մի տասներկու վէպիկներ, մի ամբողջ տետր լիքը ոտանաւորներով, կազմում եմ մի մեծ բառարան, յօրինել եմ չորս դասագիրք, թարգմանել եմ մօտ երեսուն ճառ զանազան դէպքերի համար, նկարել եմ Նովկասի և Փոքր Նսիւպի մի մեծ քարտէզ և ձօխացրել իմ չաւելուածներով, ուզում եմ գրել մի ընդարձակ ազգային պատմութիւն, որի մէջ լինէին և պարսիկների ու թուրքերի պատմութիւնները...

— Եւ բոլորը անտիպ, խօսքը կտրեց Յազիրեանը:

Ես զարմացել էի Աղախանեանի անսպառ արդիւնաբերութեան հաշիւը լսելով. իսկ ինքը հերոսը, որ դեռ չէր վերջացրել իւր ասելիքը, նկատեց իւր գործած տպաւորութիւնը և ինքնաբաւականութեամբ աւելացրեց.

—Մրադիրներ շատ ունեւմ. ես շարունակոււմ եմ աշխատել ամեն օր: Աամաց-կամաց ժողովուելով կազմոււմ է վերջոււմ բաւականին մեծ գործ:

—Փորձեր չէք արել ձեր գրուածքները տպելու:

—Ես ինքս ազատ գումար չունեմ, որպէս զի իմ ծախքով տպագրէի. իսկ ուրիշների հետ էլ դեռ շատ չեմ խօսացել: Մեր լրագիրները երկայն չօգուածներ չեն տպոււմ: Մի քանի թղթակցութիւններ տպել են, այն էլ կրճատած, համ ու հոտից զրկած, միայն կմախքը թողած...

Աղաջանեանը խօսոււմ էր առանց ձայնը ընդհատելու, մէկ նախադասութեան կցելով հեռեկազի սկիզբը, հեւալով և մի տեսակ ոչևորութեամբ այս ու այն բառը ծուր տալով: Խազիրեանը սառն զիտողի դիրք բռնած՝ նայոււմ էր Աղաջանեանին և եթէ միջամտոււմ էր, կարծես՝ ինձ օղնելու նայատակով: Այս անգամ էլ նա Աղաջանեանի խօսքը կտրեց.

—Պարոն Աղաջանեանը ոչ թէ իրան չէ համարոււմ չօգնած, այլ այնպէս է իրան զգոււմ, որ կարծես այսուհետեւ նորից պէտք է սկսի գրականութիւնով գրադուել: Ես չեմ կորդացել նորա գրուածները, բացի մի ճառից, որի վերաբերութեամբ սաստիկ վիճել ենք: Ես ճառի մէջ աւելորդ բաներ էի զրանոււմ, որ և առաջարկոււմ էի դուրս զցել:

—Եթէ ես հանէի ձեր ցոյց տուածները, զիմեց Աղաջանեանը փոքր ինչ տաքացած Խազիրեանին, այն ժամանակ ճառի երկու երրորդը կը կորչէր, կ'ոչն-

չանար, իսկ մնացած երրորդը ոչ միայն կարճ կըլինէր, այլ և թերի...

— Խնդրեմ ասացէք, հետաքրքրուեցի ես, շատ ժամանակ է, որ դուք գրում էք:

— Մօտ ու թ տարի է, երեք ամսից չետոյ կը լրանայ ու թ տարին այն օրից, երբ առաջին ճառը գրեցի, նորան ես պահում եմ ամենայն սրբութեամբ: Նա գրուած է ԲիկօնաՖիլիլի դէմ...

— Ինչպէս թէ ԲիկօնաՖիլիլի:

— Լրագիրներում կարդացի նորա անգութ և անխիղճ վերաբերմունքը դէպի մանր ազգութիւնները և վրդովուած եկայ տուն ու գրեցի մի բողոք: Այդ ժամանակից գրականութիւնը ինձ համար ներքին պահանջ դարձաւ. ազատ ժամերս նորան եմ նուիրում:

— Խնդրեմ ասացէք, դուք ձեր գրուածքները տպելու էք նշանակել, թէ հէնց այնպէս ձեզ համար էք գրում:

— Ի հարկէ՞, ապագայում տպելու համար են, կորուկ պտտասխանեց Աղաջանեանը, բայց գրել սկսելուց կամ գրելու ժամանակ ևս տպագրելու մասին չեմ մտածում: Ճառ բան ի հարկէ, չեն թոյլ տալ տպել:

— Ինչո՞ւ, ցանկացայ ես իմանալ:

— Համարձակ մտքեր և ենթադրութիւններ շատ կան գրուածքներխ մէջ, ասաց հանդիսաւոր կերպով Աղաջանեանը:

Իմ ժպիտը եկաւ, իսկ Խազիրեանը բարձրաձայն ծիծաղելով միջամտեց:

— Պարոն Աղաջանեանը սիրում է չափազանցնել: Նա խօտակցութեան մէջ էլ ամեն բան պատմում է մի ուրիշ ձեռով, ամեն բանի մի առանձին նշանակութիւն տուած:

Աղաջանեանը փոքր ինչ վիրաւորուեց Խազիրեանի ծիծաղից և ինքն իրան կորցրած պատասխանեց նորան:

— Ախալւում էք, պարոն Խազիրեան, որովհետեւ դուք թեթեւ էք վերաբերում խնդիրներին: Շատ բաների մասին խօսել ենք ձեզ հետ: Դուք միամիտ մի մարդ էք և շատ լուրջ բաներ էք հասկանում: Դուք ինքներդ ձեր անզգուշութիւնով գետին էք գլորում մեր ժողովրդին:

Խազիրեանը դարձեալ ծիծաղեց և զիմելով ինձ բացականչեց.

— Լսում էք, պարոն Պատրիկեան, ինչ խօսքեր է արտասանում պարոն Աղաջանեանը, որ ասում եմ չափազանցրած է խօսում, իւր ասածներին տալով մի ինչ որ խորհրդաւորութիւն: Խնդրեմ ասացէք, ինչ ասացի ես, որ նա իրան թոյլ տուաւ՝ և միամիտ, և թեթեւ և գուցէ դուաճան անուանել ինձ: Նա ինքն իրան հնարում է և թշնամիներ և պատերազմ և կաւում եռանդով: Ուրիշ ինչ կարելի է սպասել մի մարդուց, որ կանոնաւոր վարժւում է անբովանդակ և հնարած բաներով զբաղուել իւր սենեակում:

— Եթէ պարոն Պատրիկեանի տանը չը լինէիք, ես ձեզ շատ կճու կը պատասխանէի, բայց այժմ թողնում եմ. ասաց Աղաջանեանը և շուտ եկաւ յէպի ինձ:

— Թոյլ կը տաք, պարոն Պատրիկեան, ձեզ ծանօթացնել իմ գրուածքների հետ, ասաց նա մի խոնարհ և աղերսական ձայնով:

— Խնդրեմ, խնդրեմ, ասացի ես:

— Այս բոլէին, մրմնջաց նա և դուրս վազեց սենեակից:

Խաղիբեանը ժպտաց, իսկ ես մնացի զարմացած:

— Այժմ սկսում է կատակերգութիւնը: Նա իւր հետ ունէր մի կապոց, որ թողաւ դռնապանի մօտ. երևի նորա գրուածքների հակերից մէկն է:

— Ինչու է եկել ինձ մօտ, ինչու էք բերել նորան.

— Ես բերել եմ ձեզ մօտ, որ դուք տեսնէք ողորմելուն. իսկ նա յոյս ունի ձեզ հիացնել իւր գրուածքներով:

— Ես արդէն ձանձրացայ: Ես ճիշտ է՝ հետաքրքրւում եմ հասարակութեան մէջ գործող և ծնունդ աւնող անձնաւորութիւններով. բայց չեմ սիրում նոցա վերայ փորձեր անել, իմ հաճոյքի համար նոցա խաղացնել:

— Վնաս չունի, սա անմեղ մարդ է. թէև ինքը իւր մասին այն կարծիքին է թէ շատ խորամանկն է և թէ իւր ամեն մի սողում և սողամէջում հազար տեսակ մտքեր ու ակնարկներ ունի թաղցրած:

Աղաջանեանը ներս մտաւ ձեռքին բռնած մի կապոց:

— Ահա այստեղ է ձեզ պատմած նիւթերիս մի մասը:

Աղաջանեանը բացեց կապոցը և հանեց մի բարակ տետրակ, որի վերայ գրած էր խոշոր տառերով մի վերնագիր:

— Ուս մի տետր է, որի մէջ ես գրում եմ այն առածները, որ ես ինքս գտնում եմ մտածելով:

— Ինչպէս:

— Նմանեցնում եմ ժողովրդականին:

— Զորօրինակ:

— Օրինակի համար կարդամ մի քանիսը.

Զրով կրակը կը հանդէի:

Զմեռը ցուրտ է, բայց օդը առողջարար:

Քլուխը ցանկանում է, ոտքը գնում է:

Յեխը չը լինէր՝ կրկնակօշիկն էլ չէր լինիլ:

— Ճրագը վառում են գիշերը, դղակը գլխին են դնում և ո՛չ ոտին, դուք այստեղ չը գայիք՝ մեք ձեր ձայնը չէինք լսիլ... այս տեսակ բաները դուք հարկաւոր էր համարում գրել — և դեռ իբր թէ լուրջ բաներով էք զբաղւում, ասաց քի՛մ ծիծաղով Խաղիբեանը:

— Ժողովրդական առածներն էլ այդ տեսակ են կազմուած, միմնջաց Աղաջանեանը, զորօրինակ. ինչ որ ցանես, այն էլ կը հնձես և ուրիշները:

Խաղիբեանը ներողութիւն խնդրեց և առարկե-

լով, որ մի ծանօթի մօտ պէտք է մտնի մի քառորդ ժամուայ, զուրս եկաւ սենեակից: Մնայինք Աղաջանեանը և ես: Նա սպասում էր պատասխանի:

— Այո, ասացի ես, բայց զոքա ժողովրդական հասկացողութեան, ժողովրդական փիլիսոփայութեան այն ձևակերպութիւններն են, որ պտտում են ժողովրդի բերանում: Այդ տեսակ ասացումսները յաճախ հասարակ և անճիշդ են լինում: Բայց նորա դարձեալ հետաքրքրական են, իբրև ամբօխի աշխարհահայեացքի նիւթեր: Աէտք է այն էլ նկատեմ, որ ժողովրդական առածներից շատերը իրանց յատուկ նշանակութիւնը ունեն և խորութիւնը: Նակ նոր առածներ հնարելը բոլորովին աւելորդ է: Այդ տեսակ մի բան հնարում է և մեր օրերում, երբ առաջնակարգ մտածողների և բանաստեղծների մտքեր և նոցա ձևակերպումները ընդհանրանում են:

Աղաջանեանը կարծես չը հասկացաւ իմ ասածը, որովհետև զարմացական աչքերով նայում էր վերաս, յետոյ կարծես հետո համաձայնեց:

— Այո, այո, ասաց նա, սա այնպէս, ի միջի ալից էր, կողմնակի, դա մասնաւորապէս է, խնդրեմ նայինք այս տետրակին:

Եւ Աղաջանեանը կապոցից հանեց մի հաստ տետր և յանձնեց ինձ: Ես վերցրի և կարդացի գեղեցիկ տառերով գրուած հետեւեալ վերնագիրը, Վրբատեղու քարափը, բոման իրական կեանքից, երկու մասով և մի յառաջարանով:

Ես թերթեցի տեարը լռելեացն՝ զանազան տե-  
ղերից կտորներ կարդալով և մի քանի տեղերում կանգ  
առնելով: Աղաջանեանը հետևում էր ինձ, և անհամ-  
բեր շարժումներ էր անում նստած տեղը, իսկ երկու  
անգամ էլ գուշակելով թէ որ երեսն եմ բաց արել,  
մատով ցոյց տուաւ թէ որտեղից սկսեմ կարդալ: Ես  
շատ աննպաստ կարծիք կազմեցի գրուածքի մասին:  
Վճռեցի աչքի անցկացնել և չստաջարանել: Տէր Աս-  
տուած, ինչեր չկային այդ չստաջարանում, ամեն  
տեսակ մտքեր, դատողութիւններ, չպատարարումներ. —  
խառնուած, խճճուած:

— Պարոն Աղաջանեան, գիմեցի ես նորան, ներեցէք  
ինձ, որ ես ձեզ պէտք է չալանեմ իմ կարծիքս առանց  
քաշուելու: Ձեր այս բովանդէ բոլորովին անչաճող մի  
գրուածք է. նորա մէջ չկայ ոչ բովանդակու թիւն, ոչ իշ-  
խող միտք. խառնվին թորութիւն է սկզբից մինչև վերջ:

— Ինչ բանը չը հաւանեցիք, որ կտորը, հարց-  
րեց ինձ Աղաջանեանը հանդարտ, և ցածր ձայնով,  
բայց գունատուած երեսով:

— Այ մի բանը:

— Իսկ չստաջարանը:

— Ես չը գիտեմ ինչու համար էք դուք նորան  
գրել. այնտեղ արդէն Բարեւոյնեան խառնուելութիւն  
է, և բացի այդ խնդրեմ ասացէք, ինչ պէտք կար  
չստաջարանի, նա մանտուանդ որ սա չէ վերաբերում  
ձեր բովանդին, այլ կարծեմ ընթերցասիրութեան և  
այլ այս տեսակ բաներին:

—Այո, բայց ես իմ խորհուրդներս ունէի: Այն-  
տեղ միտք կայ, որի վերայ դուք ուշք չէք դարձրել:

—Ի՞նչ միտք:

—Ես այնտեղ արել իմ մի քանի ժամանակակից  
ակնարկներ, որ հասկացողը կը հասկանայ:

—Ձուր տեղը ժամանակ էք կորցնում այդպիսի  
գրուածների վերայ:

—Ամեն մարդ իւր կարծիքը ունի: Ես չարգում  
եմ ամեն մարդու կարծիք, բայց ինքս... ես կար-  
ծում եմ, որ դուք այնպէս շուտ-շուտ թերթեւով  
զազափար չէիք կարող կողմել իմ բովանդի մասին:  
Նա շատ մեծ բան է: Ի՞նչպէս էք հաւանում այս  
փոքրիկ ճառերը:

Աղաջանեանը հանեց մի տետրակ և չանձնեց  
ինձ: Տետրակը լիքն էր փոքրիկ յօդուածներով զանա-  
զան աւարկանների մասին: Ես կանգ առի մէկի վե-  
րայ, որ կրում էր «Յրիորդներ—այդպէս մայրեր  
վերնագիրը: Յօդուածի զլիսին նշանակուած էր յայտնի  
ոտանաւորի երկտողը.

Ինչո՞ւ ինչո՞ւ խտալուհիք

Թողել էք ձեր պիանօն:

Յօդուածը սկսում էր հետեւեալ խօսքերով. «Յի-  
շեցէք Յրլեանի կոյսին, ով օրիորդներ, չիշեցէք դրժ-  
բաղղ Ֆրանսիան: Ոգևորուեցէք անմահ կոյսով և մեզ  
համար դարձէք օրինակելի մայրեր: Արթուրթիւնը  
Ամերիկայում կանանց համար բաց է և կինը այնտեղ...

Յետոյ հեղինակը անցնում էր հինգերորդ դարի հայ կանանց և յանկարծ կանգ առնելով Հայուհեաց Անկեթեան վերայ, շեշտում էր որ կարուձևը և արհեստի սովորելը շատ կարևոր է: Վերջում յօդուածագիրը՝ պաշտպան հանդիսանալով կանանց ազատութեան՝ առաջարկում էր, որ հայ օրիորդները մի թերթ հրատարակեն:

Քէ և յօդուածը երկայն էր. բայց հագլիս հագ կս նորան մինչև վերջ կարդացի:

— Ինչպէս էք զանում իմ կարծիքը կանանց կրթութեան մասին, շտապեց հարցնել Աղաջանեանը, դուք ի հարկէ համակրում էք:

— Ի հարկէ՝ համակրում եմ. բայց ձեր յօդուածը կարդալով՝ ես չը հասկացայ իսկապէս, թէ դուք ինչ էք ուզում ասել:

— Այո, ես շատ մտքեր եմ յայտնել միանգամից, այնպէս որ զանազան մտքեր կան այնտեղ. ես ժողովել եմ նիւթերը զանազան կողմերից:

Խղճալի մտրդ էր Աղաջանեանը: Թօսում էր մի թթամիտ ինքնահաւանութեամբ և շուարուած հայեացքով: Ես համբերութիւնս կորցրել էի:

— Ապարդիւն գործ է ձեր աշխատանքը. ասացի ես նորան: Այս բոլոր յօդուածը ոչ մի արժանաւորութիւն չունի. նա զուրկ է արամաբանութիւնից, անկուպ է: Թորհուրդ եմ տալիս բոլորովին ձեռք վերցնել գրականութիւնից:

— Առն մտրդ իւր կարծիքը ունի, իւր համոզմունքը: Ես ընդունում եմ նկատողութիւններ:

Այս պատասխանը երկրորդ անգամն էր կրկնուած։  
Ես լսեցի մի առ ժամանակ։ Աղաջանեանը հազիւ  
լսելի ձայնով մրմնջաց։

— Ես կարող եմ ուղղել, որ նախադասութիւն-  
ները չէք հաւանում։

— Ասացի ձեզ, որ բոլորն էլ չեմ հաւանում։

— Անկարելի է, ասաց նա համարձակ, անկա-  
րելի է. այդտեղ կան նախադասութիւններ, որ ուղիղ  
վերցրած են մի տպուած չտպուած ից։ Մնչպէս կարե-  
լի է, որ դէմ վնէք բոլորին։ Իսկ լեզուս և սոս  
հաւանում էք։

— Նոյնպէս պէտք է բացասական պատասխան  
տամ։ Գուք գործ էք անում զբարա, սակաւ գոր-  
ծածուող բաւեր, որոնցից մի քանիսը բոլորովին ան-  
տեղի են իսկ։

— Արեմն, դուք չէք հաւանում այն բաւերը,  
որ ընտիր են և դասական, ասաց նա մի տեսակ  
ինքնարաւականութեամբ և կարծես ինձ չանդիմանե-  
լով։ Իսկ այս լեզուագիտական հետազոտութեանս ինչ  
կտակք։

Եւ Աղաջանեանը տուաւ ինձ մի տեսութիւն, որի  
մէջ զանազան վարձեր էին արուած բաւերի վերայ,  
գործիմանի մի երեսում հետեւեալ կերպով դրուած էին  
բաւերը։

Հիւրը. իս = խառնուրդ

խ-ել-ք. . . . խառնուրդից ելք

խ-աւ-ար. . . . խառնուրդով—անող

գ = ջերմութիւն

գ-ար-ուն . . . ջերմութիւն անող ժամանակ

— Սա ինչ բաներ են, հարցրի ես:

— Բառերի ծննդաբանութիւնն է:

— Մրտեղից էք առել նորան:

— Ինքս եմ գտել: Աս միշտ վարժուած եմ բա-  
սերը լուծելով և կապելով:

— Բայց այդ տեսակ հետազոտութեան համար  
հարկաւոր է մասնագիտական պատրաստութիւն:

Ազաջանեանը մտազբաղ նայեց երեսիս, և կա-  
մաց արտասանեց:

— Իսկ մեզանում, խնդրեմ ասացէք, սրչափ կան  
մասնագիտական պատրաստութիւն ունեցողներ:

— Շատ քիչ, պատասխանեցի ես:

— Եթէ քիչ, ուրեմն ո՞ւմ վերայ էք յոչս զնում: Ա-  
րեմն պէտք է մենք սպասենք մինչև մասնագէտներ դուրս  
գան. իսկ եթէ մասնագէտներ չատ ժամանակ չ'երևան:

— Կոնէ պէտք է մասնաւոր աշխատասիրութիւ-  
նով և հետաքրքրութիւնով ծանօթանան զիտութեան  
հիմունքներին և նորա յստաջալիմութիւններին:

Ազաջանեանը չէր լսում խօսքերս: Աս հանել էր  
մի հաստ տետր և բռնել ձեռին:

— Այստեղ իմ երգերս են ժողովուած, խնդրեմ  
կարդար մի քանի նմուշներ: Աս թերթեցի և այն-  
պիսի անհամութիւնների ու անհեթեթութիւնների  
փորձեր տեսայ, որ էլ չը գիտէի ինչ տեսակ խօսեմ  
նոցա հեղինակի հետ:

— Պարոն Աղաջանեան, զարմանում եմ, որ դուք ձեր ժամանակը այսպէս անօգուտ և անպարզիւն էք անցկացնում: Այս բոլորը պէտք է կրակը գցել և այրել և որչափ շուտ, այնքան լաւ:

— Իմ ժամանակի խնդիրը ինձ թողէք, ասաց բարկացած Աղաջանեանը. դուք չէք հաւանում իմ ոտանաւորները, մի ուրիշը կարող է հաւանել: Եթէ դուք ինձ ասէիք թէ այն տողը կամ այն բառը լարմար չէ, կամ տեղումը չէ, ես կարող էի օգուտ քաղել ձեր խօսքից և ուղղել: Ես դէմ չեմ բոլորն էլ ուղղելու, սրբագրելու, եթէ դուք ձեր նկատողութիւնները անէք մանրամասն: Վերցնենք օրինակ այս ոտանաւորը:

Աղաջանեանը շեշտելով կարգաց մի ոտանաւորի առաջին տունը, որ կարծեմ ճիշդ եմ չիշում:

Կանչում եմ քեզ ազնկոտուր

Զօիրելիս իմ Համասփիւս

Մնձե՛կ կ'ատես դու իմ գրգուր

Եւ ոչ հայցիս ուր եմ ուր

— Ինչն է այստեղ պակասաւոր, կամ անլարմար, ասացէք ես ուղղեմ:

Ես ինչ ասէի խեղճ մարդուն:

— Դուք խօսում էք մասնաւորութիւնների մասին, մինչդեռ ամբողջը ոչ մի բանի պէտք չէ:

Աղաջանեանը պոօշները կ'ծեց. բաց չըլուսահասուեց: Կա թերթեց տեարակը, բացեց մի երես

և այնտեղ ցոյց տուաւ մի ստանաւոր, որի առաջին  
և վերջին առղերը գրուած էին կարծ, իսկ միջին-  
ները երկայն:

— Նայեցէք, այս ստանաւորը խաչաձև է: Սորա  
համար ամբողջ երեք երեկոյ աշխատել եմ: իսկ սա  
բրգաձև է, աւելացրեց Աղաջանեանը մի ուրիշ երես  
ցոյց տալով:

— Բայց ի՞նչ շահ, ի՞նչ օգուտ գորանից:

— Քա ճաշակի և տեսակէտի բան է, ստաց նա մի  
տեսակ ապուշ սառնու թեամբ:

Աղաջանեանը արդէն բոլորովին կորցրել էր հե-  
տաբրբրականու թիւերը ինձ համար: Նորա հետ խօսելուց  
և նորան նայելուց ես կարծում էի թէ ընկել եմ ինչ  
որ մի աշխարհ, մի մտաախուղ աշխարհ, որից ելք  
չը կայ ոչ մի ձև փրկութեան: Աղաջանեանը սակայն դեռ  
կամենում էր ինձ ծանօթացնել և միւս գործերի հետ  
ես զճնեցի կատակերգութեան վերջ տալ:

— Ներեցէք, պարոն Աղաջանեան, ես բաւական  
եմ համարում ձեր կարգացածները: Եմ կարծիքը  
այնքան աննպաստ է, որ ոչ մի խօսք չէ կարող լինել  
այս ու այն գրուածքի մասին:

— Բայց դուք ծանօթ չէք իմ միւս գրուածք-  
ների հետ, շեշտեց նա համարձակ:

— Միևնայն է. ես արդէն գիտեմ նոցա ինչ  
լինելը:

Հա, եթէ դուք այդպէս էք, այն ժամանակ  
չեմ կարող, այսինքն չեմ...

Յանկարձ Խաղիրեանը մտաւ ներս և մեզ ազա-  
տեց չմտար դրութիւնից:

— Վերջացրել էք, թէ դեռ շարունակում էք  
ձեր զրոյցը, հարցրեց նա ուրախ ձայնով:

— Վերջացրինք, շտապեցի ևս պատասխանել  
վերջացրինք բոլորովին:

— Ի հարկէ ևս չեմ կարող զօրել ոչ որքի Ուրեձ  
ևս գնում:

Ազաջանեանը շտապով և բարկացած կապեց իւր  
ծրարը, սակայն քաղաքավարի ձեռք տուաւ և դուրս  
եկաւ:

Խաղիրեանը քմծիծաղով մտեցաւ ինձ.

— Հը՞, ինչպէս տեսաք այդ փակուած գլխին:

— Օհ, վերջապէս ազատուեցի:

— Եւ այց լաւ է, որ դա միակը լինէր: Դո-  
քա կրկնութիւններէց էլ ունենք բաւականին: Դո-  
քա սակայն մի լաւ չտակութիւն ունեն, որ շտա-  
անգամ իրանց սենեակներում փակուում են ու  
ոչ որքի չեն խանգարում: Մէկ մէկ դոցա չաջող-  
ւում է միայն իրանց շարագրութիւնները տպագ-  
րել տար:

— Դոքա բոլորովին բացասական ոյժեր են մտքի  
առաջադիմութեան գործում:

Խաղիրեանը մի կրկու դէպքեր և աննկդոտներ  
պատմեց իւր ծանօթների կեանքից և առաջարկեց  
զնայ դրօսներու, որպէս զի Ազաջանեանի պատճա-  
ռած ծովսր շքանայ, ցրուի:

Մենք դուրս եկանք և ուզղուեցինք դէպի քա-  
ղաքի ծայրը...

Քո նամակներում դրած հարցերին կ'աշխատեմ  
առանձին նամակով պատասխանել:

Յ'գրութիւն Քո Ս. Պ.



## ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ

Արեւիկ ևս հիւր էի այստեղ Ազնաուրեանի մօտ: Նորա շրջանը, թէև դեր է կատարում հասարակական գործերում և այստեղի գրական աշխարհում, բայց իրան փաքր ինչ կղզիացած և անմատչելի է պահում:

Այդ շրջանը սիրում է աւելի ազգազրական և պատմական խնդիրներով զբաղուել և խորշում է այն երիտասարդներին, որոնք թուլութիւն ունեն դէպի անտեսական և ընդհանուր հասարակական խնդիրները:

Ինձ համար հետաքրքրական էր այդ երեկոն: Այնտեղ հասակաւորների շարքում հանդիպեցի մի երկու շատ մատուցահաս երիտասարդների, որոնք ոգևորուած էին իրանց սիրած առարկաներով և ըստ երևութին անգործ էլ չեն:

Ազնաուրեանը ինքը իրան պահում է վեհ, իբրև մի պատգամախօս, և թէև չափազանց քաղաքավարի է, բայց գործ է ածում խօսելու և վարուելու մի այնպիսի հրամայողական եղանակ, որ թոյլ չէ տալիս ընդդիմախօսելու. ամեն մի հակառակութեան վերայ այնպէս կիսում է ունքերը, որ կարծես թէ իւր ստորագրեալների հետ գործ ունի: Ազնաուրեանը սի-

բում է աղագորովան, պատմական, նիւթեր. ունի ճոխ գրադարան. բայց ինքը ոչինչ է գրել ինքնուրոյն: Նորա արած գեղեցիկ երկու թարգմանութիւնները քեզ չաչանի են: Այժմ էլ թարգմանում է մի գասական գրուածք. բայց շատ դանդաղ է աշխատում:

Բոլորը պատկասում էին նորանից և զիջում, բայց Փալբացեանից, որ նորա հետ խօսում էր պուսով, և անվերջ կատակներով ու անմեղ չիշոցներով: Փալբացեանը զանազան գաղտնիքների մեծ և անսպառ մի շտեմարան է: Նա գիտէ ամեն մի փոքր ի շտտէ աչքի ընկնող քաղաքացու նիւթական հանգամանքները և ընտանեկան ու հասարակական չարտբրութիւնները: Նա մանաւանդ նա հմուտ է հոգևորականների գաղտնիքներին: Ամ'նայն մի եպիսկոպոսի, վարդապետի կենսագրութիւնը և քաջադործութիւնները չաչանի են նորան մեծ մանրամասնութիւններով: Փալբացեանը գրագէտների շրջանը շատ սիրում է և աշխատում է հեռուել նոցա կեանքին. կտրդում է նոցա գրուածները. բայց նա շատ անգամ է գրադարում կարդացածի իմաստով. այլ այն բանով թէ ով ինչ գրղումից է գրել այս կամ այն տողը, ով ում դէմ է փակ կերպով ուղղել իւր շանթերը և այլն: Փալբացեանը չաճախ խանդարում էր խօսակցութիւնը իւր միջանկեալ պատմութիւններով: Նա այն կարծիքին է թէ ինքը մեծ դեր է կատարում գրական գործողների շրջանում:

— Ասանց ինձ բան չէ կարող առաջ դնալ, կրկնեց նա մի քանի անգամ այդ երեկոյ:

Խօսակցութեան զլիսաւոր նիւթն էր հիւրերից մէկի, Բարութեանի, ձեռագիր երկասիրութիւնը: Բարութեանը ինքը ուսել է իրաւաբանութիւն. բայց չէ վերջացրել դասընթացքը, եկել է Աովկաս և ընդունել գաւառական քաղաքներում ուսուցիչ և տեսչի պաշտօններ: Այժմ նա ուսուցիչ է Քիփլիսում: Գաւառում նա ժողովել է երգերի, ժողովրդական զրոյցների և հաւատալիքների փոքր ինչ նիւթ, որ այստեղ մի քանի ամսուայ ընթացքում մշակել է և այժմ պտորաստում է նորան վերջնական ձև տալ և լանձնել տպարանին, եթէ ծախքերը հոգացող գտնուեն: Նա կարգաց մի քանի կտորներ: Եսկապէս հետաքրքրական բաներ կան ժողովածուի մէջ:

— Մեր ժողովուրդը ամբարել է ժամանակի ընթացքում, ասաց ձերունի բժիշկ Սարկապեանը, շատ տպաւորութիւններ և հաշկացքներ, որոնցից մի մասը չետոյ մոռացել է, իսկ միւսները խառնփնթորել: Ես ինքս զբաղուել եմ գաւառում հարց ու փորձերով: Ով գիտէ՞ այն, ինչ այն ժամանակ պատմում էին, այժմ հաղորդեն այճատաճ, կամ փոխաճ: Պէտք է շատ տեղերում հետազօտութիւններ անել:

— Գաղթականութիւններն էլ շատ բան տակն ու վերայ են արել, աւելացրեց Բարութեանը. Արարտեան աշխարհի ժողովուրդը գաղթել է Քիփլիսի, Փամբակի, Ազգախի կողմերը, արցախեցիները դէպի

կարի ակերբը, Ալաշկերտի, Մուշի, Բասենի ժողովարդը դէսլ Աւանայ լիճը և նորան կից սարահարթը և այլն: Ի հարկէ հին հայրենիքի սարերի, ծովերի, գետերի հետ կապուած աւանդութիւնները կորցրել են իրոնց նշանակութիւնը նոր հայրենիքում:

— Այո, մեծ ջանքեր են հարկաւոր այլ բոլորը ժողովելու, համակարգելու, զտելու, մաքրելու: Դա հոգս է և լուրջ հոգս և սէտք է լուծու՞մ ստանալ:

Բժիշկը սկսեց պատմել հետաքրքիր դէպքեր իւր ժամանակուայ զաւտասկան կեանքից և բացատրեց թէ ինչպէս մեր երկրի հնութիւնները օրից օր սակաւանում են, անհետանում և ինչպէս անխնամ կորչում են չիշատակարաններ:

Հիւրերի մէջ կար մի պարոն, Արագեան անունով, որին ամենքը կանչում էին նկարիչ: Նա իսկապէս նկարիչ չէ, այլ լուսանկարիչ: Ինքը դեռ շատ մատաղահաս է և սիրում է զանազան ազգութիւնների տիպեր ժողովել նոցա ազգային տարազներով և ձեւերով: Նա սկսեց իւր մի քանի դիտողութիւնները պատմել, որով շատ հետաքրքրեց Բարութեանին և բժշկին: Սկսուեց նոցա մէջ ջերմ խօսակցութիւն, որ տեւեց երկայն ժամանակ: Զը գիտեմ ինչպէս խօսք ծագեց իսկական թաթարական զգեստի մասին: Արծիբները բաժանուեցին: Այո՞ որ ոչինչ չը կարողացաւ ապացուցանել, որովհետեւ լուրջ պատմական համեմատական ուսումնասիրութիւն չէր արել, այլ խօսում էին ենթադրաբար: Աերագարձան նորից Բարութեանի

ժողովածուին: Յանկու թիւն չաչանուեց հայթայթել մի կերպ նորա տղադրութեան ծախար: Փայրացիներ խոստացաւ մի պարոնի, որի ազգանունը չէր ուզում առ այժմ չաչանել, գրաւել զէպի այդ գործի ձեռնարկութիւնը: Նկարիչը խոստացաւ իւր կողմից աւերացնել ժողովածուին իւր ժողովրդական տիպերը. բայց չարմար չը համարուեց, որովհետեւ լուսանկարի արտատպելու գործը նրբութիւն է պահանջում և մեծ ծախքերի կարօտութիւն ունի: Ասեց առին ժողովածուի վերայ:

—Ա՛յ, տեսէք, պարոններ, ինչպիսի զանձեր մնում են չը հետազօտուած, բացականչեց Աղնաուրեանը: Աւ ով գիտէ՞ մի ժամանակ հետքերն էլ չը մնան այս բոլորի մեր ժողովրդի բերանում: Մինչդեռ մեր երիտասարդները գրադուած են զանազան մտաչին խնդիրներով:

—Այո, շատ թեթեւ են մեր ջահիլները, վերայ բերաւ Աղնատեանը (որը նոյնպէս հիւր էր և որի մասին քեզ գրել եմ արդէն). նոքա գիտեն միայն միմիանց քննադատել, սկանդալներ անել, ոչ ոքի չը չարգել:

—Այդ չէ կարելի ընդհանրացնել, նկատեց նկարիչը: Մեր երիտասարդների շրջանում ես շատ եմ ճանաչում աղնիւ և անկեղծ անձերի:

—Ի՞նչ օգուտ, բարկացած խօսքը կտրեց Աղնատեանը:

—Ի՞նչպէս թէ ինչ օգուտ, զարմացած հարցրեց նկարիչը:

— Նոցա իբր ազնուութիւնը և իբր անկեղծութիւնը եւ կոպէկով չեմ գնիլ. պէտք է խելք էլ ունենան, խոհեմութիւն, գործնական հոտառութիւն. ինչ օգուտ ունենք անմեղ էշերից:

— Դա վիրաւորական է, չաչանեց նկարիչը, ոտքի կանգնելով, եւ չեմ կարող ձեզ հետ շարունակել խօսակցութիւնս. դուք մեղադրում էք ուրիշներին սկանդալների համար, իսկ ինքերդ պատրաստ էք ամեն բոպէ...

— Խնդրեմ, ձեր քարոզները թողնէք ձեզ համար, ասաց արհամարհանքով Ակնատեանը:

— Դէ, դուք էլ, միջամտեց բարկացած ձայնով Ազնաուրեանը զիմելով Ակնատեանին. ինչ կուուելու տեղ է:

Ակնատեանը զարմացաւ այն բանին, որ իրանից անբաւական են. նա կարծում էր թէ ինքը գործ է պաշտպանում: Եւ այդքան անինքնուրոյն չէի համարում նորան, ուստի ինձ ապշեցրին նորա արդարացուցիչ խօսքերը:

— Ես ձեր դատն էի պաշտպանում, պատասխանեց նա Ազնաուրեանին. ես կարծում եմ, որ չարգելի նկարիչն էր այստեղ այնպէս մի փաստարանութիւն գործ ածում, որ անտեղի էր:

— Այո, բաւական է, կորեց Ազնաուրեանը:

Ակնատեանը ոչինչ չ'ասաց այդ հրամայողական եղանակի դէմ:

— Էլ լօթի, դարձաւ նորան ժպտալով Փայրա-

գեաներ, ևս գիտեմ, զո՞ւ ու՞մ գէ՞մ և՞ս ակնարկներ  
անում: Այն աղերսանոց ևս էլ եմ ճանաչում: Բոլորին  
էլ ներում եմ, բացի այն տերտերի որդուն: Պարոն  
նկարիչ, զո՞ք ի նարիէ լաւ երիտասարդների պատա-  
հել էք: Բայց բոլորն էլ լաւ շէն, չէ՞ լաւ շէն, — կան  
փասերը, ասում եմ՝ փասերն էլ կան. ևս գիտեմ  
Բոլորին էլ ճանաչում եմ. լաւն էլ կա՛յ, փասն էլ:

Նա խոսք ասի և ջաշանեցի որ սխաւած վէճի և  
խոսակցութեան ձեռք սխալ է: Նարսթեանի ժողո-  
ված նիւթերը հետաքրքրական են, ասացի ևս, և շատ  
ցանկալի է, որ զանունն հետևողներ և հետազո-  
տեն ժողովրդի աշխարհայեացքը ամեն տեղը: Բայց  
ինչո՞ւ պէտք է մենք շարժանցիները խնդիրը այն-  
քան, որ միայն այս տեսակ հետազոտութիւններ ճա-  
նաչենք և հերքենք ու բիշ տեսակ հետաքրքրութիւն  
Պոք կարծես թէ նաչում էք մեր ամբողջ ինտելի-  
գենդիալի վերայ, իբրև մի աղքատքական կամ պատ-  
ժական ընկերութեան անդամների վերայ: Ժողովուրդը  
սոյրում է և նա ունի բազմատեսակ պահանջներ. իսկ  
զո՞ք ստնում էք նոցա միայն մի մասը և ուզում  
էք նորանով զբաղեցնել ազգի մտածող մասը:

Ազնուութեանը ընդունեց մի հովանաւորող դիրք  
և նկատեց, որ նա ցանկանում է, որ մեր երիտասարդ-  
ները նախ ճանաչէին մեր ժողովուրդը և չնայ գոր-  
ծէին նորա համար:

— Եղորովին արդարացի պահանջ է, ասացի ևս,  
ժողովուրդի հետ ծանօթ լինելու անհրաժեշտու-

թիւնք. բայց պէտք է գործնական խօսել. դու շատ  
ընդհանուր ձեռով է առնում: Պարտէ Բարսեղեանք այ-  
սօք կարգաց տղտեղ մի բանաստեղծական կերպ, որի  
ձէջ սկեսութից տանջուած հարար պրտւմ է իւր մի-  
նակը, իւր քաղցրը, մենք գտանք, որ կրող ունի սր-  
տառուչ ուն, որ նա գրտածմիջի կերպով սրտաշարտւմ  
է խոցտուած սրտի միտունը, որ նա բացի և հասար-  
չանքների մի ծով է: Բնորեմ առայէր, կթէ ևս չը  
բուականանանտ գորան միայն քան առակեղծական  
կամ իտր ժաղովրդական կերպ գտնելով, այլ գր-  
բան շինեմ հետադրտութեան առարկայ և սկսեմ հե-  
տադրբուել ընտանեկան շարտերութիւնների խընդ-  
րով—միթէ աւելի մեծ գործ չեմ շինիլ կատարած,  
քան միայն հնադրտական խո գարկութիւններ անկրով:  
Պաւ Բարսեղեանի այն որինակները, որնայից կրեւմ  
էր, որ մեր քրիտոնէական ժողովրդի հասարտո-  
թեան ձէջ խտնում ևն համտտումութեան և  
իրտաշարտութեան գտանանքի ազգեցութիւններ,  
միթէ նորա պէտք է ծառայեն միայն այն բանին,  
որ մենք համարենք նորա հետադրբուական և միթէ  
նորա չեն կարող ինդիր շարտեանել ժողովրդի աշ-  
խարհայեացքը մարբելու և նոխայնելու: Բնչպէս կար-  
ելի է ժողովրդի առօրեայ կեանքի պահանջները  
մտանայ շանուն աւերակների, պատմական շիշտակ-  
ների: Աորա էլ հարկաւոր է, որ սեղ բանն ժ-  
ղովրդի գարգացումի գործում, բայց ոչ թէ պէտք է  
տրա կրանեն մեր բոլոր աշտարտութիւնը:

Եւ խօսելու միջոցին մի երիտասարդ, որ մինչև այդ ժամանակը լուռ էր, սկսեց անհամբեր շարժումներ անել և չայտնեց, որ նա պատրաստ է ինձ պատասխանելու: Երիտասարդի ազգանունն է Պերձակեան, նա աւարտել է գիմնազիօնը և չետոյ նուիրել է իրան ուսուցչութեան և լրագրում աշխատակցութեան:

— Այդ ձեր ասածները, պարոն Պատրիկեան, ճիշդ են. բայց ամեն ինքն ըստ ինքեան ճիշդ բան դեռ չէ վճռում այնպիսի մեծ խնդիր, ուր կան համեմատական և չարաբերական մանրամասնութիւններ: Ժողովրդի պահանջները բազմաթիւ են, բայց կան պահանջներ, որոնց մասին հողում են ինքը ժողովուրդը, շրջապատող հանգամանքները, իսկ կան և այնպիսիները, որոնց մասին պէտք է ուրիշը հողաց, որպէս զի նոքա բոլորովին չը խեղդուեն: Ժողովրդի առօրեայ հոգսերը, տնտեսական ախուժախերը, տանուտէրի կամ զգիրի պակասութիւնը, սկեսրոջ և հարսի անհաշտ չարաբերութիւնները կը փարատուեն ժամանակով. բայց այդ ժողովուրդը չէ կարող ինքն ըստ ինքեան, իբրև բնատրոշ ազգադրական մարմին, կատարել իւր դերը այս աշխարհում, եթէ նա չը չիշի այն տարրերը, որոնցով նա որոշուած է այժմ և տարբերուած է ուրիշներին: Սա տեսակէտ է, որի վերայ պէտք է ուշադրութիւն դարձնել:

— Այո, տեսակէտ է, համաձայնուեցի ես, բայց դարձեալ ասում եմ՝ ձեակերպուած ընդհանուր կեր-

պովի Վերածեցէք այդ տեսակէտը գործնական առաջարկութեան: Ինչպէս կը ցանկանայիք դուք ազդել այժմ ժողովրդի վերայ, ինչ ձևով կ'աշխատէիք նպաստել նորա առաջադիմութեան:

—Նա երկար խնդիր է, պատասխանեց Գերձակեանը, բայց զորօրինակ՝ կարելի է ժողովրդին շորհորել, որ նա չարդի իւր անցեալը, գիտենայ իւր պատմութիւնը:

—Շատ ցանկալի է, որ նա գիտենայ իւր պատմութիւնը, ես էլ համաձայն եմ, բայց այդ գիտենալով ինչո՞ւ պէտք է փակուի մեզ համար ճանապարհը բաւարարութիւն տալու ժողովրդի և միւս պահանջներին՝ ամենեին չեմ հասկանում: — Ես ձեզ ցանկանում եմ մի խոստովանք անել, երբ ես լսում էի պարոն Բարաթեանի ընթերցումը և միւսների խօսակցութիւնը—ինձ զգում էի հետաքրքրուած, որովհետեւ առարկան մօտ էր իմ սրտին, վերաբերում էր մեր ժողովրդին, բայց ես զարմանում էի այն օլիմպական սառնասրտութեան վերայ, որով դուք մոռանում էիք ժողովուրդը և միայն հրճուում էիք նիւթի հետաքրքրութիւնից,—սակայն ես կարծում էի, որ ինքներդ եթէ չէք ասում, գոնէ զգում էք մեր մեծ պարտականութիւնը դէպի ժողովուրդը, չետոյ միայն ես բոլորովին սթափուեցի, երբ լսեցի այն հեզնական խօսքերը, որ վերաբերում էին մեր զրականութիւնը և երիտասարդութիւնը հետաքրքրող ընդհանուր խնդիրներին:

—Շատ բան են արել երիտասարդները, միջ-  
մանց Ակնատեանը:

—Հէնց այդ է ցաւը, որ շատ քիչ իսկ զուգ-  
արդէն գտնոււմ էիք շախմատացիք: Աս կարող եմ ձեր  
բացատրիկ տեսակէտից ասել, որ այսօրուայ կարգա-  
ցածի իմաստին համակրողներ շատ են եղած մեր  
գրագէտների շրջանում. իսկ եթէ իսկական նիւթ  
ժողովողներ և հետազոտողներ չեն եղած. դա մեր  
գործողների ընդհանուր թուլութեան, անպատրաս-  
տականութեան և զուցէ՛ ծուլութեան արդասիրն է:

Բովիշիլը, որ ուշադիր լուծւմ էր մեր խօսակցու-  
թիւնը, նորից միջամտեց:

—Աս իմ ոչ կարճ կեանքի ընթացքում, ասաց  
նա, նկատել եմ, պարտններ, որ փաստիառաջ բոլորը  
խոնարհոււմ են և ես չարդոււմ եմ փաստը: Եւ բարան-  
չիւր մարդ պէտք է իւր ցանկացածը, ճրագրածը  
աշխատի իրազործել, փաստերի վերածել: Նորա-  
արածի առաջ միշտ մարդիկ կը խոնարհուեն և  
նորանից շնորհակալ կը լինեն: Այսօր Բարաթեանը ժո-  
ղովել է մեզ հազորդած նիւթը, նա հատարել է  
գործ, որի համար մենք միայն կարող ենք շնորհակալ  
լինել: Եզուց ինձ նմանը ներկայացնէր ժողովրդի  
կեցութեան և առողջապահութեան նկարագիր, մի  
ուրիշը հրատարակէր տնտեսական լուրջ հետազոտու-  
թեան մի դիրք, երրորդը մի զխզում, մի զաւառում  
մտցնէր մի օրտաւէտ արհեստ—զուգ բոլորը կը շայտ-  
նէիք ձեր հիացումը և բաւականութիւնը: Զր պէտք

է նեղ նայել հասարակական գործի վերայ, բայց մի  
բան կայ, որ շատերի համար մնում է անհասկանալի,  
որ մարդիկ սահասարակ սահմանափակ ինտերեսներ  
են ունենում, մէկը սիրում է զեզարուեստ, միւսը  
գիտնական գրուածներ, երրորդը—զանազան ընկե-  
րութիւնների մէջ գործունէութիւն և այլն: Աթէ  
դիցուք, ևս մի առանձին սէր ևմ զգում զէպի ազ-  
գազրական նիւթը, նորանով ոգևորում ևմ և նորա  
մասին չաճախ և չափազանցրած ձևով խօսում ևմ—  
դա մեղք չէ, չանցանք չէ և զուցէ օգտաւետ էլ է:  
Կը գանուի մի ուրիշն էլ, որ միւս առարկաների մա-  
սին կը քարոզի մեծ ոգևորութեամբ և կը ժողովի  
իւր շուրջը հետեւողներ: Թէ հասարակական և թէ  
գիտնական խնդիրներում կարևոր է ոգևորութիւն,  
անձնուիրութիւն և, եթէ կամենում էք, բանաստեղ-  
ծական վերաբերում զէպի գործը: Այդպէս միայն՝  
չառաջադիմութիւնը կը ստանայ մարդկայիւն,  
պատմական-հոգեբանական նշանակութիւն: Մի ազգ,  
մի ժողովուրդ՝ պէտք է ոչ թէ անտարբեր անցնի իւր  
զարգացումի պատմութիւնը, այլ նորանով ազրի,  
չարժուի, նորան զգայ իւր բոլոր երակներով:—Մեր  
երիտասարդներին ևս միայն մի ասելիք ունեմ— սիրեն  
գիտակցարար հասարակական գործը, լինեն իրազոր-  
ժողներ իրանց գազափարների և ծրագիրների և եր-  
բէք չը կեղծեն ոչ ուրիշների և ոչ իրանց խղճի  
անաջ: Մեր երիտասարդներից շատերը ըստ երևութին  
անկեղծ են, բայց երբ լաւ խոստովանեցնում էք,

տեսնում էք, որ նորա ստրուկ են մի յայտնի խմբի կարծիքի, որ նորա վախենում են ոչ իրանց խղճից, այլ ընկերների կարծիքից կամ ընդունուած հայեացքից:

Փալբացեանը ուրախացաւ, որ նորա համար դէպք բացուեց խօսելու:

— Գիտեմ, գիտեմ, ինչ բաների վերայ էք ակնարկում, շատ բաներ կարող եմ պատմել:

— Այ, ո՛չ, խնդրեմ, կանգնացրեց բժիշկը, ես ամենեին չեմ մտածում այստեղ առանձին դէպքերի մասին, այլ շեշտում եմ փոքրոգութեան, քաջութեան պակասութեան մի գիծ, որ վտանգաւոր է իւր հեռեանքներով: Այս կամ այն դէպքը նշանակութիւն չունի, այստեղ նշանաւոր է երևոյթը, որը կարող է միշտ դէպք գտնել արտաբնականութեամբ:

Բժիշկի ասածները տպաւորութիւն գործեցին և մի բոպէ խօսակցութիւնը դադարեց: Ակնատեանը յանկարծ խօսք բաց արեց Ազնաւուրեանի թարգմանութեան մասին:

— Կարծեմ վերջացնում էք, պարոն Ազնաւուրեան, ձեր թարգմանութիւնը:

— Յոյս ունեմ մինչև մի ամիս, պատասխանեց անուշաղիւր կերպով Ազնաւուրեանը:

Խօսք բացուեց դասական գրուածքների թարգմանութեան մասին: Բարաթեանը նոցա չարգսղներիցը չէր: Նորան պաշտպան հանդիսացաւ Փալբացեանը, որ սկսեց անպատկառ օրինակներ բերել դասական գրողների գրուածքներից: Բարաթեանը գտնում էր,

որ մեր ժողովրդի համար նորա նպատակադարձար չեն  
Խօսակցութիւններին վերջ դրեց ընթրիքը, որ  
անցաւ ամենաուրախ կերպով: Փալրացեանի հմուտ  
կառավարչութիւնը կենդանացրեց բոլորին: Նա կե-  
նացների մէջ կրկնեց ծաղրալի կերպով այդ երեկոյի  
խօսակցութիւնները: Աս մասնակից էի խմելուն, ծի-  
ծաղելուն և ուրախանալուն. սակայն չը կարողացայ  
խնջոյքին անձնատուր լինել բոլոր սրտից և ինչ որ  
մի բան ինձ ճնշում էր:

Իմ աշտոնից հեռանալու ժամանակը մօտե-  
նում է: Այսօր եկաւ գործարանատէրը, որի մօտ պէտք  
է գործեմ: Գուցէ մի փոքրիկ ձանապարհորդութիւն  
անեմ և չետոյ նուիրուեմ նոր գործիս:

Քեզ սիրող եղբայրդ Ա. Պ.



# XI

## ԱՐԱՆԵԱՆԻ ՄՕՏ

Արեւիկէ քոյր

Գրում եմ այս նամակը գաւառական քաղաքում, Արանեանի տանը: Գու գիտես որ Արանեանը անտառապետ է այստեղ: Եկաչ դիտմամբ նորան այցելելու և որչափ ևս ինձ բաղդաւոր եմ համարում նորան գտաչ առաջուանից աւելի զուարթ և ուրախ եւ այդ է իմ բաղդաւորութեան գլխաւոր պատճառը: Ինձ ձանձրացրեց մեր միւս ծանօթներէ տխուր և յոգնած տրամադրութիւնը: Արանեանը այս բոլորին հարկաւոր զործով դուրս է եկել տանից մի քանի ժամով, և ես չարմար միջոց եմ համարում քեզ նամակ գրելու: Պատմեմ քեզ իմ այստեղ գալը և նորահետ տեսնուելը:

Արեւիկէ կէսօրից չեա ժամը երեքին հասաչ այս քաղաքը: Աստափօրը գիտէր մեր անտառապետի տունը և բշեց ուղիղ նորահ մօտ: Աստքը կանգնեց դրան առաջին. ես վաչր ցտտկեցի կասքից — մօտեցաչ կիտափակ դրանը և սկսեցի զգուշութիւնով բանալ. բայց ոչ ով չ'երեաց աչքիս: Հարցրի կառապանիցս. արդեօք չի սխալուել նա՝ բերելով ինձ ուրիշի տունը:

ես զարմացայ, որ անտառապետի տանը չէր երևում  
ոչ մի ծառայ, չէր լուում ոչ մի ձայն և աղմուկ:  
Մէկ էլ տեսայ մի սենեակից դուրս եկաւ մի 17—18  
տարեկան աղջիկ՝ զարմանալի անմեղ և խելօք երե-  
տով և արագ քայլերով մօտիկացաւ ինձ:

— Մում էք կամենում, հարցրեց նա հետաքրք-  
րութիւնով:

— Այստեղ է կենում անտառապետ Արանեանը:

— Այո, բայց տանը չէ. այսօր երեկոյեան պէտք է  
որ յետ դառնայ:

— Մի՞թէ նա քաղաքումը չէ, հարցրի ես ան-  
հանգիստ ձայնով:

— Ո՛չ, գնացել է որսի իւր մի ծանօթի և ծա-  
ռաների հետ:

— Բայց ես պէտք է նորան անպատճառ տես-  
նեմ: Խնդրեմ ցոյց տաք ինձ նորա սենեակը, ես նո-  
րան կը սպասեմ:

— Նորա սենեակը փակուած է. բայց . . . այս  
բոպէին:

Աղջիկը չը վերջացրած իւր խօսքը, վազեց սե-  
նեակ և խակոյն յետ դարձաւ, խնդրելով իւր հօր բե-  
րանից, որ իջնեմ նոցա մօտ—մինչև անտառապետի  
դալը: Աս սկսել էի տխրել փոքր ինչ անյաջող սկզբի  
վերայ, բայց յետոյ հետաքրքրուեցի ինձ հիւրասիրող-  
ներով, որոնց հետ կտրող էի ծանօթանալ և որոնցից  
կարող էի ժողովել մի քանի տեղեկութիւններ Արա-  
նեանի մասին մինչ նորա հետ տեսնուելը: Անորհա-

կառութիւնս չաշունեցի աղջկան և հրամայեցի կառու-  
պանին տեղափոխել սպառասկս կառքից սենեակ,

Աղջիկը առաջնորդեց ինձ մինչև սենեակ, հա-  
մեցէք արաւ նստելու մի ամուր և բաւականին զե-  
ղեցիկ աթոռի վերայ և անհետացաւ ինքը: Աս էլ  
առանց երկայն մտածելու՝ նստեցի ինձ ցոյց առած  
աթոռի վերայ և սկսեցի անորոշ կերպով մտածել:  
Սենեակը, որի մէջ ես նստած էի, մի զարմանալի  
աղաւորութիւն էր անու՛մ վերաս: Ինձ այնպէս էր  
թւում, որ ես զոնեւում եմ մի թանգարանում:  
Սենեակը լիքն էր զանազան իրեղէններով և՛ նոր, և՛  
հին տեսակի: Պճուրը և սրտերի մի մասը բռնուած  
էին ծառերի և թռչունների նուրբ նկարներով՝ արե-  
ւելեան ճաշակի: Ինձ շատ զբաւեց մի ծառ, որի  
ճիւղերի վերայ նստած էր մի անչաչա թռչուն իւր  
փոքրիկ ձաղխկներով: Պատերից մէկի վերայ բեկում  
էր մի մեծ ժամացոյց երկայն ձօճանակով, որ զան-  
գաղ շարժում էր բարձր ձայն հանելով: Համեմա-  
տեցի ժամացոյցս նորա հետ և տեսայ, որ մտաւ-  
ւորապէս ճիշդ են:

Նուրբ բացուեց և մտաւ մի առուց ծերունի՝  
կիսաբրդահան հաղուստով, որ մի թեթև գլուխ խո-  
նարհեցնելով՝ ողջունեց ինձ.

— Բարև էք եկել. մեր սիրելի հիւրն էք:

Աղջունեցի. ներողութիւն խնդրեցի, որ ստի-  
պուած եմ իջնել նոցա սենեակում. չաշունեցի, որ  
Արանեանի շատ մօտիկ ծանօթն եմ:

— Եւստ ուրախ ե՛նք, ձեր տունը համարեցէք,  
բոլորովին հանդիսաւ եղէք:

Զբ դիտէի ի՞նչ բանից սկսել խօսակցութիւն:

— Քնդրեմ ասացէք. այս ձեր տունն է, այժմ:

— Այն, իմ սեպհականութիւնն է:

— Բայց դուք կարծեմ բնիկ այստեղացի չէք,  
ասացի ես՝ տեսնելով նորա օտարտի հագուստը և  
ձեերը:

— Աս դադիթական եմ՝ Աւաստուօլի կուսի ժա-  
մանակից եկած: Ըանապարհին հիւանդացան կինս  
ու երկու երեխոսս և մեռան: Աս քնացի այրի: Աւ-  
երկայն ժամանակ ես սուղ էի պահում, մտադիր չէի  
ամենեին պատկուել: Բայց չետոյ, երբ դործերս բա-  
ւացան և ես փոքր ինչ հանգստացայ, սկսեցի մտա-  
ծել ընտանիքի մասին և նորից պատկուեցի: Պինս  
հինգ տարուց չետոյ մեռաւ՝ թողնելով ինձ համար  
միակ մխիթարութիւն Աննայիս, որ այդ ժամանակ  
չորս տարեկան աղջիկ էր և այժմ իմ ընկերն է ու  
օգնականը: Աստուած ինձ տուաւ և մի լաւ տնկեց՝  
մեր անտառապետին, որ ինձ համար սրղուց էլ թանդ  
է: Ահա երկու տարի է ինչ մեր տանն է: Աս ինչ  
ազնուասիրտ մարդ է: Աթէ մի քանի այսպիսի աղերք  
լինէին մեզանում — էլ ինչ հոգս:

Վերջին խօսքերը ասելով՝ նա մէկ նայեց վերաս  
և չետոյ՝ դուրսը շարժելով՝ մտածմունքների մէջ  
ընկաւ: Աննայի և Արանեանի մասին անմիջապէս կից  
պատմութիւնը ծագեցրեց իմ մէջ մի հասկանալի

ենթադրութիւն, որ սակայն չը գիտեմ ինչու ինձ շատ չը զարմացրեց այն բողոքին: Ննձ ընդունելու եղանակը, ծերունու մտերիմ նայուածքը, իմ անտարբար տպագորութիւնները — աննկատելի կերպով ընտելացրին ինձ լսելու Արանեանի և ծերունու մէջ սերտ չարաբերութիւններ: Աս իմ կողմից՝ իբրև լրումն նորա խօսքերի՝ աւելացրի թէ.

— Արանեանը մեր ընկերութեան մէջ շատ սիրուած էր:

— Այն մարդ է. բայց մենակ է: Վախենում եմ սկսի տխրել և կեանքում բազդաւոր չը լինի:

— Ննձ, նա տխուր մարդ չէր մեր ընկերութեան մէջ:

— Այժմ էլ տխուր չէ, մինչև անգամ շատ ուրախ է և զուարթ. բայց հոգս շատ է անում: Թամանակով հոգսը կը սկսի նորան ուտել: Չահիլ օրերումս ևս ամեն բան հեշտ էի տանում. իսկ այժմ շուտ եմ չոզնում և թուլանում:

Ազջիկը մտաւ՝ ձեռքին բռնած մատուցարան երկու բաժակ թէյով, որ և առաջարկեց ինձ և իւր հօրը: Ազջիկը ինքն էլ նստեց փոքր ինչ հեռու՝ մի փոքրիկ պահարանի մօտ:

— Նստ ժամանակ է, որ չէք տեսել անտառապետին, հարցրեց ծերունին:

— Մտ շորս տարի է: Այն օրից, երբ մենք ուսումներս աւարտեցինք, այլ ևս չէ չաջողուել միմեանց տեսնելու: Նամակագրութիւն ունեցած ենք:

— Իսկ դուք ինչով էք պարտաւում:

— Ես արհեստագէտ եմ, տեխնիկ. շուտով զնա-  
ւե եմ Բագու, որտեղ ինձ հրաւիրել են:

— Իսկ մինչև այժմ:

— Զանազան գործարաններում էի պարտաւում.  
Վերջին կէս տարին էլ անցկացրի արտասահմանում:

— Խնդրեմ ասէք, ինչպէս է ձեր ազգանունը,  
հարցրեց շտապով աղջիկը՝ դէպի իմ կողմը ձգելով  
զուխը:

— Պատրիկեան:

— Պատրիկեան Սամսոն. այո:

— Այո, օրիորդ:

— Զեզ յաճախ չիշում է Արանեանը: Եւ ցոյց է  
տուել մեզ ձեր նամակները: Ի՞նչ երկայն նամակներ  
էք դուք գրում:

— Միթէ ձանձրացնող են,

— Ո՛չ, շատ հետաքրքրական են. բայց ես առա-  
ջին անգամն էի տեսնում այդ տեսակ նամակագրու-  
թիւն:

Մերունին տեղիցը վար կացաւ, նորից ձեռքս  
տեղմեց ինչան մտերմութեան:

— Աննա, դու էլ բարեխր մեր սիրելի հիւրին:  
Դուք նորան կարծեմ ձեր զալու մասին ոչինչ չէք  
գրած:

— Ո՛չ. ես ինքս էլ չը գիտէի թէ այսօր այստեղ  
կը լինեմ, իմ զալը չանկարծ եղաւ:

Աննան տարաւ բաժակները նորից թէչ բերելու:

Յերունին հաղորդեց մի քանի տեղեկութիւններ իւր կեանքից, պատմեց, որ տունը բոլոր կահկարասիքով գնել է, մի հալ մեծատունից, որ աժան կերպով զիջել էր տունը ծերունուն այն պայմանով, որ միջի զարդարանքները պահպանուեն ըստ վաղեմի սովորութեան և որ մեծատունը՝ այդ քաղաքը եկած ժամանակ՝ իրաւունք ունենայ իջնել այդ տանը: Յոյց տուաւ մի ձեռագիր, որի կազմի վերայ շարուած էին ակննդէններ զեղեցիկ խաչի եզերքով:

Քէլից վտոյ բերին մի փոքրիկ նախանշիկ՝ հասկացնելով քաղաքավարի, որ երեկոյեան պէտք է լինի կարգին կերուխում, երբ Արանեանը վերադառնայ:

Յետոյ ինձ թողին հանգիստ — այդպիսով կարողութիւն տալով ինձ՝ փոքր ինչ ազատ շարժումներ անելու, իմ կճկուած մարմինը դրստելու: Աննակը այնքան հետաքրքրական էր, որ ես ամեն անկիւնում կանգ էի առնում և նայում այս ու այն առարկային կամ նկարին:

Իմ բաղդից Արանեանը աւելի շուտ վերադարձաւ, քան սպասում էին տանտէրերը: Նորա գալը շատ աղմկալի էր: Յանկարծ մեծ զոնները բաց արին և ձիերով մտան բակը: Ես նայեցի պատուհանին և սկսեցի տնողել մեր սիրելի Արանեանի երեսը: Պաշտօնական գլխարկի տակ նորա զեղեցիկ մեծ աչքերը շէին երևում. բայց չանկարծ երեսը շուտ տուաւ գէպի պատուհանս և ես ծանաչեցի առաջուայ մեր

Արանեանին... միայն միրուքը, մտածեցի ես խելոյն,  
գուր տեղն է այնքան երկարացրել կամ երկոյն պա-  
հուս: Արանեանը ձիուց վայր իջաւ:

Ծերունին և աղջիկը դուրս թռան և ինչ որ  
ուզում էին ասել Արանեանին. բայց նա չէր լսում  
նոցա ձայնը և միայն ուրախ ժպտում էր՝ հետուից  
ողջունելով նոցա: Ես չը կարողացայ համբերել և  
դուրս թռայ:

— Արանեան, բարե Արանեան, բղաւցի ես:

— Այս ուսին եմ տեսնում. Պատրիկեան, դու ես.  
աչքիս չեմ հաստում:

Մենք վաղեցիներ միմեանց և ջերմաջերմ համ-  
բուրուեցինք:

— Պատրիկեան, սիրելի, ինչ խելօք բան ես  
սրել: Դէ գնանք, գնանք, բարեկամ, սենեակս. էյ,  
Սիմօն, շուտով ձիերը կապիր և ինձ մօտ եկ: Պատ-  
րիկեան, ինչքան խօսելու բաներ ունեմ քեզ հետ:

Արանեանը ողջունեց ծերունուն և նորա աղջ-  
կան, չետոյ վաղեց, իւր սենեակի դուռը բացեց:  
Ստանք ներս:

— Դէ մէկ էլ մի լաւ համբուրուենք, չետոյ խոր-  
հնք ուրիշ բաների մասին: Այ այսպէս: Եղբայր,  
երեք սենեակ ունեմ, բոլորն էլ քոնն են. ազատ կա-  
րող ես օգտուել: Սպասիր. շատ ժամանակ է  
կեկ ես:

— Մի երեք ժամ կոյ:

— Աւ, մի բան տուին ուտելու, խմելու:

— Այո՛, ինչպէս չէ. թէ՛ էլ խմեցի, նախաձու-  
շիկ էլ արի՛:

— Մենք այս երեկոյ մի լաւ քէ՛լի կ'անենք: Ինձ  
մօտ երկու հիւր են գալու. մէկը իմ որսակիցն է,  
միւսը— Այստեղի բժիշկը, որի մասին մի անգամ գրել  
էի քեզ իմ նամակումը:

Արանեանը դուրս եկաւ, ծառային կանչեց,  
պատուէրներ տուաւ և դարձաւ դէպի ինձ:

— Սեզանի վերայ վեց հոգի կը լինենք: Վացի  
քեզնից ու ինձնից և չիշած երկու հիւրերից՝ մեզ  
հետ կը լինեն և տանտէրս իւր աղջկանով, որոնց  
հետ յոյս ունեմ արդէն ծանօթացել ես:

— Այո՛, ծանօթացայ... քեզ շատ սիրում են:

— Այո, մենք բարեկամ ենք և եթէ ուզում ես  
ուելի լաւը իմանալ, Աննան— հարսնացուս է:

— Ինչ ես ասում. միթէ:

— Այս վճռուած է և ոչ միայն մեր մէջն է  
վճռուած, այլ և հասարակութիւնը գիտէ. նշանը  
դրուած է: Ես քեզ բոլորը կը պատմեմ և լաւ բաներ  
կը պատմեմ: Ի՞նչ առաջ դու մէկ հաղորդիր քո վեր-  
ջին ամիսների կեանքից. գիտես որ անդեկութիւններ  
չ'ունեմ: Ի՞նչ հիւրերս շուտ չեն գալ. ժամանակ  
ուեննք:

Ես պատմեցի մանրամասն ամեն բան իմ կեան-  
քից, չետոյ կարճ կերպով շարեցի նորա առաջ խոր-  
հրդածութիւններս, նախադիճներս և իմ գործնական  
կեանքից դուրս բերած նկատողութիւններս: Արա-

նեանը լսում էր ինձ՝ կարգի բերելով սենեակը, դրս-  
տելով շորերը, իսկ երբեմն կանոց առնելով և իւր խո-  
չոր աչքերը վերաս շոկով: Յանկարծ նա խօսքս  
կտրեց:

— Ապասիր, Պատրիկեան. ճիշդն ասն ինձ—սիրոյ  
հետ էլ ծանօթացել ես թէ ո՛չ:

— Գե՞տ ո՛չ:

— Այդպէս էլ կարծում էի:

— Ինչո՞ւ:

— Արովհետե կեանքդ բոլորը անդ ես կացրել  
կամ գործարանում կա՛մ փակուած սենեակում. — աւե-  
լի կարգադրել ես, հրամայել ես, քան իբրև մի միջին  
մարդ ընդունել կեանքը իւր լաւ և վատ կողմերով:

— Միթէ իմ դրութեան մէջ ուրիշները չեն  
սիրահարուում:

— Ինչու չէ. բայց չեմ կարծում թէ նոքա  
զգան սիրոյ բոլոր ոյժը իւր բնական մեծութիւնով  
և առողջ հրապոյրով: Աս հաւատում եմ, որ դու էլ  
մտածել ես սիրոյ մասին. բայց մտածել ես միայն:

— Արանեան, ժպտացի ես, իսկ դու, ինչպէս  
երևում է, արդէն լաւ ծանօթ ես այդ զգացմունքի  
հետ:

— Այո՛. և գիտեա ինչը ինձ սովրեցրեց սէրը գնա-  
հատել և ծանաչել. — անտառը, Գու չեա հաւատում.  
բայց ճիշդ եմ ասում, այո՛, անտառը, լեռները, ջրի  
խոխոջիւնը: Մհ, չը գիտեա ինչպիսի մեծ խորհուրդ  
կայ նոցա մէջ: Ահա՛ այդ անտառներից դառնում էի

ևս և իմ տանը զանում էի մի բնութեան զաւակ՝  
տանտիրոջս աղջիկը — Աննային: Պաշտոն հետաքրք-  
րական աղջիկ է քո գիտողութեան համար. հետը մէկ  
խօսիր, տես թէ որչափ ներգաշնակ և անարատ բնա-  
ւորութիւն է: Այդպիսի բնաւորութիւնները, կար-  
ծում եմ, միշտ թարմ են և առողջ հոգւով:

— Նա շատ էլ նման չէ մեր զաւառական աղջիկնե-  
րին. ասում խօսում է ազատ և աւելի հասարակ է պա-  
հում իրան, քան կարելի էր սպասել. աւելի հասա-  
րակ, քան կարելի է հետեւցնել քո խօսքերից:

— Այդտեղ իմ մեղն էլ կալ մասամբ: Այդ ցեօտը  
Պուշարունակիւր պատմութիւնդ. ևս ուշադրութիւ-  
նով լսում եմ:

Նս լրացրի իմ պատմութիւնը: Արանեանը հա-  
մաձայնեց իմ հայեացքների հետ և հաւանեց իմ  
առաջիկայ մտադրութիւնները. բայց նա չէ մարտում  
իմ այն կարծիքը, թէ կարելի է դրամագլխով և ցան-  
կութիւնով ընկերական մի ձեռնարկութիւն չաջող-  
ցնել. նա խիստ է, նա երկարացնում է գործը, պա-  
հանջելով, որ մարդիկ հաւատալին նոր գործին այն-  
պէս, ինչպէս նոքա ընդունում են, որ ցերեկը լոյս է,  
իսկ գիշերը խաւար, և աշխատէին անձնուէր: Արա-  
նեանը արդէն չափազանցութեան է հասցնում իւր  
գործնական լինելը՝ կարծելով թէ դրամով սկսածը  
իսկայն կը քայքայուի, եթէ մարդիկ կատարելապէս  
համերաշխ չեն:

— Նս ընդունում եմ, ձեռակերպեց նա իւր միտքը

այսպէս. կամ սպասել մինչև մարդիկ իրանք-իրանք կրթուեն, իմաստանան և հասկանան իրանց անելիքը, կամ զործելու փորձ անել—զոհելով անձը և բացառապէս իւր վերայ առնելով զործի բոլոր պատասխանատուութիւնը, առանց ուրիշներին հրաւիրելու որ և է մասնակցութեան:

Ես դարձեալ վիճեցի—հասկացնելով, որ Արանեանը չէ հասկանում իմ առաջարկած նախագիծների կենսականութիւնը... Մեր խօսակցութեան վերջ տուին հիւրերը:

Պարոններ, առաջ զնաց ասելով Արանեանը, այսօր մի որս ինքն իրան է ընկել իմ ձեռքը, իւր կամքով իմ տունը եկել. — խնդրեմ ծանօթանաք իմ սրտակից ընկեր Պատրիկեանի հետ. իսկ սոքա էլ իմ սրտեղի լաւ բարեկամներն են. Սերոբեանը— իմ սրտակիցը և Նազութեան — այստեղի բժիշկը: Ձեզ միմեանց հետ աւելի ծանօթացնելու համար՝ թող տուէք աւելացնեմ մի քանի խօսք էլ. Պատրիկեանը բնիկ կովկասեցի է, արհեստագէտ է, նոր է չետ դառնում պանդխտութիւնից և մտադիր է մեր Աովկասում կազմակերպել կամաց-կամաց արհեստագործների խմբեր, համայնքներ. Սերոբեանը— հրեշտակապետների ազգիցն է, ինքը նօտար, մեր ուսումնարանի հոգաբարձուն և կարաւ ու ազուէս սոյանող. իսկ բժիշկ Նազութեանը արդէն չայանի է քեզ, Պատրիկեան, իմ նամակից, նա սառնասրտութեան հազուադիւրս սիպար է:

— Ինչպէս թէ անտարբերութեան, մէջ մտա-  
ծիծաղելով բժիշկը. այդ դուք ինձ անպատուում էք,  
սիրելիս:

— Այսինքն անդրդուելիութեան, չափազանց ւր-  
ջութեան, ուղղեց Արանեանը:

— Այդ ուրիշ խնդիր է, թէև ինչպէս տեսնու-  
եմ, բարեկամ, ինձ դեռ լաւ չէք ուսումնասիրել:

— Դէ լաւ, թողնենք այդ բոլորը. պարոններ,  
նստեցէք և խօսենք:

— Անտառապետ, ասաց բժիշկը, այսօր, ինչպէս  
երևում է, չաջող որս էք ունեցել. շնորհաւորում  
եմ. Աերօրեանը պատմեց ինձ մանրամասնութիւնները:

— Բայց ես, ասաց Աերօրեանը, անբաւական եմ  
խկապէս մեր այս անգամուայ արշաւանքից, որով-  
հետև երեք մեծ երամ բաց թողի. հէնց որ միտքս  
է գալիս— գժուում եմ:

— Այդ քո մշտական խօսքն է, պատասխանեց  
Արանեանը: Զէ, եղբայր, լաւ որս արինք, շուտով  
վերջացրինք, շուտով էլ դարձանք և իմ թանկագին  
հիւրիս չը ստիպեցի երկայն սպասելու: Աերօրեան,  
փոքր ինչ առաջ ես մի կողմնակի աւիթով դրու-  
տեցի որսորդութեան ազդեցութիւնը. մէկ պատմի՛ր  
սորան մեր անտառների և լեռների հրապոյրների մա-  
սին: Պատրիկեանն, պէտք է անպատճառ որսորդ դա-  
նաս, եթէ չէ կեանքի մեծ վայելքներից և գաղտ-  
նիքներից զրկուած կը մնաս: Արսորդութիւնով ես  
առողջացայ: Տօ չիշում էք, պարոններ, ինչպէս դի-

բարգրիւ և ջղալին մարդ էի այստեղ եկած առաջին  
առիւնները — ինչքան ինձ վնասել էր մեծ քաղաքի  
կեանքը. — այժմ այս երկու տարուայ մէջ ես դարձայ  
բնութեան որդիս Աերօրեանը իմ որսորդութեան ու-  
սուցիչն էր. բայց պարօնը չէր էլ կասկածում թէ  
աշակերտը ուսուցչից կը գերազանցի:

— Դիցնօք. այդ դեռ խնդիր է:

— Այ մի խնդիր չէ, այլ իրողութիւն է. բայց  
գիտես, Պատրիկեան, երբ ես զգացի որսորդութեան  
գլխաւոր ձգողականութիւնը — երբ առաջին անգամ  
սպանեցի մի վարազ: Մինչև այդ ժամանակը որսոր-  
դութիւնը մի չաւելուած էր իմ անտառային պաշ-  
տօնական գրօսանքներին, բայց երբ հրացանի հա-  
րուածով վայր գծեցի վարազին — ես ամբողջ շարաթ  
դադար չ'ունէի — իմ ուրախութեան շափ չը կար.  
բայց պէտք է այն էլ ասեմ, որ այդ վարազի սպա-  
նելը մի պատահմունք էր. այստեղ վարազը հազուա-  
գիւտ է և շատ քիչերին է յաջողուել նորան որսալը:

Այս բոլոր խօսակցութեան ժամանակ ոտքի վե-  
րայ էինք, թէև Արանեանը նշան էր անում նստե-  
լու: Աերջապէս նստեցինք և սկսեցինք խօսել զանա-  
զան նիւթերի մասին: Բժիշկը պատմեց շատ օխուր  
գէպքեր քաղաքի մարդիկներին կեանքից, նկարագրեց  
տեղացիների բարքերից մի քանի բարոյական գծեր,  
որոնցով ւանհամանումս է և փչանում իւրաքանչիւր  
հասարակական խնդիր: Աերօրեանը պատմեց ուսումնա-  
բանի մասին. զանգատուեց աւագ ուսուցչի վերայ. բայց

առհասարակ ինձ երևաց միջակ մտածողութեան մարդ, դաւառական ազգասէր, ուրախ ամենայն լազորձին մասնակցելու և օգնելու: Բժիշկը սկսեց քնննադատել հոգաբարձուների զործերը և այնպիսի օխուր երևոյթներ ցոյց տուաւ, որ դժուար էր հաւատալ. բայց բանից դուրս եկաւ, որ բոլորն էլ ճիշդ է: Աերօրեանը զիտէ այդ երևոյթները, ինքն ևս զգուսւմ է նոցանից. բայց և այնպէս զանուսւմ է այդ բոլորը սպասելի, կարծես բնական. նա արդէն չափազանց կեանքի մարդ է:

Նորից թէչ խմեցի իմ նոր ծանօթների հետ միասին և աննկատելի կերպով խօսակցեցի մի քանի ժամ: Ներս եկաւ և ծերունին, որին մեծ չարգանքով ողջունեցին բոլորը: Ծերունին խառնուեց մեր խօսակցութիւններին: Նորա բոլոր ասածներից ևս այն եզրակացրի, որ նա հաւանուսւմ է մեր հասարակութեան մէջ մէկ՝ ամենահին սերունդը, որին ինքը հասակակից է և սորանից էլ աւելի հինը. մէկ էլ՝ ամենանոր սերունդը: Նսկ միջին սերունդը — այն, որ եղել է 50—60 և 70 թուականներուս, համարուսւմ է մոլորեալ ոչխարներ, Վերկու կողմից աւարաց, ինչդէս ասուսւմ էր ինքը: Հնի մէջ զոյուսւմ է աւանդապահութիւնը, նորերի մէջ անկեղծութիւն և անձնուիրութիւնը: Բժիշկը վիճեց այդ խնդրի վերաբերմամբ. վերջին ասաքինութիւնների մասին նա լսեց. բայց աշխատեց համոզել, որ նոր սերունդը փոքր ինչ աւելի խելօք է, աւելի պահանջներ անող կեանքից և

աւելի բարձր հետաքրքրութիւն պատուի Բժիշկը խոստացաւ մի շատ հետաքրքրական անձնաւորութիւն է։  
Նա այնքան գործող է անմիջապէս, որչափ քննադատ է։

Մինչդեռ մենք պարտաւորուած էինք մեր խօսակցութիւնով — միւս սենեակում պատրաստուած էր սեղանը։ Արանեանը մէկ-մէկ դուրս էր վազում կարգադրութիւններ անելու։ Վերջապէս հրաւիրեցին մեզ ընթրիքի։

Սեղանատուն գնալուց փոքր ինչ չեառլ մտաւ և ամառիրոջ աղջիկը՝ Աննան — աւելի զարդարուն հագնուած, քան տեսել էի առաջ։ Չը գիտեմ, Արանեանի խօսակցութիւնն էր ազդել վերաս, թէ բոլոր այդ որուայ անցքերը, — Աննան երևաց աչքիս իբրև մի փայլուն աստղ, մի շքեղ աղջիկ՝ խելօք և հեզ նայուածքով։ Եւ քանի աւելի էի նայում վերան, այնքան աւելի գրաւիչ էր նա դառնում։ Ես զարմանում էի՝ տեսնելով այդ գաւառական աղջկայ մէջ աւելի կրթուած հասարակութեան շատուկ նիստակաց և խօսակցութիւն։

Ամենքը ջերմ ողջունեցին օրիորդին։ Նա ազատ և համարձակ առաջ եկաւ, սեղմեց ամենի ձեռքը և չեառլ զանազան մանր-մունր խօսակցութիւնից չեառլ դառնալով բժշկին կամաց ձայնով հարցրեց.

— Պարոն բժիշկ, ինչպէս վերջացաւ գրագրանի խնդիրը։

— Այնչէս ինչով պէտք է վերջանայ. փող չէ՞ ստույիս գրքերի համար։

— Իսկ ժողովարարութիւնը ի՞նչ եղաւ. ամենքը սպասում են:

— Իե՞տ չի սկսուել:

Ակսեցինք տեղաւորուել սեղանի շուրջը:

— Այդ ի՞նչ գրադարան է, հարցրի ես բժշկից, որ նստեց իմ ձախ կողմից:

— Այստեղ մենք ցանկանանք մի գրադարան-ընթերցարան հիմնել. ամենքս խոստացանք օգնել այդ գործին. մենք պատրաստականութիւն չաչտնեցինք մեր ստացած թերթերը նուիրելու գրադարանին. բայց պէտք կայ և գրքերի, որ կարելի է ձեռք բերել փողով: Մեր քահանան եկեղեցում հրաւէր կարդաց ժողովրդին, որ սա օգնի այդ գործին: Այժմ մեր ազգասիրութեան մենավաճառներից մէկը ցանկանում է անպատճառ ինքը տանել գործը: Մենք էլ նորան դէմ չենք. միայն թէ գործը առաջ տանի իսկապէս: Անա մի ամիս է՝ ինչ այսօր էզուց ասելով է մեզ մտիթարում:

— Մենք ժողովել ենք մօտ տասնչորս բուրլի այդ նպատակով, ասաց Աննան:

— Մի՞թէ. կեցցէք:

— Այո՛, կարելի է չաջողցնենք և մի քանի բուրլի էլ աւելցնելու:

— Այդ օվքեր են ժողովել, հարցրի ես Արանեանից:

— Պատրիկեանը ուզում է իմանալ՝ այդ օվ է ժողովել: — Աննան ունի իւր ընկերութիւնները, որոնք

դասակից են եղած երբեմն զպրօցում և խւր ուրիշ ծանօթները: Իոքա ամենքը կազմում են այս մեր փոքրիկ քաղաքում մի փոքրիկ թաղաւորութիւն: Ամեն բանի մէջ զոքա էլ իրանց վճիռներն են տալիս: Ահա այս բողեկն լսեցիր, որ զոքա արդէն ժողովել են տասն և չորս բարի փող. մի կարծիլ թէ զա փոքր դուժար է. այդ փողը ստացուած է զոնէ մի չիտուն, վաթսուն մարդուց, որովհետեւ այդ շրջանի փող տուողները սովոր չեն 40—50 կողեկից աւելի փող տալ:

Աեղանի վերայ կենացներ և բարեմաղթութիւններ աւուում էին մ. ծ ոգևորութիւնով: Արանեանը, որ անկոչ կառավարիչ էր դարձած, առաջարկեց խմել և քո կենացը. այնպիսի գեղեցիկ գոչներով քեզ նկարագրեց, որ սեղանակիցները մնացին աղչած. նա քեզ անուանեց և խւր ուսուցիչ. նա պատմեց, որ քո շրջանում նա սովորեց սիրել կեանքը և գործել նորա համար իբրև առողջ մարդ. կեցցես, քոյրիկս, քեզ չիշում են ամենքը մ. ծ ուրախութիւնով:

Երբ որ Արանեանը առաջարկեց ծերունու կենացը՝ ցանկացաւ ծերունուն ամեն երջանկութիւն. բայց խնդիրը ընդհանրացնելով աւելացրեց, որ միւս անգամ ցանկալի չէ գաղթականութեան կրկնուելը: Ծերունին պատասխանեց մերձաւորապէս հետեւեալ կերպով.

—Բաւական է, ճշմարիտ է՝ բաւական է: Բայց մինչև այժմ եղած գաղթականութիւնները աւելորդ

չեն եզած: Բացի ուրիշ ապացոյցներէց՝ մէկն էլ ապ  
տեսակ է: Աս մի շորս տարի սորանից առաջ զնացել  
էի սուրբ Կարապետ. այնտեղ համոզուեցի, որ զաղ-  
թականութիւնը ամեն վնասների հետ ունի և իւր  
լաւութիւնները Աս լաւ տեսաչ, որ մենք զաղթա-  
կաններս աւելի ազատ և ազգաշէն մտածմունքներ  
ունենք, քան հաստատ նստածները: Քաղթելուց չե-  
տոյ մեր զլիսում ամեն բան մտածութեան նիւթ  
դարձաւ. և՛ լեզուն, և՛ կրօնը, և՛ մանուկների վի-  
ճակը, և՛ մարդկութիւն ձեռք բերելը և այլն. մինչ-  
դեռ նորա, ինչպէս կզած մնացել են իրանց հողին,  
այնպէս էլ անշարժ մնացել են ամեն բանում: Աս-  
տուած տաչ, որ նորից ոչ ոք չը զաղթի. բայց և  
մաղթենք, որ մեր ազգի երիտասարդները տան ժո-  
ղովրդին աւելի հասկացողութիւն և զարթնեցնեն  
նոցա զլուինները:

Ընթրիքից չետոյ հիւրերը զնացին և մենք պատ-  
րաստու եցինք քնելու: Չը նայելով մեր չոզնածութեան  
և լաւ կերութումին՝ մենք երկաչն խօսում էինք պատ-  
կած տեղներս: Արանեանը պատմեց իւր գործերի մա-  
սին, պատմեց, որ ինչպէս ամբողջ առաջին տարին  
չեա էր սովորեցնում տեղացիներին կաշառք սալուց,  
ինչպէս իրան համարում էին քաղաքում այդ պատ-  
ճառով խելագար, խելակորոյս: Առաջարկում է ինձ  
մնալ մի քանի օր և զնալ հարեան զխղերը, որոնց  
հետ ինքը գործ ունի, տեսնելու թէ ինչ է մեր զխ-  
ղացին և թէ ինչպէս նա կարօտ է ազնիւ գործող-

Ներքի: Նա հաճախում է, որ լինելով ազնիւ մարդե-  
րու անտառապետ, նա կատարում է օդատէտ հա-  
տարակական դործ: Խօսեց ձեռն անուշութիւնով իւր  
Աննայի մասին... Մտաբերեց ձեր անցած զնացած  
թերը: Այժմեան կեանքը համարում է նա, թէև ո՛չ  
բաւականաչափ բազայրեալ, բայց հաճելի: Ամիս ու  
կէսից չետոյ կատարուելու է հարսանիքը. քեզ էլ ինձ  
էլ հրախրում է միասին ու բախութեան: Մտադիր է  
քեզ նամակ գրելու:

Քեզ սիրող եղբայրդ՝ Ս. Պ.



## XII

### ՈՒՍՈՒՑԻՉ ՆԱՐՈՏԵԱՆԸ

ՍԷՐԵԿԵ ՔՈՂՈՒ

Արանեանը, վերջացնելով իւր պաշտօնական գործերը, նուիրեց ինձ իւր բոլոր ժամանակը: Նորահետ պատեցինք քաղաքը, մանրամասն նայեցինք մի քանի հնութիւններ, կանգ առինք դիտելու այստեղի կամուրջը, որ թէև կոպիտ կերպով է շինուած. բայց շատ ամուր է և երկու հարիւր վաթսուսն տարուայ հնութիւն ունի: Կամուրջը շինել է մի անգուակ մեծատուն իւր ծախքով:

Մինչ ևս զբաղուած էի կամուրջը քննելով, մօտեցաւ մեզ մի երիտասարդ, որ Արանեանի լաւ բարեկամն էր երևում, որովհետև նոքա շատ սիրալիր ողջունեցին միմիանց: Արանեանը ծանօթացրեց մեզ: Երիտասարդը այստեղի դպրոցում ուսուցիչ է՝ Նարոտեան ազգանունով:

Ես հետաքրքրուեցի մի փոքրիկ արձանագրութիւնով և առաջ գնացի դէպի կամուրջի եզրը. իսկ Արանեանը և Նարոտեանը զբաղուեցին միմիանց հաղորդելու իրանց նորութիւնները: Արձանագրութիւնը կամուրջին չէր վերաբերում—և ընկել էր այդտեղ

պատահաբար այն քարի հետ, որի վերայ փորագրուած էր նուտով դարձայ խօսակիցների մօտ

Աւսուցիչը մի քսաներեք—քսանչորս տարեկան մարդ էր, միջին հասակով, լղար, ջղային բնաւորութիւնով և աշխուժ խօսակցութեան ոճով։ Նորա զօպած դէմքի վերայ վայլում էին երկու անմեղ աչքեր, որոնց մէջ վաւոււմ էր մի ողևորուածի հալեացք։ Նա գործում էր մտազբաղ մարդու տալուութիւն։ Նա նաչեց ինձ վերայ մի հարցասիրական նայեացքով և ասաց.

—Պարոն Արանեանը պատմեց ինձ ձեր մասին, շատ ուրախ եմ այս ծանօթութեան համար։ Եթէ եմ սխալոււմ՝ դուք առողջին անգամն էք այս քաղաքում։

—Այո՛, պատասխանեցի ես, և ինձ համար նա շատ հետաքրքրական է, գուցէ իբրև նորութիւն։

—Ձէ, ինչու. բարբը կախուած է գործից։ Այսօր էլ անելու գործ կայ։ Գոնէ ինձ համար դպրոցը, ուր տեղ ես պարասուում եմ, ընդարձակ գործունէութեան ասպարէզ է և անսպառ ողևորութեան առաքկայ։ Եթէ մեր դպրոցները մինչև այժմ չի։ Տե՛տե՛ս անցններ են տուել—դա նորա վատ կազմակերպութիւնն է եղել—գործողների անտարբերութիւնը...

—Այս կողմ անցններ, այս կողմ, ասաց Արանեանը՝ հրաւիրելով մեզ դէպի քաղաքական փոքր ձեռնիքը. այնտեղ և զբօնեմք և խօսեմք։

Յետոյ զիմելով ինձ՝ Արանեանը կամացուկ փր-  
փըսաց ականջիս:

— Հետաքրքրական անձնատրութիւն է պարոն  
Նարոտեանը, զիտիք նորան:

Շուտով հասանք ձեմելիքը:

— Դուք առաջ ուրտեղ էիք լինում, հարցրի ես  
Նարոտեանից:

— Երեք տարի է, ինչ ես ուսուցիչ եմ և միշտ  
զիւղերումն եմ եղել: Այս տարի փորձում եմ արհեստ  
այս փոքրիկ քաղաքում:

— Խնդրեմ ասացէք, ուրտեղ աւելի հեշտ է ու-  
սուցանելը՝ զիւղերում թէ, այտտեղ, հետաքրքրուեցի  
ևս իմանալու:

— Այտտեղ աշակերտները, պատասխանեց նա,  
աւելի են զարգացած, քան զիւղումը. բայց ծով են  
համեմատարար և որ զլիսաւորն է միմիանցից շատ են  
տարբերում, շատ են զանազանում: Կիւղի երեխա-  
ները շատ են միմեանց նման և այնտեղ հեշտ է  
նոցա յարմարուելը: Մինչդեռ այտտեղ ամեն մի  
աշակերտ կարծես մի առանձին բնաւորութիւն, մի  
առանձին կրթութիւն ունի:

— Միթէ՞ այդքան զգալի է տարբերութիւնը:

— Ես զգացի այդ առաջին օրերիցն իսկ՝ և  
սխեցի ծանօթանալ այս քաղաքի զանազան շրջան-  
ների կեանքի հետ, որպէս զի գիտենամ թէ ինչ տե-  
սակ ազդեցութիւններից է յառաջացել այն, ինչ  
ահանում էի աշակերտներին մէջ:

— Ձեր աւագ ուսուցիչը, միջամտեց Ար անեանը, շատ վիճեց անցեալ օրը հետո, նա տուժ է, որ այդ բանը հետաքրքրական է. բայց դպրոցական գործի համար կարեւոր չէ:

— Ինձ հետ էլ խօսեց. դէնա ուրիշ տեսակ մարդ է. նա վախենում է հարթած ճանապարհից դուրս գալ: Իսկ ես եկել եմ եզրակացութիւնների, որոնց օգտուէտութեան մէջ գործնականապէս ես աւելի ու աւելի եմ համոզուում: Ես դիտողութիւններ արի ե փորձից իմացայ, զորօրինակ, թէ ինչպէս պէտք է խօսել արհեստաւորների որդիների հետ, ինչպէս խաճութալանների զաւակների հետ: Եւ բացի այդ ես կրկին համոզուեցի, որ պէտք է ծնողները օգնեն ուսուցչին դաստիարակութեան գործում:

— Ծնողները ոչ թէ չեն օգնում, այլ չաճախ փնտում են շարաշար, նկատեց Արանեանը:

— Ի հարկէ՞ դժուար է նոցա հետ գործ ունենալ: Բայց կարելի է դարձեալ մի բան անել եւ ես կարծում եմ, որ իմ արած մի երկու փորձը իրաւունք են տալիս այդ գործով լաւ զբաղուել եւ կանոնաւոր կերպով ծնողների հետ շարաբերութիւններ ստեղծել:

Փողոցով անցնող մի խումբ մարդիկ իրանց վերայ դարձրին մեր խօսակիցների ուշադրութիւնը եւ մի առժամանակ դադարեցրին մեր զրոյցը: Նոքա շատ սաստիկ վիճում էին բարձրաձայն: Նոցա անցնելուց չետոյ նորից սկսուեց խօսակցութիւնը, որ այս անգամ վերաբերում էր գործունէութեան ձևին:

— Աս կործում եմ, սասց Նարոսեանք, որ հասարակական ամենամարուր զործունէութիւնը մեղանում ուսուցչութիւնն է:

— Ենչու էք այդպէս սահմանափակում զործելու եղանակները. հարցրի ես:

— Աս համեմատել եմ և այդպէս եմ գտել, սասց համոզմունքով Նարոսեանք: Աւսուցիչը խոր արհեստով պատկանում է հասարակութեան. նորա զործը մասնատրի շահին չէ վերաբերում, այլ ընդհանուրն է:

— Ընչդ է ձեր ասածը, նկատեցի ես, որ ուսուցչութիւնը ինքը ծնուել է հասարակական պահանջից և հասարական զործի ներկայացուցչութիւն է. բայց չարղելի պարսպմունքներ շատ կան և հասարակութիւնը պէտք ունի բարեխիղճ գողծողների գանազան արհեստի և մասնագիտութեան:

Նարոսեանք կասկածով զլուխը թափ տուա, փոքր ինչ մտածեց և պատասխանեց.

— Աս իմ վերաբերմամբ գոնէ իմ տեսակէտը ճիշդ եմ գտնում: Աս ուսուցչութիւնից աւելի նպատակադարմար և օգտաւէտ զործ չեմ ճանաչում: Աջակող իմ ամեն մի ժամը, ամեն մի օրը, խրաքանչիւր իմ քաղը տեսնում եմ նպատակի ծառայեցրած, կրթութեան և լուսաւորութեան համար ծախսուած: Քա հաշուապահական տեսակէտից: Բայց կայ և մի ուրիշ տեսակէտ, կամ իսկապէս ոչ թէ տեսակէտ, այլ հանդամանք:

— Ենչ հանդամանք, հետաքրքրուեցի իմանալ:

— Եւ Ն. հանգամանք, փոքր ինչ դժուար է ձեռ-  
կերպել նորան... զա ոգևորութեան, գործը սիրելու  
է նորան նախընտրելու. հանգամանքն է. Աս սիրել եմ  
այս գործը և սիրահարուել եմ նորա վերայ. Աս ու-  
նեմ այնպիսի վառ և սաստիկ սպասարութիւններ  
ստացած այս գործից, որ չստիպեան նորա կը մեան  
անմասնապի ինձ համար:

— Նարանակեցէք զուր այժմ էլ ոգևորուած էք:

— Գտակեցէք ինքներգու Տեանում եմ իմ առաջ  
նստած մեր ժողովրդի զաւակները, որոնք եկել են  
մտաւոր լոյս ստանալու: Ես և ազգի փոքր ի շատ  
լուսաւորուածներից մէկն եմ և գիտեմ, որ կարող  
եմ լաւ գործ կատարել, ցանկացած լոյսը ապր Աւ-  
աշխատում եմ ապրու: Աս մի թէ, ոգևորութեան  
արժանի չէ:

— Եւ հարկէ, աւելի քան արժանի է:

— Այս խօսքը այս դէպքում սխալ չէ, շարու-  
նակեց նարտեանը. ճիշդ որ լոյս է. Աս սեւեւ եմ  
նորան վառուած սանիկներին աչքերում: Քանի ան-  
գամ աշակերտներին սկսել եմ բացատրել նոցա շի-  
մացած մի բան, նորա իրանց մանուկ աչքերի հար-  
ցասիրական նայուածքով հեռուել են իմ բացատրու-  
թիւններին և երբ ևս մտակցել եմ իմ նպատակին,  
պարզել եմ նոցա համար զաղանիքը. ցանկարձակ-  
եւ եմ բոլոր հաշեացքները վառուած, կարծես մէկը  
էլեքտրական կաշճեր է ցրուել այդ աչքերի մէջ: Ահ,  
այդ հուրը, իմացականութեան այդ արտաբայումը

ան հոանայի է, նա փարձասարում է ամեն մի նեղութիւնս Աչդտեղ ինչ ուրիշ տեսակէտ կարող է մարդու մտքը գալ: Աս չեմ կարող այդ տպաւորութիւններին հաստարը երեւակայել:

— Ճշմարիտ էք, ճշմարիտ, բացականչեցի եւ զգացումս եւ սեղմեցի նարօտեանի ձեռքը:

— Մանուկների աչքերի ոչդ փայլը եւ ընդունել եմ իբրև բանաստեղծականի իդէալականի աստուածայինի արտաշայտութիւն, բայց...

— Ինչու կանգ առիք, խնդրեմ շարունակեցէք:

— Է՛հ ոչինչ, ասաց նա մի ծանր բան չիշխով:

— Աս շատ հետաքրքրուած եմ ձեր ասածներով, ուրախութեամբ լսում եմ, ասացի ես:

— Խնդիրը գործադրողների եւ գործադրութեան մէջն է: Մանկավարժութիւնը ըստ իս, որչափ արհեստի, այնքան էլ եւ աւելի մանուկ սիրելու գործ է: Արք զէպի գործը թելադրում է շատ բանս Սակայն այդ թողնեմ եւ շարունակեմ: Արեխայի հետ պարագուելու նպատակն այն է, որ ուսուցչի ուղեղից մանուկի ուղեղին հասնելիք փոփոխութիւնը կատարուի ամենահնչա կերպով: Արք այդ գործողութիւնը խկտպէս հեշտ է կատարում, նա պատճառում է մեծ զուարճութիւն մանուկին: Սովորելը տանջանք չէ. զարգացումը— զուարճութիւն է: Փոքրիկ երեխան, երբ որ փորձում է, ինքը ծիծաղում է: Աս փոքր ինչ առաջ ասացի ձեզ այն զեղեցիկ ժպտաների մասին, որ խաղում են սանիկներիս շրթունք-

ներին... բայց ինձ միշտ գրազեցրել է մի խնդիր, որի  
մասին յաճախ վէճեր եմ ունեցել իմ բնկերակից-  
ների հետ:

— Այսի նպատակով:

— Ես գրազեցաւ թիւն, լոկ գրազխաւ թիւն չեմ  
ընդունում: Ես այն կարծիքին եմ, որ ուսումը մա-  
նուկի գալու օրից պէտք է սկսուի գնալ զուգընթաց  
բարոյական դաստիարակութեան հետ. նա պէտք է կա-  
պուած լինի առարինութիւնների գաղափարի հետ:

— Իսկ մասամբ կատարում է, կարծեմ:

— Բայց կարող է և չը կատարուել, պահանջող  
չի լինել. մինչդեռ ես չէի ցանկանալ, որ այդ բանը  
կատարած լինէր պատահականութիւնից: Ասում են  
թէ կարողաւ սովորելը — ապագայում կր բերի լաւ հե-  
տեանքներ: Փուցէ, եթէ շատ բնդհանուր ձևով հաս-  
կանանք խնդիրը Ես սահմանափակ տեսակէտ ունեմ  
այս բանում և այս կերպ եմ մտածում: Վաճառա-  
կանի օրդին, իւր հօր մօտ սովորելով ա, բը, գը,  
լաւ գիտէ, որ իւր ուսումը՝ պէտք է ծառայեցնի  
առուտութին. և նա կարող է ոգևորուել, բայց միայն  
անձնապէս իւր համար. նա ուսումի հետ չի կապել  
ոչինչ գաղափարական, ոչինչ իրէարական: Մինչդեռ  
ես ասում եմ, որ ուսումը իւր ամեն մի քայլը պէտք  
է կապի վեհի, բարոյականի, գաղափարականի հետ,  
որ մանուկի սրտում և ուղեղում տարւորուեն մարդ-  
կայնութեան սկզբունքներ, իրէարական ձգտումներ:

— Լաւ մանկավարժներ են հարկաւոր, ուրիշ մի-

ջոց չեմ տեսնում մ'աչդ դործին օգնելու, նկատեցի ես

—Վ հարկէ, աչդ աչդօղէս է. բայց պէտք է, որ իմ չաշնած սրահանջը աահասարակ զգացուէր և հասարակութեան կողմից զնուէր, իբրև աչդպիսին

Ճեմէլիք մաս աչդ միջոցին և մտակցաւ մեզ աւագ-  
ուսուցիչը, որը ճանօթացաւ ինձ հետ և խառնուեց խո-  
սակցութեան մէջ. բայց այնքան ձեւական կերպով սկսեց  
վերաբերուել խնդիրներին, որ խօսակցութիւնը կորց-  
րեց իւր գրասչաւ թիւնը: Նուսով բաժանուեցինք մի-  
մեանցից և Արանեանի հետ ուղղուեցինք դէպի տուն:

Արանեանը ինձ բացատրեց, որ Նարօտեանի և աւագ-  
ուսուցչի մէջ մի խաւ մրցում կ'աչ, որ Նարօտեանը իւր  
դործին նու իբուած մի ֆանատիկոս է, իսկ աւագ-ուսու-  
ցիչը հասարակ մանկավարժներինն է և փոքր ինչ էլ  
ձեւապաշտ է:

—Նաս ուրախ եմ, ասացի ես, Նարօտեանի հետ  
ճանօթանալուս համար. իսկապէս հետաքրքրական  
անձնու որու թիւն է: Պակաչն ս'զ է նաս Վ'նչ պատ-  
բասաութեան տէր մարդ է:

—Նաս, ինչօղէս տեսար, մի ողևորուած երխա-  
սարդ է, որ հաւասացել է ժողովրդական կրթու-  
թեան բարերար հեռեանքներին և նու իբուել է նա-  
րան հողւով սրտով: Նաս բէպականի վեցերորդը վեր-  
ջացրել է և շեռոչ պատրաստուել ասանալու ուսուց-  
չական վկայական, որ և ձեռք է բերել չաջող հար-  
ցոյքնու թիւնով:

— Հասկերիլի անձնու որու թիւն է: Վ հարկէ՛ ան-

ճանօթի վերայ նորա թուիչքները, նորա էկզորթը  
զօցէ փոքր ինչ խորթ ապաւորութիւն թողնեն.  
սակաչն շատ շուտով նորան կը չարզեն և կը սիրեն:

—Այդ քաղցրարար մի քանիսի վերայ այտակոյ  
նա աննպատակ ապաւորութիւն էր զորձել: Փամանակ  
հարկաւոր եղաւ, մինչև մարդուն ճանաչեցին և զնա-  
հատեցին: Այժմ էլ զեւ մի փոքրիկ ինտրիգ կաշ,  
որի մասին ինքը նարտեանը թոյլ զաղափար անի:  
Անշուշտ՝ այդ ինտրիգը կը քաչքայուի ինքն իրան,  
որովհետև նորա զէմ միջոցներ են զործադրուած:

—Ի՞նչ տեսակ ինտրիգ է, ցանկացաշ իմանաշ:

—Իսկն ասած բամբասանք է, որը, թէև ան-  
հիմն է, սակաչն զեւ չի վերացել:

—Ի՞նչ կողմից կարող է բամբասանք լինել նորա  
մասին, զարմացած հարցրի ես:

—Ահա բանը ինչու՞ն է: Այսօր դու լսեցիր  
նարտեանից, որ նորան սաստիկ զբազեցնում է այն  
չրջանը, որի մէջ ապրում է մանուկը գոլրոցից զուրա:  
Այտակոյ նա փորձեր է արել մի քանի ընտանիքներ  
այցելել և ծնողներին հետ խօսակցել նոցա զաւակ-  
ների մասին: Նարտեանը զոյց է առել ինձ խո  
արած գիտազօթիւնները և քաղած տեղեկութիւն-  
ները: Իսկապէս ուսանելի կողմեր ունի այդ զորձը:  
Իսկ ինչ, տես, որ նարտեանը բամբասանքներին, տե-  
կաւներին ասիթ է, առել խո անից տուն չրջելով:

—Յետոյ:

—Յետան այն է, որ այդ բամբասանքներին զէմ

կռուեցինք, որչափ կարող էինք և այժմ նա թու-  
լանալու շրջանումն է:

— Եսկ ինքը նարոտեանը:

— Նա համարեա թէ ոչինչ չը գիտէ. մենք ոչինչ  
չ'ասացինք իրան: Նա այնքան անկեղծ է և մաքուր,  
որ մենք չույս ունէինք, որ նա իւր անձնաւորութիւնով  
ինքն իրան կ'արդարացնի հասարակութեան աչքում:  
Նա, չամենայն դէպս, մի ծուռ բան զգում է և իրան  
աւելի զգուշ և զսպած է պահում և ընտրողաբար  
է այցելում ընտանիքները: Նա խորհրդակցում է յա-  
ճախ ինձ հետ. ես էլ օգնում եմ նորան իմ խոր-  
հուրդներով: Եսկ երեկ երեկոյեան դու ծանօթացար  
իմ տանը հոգաբարձու Սերոբեանի հետ: Ահա այդ  
պարոնը, որ ինձ իրան բարեկամ է համարում և ինձ  
հաւատում է, թէ և մեծ մտաւոր ոյժ ունի. բայց  
արագ ըմբռնողութիւն ունի և պարզասիրտ է. նա  
բաւականաչափ պարզ գաղափար ունի գործի մասին  
և ոչ միայն բամբասանքներն է ցրում, այլ և շատե-  
րին համոզել է, որ նարոտեանի գործը պատկառելի  
և օգտուէտ սկզբնաւորութիւն է: Նարոտեանն էլ  
իւր՝ մանուկների վերայ ցոյց տուած՝ յառաջադիմու-  
թիւնով, իսկապէս պատանձեցրել է զբախտսներին:  
Նշակերտները սիրահարուել են նորա վերայ: Նա կա-  
տարեալ կախարդել է նոցա:

— Եթէ իմանայիր, Արանեան, ինչ մեծ հրճուան-  
քով լսում եմ այս բոլորը, ինձ համար նորութիւն է,  
քաղցր է այս բաները իմանալը: Արեմն ժողովրդա-

կան դպրոցը փակել է իւր անձնուէր ուսուցիչները  
ունենալ. ուրե՛նք ժողովրդի մանուկի համար նորան  
ծնողի պէս սիրող զատօտարակ է առաջացել:

— Այս կան, սիրելիս, օրինակներ, կան: Բայց  
պակաս են այդ մշակների համար պաշտպանող, սո-  
նող, քաջալերող, միտիթարող ոյժեր: Ասեն մի ոյժ-  
ւորուած ուսուցիչ: տեսնելիս՝ մտածում եմ: կը դի-  
մանայ նա արդեօք, կը տանի շրջապատող անհիւրա-  
սէր մարդկանց սառնասրտութիւնը և չի զայրանալ  
մի օր և կամ յուսահատուիլ ու թուլանալ, կամ  
կոշտանալ, խստանալ ու կղզիանալ:

Մենք մօտեցել էինք տանը: Արանեանը վերջաց-  
րեց իւր խօսակցութիւնը:

— Այսօր երեկոյեան ուսուցիչներից մի քանիսը  
և ուրիշ ծանօթներ մօտս կը լինեն: Ծանօթացիր  
դոցա հետ: Լաւ աղերք կան մէջները: Աւագ ուսու-  
ցիչն էլ վատ մարդ չէ, բարի ձեռնարկութիւններին  
համակրում է, բայց իբրև մի ծանրութիւն է նստում  
ուրիշների վերայ, ոչ մի բանով չէ նպաստում գոր-  
ծին և շատ անգամ այնպիսի ձևեր, ոճեր է գործ  
ածում, այնպիսի անտարբերութիւն է ցոյց տալիս,  
որ կարծես ցանկանում է կանգնացնել ամեն մի նոր  
գործ:

Մտանք ներս: ձաշը արդէն պատրաստ էր: Ան-  
ղանի վերայ Արանեանը շարունակում էր պատմել ինձ  
այստեղի փոքրիկ կեանքի մասին: Աս հետաքրքիր  
եղայ տեղեկանալ ընակիչների պարապմունքների մա-

սին: Մեծ մասը արհեստագործներ են, իսկ միւսը՝ երկրագործներ և փածոականներ: Առհասարակ հարուստ ժողովուրդ է և քիչ զոհարեութիւններ կարող է անել որ և է մի այնպիսի գործի համար, որ նեղ ընտանեկան պահանջներից դուրս է: Բայց մի որ և է հասարակական հիմնարկութիւն հաստատելուց յետոյ, նա նորան շատ մեծ նշանակութիւն է տալիս: Ափսոս, որ շատ շուտ են կազմուած այստեղ կուսակցական խմբեր, որոնք սկսուած են միմեանց փնտսել և յետոյ փնտսուած են հասարակական գործին: Այժմ երեք տարի է, որ շնորհիւ մի երկու պարոնների խաղաղակրեւելուն և զուրս դալուն, իսկ մի քանիսի ներս մտնելուն, կեանքը անցնուած է խաղաղ և չաջող:

— Առգմնակի հանդամանքները մեծ դեր են խաղում, աւելացրեց Արանեանը, այսպիսի տեղերում: Շատերը հեռուից հեռու կասեն, թէ կարելի է ժողովրդի հետ կարգին խօսել, բան հասկացնել և նա կ'ընդունի լաւը, ճշմարիտը. բայց ինչ կատես այն բանին, երբ նորան տեղահան են անում, երբ բարկացած ժողովուրդը փաշտին ջուր է ասում, իսկ քարին հաց: Ե հարկէ, նա ինքն էլ դիտէ, որ փաշտը— փաշտ է, իսկ քարը— քար. բայց վախենում է, որ այդ ակներև ճշմարիտ բանը խոստովանելուց իրան փնտս հասնի...

Նաշից յետոյ առանձնացանք հանդատանալու մինչև երեկոյ: Աս բարւօք համարեցի թղթի անցկացնել իմ սուլաւորու թիւնները, որովհետև առաւօտը վաղ պէտք

է այստեղից դուրս դամ ճանապարհ և ով զիտէ,  
որչափ չարմարութիւն կունենամ զրեւու մանրամասն:


25 ապրիլի, 1886 թ.

Երեք օր է անցել այն ժամանակից, որ վերջին  
տողերը զրել եմ: Առաւօտը Արանեանից բաժանուեցի,  
մի քանի ժամից չետոյ հասաց երկաթուղի և երե-  
կուանից այստեղ եմ, զործարանում:

Ժամանակ չունեմ մանրամասնութիւններ զրե-  
լու: Քէ Արանեանի մօտ և թէ երկաթուղում հե-  
տաքրքրական բաներ խմացայ, որոնց մասին աւելի  
ազատ մի օր կը զրեմ:

Գործարանը այստեղ ինձ վերայ ծանր ազդեցու-  
թիւն արաւ. ես դեռ չեմ կարողանում պարզել իմ  
տպաւորութիւնները: Իմ նախագիծները պէտք է,  
կարծեմ, փոփոխութիւնների ենթարկուեն: Յամե-  
նայն պէպս, ինձնից շուտով նամակ կը ստանաս:

Քեզ սիրող եղբայրդ՝ Ս. Պ.



Agoston

Kingdom

*Handwritten signature or scribble*

Ջ Ր Ա Ղ Ա Յ

1878

Wm. W. Phelps

London

# Զ Ր Ա Ղ Ա Ց

(Անցածից պատկեր)

## I

### ՆՈՐ ԽՄԲԱՅԻՒՆ ԾՆՈՒՆԵԼ

1879 թուի հոկտեմբեր ամսի երեկոններից մէկն էր: Գուրաը ըստ եզանակ էր և ամեն մարդ աշխատում էր օգտուել տարուայ այդ ժամանակի տաք և պարզ օրերից՝ մի կուշտ զբօսնելու: Փողոցներում, նեմելիքներում անց ու գարձ անողների թիւը անհամար էր:

Գանդաղ և անհող շարժուող սմբուխի միջով անցնում էր շտապով մի երիտասարդ, որ ամենեին չէր նկատում իւր շուրջը կատարուող անցու գարձը: Այլապէս ամ և բարկացած գէ՛ղքով նա առաջ էր գնում՝ ձեռքին բնած մի հաստ տետր՝ զլանած և կօրլած և թելով կապկպած:

Մտուեց նա մի ձախ փողոց, յետոյ աջ, գարձակ ձախ, մտաւ մի մեծ տուն, բարձրացաւ ասնջուղքներով մինչև երկրորդ չարկը, բանալիով բացեց իւր բնակարանի դուռը, մտաւ սենեակը՝ շղթանց մի

կողմ իւր գլխարկը և կապած տետրը և ինքը բարկացած ընկաւ մահճակալի վերայ:

— Այսքան սպասեմ և այսպէս պատասխան տաւ նամ, անպիտաններ, մրթմրթաց նա և լռեց:

Աորկոտեանը (այդպէս էր երիտասարդի ազգանունը) ամբողջ մի տարի էր ինչ սպասում էր, որ իւր չօղուածը տպուէր. և նորան այսօր-էզօրց ասելով հանգստացնում էին: Այժմ նա դարձաւ տուն իւր ձեռագրով, իւր անտիպ մնացած չօղուածով: Իսկ նա չօչսեր ունէր. նա կարծում էր թէ իւր «գրական տեսուի թիւն սփ» մի հետաքրքրական և ողելից գրուածք է տպիս հասարակութեան:

Այդ օրը նա գնացել էր խմբադրի հետ վերջնականապէս խօսելու և նորանից վճռական պատասխան ստանալու: Եւ չետ դարձաւ անբաւական նորա պատասխանից:

Երկայն չը կարողացաւ նա պառկած մնալ, վերկացաւ սեղից, վեր առաւ իւր ձեռագիրը, ազատեց նորան կապանքից, նստեց փոքրիկ սեղանի մօտ և սկսեց նորա այս ու այն կողմերը աչքի անցկացնել: Աարդարով չօղուածը՝ նա ևս նկատում էր, որ չիրաւի չօղուածը գրուած է բաւականին թույլ և իւր՝ հեղինակի՝ հիմնական «հայեացքները» այժմ իրան երևում էին զուրկ խորութիւնից և որոշակի լինելուց: Այս փոփոխութիւնը թէև այժմ նա զգում էր, բայց աշխատում էր իրանից առհասարակ հեռացնել զանազան կասկածներ և չամենայն դէպս դեռ այնքան

ձե՛ծ կարծիքի՛ն էր յօղուածի մասին, որ վա՛նկց կամ  
նոր խմբագրութեան գիմել, կամ թէ չէ ուզում  
հաւատալ, որ իւր գրչի ծնածը կարող է աւելորդ  
համարուել: Յօղուածը կարող է փոքր թն՝ անկա-  
տար լինել. բայց նա դարձեալ իւր մէջ կ'արձանագծի  
հեղինակի տաղանդը և մտածմունքի եզրանկը:

— Միթէ՛, կարելի է փշայնել մի քանի ամբանքի  
աշխատանքը: Զարմանալի մարդիկ են. ուրե՛տ մի-  
նայնն է տասն թերթ մի բան գրած՝ թէ չը գրած:  
Սոցա՛տձառ տպագրել կը տամ և տեսնե՛մ թէ թն-  
դէս չեն հաւանիլ յօղուածս: Անշնորհակալ մարդիկ  
լնաւ. դուք ձերը արէք, ես էլ իմը կ'անեմ:

Աստարելայէս զայրացած՝ նա վեր թառ տե-  
ղից և սկսեց շուռ-շուռ մանդալ սենեակում: Նա  
մրմնալով անիծում էր խմբագրին, որ այնպէս պարզ  
և անպաճօցձ կերպով նորան յայտնեց թէ լնե՛ր յօ-  
ղուածը չենք կարող սպել, նա շատ անկատար է և  
թույլ. մենք շատ նիւթ ունենք: Դժբազդարար ոչինչ  
չէր կարող ասել նա խմբագրութեան հերթակալին  
և եթէ ասէր էլ՝ բոլորովին աւելորդ կը լինէր:

— Դուք խմբագիրներ չէք, բղաւեց նա վերջա-  
պէս խուլ սենեակում, այլ գիշակեր գազաններ. դուք  
գիշատում էք մարդկային հոգին, դուք կրճում էք  
հեղինակի ոսկորները. դուք մեռցնում էք և թաղում  
տաղանդը, հանձարը: Ա՛հ, տաղանդակեր, եռանդա-  
րեկ, հանձարատուան գազաններ:

Յանկարծ միտքը եկաւ, որ այնպիսի սաստիկ

գրգուռած գրութեան մէջ, նա կարող էր մի սարսափելի պատկեր դուրս բերել, որ չետոյ պէտք կը զարմի որ և է չօղուածի համար: Աստի ձեռքը առաւ գրիչը և շատակեց նախ և առաջ թղթի մի անկիւնում գրել «տաղանդակեր, եռանդարեկ և հանձարասպան» բառերը: Այսինքն էր, որ չետոյ մտանայ այց հրաշալի բառերը:

Մի քանի տող փոքրիկ չառաջարանում նա նկարագրեց միջին դարերի մտաւոր ճնշումը, որչափ նա չիշում էր մի ժամանակ սերտած պատմութիւնից. «Անմահ Վալիլէն պէտք է գոհուէր արիւնածարաւ կաթոլիկ հայերից, որովհետեւ նա չը ցանկացաւ նոցա խմբագրութեան տալ իւր փալլուն կարծիքները և խոհերը: Եւրաբանչիւր օր ամեն մէկ խմբագիր՝ մօտ մի տասը Վալիլէ է չօշոտում, որ մի տարուայ մէջ կ'անէ այն քիչից մի քանի հազար: Աւ այց հազարների համար մտածող չը կայ: Խաչակիրների արշաւանքի նման մի գոյ շարժում է հարկաւոր, որ ջախջախի մեր դարու սելջուկներին: Ահ, Երուսաղէմ, կորսր դու: Այլ հանձար, ընկճուեցիր ամենակալ խմբագիրների կողմից...»:

Աւ այդպէս նա երկայն կը շարունակէր իւր ողբ-տորուած չօղուածը, եթէ չանկարճ նորաուսը թափ տարով ջառապիւններ չըզարթնացնէր լարուած գրութիւնից:

— Ե՛նչ ես անում, Աորկոսեան, ոտանաւոր ես գրում թէ դարձեալ ճառ ես պատրաստում: Աստիկ ողբորուած էիր:

— Եստ ժամանակ է այսակց ես: Բարե, Սիմոն:

— Զէ, հէնց այս է՝ որ մտայ: Ա սպայ, ինչ է պատահել քեզ. բոլորովին տխուսած ես. աչքերդ շարուած են:

— Փոքր անհանգիստ գիշեր եմ անցկացրել. գլուխս ծանրութիւն է զգում: Իսկ չիբաւի մի շարուած մտադիր եմ այս երեկոյ գրելու. էգուց եկ ճաշից չետոյ միասին կարդանք: Միքայէլին էլ քոչ տուր: Ենչ թագցնեմ քեզնից, հէնց հիմի էլ մի քիչ այդ յօդուածոյն եմ գրազուած:

— Ար դանք անպատճառ: Մեր սպայ, սրբիւնաւոր գլուխ ունես, հանաքը դէն գրած: Իս քո ասալանդը չես ձանաչում: Մի քիչ մտածիր ասածիս մերայ: Ենչ քան յօդուածներ ունես անտիպ. ես քեզ քանի անգամ ասել եմ. ինչո՞ւ չես խմբագրութիւններ չես մտ ծանօթանում. ու բախտ թիւնով կը տպեն:

— Զ'արժէ, եղբայր: Ենչ խմբագրութիւններ ունենք:

— Ըշմարխ է. բայց նոցա էլ կը գրգսես, կը շարժես մէկ:

— Այդ ինքս էլ եմ մտածել. բայց մինչև մենք մեր խմբագրութիւնը չ'ունենանք, ո՞չ մի բան չենք կարող անել: Իսկ այժմ՝ միայն սղորմութեան նկատ շնորհք ենք ստանում մեր խմբագրութիւններէց, երբ մեր յօդուածին տեղ են տալիս:

— Ար ասում եմ՝ դու քո ասալանդը մեղցնում

ես Կեղեցիկ սառչարկութիւն: Կու այնպէս խօսքի միջում մէկ զիւս արիր: Եւ իրազրութեան մասին անպատճառ սկսար է խօսենք:

— Աւազուց ժամանակն էր. Միմօն, բայց մտածում էի զժուարութիւնների մասին. Տախքեր են հարկաւոր. խմբագիր է հարկաւոր:

— Կէ, բաւական է, ինչքան քեզ համեաս պահեցիր: Կու ես լինելու խմբագիրը:

— Ազրոյր, դարդակ չը խօսենք. թող էզուց ժողովուհեր, գաստենչու: Եւ այժմ գրելի յօդուածն էլ հէնց պատահարար այդ սաարկային է մասամբ վերաբերում: Եւ ինչ ունեմ բարեկամներս հաւանեն: Ահա կարգամ քեզ մէկ կտորը:

Զատափեանը և միս բարեկամները չիրաւի անկեղծարար մեծ կարծիք ունէին Արկտսեանի վերայ, նորան պաշտում էին, զոգում էին և երեսին և զրսում, և ի հարկէ նորա զոսոզութեան զլիաւոր պատճառներից մէկն էլ նորա էին Արկտսեանը այնպէս ստիտել էր նոցանից զովասանքներ լսել, որ չէր հաստում այն պարսններին, որոնք նորան հակասակում էին Արկտսեանը հեռանում էր այդ նախանձառ պարսններից, որոնք միայն նորա ոգևորութիւնը ստակցում էին, և աշխատում էր՝ որչափ կարելի է կարճ կապել նոցա հետ:

Ասա նա զրոսը և սկսեց.

«Միջնագարեան թանձրախոս խաւարի մէջ, ամենայն բան մթութեան ծնունդ լինելով, թող չէր

սովիս ազիսու թեան բողբ պատուելու... քննչանույ  
կեանքի խճագիրը նոյն ինքն մթութիւնն էր խա-  
ւարաչին մտքերով նախապաշարուած...

Սպասիր, ազնւյ, մի կարգալ, սրբուն զգում  
եմ, որ խոր մտւծուած բան է: Աս ուզում եմ քննիչ-  
ներիս նեա միասին լսել, որ ապաստութիւնը աւելի  
սաստիկ լինի և եսանդով ու զգացմունքով խանկ  
մեր լրագրի վերայ: Մի քիչ ասա՛, երբ ևս քեզ մտ  
մտայ, տեսայ քեզ նստած. նենց խկոյն գաշակիչի,  
որ դարձեալ մի հազուադիւս բան պէտք է սրբից  
նուիրես: Մննս բարեաւ, ցտեսութիւն:

Աորկոտեանը, առանց ժամանակ կորցնելու, խ-  
կոյն նստեց իւր սիրելի աթոռի վերայ, գրիչը առա-  
ձեռքը և սկսեց այնպէս շտապով գրել, որ ինքն ևս  
զարմանում էր իւր վերայ: Յարմար էր թէ անդա-  
մար, նա այդ չը նայեց, այլ սկսեց գրել նոր խմբա-  
րութեան անհրաժեշտութեան մասին: Նա աշխա-  
տում էր ապացուցանել, որ կեանքի մէջ կատարուող  
բազմաթիւ անճոռնի երևոյթները պատճառը — բա-  
խմբագրութեան բացակայութիւնն է: Չը գիտեմ ինչ  
պատճառով նա մեղադրում էր խմբագրութիւնները,  
որ մինչև այժմ չը կան մանկական գրադարաններ մեր  
բաղարներում, և երգեցողութիւնը ամենայն տեղ  
կանոնաւորուած չէ, ինչպէս ցանկալի էր: Ե վերջու  
նա չարձակուում էր սորսափելի անականներով խմբա-  
գիրների վերայ՝ նոցա աւետարական զանազան խա-  
ղախութիւնների մէջ մեղադրելով. ապացուցանում

էր իւր այդ միտքը ակնարկելով յայտարարութիւնների վերայ: Գլխաւոր չօղուածին նա կցեց «մի քանի մտքեր» անունով մի թեթեւ գրուածք, որի մէջ աշխատեց մի քանի կէտեր նշանակել, որոնք ուղեցոյց պէտք է լինէին միւս օրուայ խորհրդին: Արդէն շատ ուշ էր, երգ նա զգաց փոքր ինչ յոգնածութիւն, քաղց և ծարաւ. բայց ինչ պէտք էր արած.

— Առաւօտը չօղուածս կ'ուզղեմ, ասաց և կիսակատար կերպով շորերը հանած՝ ձգուեց մահճակալի վերայ:

## II

### Մ Ե Մ Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Պ

Նշանակուած ժամին սկսեցին ժողովուել բարեկամները կամաց կամաց: Նախ եկան երկու վառվառն պատանիներ, որոնք այնքան սաստիկ զբաղուած էին բոլոր ձանադարհը իրանց խօսակցութիւնով, որ միմեանց գրկելով և ուսին խփելով ու ձեռքը սեղմելով, անց ու դարձ անողներին զարմանք էին պատճառում: Աւրախ ձայնով ներս մտան և այնպէս էլ ուրախ թռան Կորկոտեանի մօտ:

— Ա տղայ, լաւ բան ես սարքում: Ենչո՞ւ մինչև այժմ էիր ասում: Նոր արիւն ածեցիր մեր ջղերի մէջը:

Նստեցէ՛ք, բարեկամներ, պատասխանեց փոքր ինչ հօգարտ կերպով Կորկոտեանը: Աս կամենում էի,

որ գութ ինքներդ զայիք այդ համոզմունքին, որ գործը սխուէր առանց երկայն գլխացաւութեան, առանց անհաշակի երկդառակութեան:

— Կ՛գէ՛մ կը լինի լաւ բանին:

Ներս մտան այդ ժամանակ դարձեալ երեք մարդ և նոցա ետեւից Ախօճը: Բոլորն էլ ուրախ տրամադրութիւնով:

— Տեսնում ես, սարսն խմբագիր, ինչքան մարդ ժողովեցի. դեռ երկուսն էլ կը գան: Ես ամբողջ գիշերը մտածում էի նոր հրատարակութեան վերայ. ինչ անուն տանք նորան: Ես վճռեցի իմ կողմից առաջարկել «Նշոյլ» անունը: Ես կարծում եմ, որ այդ բառի նշանակութիւնից ինքն իրան հասկանալի է թէ ինչո՞ւ լրագիրը պէտք է այդպիսի անուն ունենայ: Ենք սխում ենք նոր գործունէութիւն և ի հարկէ լաւ ազգային գործունէութեան նշոյլը մենք ցոյց կը տանք մեր հրատարակութեան միջոցով:

— Ես քեզ հետ համաձայն չեմ, սոսն կերպով պտտասխանեց մէկը: — Նշոյլ՝ դա ինչ անուն է: Արեմն մեր լրագիրը ազգային գործունէութեան միայն մի նշոյլը պէտք է լինի: Նշոյլը մեր այժմեան հրատարակութիւնների մէջն էլ կայ: Եթէ բանը լոյսի վերայ եկաւ՝ աւելի լաւ է իմ կարծիքով անուանել արդէն «Ճառագայթ»:

— Ի՛նչ էք բռնել լոյսից. մէկ ուրիշ անուն է հարկաւոր: Այնպէս անուն, որից հասկացուի բոլորը. գործիչնակ «Ճարժու»:

— Բաւական է, եղբայրներ, անունի վերայ խօսել, մէջ մտաւ Կորկոտեանը. նախ պէտք է խօսել հրատարակութեան վերայ և յետոյ:

— Զգոյշ տղայ ես, գիտենք: Բայց թող խօսենք: Քեզ ինչ մնաս է հասնում: Տեսնում ես ինչքան վառուած ենք:

Մտան վերջին երկու հիւրերն էլ, որոնցից մէկը՝ յօգնած և ախուր դէմքով՝ համարուած էր միւսներից աւելի զարգացածը: Գորա ազգանունն էր Աերալեան և խկապէս դա փոքր ի շատէ խելօքն էր դոցանից:

— Տղերք, ասաց Ալեճնը, նստեցէք, որ ժամանակ չը կորցնենք, թող գործը շուտով սկսենք: Առաջ թող Կորկոտեանը կարդայ իւր յօդուածը, յետոյ կը սկսենք և խորհուրդը:

Եղորը լսեցին. բայց բարակ քմճիծաղը և ուրախ տրամադրութիւնը չէր անցնում նոցա երեսից: Կորկոտեանը առաւ մտքուր արտադրած յօդուածը, դրաւ սեղանի վերայ, մի փոքր հագաց, օձիքը ուղղեց, աթոռը փոքր ինչ առաջ ու չեա տարաւ և յետոյ դառնալով հասարակութեան՝ բերանացի մի փոքր շառաջարան արաւ. առաջիկայ ժողովի մասին:

— Սիրելի բարեկամներ և ընկերներ, Երկայն ժամանակ միմեանց հեռաւ ապրելով, մենք արդէն միմեանց ճանաչում ենք, ուստի խօսել խմբի մասին աւելորդ է: Դուք բոլորդ էլ գիտէք, որ մեր հասարակական գործիչները չը ջանում մենք չենք մասնակցում և չենք էլ ցանկանալ մասնակցելու: Մինչդեռ մենք ունենք

ցանկութիւն, և եռանդ. և ուստի գործից վախենալու առիթ չ'ունենալ: Բայց այդ գործը սկսելուց առաջ մենք պէտք է կրիտիկաբար նայենք այժմ գործողներին վերայ և չը խնայենք նոցա և մտածենք մեր անելիքը համաձայն վճռելու: Արեւմտեան կը կարգաւ ես իմ կրիտիկական յօդուածը, յետոյ կը խօսենք լրացրի վերայ...

Աորկոտեանը քրտնած ձակատով բացեցի տետրակը: Նա մտքումը շարադրել էր ուրիշ յառաջաբան. բայց չը կարողացաւ բոլորը մտաբերել. ուստի աշխատեց շուտով աւարտել նորան: Ակտուեց յօդուածի ընթերցանութիւնը ծանր և զողոջուն ձայնով:

Աւնկնդիրներին համար փոքր ինչ դժուար էր սկիզբը. բայց յետոյ քանի գնաց ձառը թեթեացաւ և գեղեցկացաւ: Ինքը Աորկոտեանը վառուեց այնպէս, ինչպէս երէկ՝ յօդուածը գրում ժամանակը: Խորլուծութիւնը ընդհատուած էր գոլաստնութեան թեթեւ ձայներով. «կեցցէ — մեր աղանց, մօլօղեց»:

Երբ Աորկոտեանը հասաւ Երուսաղէմին և ողբերգական ձայնով. բացազանչեց. «ով հանձնար, ընկճուեցիր ամենակալ խմբագիրներին կողմից», սրտամտիները մի բոսկէ ընդհատել տուին ընթերցանութիւնը իրանց աղաղակներով.

— ձշմարիտ է. այդպէս, հէնց այդպէս, կեցցէ Աորկոտեան:

Աորկոտեանը շարունակեց և հասաւ խմբագիրներին: Բազմաթիւ սարսափելի մեղադրանքներից յետոյ

այնպիսի զգացմունքով ազազակեց՝ տաղանդակեր,  
եռանդարեկ և հանճարաստան, որ ինքն ևս փոքր ինչ  
գործացաւ. բայց սաստիկ չուզմունքից վեր կացաւ և  
մի քաջ չեալ զնոց սեղանից: Միւս ընկերներն էլ ան-  
նկատելի կերպով հետեւեցին նորան: Մի քանի բուսկից  
չեալ գարձեալ խումբը տեղաորուեց առաջուայ  
պէս և ընթերցանութիւնը շարունակուեց:

Վերջացաւ չորուածը ընդհանուր հաւանութեան  
ցոյցերով: Արկտտեանի ոգևորուած սասց բերանացի  
մի կարճ ճառ, որտեղ աւերացրեց այն բաները, որ  
մուսացել էր շատաջարանում, չեալ սկսեց կարգալ  
ւմ ի քանի մտքերը:

«Մի քանի մարերի» մէջ այնքան խճճուած խըն-  
դիրներ կային, որ լսելը զժուարացաւ. այնպէս որ  
Արկտտեանը աշխատեց միայն հարեանցի ծանօթաց-  
նել լսողներին այդ հարցերի հետ:

— Այժմ, բարեկամներ, մնում է լսել ձեր խօսքը,  
ձեր կարծիքը, ձեր քաջալերութիւնը, ձեր գաստ-  
քննութիւնը:

— Արկտտեանը ապացուցեց մեզ նոր լրացրի  
անհրաժեշտութիւնը և նախադիժ տուաւ մեզ, մնում  
է, որ բնեներ արդե՞օք ով պէտք է լինեն խմբադիրը  
և ամենավտ աշխատակիցները:

— Ապասեցէ՛ք, կարեց խօսքը Արկտտեանը, այժմ  
ամենազլխաւոր խնդիրն է. ի՞նչ մեծութեան թերթ  
պէտք է հրատարակել և քանի՞ անգամ շարաթը:

Արկայն վիճարանութիւնից չեալ վճակեցին.

թերթը առօրեական մեծութիւնով, հրատարակել շաբաթը երեք անգամ:

Մտղիբները խառնուեցին. մէկը միւսին չէր հասկանում: Աղտուկին վերջ դրաւ Սերալեանը, որ գուձայնով երեք բարեկամների հետ խօսում էր լրագրի ուղղութեան և բաժինների մասին: Կօսք եկաւ թղթակիցների վերայ. Սերալեանը չաշանեց, որ զուրկը լինի լրագիր հիմնելը, եթէ թղթակիցներ չը նարուն, զոնէ առաջին ամիսները կամ տարին, մինչև որ լրագրի կերպարանքը պարզուի...

Մի պատանի չէր կամենում թող տալ, որ Սերալեանը վերջացնի և նախատինքով նորան ասաց Սերալեան, զու իրաւունք չունես շուր կը լինի հիմնել բառերը զործ ածել. զու կարող ես կարծիք չաշտնել թղթակիցների մասին և ո՛չ լրագրի գոյութեան:

Մի քանիսը պաշտպան զուրս եկան Սերալեանին, միւսները տաք պատանուն: Առուին վերջ դրաւ Միմօնը, առաջարկելով թղթակից ունենալու Պօլսում. այդ նպատակով նա անհրաժեշտ էր համարում խմբի անդամներից մէկին ուղարկել Պօլիս մի քանի ժամանակ թղթակցելու՝ մինչև տեղական երիտասարդները սկսէին թղթակցել:

— Այդ իսկ միջոցով կը գրաւենք պօլսեցիների ուշադրութիւնը մեր վերայ և կ'ընտելացնենք նոցա մեր լրագիրը կարգալու:

Քաղաքական բաժինը մի քանիսը առաջարկում

էին բոլորովին զէն ձղել. բայց չը չաջողուեց, որովհետև նիւթ չեղած ժամանակը գոնէ նիւթ կը լինէր լրագրի համար:

Խօսք բացուեց չաչտարարութիւնների մասին. վճռեցին ընդունել, թէև նկատեցին, որ դա մի չարիք է, մի զիջում է, որ նոքա պէտք է անեն, որովհետև աշտմեան լրագիրները արդէն սոփորեցրել են հասարակութիւնը այդ բանին:

Բաժանորդներ կարելի էր ձարել. ուստի այդ մասին խօսք չը կար: Փոքր ինչ մտածութեան նիւթ դարձաւ ծախքերի հոգսը, տպարանի ընտրութիւնը: Այդ էլ չետածղուեց մի ուրիշ անգամուայ:

Սմբազիր ընտրեցին միաբերան Աորկոտեանին. իսկ միւսների վերայ բաժանեցին զանազան տեսութիւնները: Ընտրեցին երկու Ֆելիեաօնիստ, որոնցից մէկը պէտք է իրական կեանքից գրէր. իսկ միւսը պէտք է քաղուածք անէր այն նամակներից, որ խումբադրութիւնը աւելորդ կը համարի առանձին տպագրել:

Աւրախ-ուրախ ցրուեցին երկուստարգները՝ հաստատ հաւատարմով գործի չտաջաղիմութեան: Երկու մարդ փոքր ինչ կտակածում էին. այդ ինքը Աորկոտեանը և Աերպեանն էին:

## ԿՐԻՏԻԿՈՍՆԵՐ

— Մի՞թէ չես լսել, ճշմարիտ ես ասումի նասի՛ր քեզ պատմեմ բոլորը մանրամասն: Մեր ազգը այդպէս առաջադի՛տութիւն է անում և դու, Մարութեան, քնած ես: Սորանց չորս օր առաջ մի ժողով էինք կազմել Կորկոտեանի մօտ, որանց վճահցինք մի նոր լրագրատան խմբագրութիւն կազմել: Առաջ Կորկոտեանը կարգաց մի յօդուած նոր լրագրի անհրաժեշտութեան...

— Իսկ շնա ժամանակ է, որ այդ միտքը չգացել է ձեր մէջ, թէ ջանկարծ է երևացել. հարցրեց Մարութեանը:

— Սպասի՛ր, պատմեմ, բոլորը կ'իմանաս: Իւր յօդուածում Կորկոտեանը պարզ և ամենի համար շօշափելի կերպով ցոյց տուաւ, որ մեր բոլոր թշուառութիւնների սրտածառը լաւ խմբագրութեան բացակայութիւնն է և այժմ եղածների վնասակար ազդեցութիւնը:

— Ե՛նչպէս էր նա ազացուցանում. ի՛նչ փաստեր էր բերում:

— Տեսնում եմ, եղբայր, որ դու ըստ քո սովոր-

բութեան սկսում ես քաշքշել մեր գործունեութիւնը: Անշո՛ւ չես հաւատում մարդիկների բարեմիտ պարագմունքներին:

— Եղբայր, հաւատում եմ, բայց կամենում եմ ինձ համար խկապէս պարզել մի բան. ի՞նչն է ձեզ զրդել նոր խմբադրութեան վերայ մտածել և ի՞նչ ոչմերով էք մտադիր նորան տանելու: Աս ինքս բաւական չեմ այժմեան խմբադրութիւններից մի քանի բաներում:

— Ինքդ էլ ես խոստովանում, որ այժմեան խմբադրութիւններից անբաւական ես: Այնպէս էլ մենք ենք անբաւական:

— Ինչո՞վ էք անբաւական, ի՞նչ կողմերով, ի՞նչ խնդիրներով, ի՞նչ կերպ չօղուածներով, ի՞նչ հարցեցումն էք դուք տարածայնում, փոքր ինչ տարացած հարցրաւ Մարութեանը:

— Արկտսեանը ցոյց էր տալիս, որ շատ քաղաքներ չ'ունեն գրադարան և հասարակաց ընթերցարան, որ երգեցողութիւնը մեր մէջ անկանոն է: Մուացայ ասել, որ նա սկզբում սպացուցանում էր խմբապիւնների բռնաւորական ազդեցութիւնը հեղինակների վերայ:

— Արեմն ձեր նոր խմբադրութիւնը պէտք է զեղեցկացնէ մեր եկեղեցիները, բանայ գրադարաններ, ընթերցարաններ, սովորեցնի կանոնաւոր երգեցողութիւն: Տեսնենք: Գոնէ այժմ՝ զիտեմ թէ ինչ պէտք է սպասենք ձեր նոր լրագրից:

— Քեզ համար դա ծագրայի է երևում: Ես մտադիր չեմ շարունակել, խօսենք մի ուրիշ առարկայի վերայ:

— Իսկ ձեր այն միտքը թէ այժմեան խմբագրութիւնները բռնաւորակ'ն ղիրք են բանիլ մի քանի խնդիրներում, ես համաձայն եմ: Բայց չը ղիտեմ ի'նչ մտքեր էք մտադիր դուք առաջարկել հասարակութեան, որ իրաւունք ունենայիք նոր խմբագրութիւն հիմնելու:

— Կարձեալ համաձայն ես մեզ հետ, ինքզի ես ասում: Բայց էլի չես հաւանում մեր արածները:

— Ես կամենում եմ իմանալ ինչո՞վ պէտք է դուք այնքան զանազանուէք, որ իրաւունք ունենայիք ասելու, թէ այժմեան թշուառութիւնների պատճառը լաւ խմբագրութեան բացակայութիւնն է: Ինչ է նշանակում «լաւ»: Ամեն մարդ կարող է ասել պէտք է ունենալ լաւ լրագիր, լաւ գրքեր, լաւ ուսուցիչ, լաւ ընկերութիւններ և այլն: Բայց ինչպէս հասկանանք այդ լաւ ինչ լինելը:

— Արեմն դու մեզ չիմար ես համարում. կարծում ես թէ մեր եռանդը կը կորցնես այդպէս կրիտիկայով, մեր գործը հաստատ է և ոչ որի հաւանութեան մենք կարօտ չենք:

Երիտասարդները լուեցին: Փորձեցին առօրեայ գործերից մի երկու հարց միմեանց առաջարկելու. բայց խօսակցութիւնը այնքան տաղտկալի դարձաւ, որ երկուսի գրութիւնն էլ դժուարացաւ:

Վերջապէս ներս մտա Սիմօնը և ուրախ-ուրախ  
ու ժպտալ երևոյին ողջունեց նոցա: Մարութեանը  
հէնց մի առիթի էր սպասում, զգալը առաւ և ստու-  
րաստուեց զնալու:

— Գու չես խանդարիլ մեր խօսակցութիւնը,  
դուցէ քեզ համար էլ հետաքրքրական լինի, աշխա-  
տեց նորան չես պահել Սիմօնը:

— Գործ ունեմ այժմ, մնաք բարեաւ, հազիւ  
հազ նոցա ձեռքը սեղմելով Մարութեանը դուրս  
թռաւ սենեակից: Սիմօնը այժմ նկատեց, որ միայն  
ինքն էր ուրախ արամապրութեան մէջ:

— Ի՞նչ է պատահել, Գրիգոր, դու էլ ես ուն-  
քերդ կիտած,

— Է՛ թող մնայ, Մարութեանին չե՞ս ճանա-  
չում: Հիմի ծաղրում էր այստեղ մեր լրագիրը,  
մեր խմբագրութիւնը:

— Ի՞նչ էր ասում:

— Երանը ծեփեցի, թէ չէ ով գիտէ զեռ ինչ  
պէտք է ասէր, չէ հաւանում մի խօսքով, ասում է,  
որ նորան չաչոնի չէ թէ ինչով ենք մեք լաւ ու-  
րիշներից:

— Ելի այդ այժը խառնուե՞ց, ո՞վ սկսեց խօ-  
սակցութիւնը:

— Ես սկսեցի: Ուզում էի նորան ուրախալի լուր  
հաղորդել, բայց նա հէնց առաջին խօսքիցս սկսեց  
ծաղրել—այդ ի՞նչպէս, ասում է, ձեր զխում չլա-  
ցաւ այդպէս միայ:

— Տեսնում ես անպիտանին: Աարիճ է. նախան-  
նա կարիճ: Ա՛հ, Տէր Աստուած. երբ պէտք է այլ-  
պէսներից ազատուենք, ողբերգական ձայնով Սիմօնը  
վերջացրեց իւր խօսքը: Նորանից ողևորուելով Գրի-  
գորը, նոյնպէս ողբերգական ձայնով շարունակեց:

— Անմիաբանութիւն, անմիաբանութիւն, դու  
փայտակ արիւր մեր ազգի բաղդաւորութիւնը...  
է՛հ: Ի՛նչ նոր լուր կայ: Դու ուրախ տուն մտար.  
Ընկերներին տեսե՞լ ես այսօր:

— Շուտով կը դան ոչստեղ: Արդէն երկու  
շօղուած է պատրաստում լրագրի համար. մէկը  
Թղթակցութիւն է, միւսը բաց նամակ: Դէ՛հ այժմ  
ժող կասկածեն Մարութեաները. կոյր նախան-  
ջտանե՛ր:

— Մարդկերանց վերան խօսենք, ի՛նչ ես կպչել  
այդ խելագարներից. ես զարմանում եմ մեր Աերպեանի  
վերայ, նա միշտ զոցա պաշտպան է դուրս գալիս:  
Չեմ իմանում՝ ինչ համ է տեսնում զոցանից: Տես-  
նե՛ք՝ ինչ կ'ասեն մեր լրագիրները. — կը կատաղեն:

— Աերպեանը երեկ ինձ մօտ էր. նա ասում  
էր՝ պէտք է մի քանի անգամ էլ ժողովուել և առա-  
բարկում էր Մարութեանի ընկերներից մի քանիսին  
կանչելու խորհրդի. բայց հազիւ թէ զլուխ գայ:  
Ներս մտան՝ Արկոտեանը ծանր-ծանր առաջ  
չարժուելով, նորա կտեից երկու պատանիներ, որոն-  
ցից մէկը ճլվլում էր անդադար և աշխատում էր  
սպացուցանել իւր առաջուայ միտքը թէ լծառա-

զայթ» անունը աւելի էլը չարմարուի լլւանց լրագրին, քան մի ուրիշ անուն:

— Աս շատ մտածեցի և դարձեալ զայիս եմ այդ եզրակացութեան, սասց նա: Ճառագայթը, մտնելով խոր անդունդները, լուսաւորում է նոցա. ճառագայթը, թափուելով սառնակոյտերի վերայ, նոցա հալեցնում է. ճառագայթը, իջնելով երկրի վերայ, տալիս է կեանք բնութեան: Այդպէս պէտք է լինի և մեր գրական ճառագայթը:

— Կեցցե՛ս տղայ. երևում է շատ ևս մտածելը Ինչ կայ - կարող ենք լրագրի մէջ բանալ բանասիրականի նման մի բաժին, որ կ'անուանենք ճառագայթ և կը չանձնենք քեզ:

Մի քանի ժամանակից յետոյ ժողովուեցին խմբակիցները: Պատմեցին միմեանց նոր լուրերը և նոր մտադրութիւնները: Մարութեանի խօսակցութիւնը ընդհանուր զայրոյթ և զզուանք պատճառեց: Նա մանաւանդ, որ Մարութեանի մօտիկ ընկերներէից մէկը բաւականին հեղնական խօսքեր էր ասել խմբակիցներէից մէկին:

— Ահրջ ի վերջոյ անպիտանը, զիտէ՛ք, ի՞նչ է ասում ինձ:

— Ասա՛, ասա՛, վերջացրո՛ւ:

— Ասում է լաւ կը լինի ձեր լրագրի անունը զնեւ ջրադաց... .

Երիտասարդները բոլորովին զայրացան և տրտընջացին:

—Թողէք վերջացնեմ, ինչ որ ասաց նա ինձ. առ մշնորդող չօղուածների անունը ջուր դնել, ներքին տեսութեանը—ալիւրափոշի կամ կարճապէս փոշի. արտաքին տեսութեանը—աղմուկ. բանասիրականինը—տոպրակ. իսկ խմբագրի անունը կարելի կը լինէր դնել ջաղաց պան. բայց Աորկոտեան էլ պակաս անուն չէ:

Բարձրացաւ սաստիկ տրտունջ. ամեն մարդ մի սպասնալիք էր ուղարկում Վարութեանի խմբին: Միմեանց հասկանալը դժուարացաւ:

—Յղբայրներ, խնդրում եմ խօսք շնորհէք ինձ, բարձրաձայն սկսեց Աորկոտեանը: Պարշելի վարմունք է նոցա կողմից այդ բոլորը. բայց որովհետեւ այդ գործում խառն է իմ անձնաւորութիւնը—իմ ազգանունը, ուստի թողէք հանգիստ այդ վայրահաշնենին, ներողամիտ եմ դէպի նոցա երեխայութիւնը: Առշխատենք, որչափ կարելի է անմատչելի դարձնել նոցա համար մեր լրագրի էջերը:

Ընդհանուր լռութիւնը և կամաց կամաց խոնարհուող հալեացքները վկայում էին, որ երիտասարդները հաճութեամբ լսում էին Աորկոտեանին: Միայն Սերալեանը անհամբեր շարժումներով զարմացնում էր շրջապատողներին. վերջապէս նա խօսքը կորեց:

—Անկարելի է, ընկերներ, հեռացնել նոցա մեր լրագրից, մենք ինքներս խմբագրական բանաւորութեան դէմ ենք. լրագրական աստղերը փակել

անկարելի է: Նոցա ներկայութիւնը և չօղուածները կարևոր են մեզ համար թէ նոր ոչժեր և թէ լրագրի մէջ ամենայն կարծիք և միտք մտցնելու համար. թէկուզ...

— Աւրեմն թողնենք, որ թքեն մեզ վերայ: Եթէ տոնատեղ տանք, ով զիտէ գեւ ի՞նչ կը պահանջեն նորա մեզնից:

— Այլ թոյլ տալ անկարելի է. բայց համարութիւնը կորցնելը, սաստիկ չուզուելը, զանազան կարծիքներից վախենալը— այլ բոլորն էլ մեզ համար գովելի չատկութիւններ չեն: Ջրաղաց ասողը ամբողջ խմբի ներկայացուցիչը չէ և իսկապէս մի առանձին խումբ կազմակերպուած չէ ո՛չ այնտեղ, ո՛չ այստեղ: Ենչո՞ւ ենք մենք հեռացնում այնպիսիներին, որ գուցէ մեր գործին համակրում են և կ'օգնեն էլ:

Երիտասարդները համարեա չէին լսում նորա խօսքերը. միմեանց մէջ քչփչում էին— ձեւ շատ մանակ է նկատում եմ, որ սա նոցա կողմն է քաշում... դաւաճա՞ն, տեսնում ես ի՞նչ լեզու է բանեցնում նոցա համար... ասածը սուտ չէ. բայց ի՞նչու է նոցա պաշտպանում... անմիաբանութիւն, անմիաբանութիւն, դու քանկեցիր....

*Արտուր Բաբոյան*

*Արտուր*



IV

Գ Ե Ի Ա Ճ Ա Ն Ն Ե Ր

—Տօ՛, ի՞նչ եղաւ ձեր նոր խմբագրութիւնը, հարցրեց Մարութեանը Սերալեանից մի տասն օր չետոյ:

—Ոչինչ. ինչ պէտք է լինի իսկ մտածուած բանի վախճանը: Մի քանի անգամ ժողովուեցին, խօսացին, տաքացան, վառուեցին, չետոյ հանգստացան և սառեցին: Հիմքը խախուտ էր, խումբը շատ սահմանափակ էր. դուք էլ ձեզ շատ հեռու պահեցիք:

—Գու որ խմբի մէջն ես եղել, շատ բան ես շահել:

—Ձե՛մ շահել. բայց և այնպէս փորձել եմ ուշադիր լինելու այդ նոր ձեռնարկութեան: Եթէ մարդ շատ խտրութիւններ դնի, չի էլ կարող իսկական գործի գալուստը իմանալ և նորան չարել: Ով գիտէ՞ կարելի է մի լաւ բան էլ դուրս գար այս փորձից չաջող դէպքում:

—Ոչինչ կարգին բան դուրս գալ չէ կարող այդ խմբից: Միթէ ինքզ չը գիտես դոցա բոլորի մտաւոր արժէքը: Ես այն կարծիքին եմ թէ այդպիսիների հետ չը պէտք է երկայն բարակ զրոյցի մանել:

— 24, Մարութեան, չէ. սխաբում ես Մինչև որ դու քո երկայն մասժմունքներով քո ցանկացած պարջ գործունէութիւնը իրագործես, որիչները լաւ — վատ մի բան կը սկսեն և մի տեղ կը գրաւեն գրականութեան և հասարակական կեանքի մէջ:

— Մի խաջոտակ և ծաղրալի տեղ:

— Դու այդպէս ս.ս.ս. իսկ այդ պարոնները կարող են ամբողջ տարիներ հաստատ մնալ իրանց տեղում:

— Շատ ցաւալի է, եթէ այդպէս է: Դու ասում ես, Աերալեան, որ ձեր գործը քանդուեց, փշացաւ:

— Այսինքն դեռ չի փշացել. բայց իմ կարծիքն է, որ նա կը փշանայ. շատ պարզամիտ անխորձ մարդիկ են: Աէտք է դարձեալ ժողովուհնք խօսենք. բայց ես արդէն չոչսս կորեկ եմ:

— Եւ խորհուրդ տուր բոլորովին հեռանան այդ մտքից: Դոցա հրատարակութեանը կարօտ չէ մեր հասարակութիւնը. դոքա իրանք պէտք է բաւականաչափ պատրաստուեն ուսուցանողներ լինելու համար:

— Մարութեան, դու այդպէս չը պէտք է ձեռկերպես քո միտքը: Դու պէտք է երկու բան զանազանես — նոր հրատարակութեան կարեորութիւնը և նորա նախաձեռնողների ձեռնհասութիւնը: Կարող է երկրորդը վատ լինել, բայց առաջինը իւր նշանակութիւնը չէ կորցնում:

— Ես՛ կա ասում եմ, եթէ երկրորդը վատ է, եթէ խմբագրութիւն կազմողները վատ են, անկա-

րող, թոյլ, տկարամիտ—էլ ինչ խօսք կարող է լինել  
նոցա արդիւնաբերութեան մասին:

—Ո՛չ, եթէ մի գործի կարևորութիւնը դուք  
զգում էք, դուք պէտք է որոնէք միջոցներ նորան  
իրագործելու:

—Նախ դեռ խնդիր է կարևորութեան աստի-  
ճանը և յետոյ... այդ կարևորութիւնը զգալուն հետ  
միասին եթէ ևս զգում եմ, որ միջոցներ չը կան  
ցանկացածս իրագործելու, այն ժամանակ:

—Ուրեմն դու կարևորութիւնը չե՞ս ընդունում:

—Ընդհանրապէս ասած, ոչ, ևս կը ցանկանայի  
մի քիչ բարւոքում եղածի մէջ:

—Իսկ եթէ բարւոքում մտցնելը անկարելի է:

—Այն ժամանակ հաշուել քո պակաս համարածի  
արժէքը մի կողմից և եղածի արժէքը միւս կողմից  
և համեմատել դոցա միմեանց հետ: Ես այդ համե-  
մատութիւնը արել եմ և եկել եմ այն եզրակացու-  
թեան, որ այդ պակաս համարուածը առ այժմ դեռ  
թեթեւ կշիռ ունի... կարելի է ժամանակով նա աւելի  
կը դառնայ: Իսկ այժմ տեսնելով, որ այդ պակասը  
լրացնողները ուզում են լինել Աորկոտեանի աշխա-  
տակիցները, ևս բացարձակ չայտնում եմ, որ դա ջան-  
դրգնութիւն է: Թող դոքա իրանց վերայ ընդունեն  
թղթակցի, լրատուի, թարգմանչի պաշտօններ մեր  
եղած հրատարակութիւնների համար:

—Բայց այն պակասը, որի մասին խօսեցինք, բայց  
այն բարւոքումի կարևորութիւնը, որ ինքդ էլ շեշտեցիր:

—Այ, եկ զորս մասին խօսենք. դա խեղապէս  
հետաքրքրական հարց է. մտածենք, կարելի է մի  
բան չաջողցնում ենք: Վերջապէս, զուցէ այս տեսակ  
խօսակցութիւններից պարզութիւն առհասարակ այն, թէ  
ինչ լուրջ բան կարող ենք իրագործել այժմեան ոյժերով:

— Ես համաձայն եմ ստամիրջ. բայց կարծում  
եմ թէ այժմեան չարուցուած խնդիրը չի քնիլ:

— Մի բան, Աերալեան, մի՛ մոռանալ, որ մեծ  
մտածողութեան և նախաձեռնութեան ոյժեր չ'ու-  
նենք: Գորա առհասարակ հազուադիւրս են:

— Հաւաքական ոյժին միթէ չես հաւատում:

— Հաւատում եմ. բայց այն հասարակութեան  
մէջ, ուր կայ մտաւոր կեանքի աւանդութիւն, եր-  
կայն և լուրջ գործունէութեան մշակուած անդաս-  
տան: Իսկ այդ մենք չ'ունենք: Մենք, երկու մարդ  
միմեանց պատահելուց, ստիպուած ենք լինում մի-  
մեանց երկայն բարակ բացատրելու մեր հայեացք-  
ները: Արոչ գպրոցներ, որոչ սիւներ չ'ունենք:

— Արեմն խնդիրը դարձեալ չի մեռնում, այլ  
կերպարանափոխոււմ է: Սակայն եթէ չը կարողացանք  
մեր ցանկացածին հասնել:


— Գորա մասին էլ չետոյ, ժամանակը ցոյց կը տայ:

— Արեմն, Մարութեան:

— Խօսենք մի քանիսնների հետ և չետոյ մի տեղ  
ժողովուենք:

— Այդ էլ փորձենք:

Բագու. 1880 թ.





II  
 28797

### ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

- |                                     |   |       |
|-------------------------------------|---|-------|
| 1. ՀԱՐՆԵԻԱՆՆԵՐ (սպասուած) . . . . . | 3 | կողէկ |
| 2. ՄԻՆԱՍԻ ԵԶՐ (սպասուած) . . . . .  | 3 | "     |
| 3. ԵԶՐԻ ԱՂԶԻԿՐ . . . . .            | 5 | "     |
| 4. ՆՈՒԱԶՈՒԱՆԻ ԿԵԱՆՔՐ . . . . .      | 3 | "     |
| 5. ՆԱՆՐ ՔԱՐՐ . . . . .              | 3 | "     |
| 6. ՂԵՐ ԻՆԶՐ ԿՐ ՊԱԿՄԻ . . . . .      | 3 | "     |

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ. 60

Մատուցուած է Կենդրոնական դրամաձևատանոցում:



